

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սեղա ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Լուսինե ԲԱԳՈՒՄՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՔԵՆԵԹ ԳՐԵԴԵՍԻ «ՔԱՍԻՆ ՈՒՌԻՆԵՐԻ ՄԵԶ»
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐՋԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ԻՆՎԵՐՍԻԱՆ) ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆՇԻՔԸ

Ծրջադասության հետևանքով իր տեղը փոխած բառն ավելի է շեշտվում՝ նպաստելով խոսքի հոգականությամբ։ Ոճական այս հնարանքը՝ որոշիչորոշյալի, ենթակա-ստորոգյալի, լրացումների յուրահատուկ շրջումները մեծ վարպետությամբ է կիրառել Ք. Գրեենն իր «Քամին ուղիների մեջ» հայտնի վեպում, որոնք ստեղծագործությանը տալիս են ոճական տարրեր երանգափրումներ։ Հայերեն տարրերակում, սակայն, փոքր-ինչ դժվար է պահպանել այս ոճական հնարանքի բնագրային հոգականությունն ու ոժգնությունը՝ հաշվի առնելով հայերենի ոչ կայուն շարադասությունը։

Բանալի բառեր. շարադասություն, շրջադասություն, ոճագիտություն, ետադրություն, նախադրություն, ենթակա, ստորոգյալ, ստորոգելի, հանգույց, որոշիչ, որոշյալ, հատկացուցիչ, հատկացյալ, խնդիր, պարագա

Շարադասությունը առանցքային դեր է կատարում յուրաքանչյուր լեզվի քերականության մեջ, և անկարելի է ոճարանական վելուծություն կատարելիս չանդրադառնալ շարադասության խնդրին։ Շատ լեզվաբաններ են ուշադրություն դարձել շարադասությանն ու դրան առնչվող խնդիրներին։ Ինչպես նշում է Լ. Եզեկյանը, յուրաքանչյուր լեզու իր զարգացման տվյալ փուլում ունի նախադասության անդամների դասավորության սահմանված որոշակի սկզբունքներ և որոշակի ընդունված կարգ, որը, սակայն, այս կամ այն պատճառով, ոճական որոշակի նախատակադրմանը և՝ բանագոր, և՝ գրավոր խոսքում կարող է խախտվել կամ փոփոխվել։ Նշված փոփոխությունները կամ նախադասության շարադասության այս եղանակը հիմնականում կատարվում են խոսքի պատկերավորման, արտահայտչական նպատակով և կոչվում են շրջադասություն (ինվերսիա) /Եզեկյան, 2003: 366-367/։

Ծրջադասության հետևանքով իր տեղը փոխած բառն ավելի է շեշտվում, ընդգծում՝ դրանով խսկ ավելի նպաստելով խոսքի հոգականությանը։

Հայերենում և անգլերենում նախադասությունների շարադասությունը տարրեր են, այն է՝ հայերենում նախադասության շարադասությունը կայուն չէ,

նախադասության անդամների տեղերը կարելի է փոփոխել առանց որոշակի իմաստային փոփոխության, մինչդեռ անգերենում շարադասությունն ավելի կայուն է, այն է՝ ենթակա, ստորոգյալ, ապա լրացումներ: Հետևաբար հայերնում ենթակայի և խնդրի տեղերը փոխելիս իմաստային աղճատման չենք հանգի, այնուամենայնիվ, անգերենում նմանատիպ փոփոխություններն անկարելի են, եթե դա չի կատարվում շրջադասության (ինվերսիայի) շրջանակներում:

Շրջուն շարադասությամբ մեծ մասամբ կարող են հանդես գալ ենթական և ստորոգյալը, որոշին ու որոշյալը, հատկացուցին ու հատկացյալը:

Ետաղաս որոշիչը ամենից հաճախ հանդիպող տարբերակն է, որի դեպքում որոշիչ-որոշյալներն ավելի ուժեղ տրամաբանական և հուզական շեշտ են ստանում:

At last, over the rim of the waiting earth the moon lifted with slow majesty till it swung clear of the horizon and rode off, free of mornings; and once more they began to see surfaces-meadows wide-spread, and quiet gardens, and the river itself from bank to bank, all softly disclosed, all washed clean of mystery and terror, all radiant again as by day, but with a difference that was tremendous. (p. 173-174)

Վերջապես սպասողակամ երկրի վրա լուսինն իր դանդաղ վեհաշուր լույսով գծագրվեց, մինչև որ առանձնացավ-առաջացավ: Նրանք մեկ անգամ ևս տեսան լայնատարած մակերեսներ, զմրուխտ մարգագետիններ, խաղաղ պարտեզներ ու այգիներ, իսկ գետն ինքնին ափեափ, մեղմ անդորրով բացվեց, ի հայտ եկավ խորհրդավոր գիշերվա սարսափից մարրված-լվացված, ցոլացող-պսաղացող օրվա լույսի ներքո, միայն այս տարբերությամբ, որ հիմա հսկայածավալ էր: (Էջ 140)

Բերված օրինակում ընդգծված ետաղաս որոշիչը ոչ միայն նպաստում է խոսքի հուզականությանը, այլև ավելի է ընդգծում բովանդակությունը, տվյալ դեպքում մարգագետինների (meadows) լայնածավալությունը (wide-spread): Ի տարբերություն այս որոշիչ-որոշյալի՝ հաջորդիվ ունենք ևս մեկ օրինակ (quiet gardens), որտեղ, ունենալով սահմանված շարադասություն, նվազում է խոսքի հուզականությունը: Նույն օրինակի հայերեն թարգմանության տարբերակում կարելի է նկատել ոչ շրջուն շարադասություն, որոշին ու որոշյալը դրված են ավանդական քերականությամբ նախատեսված հերթականությամբ լայնատարած մակերեսներ, զմրուխտ մարգագետիններ՝ լնդ որում կատարելով հավելում և ավելացնելով զմրուխտ բառը: Այլ կերպ՝ հայերեն օրինակը չի ներկայացնում բնօրինակի հուզականությունը: Բնագրի իմաստային հուզականությունը պահպանելու առումով ավելի նպատակահարմար կլիներ թարգմանել այս կերպ

Նրանք մեկ անգամ ևս տեսան հարթավայրեր-մարգագետիններ լայնատարած, խաղաղ պարտեզներ ու այգիներ...

Քննարկենք որոշիչ-որոշյալի՝ շրջուն շարադասության մեկ այլ օրինակ:

Pausing there a moment and looking back, they saw the whole mass of the Wild Wood, dense, menacing, compact, grimly set in vast white surroundings; simultaneously they turned and made swiftly for home, for firelight and the familiar things it played on, for the voice, sounding cheerily outside their window, of the river that they knew and trusted in all its moods, that never made them afraid with any amazement. (p. 123)

Մի պահ կանգ առան, իետ ճայեցին ու տեսան ողջ Վայրի Վայրն ամրող-օռթասն մեջ՝ անծայրածիր, խիտ, բավոտ, սպառնալից, տարածված ծերմակ ծածկոցով, և անմիջապես արագ շարժվեցին տուն, դեսի տուն, քանի որ ծանոթ, հարազատ առարկաների վրա վետվետում էր բոխարու լույսը, խև գեար քչքում էր պատուհանից լուրս ուրախ-զվարք, զոհ ու երջանիկ, որ իրեն սիրում են ու վստահում ամեն եղանակին, գետը, իրենց գետը, որ երրեք իրենց չէր հիասքափեցնի: (էջ 88)

Վերը բերված օրինակում հեղինակն օգտագործում է հետադաս որոշներ (dense, menacing, compact, grimly set in vast white surroundings), որոնք այս դեպքում բարգմանիչը հաջողությամբ պահպանել է (անծայրածիր, խիտ, բավոտ, սպառնալից, տարածված ծերմակ ծածկոցով)՝ դնելով որոշիչը որոշյալից հետո՝ այդպիսով էլ ավելի ընդգծելով Վայրի Վայրին բնորոշ հատկանիշները՝ ընդարձակությունը, ծերմակությունը, խտությունը: Այնուամենայնիվ, այստեղ առկա է որոշակի շեղում բնագրից, քանի որ բարգմանիչն իր հայցողությամբ որոշակիորեն փոփոխություն է կատարել որոշիչների բնագրային հերթականության մեջ: Բնագրում որոշիչները դասավորված են հետևյալ հերթականությամբ՝ խիտ, սպառնալից, բավոտ, տարածված անծայրածիր, ծերմակ ծածկոցով, որով հեղինակը որոշակի տրամաբանական ուժգնություն է հաղորդում նկարագրությանը սկսելով խտությունից և ավարտելով ընդարձակությամբ (ընդ որում, անզլերենում օգտագործված է «vast-ընդարձակ» բառը, որը հայերենում դարձել է անծայրածիր: իմաստի ընդլայնում է տեղի ունեցել), մինչդեռ հայերեն տարբերակում այդ տրամաբանական և հուզական հնչերանգը ավելի թույլ է արտահայտված:

Չարադասության փոփոխության հաճախ հանդիպող մյուս տեսակը՝ ենթակա-ստորոգյալի ոչ կանոնավոր դասավորությունն է, այս դեպքում՝ ստորոգելիին նախադրությունը. այն է՝ երբ ստորոգելին դրվում է ենթակայից առաջ:

By the time he came down again luncheon was on the table, and very glad Toad was to see it, for he had been through some trying experiences and had taken much hard exercise since the excellent breakfast provided for him by the gipsy. (p.267)

Երբ նորից ցած եկավ, նախաճաշը սեղանի վրա պատրաստ իրեն էր սպասում: Դոդոշը շատ ուրախացավ՝ տեսնելով այն, քանզի առավոտից ի վեր, երբ զնշում իրեն համով-հոսով, չըեղ նախաճաշ էր հրամցրել, նրա

զիսով շատ փորձանք էր եկել-անցել, շատ փորձությունների էր դիմացել:
(Էջ 228)

Անգլերեն տարբերակում կանոնավոր շարադասությունը պետք է լիներ «Toad was very glad to see...», սակայն այստեղ «glad» ստորոգելին իր «every» լրացման հետ (չափ ու քանակի պարագա) դրված է ենթակայից առաջ, իսկ հանգույցը՝ «was»-ը՝ ենթակայից հետո: Բառերի այս ոչ սովորական, շրջուն շարադասության շնորհիվ հաճախ ստեղծվում է տրամարանական շեշտի ոճական երանգավորում, որին հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել: Այստեղ հեղինակը միտում ունի ներկայացնելու «Դոդոշի հոգեվիճակը»: Քանի որ նա շատ զգայուն կերպար է, հեղինակը փորձում է այս հնարանքի միջոցով ընդգծել նրա ուրախությունը, և այդ նպատակով նա օգտագործել է շրջուն շարադասություն՝ ենթակայից առաջ դնելով նրան բնութագրող բառը: Հայերեն տարբերակում անգլերենի բաղադրյալ անվանական ստորոգյալը թարգմանվել է որպես պարզ ստորոգյալ (անցյալ կատարյալ ժամանակաձևով)` «Դոդոշը շատ ուրախացավ՝ տեսնելով այն...» կորցնելով ոճական երանգավորումը: Հայերեն տարբերակում առավել նախընտրելի կլիներ այս հատվածը թարգմանել «Շատ էր ուրախ Դոդոշը՝ տեսնելով այն...», քանի որ այլ տարբերակներում (Շատ ուրախ էր Դոդոշը՝ տեսնելով այն..., Ուրախ էր շատ Դոդոշը՝ տեսնելով այն...) հայերեն շարադասությունը զուրկ է ոճական հնչերանգից: Ծիշու է, այս տարբերակում «Դոդոշին բնորոշ հոգեվիճակի դրսնորման միայն չափն է դրված ենթակայից առաջ, սակայն հայերեն տարբերակում նրա ուրախությունն առավել ակնհայտ է դառնում:

Ենթակա-ստորոգելիի շրջուն շարադասության հետևյալ օրինակները նույնականացնելու արժանի են քննության:

Such a rich chapter it had been, when one came to look back on it all! (p. 85)

Ի՞նչ հետարրիդ օրեր, ի՞նչ հարուստ քազմական-զարմանազան պատկերներ և հիշողություններ, երբ հետ ես նայում: (Էջ 53)

Այս օրինակը հատկապես հետաքրքրական է թարգմանության տեսանկյունից: Նախ փորձենք հասկանալ քնազիր տարբերակը: Այստեղ մենք կրկին ունենք ենթակա-ստորոգելի անկանոն շարադասություն, որտեղ ստորոգելին իր լրացումներով դրված է ենթակայից առաջ: «Դասական քերականության շարադասությամբ այն կլիներ «It had been such a rich chapter»: Հայերեն տարբերակում թարգմանիշը պարզեցման և բացատրության մեթոդով է փորձել ներկայացնել թարգմանությունը: Իհարկե, մենք ունենք բավականին գեղեցիկ, բայց միևնույն ժամանակ ոճական տեսանկյունից ոչ համարժեք թարգմանություն: «Որան առավել համարժեք հայերեն թարգմանություն կլիներ՝ «Ինչպիսի հարուստ էջեր էին. հիշողությունների գիրկն ես ընկնում, երբ հետ ես նայում»:

Այստեղ հարկ է քննել մեկ այլ վերլուծական տարբերակ: Երբեմն թարգմանական տարբերակում թարգմանիշն ստիպված է լինում կամ ցանկանում է

փոխարինել մի ոճական հնարք մեկ այլ ոճական հնարով՝ միաժամանակ պահպանելով բնագրի ամրողական իմաստը: Այսպիսով, այս դեպքում ձևի փոփոխությունը չի ազդում բովանդակության վրա: Այստեղ, օրինակ, թարգմանիչը հետաքրքիր լուծում է գտել այդ տեսանկյունից բացականչական նախադասության միջոցով արտահայտելով այն, ինչ հեղինակն արտահայտել է շրջուն շարադասության միջոցով: Այսպես, քանի որ հայերենի շարադասությունն այդ հնարավորությունները չի տալիս, այսինքն հայերենում շրջունությունը թույլ է արտահայտված, կարելի է կիրառել լրացուցիչ միջոցներ՝ ահա դրանցից մեկն էլ օգտագործված է բերված օրինակում:

Then the whistling began.

Very faint and shrill it was; and far behind him, when first he heard it; but somehow it made him hurry forward. (p. 89)

Հետո սուլոց լավեց: Հասու թույլ, բայց զի՞ սուլոց. Հենց իր հետևում, հենց սկզբից, բայց և այնպես շտապ-շտապ շարունակեց ճամփան: (էջ 56)

Այս օրինակում ևս ունենք ստորոգելիի նախադրություն: Անգլերեն տարբերակում «faint and shrill» համասեռ ստորոգելիները դրված են ենթակայից առաջ իրենց «very» լրացման հետ (չափ ու քանակի պարագա), մինչդեռ ոճական երանգավորում չունենալու տարբերակում այն պետք է լիներ «It was very faint and shrill»: Հայերեն տարբերակում թարգմանիչը կատարել է նախադասության մեջ պաշտոնների տեղաշարժ, այն է՝ անգլերեն տարբերակում ածականով արտահայտված ստորոգելիական վերադիրները հայերեն տարբերակում դարձել են նույն ածականով արտահայտված որոշիչներ՝ կրկին կորցնելով համապատասխան ոճական հնչերանգը: Այս նախադասության ավելի համարժեք թարգմանությունը կլիներ՝ «Հետո սուլոց լավեց: Թույլ էր շատ, բայց զիլ...»: Եվս մեկ դիտարկում այս օրինակի հետ կապված: Անգլերենում մենք ունենք բարդ համադասական-ստորադասական նախադասություն՝ թարգմանիչը բացմաշաղկապությամբ կապված, մինչդեռ նույն հայերեն նախադասությունը թարգմանիչը բաժանել է երեք նախադասության՝ անշաղկապությամբ կապված: Նախադասության դիտարկվող հատվածն անգլերենում երկանդամ նախադասություն է, իսկ հայերենում՝ միանդամ:

'O, terrible bad, sir, terrible deep the snow is,' said the hedgehog, 'and he said as how he was going to be particular busy this morning, and on no account was he to be disturbed.' (p. 113)

-Սարսափելի է, սարսափելի, պարո՞ն: Զյունը հսանում է մինչև ծնկները, - բողոքեց ողնին: - Դուք այսօր այստեղ ունացեք, դուրս գալ չեք կարող: (էջ 78)

Այս նախադասության մեջ վերստին ունենք ստորոգելիների ոչ կանոնավոր դասավորվածություն, «terrible bad և terrible deep» ստորոգելիները դրված են «snow» ենթակայից առաջ՝ այդպիսով խիստ ուժգնացնելով ձյան սարսափելի վատ և սարսափելի առատ լինելու իմաստը, սակայն հայերեն

տարբերակում նախադասության կառուցվածքը փոխված է, և այստեղ սարսափելի բառը չի վերաբերում ձյանը, այլ իրավիճակին, որն ստեղծվել է դրա հետևանքով: Իսկ ձյան առատ լինելու իմաստն արտահայտված է հետևյալ կերպ «Ջունը հասնում է մինչև ծկները»: Ինչ խոսք, թարմանիչը թեև տարբեր ոճական հնչերանգով, բայց յուրահատուկ լուծում է գտել իրավիճակին, սակայն այստեղ հարկ է կատարել մի դիտարկում. բնագրի «terrible deep the snow is» նշանակում է սարսափելի առատ ձյուն է, որն ունի շատ անհատական ընկալում: Այսպես, այստեղ հեղինակն ընթերցողին է քողել ձյան առատության չափը պատկերացնելու աստիճանը (մեկի ընկալմանը՝ հնարավոր է առատ ձյունը ծնկներն հասնող ձյունն է, մեկ ուրիշի համար իրեն ծածկող ձյունը և այլն), սակայն թարգմանության մեջ այն սահմանափակ է (Ջունը հասնում է մինչև ծկները): Թարգմանական ընթերցողի պատկերացումն այս դեպքում սահմանափակված է ձյան՝ ծնկներից լինելով:

Over went the boat, and he found himself struggling in the river. (p. 58)

Նավակը շուր եկավ, ու Խղուրդը հայտնվեց գետում՝ կոյի տալով ջրի հետ:
(էջ 26)

Ենթակա-ստորոգյալի շրջադասության մեկ այլ օրինակ է այս նախադասությունը, որտեղ մենք ունենք պարզ ստորոգյալ, և անգլերեն տարբերակում այն դրված է ենթակայից առաջ, իսկ նավակի շուր գալու իմաստը ե՛լ ավելի է ընգծվում «go over» դարձվածքային բայի «over» ետադրությունը դիելով բայից առաջ: Հայերեն տարբերակում ունենք կանոնավոր նախադասություն, որտեղ շեշտված չէ նախադասության որևէ անդամ: Ոճական քիչ թե շատ (քիչ թե շատ, քանի որ հայերեն նախադասության ինչքան էլ փորձենք ոճական երանգավորում տալու նպատակով շարադասության փոփոխություններ կատարել, այնուամենայնիվ, այն սովորական է հնչում՝ հաշվի առնելով հայերենի ոչ կայուն շարադասությունը) ընդգծված նախադասություն ունենալու համար ավելի հնչեղ կլիմեր հետևյալ տարբերակը «Ծուր եկավ նավակը», քանի որ շուր գալ-ը, նախադասության սկիզբ բերելով, մենք կարող ենք ապահովել նախադասության այդ անդամի շեշտվածությունը:

Տրամաբանական շեշտի ճկուն կիրառության և ուժգնության հասնելու մեկ այլ տարբերակ է տարբեր լրացումների միտումնավոր նախդրությունը, այս դեպքում՝ պարագաների նախդրությունը, այն է՝ պարագան նախադասության սկզբում դնելը հեռացնելով նախադասության այն անդամից, որին այն վերաբերում է:

Slowly, but with no doubt or hesitation whatever, and in something of a solemn expectancy, the two animals passed through the broken tumultuous water and moored their boat at the flowery margin of the island. (p.177)

Դանդաղ, առանց շտապելու կամ հապաղելու, հանդիսավոր ակնկալիքների դեմ հանդիման Խղուրդն ու Ջրամուկը անցան աղմկարար, փրփրա-

դեղ ջրեղի միջով ու խարիսխ զցեցին կղզյակի ծաղկավետ ափին: (էջ 144)

Ինչպես հայտնի է, պարագան ածականի և մակրայի նման նկարագրում է նախադասության որևէ անդամին կամ անդամներին և նախորդում կամ հաջորդում է տվյալ անդամին կամ անդամներին: Սակայն մեր օրինակում պարագան և բառը, որին այն վերաբերում է, բավականին հեռու են իրարից: Այսպիսով, տվյալ նախադասության մեջ ստորոգյալի լրացումը՝ ձևի պարագան, ստորոգյալից հեռու է գտնվում՝ փոխելով պարագայի կանոնավոր գործածությունը և ստեղծելով համապատասխան ոճական հնչերանգ:

Very thoughtless of him, I call it. (p.99)

Մյ քեզ անփորություն, կասեի: (էջ 66)

Վերոնշյալ օրինակում մենք ունեմք խնդրի նախորդություն: Սովորաբար և՝ անզերեն, և հայերեն տարբերակներում խնդիրները դրվում են այն բառից հետո, որին լրացնում են, սակայն այս պարագայում երկու տարբերակներում էլ խնդիրը դրվել է նախադասության սկզբում՝ դրան հաղորդելով ոճական շեշտված արտահայտչականություն:

Ոճական այս հնարանքը՝ որոշիչ-որոշյալի, ենթակա-ստորոգյալի, լրացումների յուրահատուկ շրջումները մեծ վարպետությամբ է կիրառել Ք. Գրեհեմն իր «Քամին ուժիների մեջ» հայտնի վեպում, որոնք ստեղծագործությանը ոճական տարբեր երանգավորումներ են տալիս: Ինչ վերաբերում է հայերեն տարբերակին, փորդ-ինչ դժվար է պահպանել այս ոճական հնարի իրական՝ բնագրային հուզականությունն ու ուժգնությունը՝ հաշվի առնելով հայերեն լեզվի ոչ կայուն շարադասությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գ-քեհեմ Ք. Քամին ուժիների մեջ, Երևան, 2012:
2. Եզեկյան Լ. Ոճագիտություն, Երևան, 2003:
3. Պողոսյան Պ.Ս. Խոսրի մշակույթի և ոճագիտության հիմունքները, խոսրի տեսություն, գիրք Երևորդ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1991:
4. Grahame K. The Wind in the Willows. Moscow: Progress Publishers, 1981.
5. Рубайло А. Художественные средства языка. М., 1961.

С. ГАБРИЕЛЯН, Л. БАГУМЯН – Стилистическая инверсия в произведении Кеннета Грэма «Ветер в ивах» и проблема ее перевода на армянский язык. – Слово, изменившее свое место вследствие стилистической инверсии, больше акцентируется, способствуя эмоциональности речи. Кеннет Грэм с большим мастерством использовал этот стилистический прием, (определение – определяемое, подлежащее – сказуемое, своеобразные дополнительные обороты)

в своем знаменитом романе «Ветер в ивах», который и придает произведению разнообразные стилистические оттенки. Однако в армянском переводе, довольно трудно сохранить текстуальный вариант эмоциональности и силу этого стилистического метода, учитывая не фиксированный порядок слов армянского языка.

Ключевые слова: порядок слов, стилистическая инверсия, стилистика, предлог, подлежащее, сказуемое, предикатив, завязка, ссылка, определение, определяемое, дополнение, обстоятельство

S. GABRIELYAN, L. BAGUMYAN – *Stylistic Inversion in Kenneth Grahame's "The Wind in the Willows" and the Problem of Its Translation.* – The word having changed its place due to stylistic inversion is emphasized more so intensifying the speech emotionality. Kenneth Grahame made use of this stylistic device (with inversions of attribute-adjunct, subject-predicate, different modifiers) in “The Wind in the Willows” creating stylistic colouring. However, it's a bit difficult to preserve the original emotionality and vigour of this device in the translation taking into consideration the Armenian non-fixed word order.

Key words: word order, stylistic inversion, stylistics, postposition, preposition, subject, predicate, predicative, link verb, attribute, adjunct, object, adverbial modifier

Արմինե ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

**ՀԱՄԱՆԱԿԱՆՈՒԹ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՍԻԱՎՈՐՆԵՐԻ
ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՏԱՐՔԵՐԱԿՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ՀՈԳԵՎՈՐ ԻՍԱԱՏՆԵՐԸ**

Սույն հոդվածի նպատակն է վեր համեմ դարձվածքների, մասնավորապես՝ կազմախոսական դարձվածքների ծագման ու կազմավորման հնագոյն ակունքները՝ նախնադարյան առավելական շրջանից եկող մարդարանական ու պաճառեհստական պատկերացումները, հավատալիքները, ծեսերը, դրանք համեմատելուկաղը և աստվածաշնչյան-արքետիպային տարրերակների և կրոնածիսական համակարգի հետ:

Բանափառեր. հավատալիք, աստվածաշնչյան կազմախոսական դարձվածքներ, դարձվածային միավորներ, արքետիպեր, լեզվամշակոյթ, լեզվառունական հնարներ, զուգադրական թարգմանություն

Ծաս ժողովուրդների մոտ դեռ հարատևում է այն հավատալիքը, որ կենդանիները, մասնավորապես շները, տեսնում են ոգիներ, որի պատճառով էլ դրսենորում են որոշակի վարքագիծ: Թոշունները, ըստ գրենլանդացիների, վախենում են բահառող տեսիլքներից: Այսօրինակ պատկերացումները մեծ տեղ են զբաղեցնում ողջ աշխարհի ժողովուրդների հավատալիքներում: Օրինակ՝ Հոմերոսի «Ողիսական»-ում Տելեմաքը չի տեսնում իր մոտ հայտնված Արենաս Պալլաս աստվածուհուն, մինչդեռ նրան տեսնում են Ողիսաք և շները: Դա բացատրվում է նրանով, որ աստվածները ոչ բոլոր մարդկանց են երևում տեսանելի ձևով: Այս նոյն պատկերացումները կան ոչ միայն տարբեր ժողովուրդների հնագոյն հավատալիքներում, այլ նաև Աստվածաշնչում, որտեղ բազմաթիվ դրվագներ կան, երբ Աստծո հրեշտակը կամ հրեշտակները հայտնվում են այս կամ այն մարդուն, մինչդեռ մյուսները այդ հայտնությանը չեն հաղորդակցվում կամ հաղորդակցվում են մասամբ: Բնորոշ օրինակներից կարող է լինել տեսիլքը՝ «Բարձրացրի աչքերս, և ահա փառահեղ հազնուած մի մարդ՝ մեջքին Ոփազի ոսկուց մի գոտի կապած. նրա մարմինը ծովագույն էր, նրա դեմքը փայլակի դեմք ուներ... միայն ես՝ Դանիելս տեսայ տեսիլքը... » /Դանիել, 10: 6-7/, Չաքարիայի տեսիլքը տաճարում՝ խնկարկության սեղանի մոտ՝ «Եվ տիրոջ հրեշտակը երևաց նրան՝ խնկերի սեղանի աջ կողմում կանգնած» /Ղուկ. 1: 11/, Սողոսի՝ ապագա Պողոս առաքյալի տեսիլքը Դամասկոսին մոտենալիս՝ «Եվ նա զնալիս, երբ մոտեցան Դամասկոսին, յանկարծակի նրա շուրջը երկնքից մի լույս փայլատակեց: Եվ երբ գետին ընկան, լսեց մի ձայն, որ իրեն ասում էր. «Սամո՞ղ, Սամո՞ղ, ինչու ես հալածում ինձ... »:

Ի՞նչ են ցույց տալիս կամ վկայում այսօրինակ տեսլիքները և այսօրինակ առանձնական, ընտրյալ հայտնությունները՝ տրված բացառիկ մարդկանց։ Դրանք ցույց են տալիս, որ բացի սովորական մարմնակազմից որոշ մարդիկ ունենում են նաև ոչ սովորական, «քացված» կամ սուրբ հայտնության արժանացած մարմնամասեր։ Այդ կարգի մարդկանց մարմնամասերը՝ աչքը (տեսողությունը), ականջը (լսողությունը), ձեռքը (գործունեությունը), ոտքերը (ընթացքը), սիրտը (բարոյական ու գաղափարական աշխարհը) և այլն, փոխսկած են կամ փոխսկերպված, այսինքն՝ նրանք ունեն արդեն իսկ նոր, հոգևոր աչք, ականջ, սիրտ և այլն, որոնք ի տարբերություն հին, աղանական մարմնամասերի, սուրբ են, նվիրագործված և որպես այդպիսիք, ծնունդ են տալիս բնույթով նոր՝ հոգևոր տիպի կազմախոսական ԴՄ-ների, որոնց բնութագրական բառային գուգորդումները կապված են հոգևոր բարձր իմաստների հետ՝ «նոր աչք», «նոր ականջ», «նոր սիրտ» և այլն։ Ցայտուն օրինակ է 50-րդ սաղմոսում հանդիպող կազմախոսական ԴՄ-ն՝ «Իմ մեջ մաքուր սիրտ հաստատիր, Աստուած» /Սահմ. 50: 12/, որտեղ առկա են դարձվածքի համար անհրաժեշտ հետևյալ գործունեները՝ կայունություն (կայուն է «մաքուր սիրտ» գուգորդումը), այլարերական իմաստ։ Իհարկե, ոչ բոլոր կայուն գուգորդումներն են, որ կարող են ունենալ ԴՄ-ի (դարձվածային միավորի) արժեք։ Օրինակ՝ «Ամեն անգամ ներս մտնելիս Արգամն ստիպված էր գլուխը կախել, որ ճակատը չխփի դռան վերին սեմին» նախադասության մեջ կայուն է «գլուխը կախել» գուգորդումը, որն այստեղ ունալ, ոչ այլարերական իմաստ ունի։ Մեկ այլ համատեքստում, սակայն, «գլուխը կախել» կապակցությունը կարող է ստանալ փոխարերական արժեք և հանդես գալ որպես սոմատիկ դարձվածք (օրինակ՝ «Իր վատ արարքի համար նա ստիպված էր գլուխը կախել»)։ Ընդ որում հարադրական կազմություն ունեցող նման դարձվածքները կարող են արտահայտվել նաև մեկ բարդ բառով, օրինակ՝ «գլխիկոր»։ Դիցուք, «Ես կարո՞ղ եմ արդյոք գլխիկոր չշրջել, եթե հիշում եմ իմ այն տգեղ արարքը...»։

- Ոճարաններն առանձնացնում են դարձվածքների մի քանի տեսակներ։
 1) դարձվածաբանական սերտաճումներ («աչքով տալ», «երես առած» և այլն), որոնք որշակի քերականական կարգերի կամ խոսքի մասերի պատկանող լեզվական միավորների բառերի անբաժանելի միավորումներ են,
 2) դարձվածաբանական միասնություն կազմող պատկերավոր արտահայտություններ, որոնք իրենց փոխարերական իմաստի շնորհիվ «օտարված» են իրենց անվանողական նշանակություն ունեցող լեզվական «նմանակներից», այդպիսիք են շատ իդիոմատիկ արտահայտություններ («գլխին տալ», «դուռը երեսին փակել», «արյունը բափել» և այլն), դրանք հատկանշական են նրանով, որ ունեն վերահմաստավորված և ընդհանրացված բովանդակություն /Եզեկյան, 2003: 182/, 3) դարձվածային կապակցություններ, որոնցից են՝ ինչպես վերը նշված «գլուխը կախել» արտահայտությունը, այնպես էլ «հոնքերը կիսել», «կանաչ ճանապարհ», «քիթը ջարդել» և նման արտահայտությունները /Եզեկյան, 2003: 183/, որոնք տեքստային ու համա-

տեքստային իրադրությունից կախված՝ կարող են ունենալ և՝ ուղղակի-անվանղական, և անուղղակի-այլարերական նշանակություններ՝ կատարել երկգործառույթ դեր:

Դեսք է ասել, որ տվյալ տեսակի դարձվածքները բազմաթիվ են ինչպես հայերենում և անգլերենում՝ առհասարակ, այնպես էլ Աստվածաշնչի հայերեն ու անգլերեն թարգմանություններում: Դարձվածքների մեջ մի հատուկ շերտ են կազմախոսական դարձվածքները՝ մարդու մարմնի մասերի (գլուխ, սիրտ, ձեռք, ոտք, աչք, քիթ, ականջ, մատ, թիկունք, երիկամներ, ատամ, բազուկ, ծունկ, ստիճան, մազ(եր), արտևանունքներ, լյարդ, աղիք(ներ), ճակատ և այլն) անվանումներով կազմված դարձվածքները: Ինչպես հատուկ է դարձվածքներին առհասարակ, այս կարգի կազմախոսական դարձվածքները ևս կայուն կառուցվածք և այլարանական նշանակություն ունեցող լեզվական միավորներ են, որոնց կազմավորման հիմքը բառերի ներումնակությունն է տարրեր նշանակություններով հանդիս գալու: Ֆ.Ա.Լիտվինը, խոսելով բառերի փոխարերական կիրառության մասին, նշում է, որ բառերի՝ տարրեր համատեքստերում տարրեր նշանակություններով հանդիս գալը պայմանավորված է ոչ միայն այդ համատեքստով, այլև բառերի լեզվական նշանակություններով կամ լեզվական ներումնակությամբ, որը և պայմանավորում է փոխարերականացման միջոցով դրսորվող բազմանշանակությունը /Լիտվին, 2005: 31/: Նման բազմանշանակ կիրառությունների պարագայում, Ն. Բ. Գվիշիանին գրում է՝ «հաճախ խոսքի մասի բառաքերականական նշանակությունների հարաբերակցությունը չի պահպանվում. բառի բերականական կարգային նշանակությունը հեռանում է նրա կոնկրետ բառական իմաստից՝ առաջ բերելով ձևաբանաշարահյուսական բազմագործառություն: Դա բառութիւն բառաբերականական այն ներումնակությունն է, որ բավարարում է մեկից ավելի խոսքիմաստային նշանակությունների»: Ն. Բ. Գվիշիանին, նման բազմագործառույթ բառերը քննելիս գնահատում է ինչպես նրանց ձևաբանաշարահյուսական, այնպես էլ բառադարձվածային հատկանիշները, նա նաև նշում է, որ բառերը լեզվական տարրեր կառույցներում իրականացնում են խոսքիմաստային տարրեր գործառույթներ, ինչպես, օրինակ, անգլերենի -ed և -ing մասնիկներով բառերը, որոնք ազատ կապակցություններում ունեն բայական, իսկ կայուն կապակցություններում՝ ածականական կիրառություն:

Բառերի նման բազմագործառությային կիրառումները և դարձվածային հատկանիշների ձեռքբերումը խիստ բնորոշ են Աստվածաշնչյան մտածողության՝ առհասարակ, և Աստվածաշնչյան կազմախոսական դարձվածքներին՝ մասնավորաբար: Վերջիններս հատկապես ուշագրավ են նրանով, որ իրենց մեջ ընդգրկում են վերը նշված՝ դարձվածային ասույթների հիմնական տեսակները՝ դարձվածաբանական սերտածումները, դարձվածաբանական միասնությունը և դարձվածային կապակցությունները:

Աստվածաշնչյան դարձվածքները, արքետիպային այլ ակունքներից (առասպելաբանությունից, կրոններից, պատմամշակութային անցյալից, արտալեզվական այլնայլ ոլորտներից) սերած դարձվածքների նման՝ ձևավորվել են

փոխարերությունների, փոխանունությունների և ոճական այլ հնարների միջոցով և ունեն գեղագիտական որոշակի արժեք:

Աստվածաշնչան և արքետիպային նշանակություն ունեցող այլ աղբյուրներից (տոհմացեղային հավատալիքներ, առասպելաբանություն, պատմալեզվամշակութային անցյալ և այլն) սերած տարալեզու շատ դարձվածքներ ընդհանրություններ ունեն միմյանց հետ: Նման ընդհանրությունները, որ արդյունք են դեռևս լրիվ չքացահայտված մի շարք գործոնների, առկա են ոչ միայն լեզվականորեն միմյանց մերձավոր, այլև միմյանցից հեռու համարվող լեզուների դարձվածքների միջև:

Անգլերենում և հայերենում «կրկնվող» կամ «հոմանիշ» ԴՄ-ների դիտարկումները թույլ են տալիս ճանաչել ոչ միայն առկա ընդհանրությունները, այլև լեզվամշակութային տեղայնացման արդյունք հանդիսացող որոշակի տարրերությունները. Վերջիններս էլ իրենց հերթին թույլ են տալիս խոսել տվյալ արքետիպային ԴՄ-ների ձեռքբերած առնչանակությունների և փոխակերպումների մի քանի աստիճանների մասին: Այս առումով ուշագրավ են, օրինակ, հայերեն-անգլերեն որոշ գուգադրությունները, այնպիսիք, որոնք ունեն, այսպես ասած, դարձվածային նույն կենտրոնը, որը կարող է լինել, դիցուք, սիրտը, լեզուն, աչքը և այլն: Բերենք որոշ օրինակներ.

«Աչքերը ճակատը թռան» – Smb's eyes nearly popped out of his head. –
Глаза на лоб лезут;

«Աչքերը բացվեցին» – Smb had his eyes opened; smth made smb open his eyes. – Глаза открылись;

«Ուր աչքը կտրի» («ուր աչքը նայի») – Every which way but loose. – Куда глаза глядят;

«Սեփական աչքով տեսնել» – To see smth with one's own eyes; to see smth for oneself. – Видеть своими глазами.

Իհարկե, այս փորբարիվ օրինակներով չեն վերջանում «աչքով» կազմված ԴՄ-ները. դրանք բազմաթիվ են՝ «աչքից ընկնել», «աչքով տալ», «աչքկապուկ», «աչքալույ», «աչքի ցանկություն» և այլն. դրանք ունեն նաև իրենց այլալեզու տարրերակները: Վերը նշված օրինակներն այստեղ ընտրվեցին 1) որպես ընդհանրություն, ինչպես նաև որոշակի տարրերությունների նմուշներ, 2) նաև որպես արքետիպային իրենց նախօրինակները ունեցող ԴՄ-ներ՝ որպասիք են, օրինակ, «Աչքերը խավարել» կամ «Աչքերը բացվեցին» դարձվածքները: Սա ամենին էլ չի նշանակում, որ մյուսները չունեն իրենց արքետիպային՝ սկզբնատիպային ձևերը. անշուշտ, ունեն, բայց նշանակում առավել ցայտուն են և անշփորելի, իբրև աստվածաշնչան հայտնի սկզբնատիպայի վրա հիմնված ԴՄ-ներ: Այսպես, Աստվածաշնչում նշվում է.

«Բայց եթե քո աչքը վաստ է՝ քո ամբողջ մարմինը խավար կիմի. ուրեմն, եթե քո մեջ եղած լույսը խավար է, խավարն, ուրեմն, որչափ ևս... »: /Մատթ. 6: 23/ – “... but if your eye is not sound, your whole body will be full of darkness. If then the light in you is darkness, how great is the darkness!” /Matt.6: 23/

Հաջորդ՝ քննարկվող մարմնամասը մարդու գլուխն է, որով կազմված ԴՄ-ները շատ են: Դրանք սերում են իին հավատալիքներից, Աստվածաշնչից, առասպելաբանական-բանահյուսական սյուժեներից. դրանցում գլուխը համարվում է առաջնային, առաջնորդող, ամենայն ինչից բարձր՝ արժանի պատվի և երկրպագության: Ուշագրավ ընդհանրություններ են հայտնաբերվում «գլուխ» հասկացույթով տարալեզու ԴՄ-ների միջև, թեև առկա են նաև որոշակի տարբերություններ: Հարկ է նշել, որ այդ տարբերությունները հաճախ միևնույն լեզվանական արքետիպը այլևայլ կողմերից բացահայտող տարալեզու դրսերումներ են. մոտավորապես այն, ինչ բարգմանությունների համար ասել է Ա. Վ. Ֆյոդորովը. «Թարգմանությունները կարող են լուսավորել բնագրի տարբեր հայեցակերպերը՝ որպես անհրաժեշտ նյութ ծառայելով բնագրի առավել լրիվ, առավել կատարյալ բացահայտման համար» /Ֆեդորով, 1971: 303/: Ահա, այդ նույն դերակատարումը կարող են ստանձնել սույն եռալեզու ԴՄ-ները՝ տարբեր երանգավորումներով և մասնավորեցումներով՝ առավել ամբողջական դարձնելով նշյալ դարձվածքները, այս դեպքում՝ կապված «գլխի» հետ:

«Գլուխ առաջին գլխում...» – First and foremost – В первую голову книги.

«Գլուխը պտտվում էր» («գլխապտույտ») – Smb's head goes round (spins); smth makes smb's head go round (spin); smth makes smb dizzy (giddy). – Голова шла кругом.

«Գլուխ ունի ուսերի վրա» – Smb has a (good) head on his shoulders. – Иметь головы на плечах.

«Երևում է՝ գլխովն է» («Գլուխ ունի») – A person with a (good) head on his shoulders; a bright chap (girl). – Человек с головой.

Չատ են նաև ընդհանուր ԴՄ-ները՝ կապված սնահավատության դրսերումների հետ.

«Սիայն իմ դիակի վրայով» – Over my dead body. – Только через мой труп.

«Նույն ոզով» – In the same spirit. – В том же духе.

«Ժերև ձեռք...» – Smb easily gains success in any undertaking and brings good luck to his partners. – Легкая рука.

«Ձեռքերը քոր են զալիս» – Smb's fingers itch to do smth, smb has an itch. – Руки чесутся.

«Հինգ մատի պես» – To know smth, smb like the back of one's hand. – Как свои пять пальцев.

«Փրփուրը բերանին – Passionately, heatably, vehemently. – С пеной у рта, «Սիրտը արյուն լցվել», «Սրտից արյուն է գնում» – Smth makes smb's heart bleed; smb's heart bleeds for smb. – Сердце кровью обливается;

«Ականջը կանչել» – It makes smb sick to hear smth. – Уши вянут;

«Կարմրել մինչև ականջների ծայրը» – To blush all over one's face – Краснеть до самых ушей.

Անշուշտ, հնարավոր չէ ասել, թե հատկապես ե՞րբ և ո՞ր լեզվամշակոյթում, կյանքային ի նշ իրավիճակում է առաջացել, ասենք, «Հինգ մատի պես... » ԴՄ-ն ու տարածվել այլուրեք, բայց հնարավոր է, արձանագրել, որ «Երեսով», «Փրփուրը բերանին տվեց»-ով «ի սրտե արյուն լացել»-ով, «Կարմրել»-ով ԴՄ -ները հաստատապես ունեն իրենց աստվածաշնչյան արքետիպային ձևերը, որոնք տարածվել ամրակայվել ու շրջանառու են դարձել տարբեր լեզվամշակույթներում՝ դառնալով այդ լեզուների բառապաշտի և գեղարվեստական բառ ու բանի անքակտելի մասը:

Բերված զուգադրական օրինակներում կան այնպիսիք, որ կարող էին ստեղծված լինել թե՝ վաղնջական ժամանակներում (որպես մարդու տարրեր մարմնամասերին վերագրված հավատալիքներ) թե՝ համակարգված կրոնների տարածման ժամանակաշրջանում, թե՝ ժողովուրդների պատմամշակութային զարգացումների ընթացքում: «Միայն իմ դիակի վրայով» ԴՄ-ն, օրինակ, կարող էր ստեղծված լինել առասպելական հերոսների, իսկ «Չեռքերը քոր են զայխ» արտահայտությունը՝ հնագույն հավատալիքների տիրապետության շրջաններում: Բոլոր դեպքերում վերջին տիպի՝ սնահավատության արյունք հանդիսացող ԴՄ-ները բացակայում են Սուրբ գրքում. եթե ինչ որ արձանագրումներ էլ կան, ապա դրանք կրում են խիստ ժիսողական, մերժողական բնույթ և զատագովում են զորավոր և ողորմած Աստծո պաշտամունքը՝ Սուրբ Հոգով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եղեկյան Լ. Կ. Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, ԵՊՀ, 2003:
2. Литвин Ф. А. Многозначность слова в языке и речи, изд. 2. М.: Комкнига, 2005.
3. Федоров А. В. Основы общей теории перевода. М.: Высшая школа, 1983.

А. ГРИГОРЯН – *Лингвокультурные, переводческие варианты универсальных фразеологических единиц и их духовные значения.* – Статья посвящена рассмотрению связей между ранними верованиями и Библией, в результате чего возникли многочисленные архетипные фразеологические единицы. Библейские фразеологические единицы, как и другие фразеологические единицы, образованные из других источников (мифология, религия, историко-культурное прошлое), имеют в основе метафору, метонимию, а также другие стилистические средства и обладают определенной художественной значимостью. Сопоставительный анализ перевода английских, русских и армянских вариантов выявляет как сходства, так и различия.

Ключевые слова: верование, библейские соматические фразы, фразеологические единицы, прототип, лингвокультура, лингвостилическое средство, сопоставительный перевод

A. GRIGORYAN – *Linguocultural, Translational Options of Universal Phraseological Units and their Spiritual Meanings.* – In the paper the ties between the earliest beliefs and the Bible, which gave birth to numerous archetypal phraseological units, are discussed. They deal with the anthropological factor, that is, the great background which was preserved in various ethnic communities and passed from generation to generation as a special way of linguistic mentality. The Biblical phraseological units like other phraseological units derived from other sources (mythology, religion, historical-cultural past) were formed by means of metaphors, metonymies and other stylistic means and have a certain literary value. The contrastive analysis of translations (English, Russian and Armenian) reveals similarities as well as differences.

Key words: belief, biblical somatic phrases, phraseological units, archetype, biblical lingvoculture, linguostylistic means, contrastive translation

Քրիստինե ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լուսինե ԹՌՎՍԱՍՅԱՆ

Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական
լեզվահասարակագիտական համալսարան

ՀԱՍՏԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵԶՐԵՐԻ ՀԱՍԱՐԺԵՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ

ՀԱՍՏԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵԶՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ԶՈՒԳԱՉԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Համակարգչային տեխնոլոգիաների կտրուկ աճը, համակարգչային ծառայությունների շրջանակների ընդլայնումը և տեղեկատվական տեխնոլոգիաների բուն զարգացումը ուղղվում են այդ ոլորտի եզրարանական բառաֆոններ քարզմանարար ներկայացնելու հրատապ անհրաժեշտությամբ։ Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել համակարգչային եզրերի հայերեն համարժեքների ստեղծումը և զուգածնությունները։ Ուսումնասիրվել են հայերեն համակարգչային եզրարանության համալրման աղյուրները, համակարգչային եզրերի բառարանների տվյալները, որոնք զուգադրվել են մեր կողմից ընտրված 57 եզրերի հայերեն համարժեքների հետ, վեր են համվել զուգածնությունները, որոշվել են դրանց առաջացման և բազմազանության հիմնախնդիրները և մշակվել են հիմնադրույթների զուգածնությունների վերացման համար։

Բանափառ. հայերեն համակարգչային եզրարանություն, համակարգչային եզրերի իմաստային և կառուցվածքային վերլուծություն, բառակազմություն, արևմտահայերեն եզրեր, բառակապակցություն, բառերի վերափառավորություն, փոխառություն

Արդի ժամանակաշրջանում ՀՀ-ում համակարգչային տեխնոլոգիաների կտրուկ աճը, համակարգչային ծառայությունների շրջանակների ընդլայնումը և տեղեկատվական տեխնոլոգիաների բուն զարգացումն ուղղվում են այդ ոլորտի եզրարանական բառաֆոններ քարզմանարար ներկայացնելու հրատապ անհրաժեշտությամբ։

«Հայերենի բառային կազմի հարստացումը մեծ նասամք կատարվում է լեզվի սեփական միջոցներով, նրա ընձեռած ներքին հնարավորությունների գործադրմամբ։ Հայոց լեզվի բառապաշտի հարստացման կարևորագույն միջոցը նրա ներքին հնարավորություններն են սեփական բառակազմությունն ու բառաստեղծումը, բառերի վերաբանատարակումը» /Օհանյան, 1982: 15/։

Հայերեն համակարգչային եզրարանության համալրման աղյուրներն են.

1. Բառակազմություն – Օր.՝ խտասկավառակ (CD, DVD); փոստաղբ (spam); ՀՏՀ՝ հաճախ տրվող հարցեր (FQA – frequently asked questions),

2. Բառակապակցությունը – Օր.՝ անձնական թվային օժանդակիչ (PDA – personal digital assistant),

3. Բառերի վերահմաստավորումը –Օր.` մկնիկ (mouse),

4. Փոխառությունը –Օր.` մոդեմ (modem), պորտալ (portal):

Հայերենով առկա են համակարգչային եզրաբանության բացատրական, քարգմանական բառարաններ և այլ աշխատություններ:

«Ինֆորմատիկա, Ինտերնետ: Անգլերեն-ռուսերեն-հայերեն բացատրական բառարանը» պարունակում է շուրջ 4000 եզրեր՝ ինֆորմատիկայի, հաշվողական տեխնիկայի, համակարգչային ցանցերի, համացանցի բնագավառներից /Ղազարյան, Ստեփանյան, 2000: 4/:

«Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարանը՝ համակարգչային եզրերի հայերեն մշակումը և բացատրական տեքստի հայերենացումը, ներկայացնում է համակարգչներին և համացանցին վերաբերող շուրջ 10000 եզրեր: Եզրերի համար տրված են հայերեն համարժեքները, ինչպես նաև տվյալ եզրի համառոտ բացատրությունը կամ սահմանումը: Հեղինակը, քարգմանելով Dictionary of Computing բառարանը, նպատակ է ունեցել ստեղծել հնարավորինս հայեցի և միասնական եզրաբանություն, եզրերի բացատրությամբ օգնել դրանցով արտահայտվող հասկացությունների հնարավորինս ճշգրիտ ընկալմանը, աշխատել է հայերեն եզրերը կառուցել այնպես, որ մեկ հասկացության համապատասխանի մեկ եզր, սակայն, ինչպես և այլ լեզուներում, այնպես էլ հայերենում դա ոչ միշտ է հնարավոր: Պատճառներից մեկն այն է, որ նախկին տեխնիկական հասկացություններից յուրաքանչյուրին հատկացված է եղել որոշակի եզր, սակայն համակարգչային տեխնիկայի զարգացման հետ անհրաժեշտություն է առաջացել նույն եզրին վերագրել այլ իմաստներ ևս /Գրիգորյան, 2004: 4/:

«Անգլերեն-հայերեն կոմպյուտերագիտության բառարանը» պարունակում է ինֆորմատիկայի, ծրագրավորման և անգլերեն համակարգչային եզրաբանության ավելի քան 4000 եզրերի ու բառակապակցությունների բարգմանությունը, որոշ եզրերի և բառակապակցությունների բացատրությունները: Որոշ բառեր ու բառակապակցություններ ուղեկցվում են մեկից ավելի բացատրություններով: Բառարանը կազմելիս հեղինակներն օգտագործել են հայերեն, ռուսերեն, անգլերեն բառարաններ, բացատրական բառարաններ: Հեղինակներն աշխատել են թափանցել ծրագրավորման առարկայական տիրույթը և հարազատ մնալ ծրագրավորման բոլանդակության ու մտածելակերպին /Ապրեսյան, Ռոկանյան, Ստեփանյան, 2005: 3/:

Microsoft ընկերության և Microsoft Innovation Center Armenia գրասենյակի գլխավոր տնօրեն Գրիգոր Բարսեղյանի նախաձեռնությամբ Հայաստանում ներկայացվել են Windows, Windows 7, Microsoft Office 2007, Microsoft Office 2010-ի հայկական տարբերակները: Նրա խոսքերով վերջին տարիներին բավական աշխատանք է արվել ծրագրերի հայաֆիկացման ուղղությամբ, և Microsoft-ի շատ ծրագրեր հասանելի են նաև հայերենով: Հայկական տարբերակում բավականին դրական տեղաշարժ կա. օպերացիոն համակարգի նախորդ տարբերակների հետ համեմատած, այս տարբերակում

հայերեն սխալների ուղղման (spell check) ծրագիրն առավել ճշգրիտ է սուսուցում: Բարձրացել է եզրաբանության և բարգմանության որակը, և ոլորտի մասնագետներից շատերն օգտագործում են հայերեն եզրերը /<http://armenpress.am/arm/news/715308>, 03.28.2015/:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի ավագ գիտաշխատող Սուսաննա Տիոյյանը ուսումնասիրել է ինտերֆեյսի հայերեն տարրերակը, քննել եզրերի կառուցվածքը և իմաստը: Ըստ կառուցվածքի՝ հեղինակն առանձնացրել է անորոշ դերբայով արտահայտված բայեր՝ չեղարկել, մեկնարկել, տեղակայել, -ել-ով կազմություններ՝ արտածել, ապացուցել, գումարել, -ում գոյականակերտ ածանցով կազմվածներ՝ մատչում, համաօգտագործում, կապակցում, -ույր-ով՝ տեղեկույթ, միույթ, -ուրյուն-ով՝ գոծունություն, տեղադրություն, -ք-ով՝ նիշք, միացք, -ավար ածանցով կազմված սկավառակավար, որ հանդես է գալիս «գործիք» իմաստով: Հեղինակը եկել մի շարք եզրահանգումների նշելով, որ բարգմանված եզրերի շարքում առկա են մի շարք սխալ բառագործածություններ՝ մատչում, արդիացնել, լուրախումք, հանդիպում են ածանցավոր ոչ ճիշտ կազմությունների գործածության օրինակներ սկավառակավար, բարգմանված եզրերով կազմված նախադասություններն հայերեն չեն ինչպես կառուցվածքի ու շարադասության, այնպես ել իմաստային տեսակետներից, օր՝

Հնարեք այս տուփը, որպեսզի միայն դուք մատչում ունենաք:

Յուցազրում է Աիշրեր, պահակներ, ծրագրի կարծատներ և միույթներ սեղանի վրա:

Հեղինակն իր մտահոգությունն է հայտնում այսպիսի անհեթեթության ստեղծման և տարածման շորջ /Տիոյյան 2007; 2011/:

Վերջին երկու-երեք տասնամյակներում, երբ տեղի է ունենում տեղեկատվական համակարգերի աննախաղեալ առաջընթաց, նորաստեղծ ու նորիմաստ հարյուր-հազարավոր բառեր են ներբափանցում գրական հայերեն (թե արևմտահայերեն, և թե արևելահայերեն): Հայերեն նոր եզրերի ստեղծման հարցում արևմտահայերենն ավելի բժանողիք է, որն ունի իր հիմնավոր պատճառները: Գրական հայերենի այս տարրերակն առ այսօր մտավորականության, գրական մշակների, լրատվության ոլորտում և ուսումնական հաստատություններում գործող անխոնջ անհատների շանքերի շնորհիվ փորձում է պահպանել իր ինքնատիպությունը և գերծ մնալ օտարամուտ ազդեցություններից /Տիոյյան, 2014: 54; Մերկերեան, Ուղեցոյց Ա, 1993: 3/:

Սակայն ինչպես գրում է Ռոպէր Տէր Մերկերեանը «Լեզուական մարզին մէջ բացարձակ անշարժութիւն գոյութիւն չունի, և չկայ լեզուի մէջ իսկ օրինակ, որ դիմանայ դարերու հոլովոյթին. Շարունակաբար կարելի է սահմանել շօշափելի լեզուական տեղաշարժներ, քանի որ լեզուին զարգացումը անխուսափելի է» /Մերկերեան, Ուղեցոյց Ա, 1993: 4/:

Փոխառությունների և պատճեննան միջոցով հասկացությունները մայրենի լեզվում ներկայացնելու եղանակին անդրադառնալիս և ծայրահեղու-

թյուններից խուսափելու նպատակով անհրաժեշտ է տարբերել բուն եզրային միավորները (զուտ եզրերը), որոնք որոշակի հասկացությունների լեզվական միավորներ են (քեռնում, ներբեռնում, գերբեռնում և այլն) անվանակարգային բառերից (որևէ եզրային համակարգում մանր մասերի անվանումները ֆայլ, կոդ, չփի, բիթ և այլն): Նման տարբերակման դեպքում ավելի կյուրանա հայերենում լեզվի ներքին միջոցներով, լեզվի նախորդ փուլերից վերցրած բառերի վերահմաստավորմամբ եզրային համակարգ ստեղծելը /Սարգսյան, Տիոյան, 2014: 176/:

Բոլոր դեպքերում, ողջունելի է, որ արևմտահայերենը ջանում է եզրերը խմբավորել ըստ ոլորտների և լեզվի ներքին միջոցներով, հայերենի բառարմատներով արտահայտել նոր հասկացությունները, փոխարինել դրանցով օտարամուտ բառաշերտը: Սփյուռքում գնահատելի աշխատանք է կատարել Արևմտահայ աշխարհաբարի եզրարանական խորհուրդը /Տիոյան, 2014: 55/: «Այս է Արևմտահայ Աշխարհաբարի Լեզուաբանական Խորհուրդին ամենահիմնական նպատակը և բուն ծրագիրը՝ միասնականացնել, համակարգել, ինչպես նաև կերտել և առաջարկել նոր բարեր՝ անհրաժեշտ նոր գաղափարներ արտայատելու համար» /Մերկերեան, Ուղեցոյց Ա, 1993: 60/:

Խորհուրդն իր հրատարակած չորս «Ուղեցոյց»-ներում առաջարկում է բառային ցանկեր՝ հիմնականում եզրեր, որոնք, հեղինակների հավաստմամբ, ոչ օրենքի ուժ ունեն, ոչ էլ պարտադիր գործածվելու հավակնություններ: Անգլերենից, ֆրանսերենից և գերմաներենից պատճենված այդ բառերն են.

1. Լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող և շրջանառող եզրեր՝ ծածկաբառ, հրամանաշար, ստեղծաշար,

2. Դեռևս անկայուն և չկանոնարկված եզրեր,

3. Խորհրդի կողմից կազմված և առաջարկված նորագույն եզրեր, որոնք արտահայտում են նորահայտ գաղափարներ, և որոնք կարող են ընդունվել կամ մերժվել լեզուն կիրառողների կողմից՝ հեռապատճեն, միջերեսակ, թվանշագրիչ և այլն /Տիոյան, 2014: 55/:

«Ուղեցոյց»-ներում բերված շատ բառեր գործածական են և՝ արևմտահայերենում, և արևելահայերենում, ինչպես կրիչ, ծածկաբառ, ստեղծաշար, հրամանաշար և այլն, իսկ եզրերի մի մեծ խումբ (ասեղնատպիչ, հեռապատճեն, թվանշագրիչ, ընտրանք, դյուրաքեք սկավառակ), սպասում է կիրառության իր իրավունքին /Տիոյան, 2014: 56/:

Արևմտահայերեն եզրերը արևելահայերենի բառապաշարի հարստացման աղբյուրներ են, քանի որ կերտվում են.

1. Նոյն լեզվանյութից,

2. Լեզվամտածողության նոյն սկզբունքներով,

3. Բառակազմության «խնայողական», միևնույն սկզբունքներով /Տիոյան, 2014: 56; Մերկերեան, Ուղեցոյց Գ, 1998: 63-64/:

Այնպես որ, որևէ նոր հասկացություն արտահայտելու համար արևելահայերենում առկա բացը հաճախ լրացվում է արևմտահայերենի օգնությամբ,

եթե այնտեղ արդեն կան անհրաժեշտ միավորները /Տիոյան, 2014: 56; Մերկերեան, Ուղեցոյց Գ, 1998: 11/:

«Դարուս վերջին տասնամեակներուն երևան եկած ճգտումներէն ամենէն յատկանշականը՝ անկասկած տեղեկագիտութեան մուտքն է ամէն մարզէ ներս: Ամերիկայի Միացեալ Նահանգները կրնան անոր հայրենիքը նկատուիլ, որովհետև նախ և առաջ հո՞ն կը կերտուին անոր վերաբերեալ տեսական յլացումներն ու գործնական կիառութիւնները, ապա կը տարածուին ամէնուրեք: Հետևաբար՝ սոյն բնագաւառին գիտական ու ճարտարարութափական բոլոր եզրերը անգլերէնով կ'արտայայտուին, ապա կը սկսին համայն աշխարհ շրջիլ:

Գերնանիոյ և Ուուսիոյ մտաւրականները կրաւրական դիրք կը բռնեն այս մշակութային ողողումին առջև: Հետևաբար, առանց դոյզն փոփոխութեան և արժանապատութեան հարցի, նո՞յն բառերը կը գործածեն իրենց լեզուին մէջ: Իսկ Ֆրանսան գնահատելի ջանք կը բափէ իր մայրենիին անաղարտութան համար. Օտարաբանութեան համաճարակին դէմ կուրծք պարգևով՝ նո՞յն ասոյթներ կը դարբնէ: Սակայն չի կրնար ճերքագատուիլ լատինական ու յունական արմատներէն. անո՞նց կը դիմէ՝ որևէ նորաբանութիւն կազմելու համար: Մինչդեռ հայերէնը անզուգական է այս առնչութեամբ. Ոչ մէկ օտար լեզուի կը կարօտի՝ նոր եզրեր հնարելու համար» /Թօփուզիսաննեան, Մերկերեան, Ուղեցոյց Ա, 1993: 59/:

Ինչպես նշում է Ս. Տիոյանը, այդ համարժեքները բավականաշափ՝ ճշգրտորեն են արտահայտում օտար եզրերի իմաստները, ինչը հեղինակների օտար լեզուներին գերազանց տիրապետելու արդյունք է: Երբեմն օտար եզրերի պատճենումը կատարվում է մի քանի տարբերակներով՝ իմաստային զուգահեռներով՝ հնարավորություն տալով ընտրություն կատարել (օրինակ՝ անալոգարվանշանային կերպափոխիչ, համօրինակ (արևել.) – հանգույն, հանգունական, նմանակ (արևմտ.)), որը դարձյալ իմաստի լիարժեք արտահայտման ճգոտումով է պայմանավորված /Տիոյան, 2014: 58-59/:

Ս. Տիոյանն իր հոդվածում ներկայացրել է արևելահայերենում առկա համակարգչային բառապաշտարի այն մասը, որն արևմտահայերենում ունի զուգահեռներ՝ պարզելու համար, թե այդ զուգադրության արդյունքում եզրերից որոնք կարելի է հանձնարարելի համարել երկու գրական տարբերակների համար՝ «ելման կետ ընդունելով անգլերէնը, քանի որ համակարգչային եզրերի ծագման՝ փոխառության աղբյուրը անգլերենն է» /Տիոյան, 2014: 61-62/:

Ներկայացնենք եզրային ցանկերի օրինակներից մի քանիսը.

1. Algorithm – արևելահայերենում ստեղծվել են ալգորիթմ, մերող, կանոն համարժեքները, իսկ արևմտահայերենում՝ հրամանաշար-ը. կիրառելի են ալգորիթմ-ն ու հրամանաշար-ը:

2. Browse (to) – զննարկել, դիտել, քերթել – աչք անցնել. արևմտահայերենի աշք անցնել-ը մեզանում աչքի անցկացնել տարբերակով է գործածվում, որն հաջողվածն է բերված երերից:

3. Cursor – կուրսոր, շարժագիծ – նշիչ. ինչպես փորձն է ցույց տալիս, մենք դեռ հակված եք պատճենումների, ուստի կուրսոր էլ գործածում ենք, սակայն նշիչը ի վերջո դրան կփոխարինի:

4. Soft return – ինքնազործ տեղափոխում. ունենք միակ համարժեքը՝ արևմտահայերենը:

Եզրարանական համակարգի գուգադիր քննությունից հեղինակը եկել է հետևյալ եզրահանգումներին՝

1. Տարբեր բառարաններից քաղված՝ արևելահայերեն-արևմտահայերեն գուգահեռ օրինակներում շատ դեպքերում արևմտահայերեն եզրերն ավելի հաջողված են:

2. Սի շարք դեպքերում օտար եզրի դիմաց միայն արևմտահայերենն ուներ համարժեք:

3. Արևելահայերենում ընդունված մի շարք եզրերի դիմաց ապագայում կարելի է գործածել արևմտահայերենի ձևերը /Տիոյան, 2014: 79/:

Համակարգչային եզրերին ուղղակի կամ կողմնակիրեն առնչվող գործերից ու բառարաններից կարելի է հանգել այս հետևողություններին՝

1.Համակարգչային եզրերի ուսումնասիրության համար արդեն առկա է բավականաչափ նյութ,

2.Գրքերից ամեն մեկի հեղինակը յուրովի է ներկայացնում իր աշխատանքը, և քաղված նյութը պետք է ի մի բերել ու հասնել եզրային միարժեքության,

3.Դրանից հետո միայն կարելի կլինի կատարել այդ եզրերի իմաստային և կառուցվածքային վերլուծության /Տիոյան, 2011: 301/:

Համակարգչային եզրահամակարգը ներկայանում է՝ որպես թարգմանություն՝ գերազանցապես անգիտենից և ֆրանսերենից՝ ուղղակի, ուստի ներկայացնությունում միշնորդավորված։ Այս եզրահամակարգը սպասարկում է ոչ միայն համակարգչային ամենատարբեր ծրագրերին ու դրանց նկարագրմանը, օրինակ՝ Հայերենի ազգային կորպուսին, թարգմանչական UNL համընդհանուր լեզվին, ABBY համակարգին և այլն, այլև բուն համակարգչային տարրական ու բարձրագույն ուսուցման դասընթացներին, ուսումնական և գիտամեթոդական ձեռնարկներին /Տիոյան, 2012: 43/։

Համակարգչային եզրարանական համակարգի հետ կապված լեզվանական խնդիրներից առաջինն ու կարևորագույնը եզրային գուգածնությունների առկայությունն է նշված ոլորտում /Տիոյան, 2013: 81/։

Հայտնի է, որ համակացություն-եզր հարացույցի հենց առաջին դիտարկման ժամանակ իմք է ընդունվում մեկ գիտական հասկացությանը մեկ բառ սկզբունքը /Սարգսյան, Տիոյան, 2014: 176/։

Ս. Տիոյանն իր հոդվածում նշում է, որ ուսումնասիրության համար կուտակել է մեծ քանակությամբ նյութ՝ համակարգչային եզրերի բառարաններից, համակարգչային դասընթացներում իրքն հավելվածներ տրվող բառացանկերից, նույն դասընթացների շարադրանքում առկա համապատասխան բառային միավորներից, Արևմտահայ աշխարհաբարի եզրարանական

խորհրդի Ուղեցոյց Ա-ից, ինչպես նաև «Լեզվաշխարհ» պարբերականի անդրանիկ համարում մեկ էջով տրված համակարգչային եզրերից, Բ. Զանփոլանդյանի «Քոմիյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքներ» բուհական դասընթացից (այն կարևորվում է գրքում գետեղված բացատրական և ենթատեքստային բառարանների առումով, բայց շատ է տուժում շարադրանքի լեզվի առումով՝ կրելով ուսերենի լեզվամտածողության դրոշմը, օր. հիերարխիկ համակարգ), սակայն ուսումնասիրվող եզրերի քննությունը դժվարանում է, քանի որ դրանք մեկտեղված չեն ոչ նույն հեղինակի, ոչ էլ հեղինակային խմբերի մեկ կամ մի քանի աշխատություններում. գրքերի հեղինակները տարբեր ոլորտներում բարձրակարգ մասնագետներ լինելով՝ լեզվաբաններ չեն (բացառությամբ «Ուղեցոյցից») /Տիոյան, 2012: 43/:

Այս աղբյուրներից քաղված նյութը համակարգչային եզրերի լեզվաբանական ուսումնասիրության համար լայն դրու է բացում: Այս պարագայում խնդիրը հանգում է ոչ միայն մեկ եզրի դեմք բերված առնվազն հիմքի կամ վեցի մեջ ընտրություն կատարելուն, այլև եզրի կառուցվածքային վերլուծություն իրականացնելուն: Ըստ դեպքերում ընտրությունը դժվարությունների է հանգեցնում: Իսկ երկրորդի համար անհրաժեշտ է կատարել ամբողջ եզրահամակարգի մանրամասն ուսումնասիրություն, որը երկար տարիների գործ է /Տիոյան 2012: 47/:

Անհերթելի է, որ այս ոլորտին առնչվող տարբեր մասնագետների կողմից հսկայական աշխատանք է կատարվել, սակայն խնդիրը մնում է չլուծված. բոլոր հեղինակները օտար եզրերի դիմաց երկու և ավելի հայերեն ու հայատառ համարժեքներ են դնում ընտրությունը թողնելով օգտագործողներին: Մինչդեռ այստեղ նախ լեզվաբանական լուրջ և հետևողական ուսումնասիրության անհրաժեշտություն կա, որից հետո իրենց ծանրակշիռ խոսքն ունեն ասելու պատկան մարմինները՝ լեզվի պետական տեսչությունը, որը չի ստանձնում այդ գործը, իսկ մյուսը՝ Հայերենի եզրաբանության բարձրագույն խորհուրդը, որն այժմ չի գործում /Տիոյան, 2013: 81/:

Ո. Թարումյանի «Չրույցներ համակարգչի մասին» գրքի հավելվածը թե՝ բարգմանական է, թե՝ բառակազմական և թե՝ բացատրական: Բառարանը 479 եզր է ներկայացնում, իսկ բառարներով գրեթե հնագապատկվում է: Բառարանում տրվում են՝ անգլերեն եզրը, դրա ուսերեն համարժեքը կամ համարժեքները, ապա՝ հայերենը: Հայերենի մասում մի քանի տարբերակների առկայության դեպքում Ո. Թարումյանն ընտրում է դրանցից այն միակը, որը կաշշատի բառաբնում /Տիոյան, 2013: 82/:

Օրինակ՝ load – загрузка – *բեռ*, *բեռնվածք*; load – загружать – *բեռնել*; loading – загрузка – *բեռնում*; loadable – загружаемый – *բեռնելի*; loader – загрузчик – *բեռնիչ*:

Սակայն հանդիպում են բացառություններ, երբ բառաբնում անգլերեն մեկ եզրին տարանջատված իմաստերով հայերեն բազմաթիվ բառեր են համապատասխանում: Նման դեպքերում ընտրությունը հասուլ մոտեցում է պահանջում:

Օրինակ՝ direct – 1. направлять, 2. управлять – 1. **ուղղ(որդ)ել**, 2. կառավարել, տնօրինել; direct – прямой, непосредственный – **ուղիղ**, **ուղղակի**, **անմիջական**; direction – 1. направление, 2. управление – 1. **ուղղություն**, **ուղղ(որդ)ում**, 2. **կառավարում**, **տնօրինում**; directly – 1. прямо, 2. непосредственно – 1. **ուղիղ**, 2. **անմիջականորեն**; directory – каталог, директория – **ցուցակ**:

Եզրերի գուգածնության մյուս աղբյուրը հիմք լեզվի (այս դեպքում՝ հազվադեպ անգլերենի, իսկ հիմնականում՝ միջնորդ լեզվի՝ ռուսերենի) տարրերակայնությունն է.

1. Անգլերեն եզրի դիմաց ռուսերենի երկու, իսկ հայերենում մեկ եզր. оп.՝ configuration – 1. конфигурация, форма, 2. конфигурация, состав – ձևակազմ,

2. Անգլերենի և ռուսերենի մեկական եզրերի դիմաց հայերենն ունի երկուար. օր. filter – фильтр – մաղ, զտիչ (նախընտրելի է զտիչը),

3. Անգլերենի մեկ եզրին ռուսերենում և հայերենում երկու և ավելի համարժեքներ են համապատասխանում, և ընտրություն կատարելիս այսուղև կարևորվում է անգլերեն եզրի իմաստի ստույգ փոխադրումը,

4. Եթի հայերեն համարժեքները իմաստով մոտ կամ հոմանիշ են, և դրանցից ընտրություն կատարելը համեմատաբար դյուրին է՝ main – главный, բազուայ – գլխավոր, հիմնական, մեծ,

5. Եթի հայերեն համարժեքները միանգամայն տարրեր իմաստներ են արտահայտում՝ pad – 1. клавиатура, 2. подставка – 1. ստեղնաշար, 2. տակդիր /Տիոյան, 2013: 82-87/:

Ս. Տիոյանն առանձնացրել է նաև դեպքեր, երբ գուգածնության աղբյուրը անգլերեն եզրի խոսքիմասային պատկանելությունն է. միևնույն բառը նույն ձևով անգլերենում կարող է հանդիս գալ ձևաբանական մի քանի արժեքով (գոյական, բայ, ածական), ուստի կրկնվել մի քանի անգամ՝ բարգմանվող լեզուներում ունենալով համապատասխան բարգմանություններ, որտեղ էլ դրսնորում են գուգածնություններ, որոնց ձևաբանական արժեքը խոսքաշարում հստակորեն զանազանվում է, օրինակ՝ **index** – индекс – ցուցիչ, ցուցակ, **index** – индексный – ցուցչյին, **index** – индексировать – ցուցչավորել:

Սակայն թիշ չեն դեպքերը, երբ երեք լեզուներում ունենք լիարժեք համապատասխանություն՝ մեկական եզրեր. օր. blank – пробел – բացատ /Տիոյան, 2013: 82-88/:

Այսպիսով, համակարգչային եզրերի ուսումնասիրություններից կարող ենք եզրակացնել, որ դրանց կառուցվածքային, իմաստաբանական, բառակազմական վերլուծություն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ հայերեն համարժեքների ամբողջական ցանկը: Հանակարգչային հայերեն եզրաբանությունը որպես համակարգ ամբողջական և միասնական չէ՝ ի տարրերություն անգլերենի, եզրերի ստեղծման ժամանակ նրանց ձևի ամբողջականության սկզբունքը լիարժեք չի գործում: Եզրերի միարժեքության

դեպքում միայն այս եզրահամակարգը կապահովի գանգվածային կիրառություն ոլորտի մասնագետների և հասարակության կողմից:

Ուսումնասիրելով հայերեն համակարգչային եզրերի հետևյալ բառանները՝ Ինֆորմատիկա, Ինտերնետ. անգլերեն-ռուսերեն-հայերեն բացառական բառարանը, Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարանը, Անգլերեն-հայերեն կոմպյուտերագիտության բառարանը, Ուղեցոյցի բառային ցանկերը, Ո. Թարումյանի «Չրույցներ համակարգչի մասին» գրքի հավելվածը՝ հարկ համարեցինք զուգադրել մեր կողմից ընտրված 57 եզրերի հայերեն համարժեքները, Վեր հանել զուգաձևությունները, որոշել դրանց առաջացման և բազմազանության հիմնախնդիրները և մշակել հիմնադրույթներ զուգաձևությունների վերացման համար:

Կատարված վերլուծությունների հիման վրա առանձնացրել ենք մի շարք ընդհանրական կետեր, որոնցից պարզ է դառնում, որ հայերեն համակարգչային եզրաբանության մեջ առկա են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը բույլ կտա կատարելագործել հայերեն համակարգչային եզրաբանական համակարգը: Մեկ հասկացություն-մեկ եզր սկզբունքի լիարժեք կիրառում ապահովելու նպատակով մեր կողմից մշակվել և առաջարկվել են հայերեն համակարգչային եզրերի զուգաձևությունների վերացման հիմնադրույթներ.

Համակարգչային եզրերի հայերեն համարժեքների բազմազանության աղբյուրը միջնորդ լեզվի՝ ռուսերենի տարրերակայնությունն է: Օր.՝ **algorithm** – алгоритм, метод, правило – алгоритմ, մեթոդ, կանոն (Ղ.-Ա.); **benchmark** – 1. точка отсчета, начало отсчета – հաշվանքի կետ, հաշվանքի սկիզբ, 2. эталон, контрольная точка – համանմուշ, հսկիչ կետ, 3. контрольная задача, эталонный тест – հսկիչ խնդիր, չափանմուշային փորձաքը, 4. аттестация – փորձարքավորում (Ո.Թ.); **home page** – базовая (исходная, начальная) WEB-страница – բազային (Ելակետային, սկզբնական) WEB-էջ (Ղ.-Ա.); 1. начальная страница – սկզբնական էջ, 2. домашняя страница – տնային էջ (Ո.Թ.):

Սուածարկում ենք նվազեցնել համակարգչային եզրերի հայերեն համարժեքների բազմազանության աղբյուր միջնորդ լեզվի՝ ռուսերենից եզրը թարգմանենք, որի փոխարեն անհրաժեշտ ենք համարում եզրը թարգմանելիս օգտվել համակարգչային եզրերի «մայր» լեզու անգլերենից՝ եզրային բազմազանությունից, տարրերակայնությունից և դրա արդյունքում ստեղծված խառնաշփռից խուսափելու նպատակով: Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի Ուղեցոյցներում անգլերեն համարժեքների դիմաց զուտ հայկական արմատներով համարժեքներ են առաջարկվում, որոնք ճշգրտութեան են արտահայտում անգլերեն եզրերի իմաստները, ինչն էլ եզրերը «մայր» լեզու անգլերենից բարգմանելու արդյունք է, օր.՝ algorithm – հրամանաշար, buffer – միջամկյալ հիշողություն, cursor – նշիչ:

Ծատ հաճախ հեղինակը ձգտում է եզրն առավել ամբողջական ու պատկերավոր ներկայացնել և առաջարկում է հոմանշային շարք, օր.՝ **gain** – 1. n – 1.1 աճ, ավելացում, 1.2 շահ, շահում, շահույթ, օգուտ, 1.3 եկամուտ, 1.4 ուժեղացում, զրեղացում, 1.5 ուղղորդված գործողության գործակից;

2. v – 2.1 օգուտ ստանալ, 2.2 ուժեղացնել, զորեղացնել (Ա.-Ո.-Ս.); **hardware** – 1. ապարատուրա, ապարատային սարքավորում, 2. երկարեղեն, երկարեղեն իրեր, համակարգչի ֆիզիկական մասերը, 3. տեխնիկական միջոցներ (Ա.-Ո.-Ս.); **mode** – 1. եղանակ, կերպ, ձև, մեթոդ, 2. տվյալություն, ձև, եղանակ, 3. աշխատանքի ռեժիմ (Ա.-Ո.-Ս.); ռեժիմ – 1. ձև, 2. չափ, 3. կարգ, 4. եղանակ (Ո.-Թ.); **valid** a – 1. բույլատրելի, 2. ճշգրիտ, 3. ճիշտ, ընդունելի, հիմնավոր, հիմնավորված, 4. վավերական, օրինական, ուժի մեջ (Ա.-Ո.-Ս.); վերնայի, պարագայության, պարագայության վերաբերյալ, վերաբերյալ, վերաբերյալ (Ո.-Ս.):

Առաջարկում ենք համակարգչային եզրերի հայերեն համարժեքներից՝ հոմանշային շարքից ընտրել մեկ եզր, որն ամբողջությամբ կարտահայտի անգլերեն եզրի բովանդակությունը։ Սա ծայրահեղ անհրաժեշտության առաջնահերթ խնդիր է, քանի որ նշված բազմազանությունը բացասական մի շարք երևույթների է հանգեցնում։ օգտագործողներից յուրաքանչյուրը, տեսնելով անգլերեն եզրի դիմաց մի շարք համարժեքներ, ինքնուրույն է կատարում ընտրություն, և արդյունքում գործածության մեջ նուած համարժեքները ստեղծում են խառնաշփոր, թե որն է ավելի ճիշտ կամ կիրառելի։ Ըստ հաճախ համարժեքներից ոչ մեկը չի «հաղթում», և օգտագործողները կիրառում են անգլերեն կամ ուսուերեն եզրը։

Հեղինակները փոխառություն են կատարել անգլերենից, որի դեպքում շատ հաճախ եզրի իմաստն այնքան էլ պարզ և ընկալելի չէ անգլերենի չտիրապետող մարդու համար, օր.՝ **cursor** – կորսօր – կուրսոր (Ո.-Ս.); **display** – դիսպլեյ – դիսպլի (Ո.-Ս.); **domain** – դոմեն – դոմեն (Ո.-Ս.); **server** – սերվեր (Ա.-Ո.-Ս.); **joystick** – դյուստիկ – ջոյստիկ (Ո.-Ս.):

Առաջարկում ենք անգլերենից կատարված՝ երեմն շատ մարդկանց համար ոչ հասկանալի փոխառությունների թիվը կրճատելու նպատակով անգլերեն եզրի դիմաց հայերենի ներքին հնարավորությունների գործադրմամբ ստեղծել հայերեն եզրային միավոր, որն ամբողջությամբ կարտահայտի անգլերեն եզրի իմաստը։

Տարբեր բառարանների հեղինակներ անգլերեն միևնույն եզրի դիմաց հայերեն տարբեր եզրեր են առաջարկում, որը խառնաշփորի է հանգեցնում, օր.՝ **browser** – օճօրերատուր, բրայզեր – տեսաբան, բրաուզեր (Ո.-Ս.); դիտող (Ա.-Ո.-Ս.); զննարկիչ (Խ.Գ.); программа просмотра, браузер – դիտանցիչ (Ո.-Թ.); **cartridge** n – պարզություն (Խ.Գ.); տպագրական ժապավեն (Ա.-Ո.-Ս.); կարտրիջ – քարտրիջ (Ո.-Ս.); կասсетա, կարտրիջ – վամփուլշտ (Ո.-Թ.); **central processing unit** – կենտրոնական մշակող սարք (Ա.-Ո.-Ս.); կենտրոնական մշակիչ հանգույց (Խ.Գ.); CPU – центральное процессорное устройство, ЦПУ – կենտրոնական մշակող սարք, ԿՍՍ (Ո.-Թ.); կենտրոնական համավարիչ միավոր, ԿՀՄ (Ուղ.); **cursor** – կորսօր – կուրսոր (Ո.-Ս.); տեղացույց (Ա.-Ո.-Ս.); շարժագիծ (Խ.Գ.); սկզբանական մշակող սարք, ԿՍՍ (Ո.-Թ.); կենտրոնական մշակիչ (Ուղ.); **word processing** – տեքստային պատրաստում, բառավորում, բառավարում (Ա.-Ո.-Ս.); բառավարում (Ուղ.); բառամշակում (Խ.Գ.):

Առաջարկում ենք մշակել հայերեն համակարգչային եզրերի միասնական համակարգ, որը պետք է ստանա պաշտոնական վավերացում պատկան մարմինների կողմից, և սույնով նաև կիրականացվեն մեր կողմից վերը նշված մյուս հիմնադրույթները:

Ամփոփելով՝ հարկ ենք համարում նշել, որ նպատակառուղիված և հետևողական աշխատանքի արդյունքում կստանանք հայերեն համակարգչային հստակ եզրաբանություն, որը վստահաբար կունենա լայն և միանշանակ կիրառելիություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ապրեսյան Մ., Ռոկանյան Ս., Ստեփանյան Ն. Անգլերեն-հայերեն կոմպյուտերագիտության բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 2005:
2. Գրիգորյան Խ. Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան, Երևան, Անկյունաբար, 2004:
3. Ղազարյան Է., Ստեփանյան Ա. Ինֆորմատիկա, Ինտերնետ. անգլերեն-ռուսերեն-հայերեն բացատրական բառարան, Երևան, Մակմիլան Արմենիա, 2000:
4. Սերկերեան Տ. Ռ. Ուղեցոյց Ա. Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Մարսել, Aix-en-Provence, 1993:
5. Սերկերեան Տ. Ռ. Ուղեցոյց Գ. Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Ֆրանսիա, Quercy a Cahors, 1993:
6. Սարգսյան Ա., Տիոյան Ս. Արդի հայերենի տերմինանության զարգացման միտումները, Երևան, Ասողիկ, 2014:
7. Տիոյան Ս. Ինտերֆեյսի հայերեն տարրերակի մասին // Զահուկյանական լեզու ընթերցումներ: Երևան, Վաճ Արյան, 2007:
8. Տիոյան Ս. Արևելահայերենի և արևմտահայերենի համակարգչային տերմինների գուգադրական քննություն, Երևան, Ասողիկ, 2014:
9. Տիոյան Ս. Համակարգչային առկա բառապաշարը, // Զահուկյանական լեզու ընթերցումներ: Երևան, Էղիտ Պրինտ, 2011:
10. Տիոյան Ս. Համակարգչային տերմինաբանության ձևավորումը հայերենում // Բանքեր, Հայագիտություն և գուգադրական լեզվաբանություն, 2 (23), Երևան, Լինգվա, 2012:
11. Օհանյան Հ. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Երևան, ԳԱ. հրատարակչություն, 1982: <http://armenpress.am/arm/news/715308>, 28.03.2015.

К. ГРИГОРЯН, Л. ТОВМАСЯН – *Методы создания компьютерных терминов на армянском языке и способы исключения терминов-эквивалентов.* – Бурное развитие компьютерной техники и информационных технологий, а также расширение компьютерных услуг сопровождаются настоятельной необходимостью перевести компьютерную терминологию на армянский язык. Целью данной статьи является исследование способов создания компьютерных терминов на армянском языке и исследование источников пополнения компьютерной терминологии. В статье материалом исследования послужили термины-эквиваленты из армянских словарей компьютерных терминов: 57 английских и армянских терминов-эквивалентов были сопоставлены с целью определения их происхождения, а также разработки способов исключения неточных терминов-синонимов.

Ключевые слова: компьютерная терминология армянского языка, семантический и структурный анализ, словообразование, западно-армянская компьютерная терминология, переосмысление слов, заимствования

Ch. GRIGORYAN, L. TOVMASYAN – The Creation of Computer Terms in the Armenian Language and Means for Eliminating Term Variations. – The rapid growth of computer technology, the enlargement of computer services and the development of information technologies is accompanied with an urgent necessity of translating the computational terminology into Armenian. The creation of computer terms in the Armenian language, term variations and the ways of replenishment of computational terminology in Armenian have been observed in this paper. A comparative analysis of 57 English and Armenian terms from computational terminology dictionaries has been carried out to understand the main problems of term equivalents, to determine the origins of diversity and to develop points for eliminating term variations in Armenian.

Key words: computer terms, English language, semantic and structural analysis, word-formation, Western-Armenian computer terminology, borrowings

**Ելենա ԵՐԶՆԿՅԱՆ
Լենա ՂԱԶԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան**

**ՏԱԲՈՒ ԲԱՌԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՈՒՉԱՍԱՍՏԿԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ
ԱՌԱՋԱՑՄԱՆ ԱՎԲՅՈՒՐ-ԴԱԾ**

Սույն հոդվածում քննկում են ուժգնացնող բառերի առաջացման աղբյուր դաշտերից մեկի՝ տարու բառերի իմաստային ու գործարանական առանձնահատկությունները քերականացման լույսի մերքը։ Գնահատողական ասույթներում արտահայտված դաստողությունները շեշտելու համար խոսողն աշխատում է գործածել հնարավորինս արտահայտիչ ու վառ գոմավորում ունեցող ուժգնացնող բառեր։ Տարու բառերը պատկանում են ուժգնացնող բառերի հենց այս խճին՝ բնուրագրվելով արտահայտչականությամբ ու հուզականությամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ տարու բառերի իմաստային կառուցվածքում դեռևս պահպանվում են իրենց հիմնական իմաստի որոշ բաղադրիչներ։

Բանալի բառեր. գնահատողականություն, հուզագնահատողական ընկալում, ուժգնացում, աղբյուր-դաշտեր, տարու բառեր, քերականացում, հուզասաստկական բառեր

Ուժգնացման կարգը, անմիջականորեն կապված լինելով մարդու ճանաչողական ու հուզագնահատողական ընկալման հետ, բազմիցս դիտարկվել է լեզվի փիլիսոփայության, տրամաբանական իմաստաբանության ու գործարանական լեզվաբանության դիրքերից։ Այս առումով հետաքրքիր է հատկապես ուժգնացման կարգի ուսումնասիրությունը գնահատողականության համատեքստում, քանի որ, ինչպես գիտենք, որպես լեզվական անհատ նարդը գնահատողականության միջոցով ներկայացնում է իր սեփական ճանաչողական տարածությունը՝ իր գիտելիքների, արժեքների, պատկերացումների, զգացմունքների, հույզերի ամբողջության միջոցով։

Ուժգնացումը գնահատողականության քանակական բնութագիրն է։ Ուժգնացումը մուտք է գործում գնահատողական ասույթ, սաստկացնում կամ ապասաստկացնում արտահայտված գնահատողական վերաբերմունքը, ավելացնում նրա արտահայտչականությունն ու հուզականությունը։ Նրա հիմքում ընկած է ուժգնացման սանդղակի գաղափարը, որը ցույց է տալիս հատկանիշի ուժգնացում թե՝ դեպի վեր, թե՝ դեպի վար։

Ուժգնացնող բառերի ուսումնասիրությունը նրանց առաջացման ու զարգացման տեսանկյունից մեզ հանգեցնում է այն եզրակացությանը, որ կարելի է առանձնացնել մի քանի խոշոր աղբյուր-դաշտեր, որոնցից սկիզբ են առել ուժգնացնող բառերը։ Այս իմաստային դաշտերը լեզվում դեռ կարող են գործածվել իրենց նախնական բառային իմաստներով, բայց շատ դեպքերում համագոյակցում են իրենց նոր, ավելի քերականացված իմաստների հետ։ Ինչպես նշում է Ֆ. Լիխտենբերգը. «Չնայած ճշշտ է, որ ժամանակի

ընթացքում մի կառույցը կարող է փոխարինվել մյուսով, սակայն ճիշտ է նաև այն, որ ավելի հաճախ հին և նոր խնատները համագոյակցում են բավականին երկար ժամանակ» /Lichtenberk, 1991: 37/:

Սույն հոդվածը ներկայացնում է ուժգնացնող բառերի թերևս ամենահետաքրքիր և արագ փոփոխվող աղբյուր-դաշտերից մեկը՝ տարբու բառերը։ Գնահատողական ասույթներում արտահայտված դատողությունները շեշտելու ու խոսակցի մոտ հետաքրքրություն առաջացնելու համար խոսողն աշխատում է գործածել հնարավորինս արտահայտիչ ու վառ գունավորում ունեցող ուժգնացնող բառեր։ Տարբու բառերը կամ գրեհիկարանությունները պատկանում են ուժգնացնող բառերի հենց այս խմբին՝ բնուրագրվելով արտահայտչականությամբ ու հուզականությամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ նրանք չեն կորցրել իրենց հիմնական իմաստն ու իրենց իմաստային կառուցվածքում դեռևս հիմնական իմաստից որոշ բաղադրիչներ են պահպանում։ Այդ իսկ պատճառով նրանք դասվում են հուզականատկական բառերի խմբին։

Տարբու բառերը՝ որպես ուժգնացնող բառեր, առավել հաճախ գործածվում են ոչ պաշտոնական խոսքում։ Բիբերը և մյուսները նշում են, որ խոսակցական լեզուն ու գիտական խոսույթը նախընտրում են աստիճանավորման տարրեր միջոցների գործածություն։ Խոսակցական լեզվում առավել հաճախ են գործածվում հետևյալ սաստկական բառերը՝ *bloody, damn, totally, absolutely* և այլն /Biber et al., 2007: 211/։ Մինչդեռ ակադեմիական տեքստերում առավել պաշտոնական միավորներ են գործածվում՝ *entirely, extremely, fully, highly & strongly* /Biber et al., 2000: 565/։

Ժամանակակից անզերենում որպես հուզականատկական բառեր գործածվող տարբու բառերը դեռևս չեն համարվում լիովին գրկած իրենց բուն բառարանային իմաստից և հետևաբար չեն կարող համարվել չեզոք։ Այդ իսկ պատճառով հետաքրքիր է ուսումնասիրել այս բառերի ծագումն ու զարգումը լեզվում ու խոսքում։ Այս բառերը, ի տարրերություն այլ ուժգնացնող բառերի, ոչ միայն աստիճանաբար ձեռք են բերում ուժգնացնող նշանակություն, այլ նաև ունեն վառ արտահայտված գործարանական գործառույթ՝ բերականացնան գործընթացի շնորհիվ։ Այլ ուժգնացնող բառերը ևս ձեռք են բերում գործարանական իմաստ և ծառայում են որպես խոսողի դիրքորոշման արտահայտման միջոց /Athanasiadou, 2007: 555/, սակայն տարբու բառերից զարգացած հուզականատկական բառերը արտահայտում են խոսողի հուզագնահատողական վերաբերմունքը, և նրանց իմաստային կառուցվածքում հուզական բաղադրիչը շատ ավելի վառ է արտահայտված /Murphy, 2010: 128/։ Օրինակ՝ հետևյալ ասույթներում խոսողը նախընտրում է գործածել *bloody* բառը առավել չեզոք, սակայն ուժգնացնան սանդղակում գրեթե նույն դիրքը գրավող *very* կամ *completely* բառերի փոխարեն։

“**Bloody** idiot,” said Will, snickering at the double meaning. (COCA)

Stupid, **bloody fool**. He had to do something to turn the tide. (COCA)

Այս ասույթներում *bloody* բառը պարզապես չի նշում, որ խոսողը ինչ-որ մեկին համարում է շատ հիմար, այլ արտահայտում է խոսողի զայրույթն ու

հիասքափությունը: Միևնույն ժամանակ հարկ է նաև նշել, որ շնայած *bloody* բառը դեռևս ունի հստակ արտահայտված վառ հուզագնահատողական երանգավորում, այն ունի կապակցելիության ավելի լայն հնարավորություններ, քանի որ անցել է քերականացման ավելի երկար ճանապարհ նույն աղբյուր-դաշտում առկա տարու բառերից սերված մյուս միավորների (*damn, darn, filthy*) համեմատությամբ: Հատկանշական է նաև այն փաստը, որ այս բառը հանդիպում է հիմնականում բրիտանական անգլերենում: Այդ մասին են փաստում նաև բառի ժամանակակից բառարանային բացատրությունները:

Bloody (adjective)

informal, chiefly British

- 1 [*attributive*] used to express anger, annoyance, or shock, or simply for emphasis:
You took your bloody time.
- [*as exclamation*]: *Bloody Hell!—what was that?*
[*as submodifier*]: *It's bloody cold outside.* (Oxford Advanced Learner's Dictionary)

Bloody (adverb)

1. used for emphasizing that you are angry or annoyed about something
Stop being so bloody arrogant!

2. used for emphasizing something
It was a bloody good game! (Macmillan Dictionary)

Bloody (adverb)

used to emphasize an adjective, adverb, or noun in a slightly rude way:
Life would be bloody boring if nothing ever went wrong.

She's done bloody well to reach the semifinal. (Cambridge Dictionary)

Անդերսոն ու Թրադջիլը տարու բառերին բնութագրող երեք հիմնական առանձնահատկություն են նշում: Առաջին՝ տարու բառը վերաբերում է ինչ-որ երևոյթի, որը տվյալ մշակույթում համարվում է տարու, այսինքն՝ արգելված: Երկրորդ տարու բառերն այլևս չեն մեկնարանվում բառացիորեն, այլ արտահայտում են ընդհանուր բացասական հուզական վերաբերմունք: Այս երկրորդ առանձնահատկությունը կապված է երրորդի հետ՝ ըստ որի տարու բառերը հիմնականում արտահայտում են վառ արտահայտված հույզեր ու գնահատողական վերաբերմունք /Andersson & Trudgill, 2007: 195/: Նապոլին ու Հոեկսեման համակարծիք են տարու բառերի այս երրորդ առանձնահատկության հետ՝ նշելով, որ ըստ էության այս բառերն իրենց մեջ արդեն իսկ ամփոփում են աստիճանավորման նշանակություն՝ իրենց բացասական առնշանակության շնորհիվ, որը ուժգնացնող գործառույթ ունի /Napoli and Hoeksema, 2009: 626/: Ըստ նրանց այդ իսկ պատճառով ամենին զարմանալի չէ, որ որոշ տարու բառեր վեր են ածվել աստիճանավորող մակրայների՝ ուժգնացման հստակ գործառույթով՝ մասամբ կորցնելով իրենց հիմնական նշանակության մեջ առկա բացասական իմակները: Որպես այդպիսի օրինակ նրանք նշում են *damn* բառը: Սակայն մեր կարծիքով այդքան էլ ճիշտ չէ *damn* սաստկական

բառը համարել միավոր՝ զրկված իր բացասական առնշանակությունից, քանի որ այն դեռևս ունի հստակ արտահայտված բացասական երանգավորում ու հազվադեպ է հանդիպում պաշտոնական խոսություն: Օրինակ՝

Damned important to her, for now, or she wouldn't be in this **damn** hotel room, wearing a **damn stupid** outfit, with a **damn fat** old German at her feet. (COCA)

Այս օրինակում **damn** բառն ունի ակնհայտ բացասական երանգավորում՝ արտահայտելով խոսողի զայրույթն ու բացասական վերաբերմունքը ասույթում արտահայտված իրավիճակի նկատմամբ: Այս սաստկական բառի ակնհայտ բացասական առնշանակության մասին են փաստում նաև բառարանային վերլուծության արդյունքները: Այսպես՝

Damn (exclamation)

informal

- expressing anger or frustration: *Damn! I completely forgot!*
[attributive] informal
- used for emphasis, especially to express anger or frustration: *Turn that damn thing off! [as submodifier]: Don't be so damn silly!* (Oxford Advanced Learner's Dictionary)

Damn (adjective)

[only before noun] impolite

used for emphasizing what you are saying, especially when you are annoyed about something: *I can't open the damn window.*

a damn sight better/cheaper/worse etc (=much better, cheaper, worse, etc.)

Ներկայացված բացատրություններից ակնհայտ է դառնում, որ **damn** բառը դեռևս իր իմաստային կառուցվածքում պահպանում է իրեն հասուլ բացասական երանգավորումը, ավելին, այն ունի գործաքանական վառ արտահայտված երանգավորում արտահայտվում է գլխավորապես ոչ պաշտոնական խոսքում՝ համարվում գրեհկաբանություն, հետևաբար ոչ պատշաճ ու բաղարավարի: Օրինակ՝

“That,” said her spouse, “is a lie.” “It’s the truth,” said she. “It’s a **damn dirty rotten stinking lousy bloody low filthy** two-faced lie,” he amplified. He’s just a lovely lovely lovely guy; Truly, TRULY outstanding. Gregsypookins – five steps of ‘diminutive’ endearment. (BNC)

Այսպիսով, ամփոփելով վերը նշված դիտարկումները՝ կարող ենք նշել, որ տարբի բառերի որպես սաստկական միավորների ուսումնասիրության ժամանակ հարկ է հաշվի առնել մի շաք առանձնահատկություններ: Նախ և առաջ, տվյալ լեզվով խոսող հանրույթի ոչ բոլոր անդամներն են գործածում տարբի բառերը որպես գնահատողականության ուժգնացման միջոց: Նման բառերի գործածությունը մեծապես կապված է արտալեզվական, մասնավորապես սոցիալական գործոններից: Այդ իսկ պատճառով Անդերսոնն ու Թրադֆիլը նշում են, որ չափազանց դժվար է համեմատել տարբի բառերի գործածության հաճախականությունը տարբեր մշակույթներում, քանի որ նույնիսկ միևնույն

մշակույթի ներսում կարելի է նկատել նման բառերի գործածության տարրեր հաճախականություններ հասարակության տարրեր շերտերում /Andersson and Trudgill, 2007: 199/: Նրանք նշում են, որ պաշտոնական խոսություն (գրքեր, ամսագրեր, լրագրեր) նման բառերը բավականին հազվադեպ են հանդիպում /Napoli and Hoeksema, 2009: 613/: Բիբերը և մյուսները նույնպես ընդգծում են գործառական ոճերի առանձնահատկություններով պայմանավորված նման տարրերությունների կարևորությունը: Համեմատելով *damn* բառի գործածությունը գրավոր ու ոչ գրավոր աղբյուրներում, նրանք նշում են, որ այս բառը առավել հաճախ հանդիպում է խոսակցական լեզվում, մինչդեռ այն հազվադեպ է հանդիպում ակադեմիական տեքստերում /Biber et al., 2000: 56/:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ուժգնացնող բառերի զարգացման հիմքում ընկած քերականացման ու իմաստային փոխակերպումների գործընթացները պայմանավորում են նրանց իմաստային առանձնահատկությունները, գործածության հաճախականությունն ու կապակցելիության հնարավորությունները: Գնահատողական դասողություններում ուժգնացնող բառերի ընտրությունը գլխավորապես կախված է խոսողից, նրա հաղորդակցական մտադրությունից և համատեքստից, որում առկայանում են ուժգնացնող բառերի բոլոր իմաստային ու գործարանական առանձնահատկությունները: Ուժգնացնող բառերի զարգացումն ուղեկցվում է բառի կիրառության համատեքստային ընդլայնմամբ և բուն բառային իմաստի մասնակի կորսորդով: Այս համատեքստում հուզականացման բառերը՝ որպես ուժգնացնող բառերի զարգացման հիմնական իմաստային աղբյուր-դաշտերից մեկից սերող միավորներ, ունեն վառ արտահայտված հուզականացման երանգավորում և գործածվում են հիմնականում խոսակցական լեզվում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Allerton D.J. English Intensifiers and Their Idiosyncrasies // *Language Topics. Essays in Honour of M. Halliday*. Amsterdam: John Benjamins, 1987.
2. Andersson L., Trudgill P. Bad Language. London: Penguin Books, 1992.
3. Andersson L., Trudgill P. Swearing // Monaghan L. and Goodman J. (eds.) *A Cultural Approach to Interpersonal Communication*. Malden, MA: Blackwell Publishing, 2007.
4. Athanasiadou A. On the Subjectivity of Intensifiers // *Language Sciences*, v. 29. Amsterdam: Elsevier, 2007.
5. Biber D., Conrad S., Leech G. Longman Student Grammar of Spoken and Written English. Harlow: Pearson Education Limited, 2007.
6. Biber D., Johansson S., Leech G., Quirk R. Longman Grammar of Spoken and Written English. Harlow: Pearson Education, 2000.
7. Bolinger D. Degree Words. The Hague/Paris: Mouton, 1972.

8. Langacker R.W. Syntactic Reanalysis // Li C. (ed.) *Mechanisms of Syntactic Change*. Austin: University of Texas Press, 1977.
9. Lichtenberk F. On the Gradualness of Grammaticalization // Traugott E. & Heine B. (eds.) *Approaches to Grammaticalization*, (Vol.1). Focus on Theoretical Issues. Amsterdam: John Benjamins, 1991.
10. Murphy B. Corpus and Sociolinguistics: Investigating Age and Gender in Female Talk. Amsterdam: John Benjamins, 2010.
11. Napoli D., Hoeksema J. The Grammatical Versatility of Taboo Terms // *Studies in Language*, 33.3. Amsterdam: John Benjamins, 2009.
12. Cambridge Advanced Learner's Dictionary. Cambridge: Cambridge University Press, 2008.
13. Collins COBUILD Advanced Learner's English Dictionary. Glasgow: HarperCollins Publishers, 2003.
14. Macmillan English Dictionary for Advanced Learners. Macmillan Education Australia, 2007.
15. Oxford Advanced Learner's Dictionary. Oxford: Oxford University Press, 2000.
16. The British National Corpus (BNC) // available online at: <http://www.natcorp.ox.ac.uk/>.
17. The Corpus of Contemporary American English (COCA) // available online at: <http://corpus.byu.edu/coca/>.

Е. ЕРЗИНКЯН, Л. КАЗАРЯН – Табу как источники возникновения эмоционально-усилительных интенсификаторов. – Настоящая статья посвящена изучению семантических и функциональных особенностей табу, которые являются одним из основных источников возникновения интенсификаторов в языке. Табу как особый лексико-семантический класс слов в английском языке наиболее часто подвергаются процессам постепенной десемантизации и грамматикализации, лежащим в основе возникновения и становления эмоционально-усилительных интенсификаторов.

Ключевые слова: оценка, эмоционально-оценочное восприятие, поля-источники, табу, грамматикализация, эмоционально-усилительные слова

Y. YERZNKYAN, L. GHAZARYAN – Taboo Words as a Source Domain for the Development of Intensifiers. – The present paper discusses the semantic and functional peculiarities of taboo words serving as a source domain for the development of intensifiers. The study shows that due to their marked pragmatic power and the processes of desemanticization and grammaticalization taboo words can gradually develop into adverbial items expressing a more grammatical and pragmatic function of intensification.

Key words: evaluation, emotional-evaluative perception, intensification, taboo words, grammaticalization, intensifiers

Հեղինե ԽԱՐԱՁՅԱՆ

Երևանի Վ. Բյուտովի անվ. պետական
լեզվահասարակագիտական համալսարան

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՎԱԶԴՎԸ ՈՐՊԵՍ ՀԱՍՄԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել սոցիալական գովազդի տեղն ու դերը հասարակական գիտակցության ձևավորման մեջ: Սոցիալական գովազդը վերջերս է առանձնացվել իրու գովազդի առանձին տեսակ, թեպետ այն գոյություն ունի 20-րդ դարի սկզբից: Այն անգնահատելի դեր ունի հասարակական խմբիրների վերհանման, լուծման, կանչնման, ինչպես նաև արժեհամակարգի ձևավորման գործում: Ավելին, սոցիալական գովազդը պետության, հասարակական կազմակերպությունների և հասարակության միջև հաղորդակցման արդյունավետ գործիք է:

Բանափառ. գովազդ, գովազդային խոսություն, առևտրային և ոչ առևտրային գովազդ, սոցիալական գովազդ, ճանաչողություն

21-րդ դարը որպես գլոբալացման գործընթացների զարգացման ժամանակաշրջան օժտված է մի շարք առանձնահատկություններով: Դրանցից հատկանշական է տեխնոլոգիական զարգացումը և հատկապես ՉԼՄ-ների դերի մեծացումը հասարակական տարրեր գործընթացներում: Ընդ որում, գովազդը հատուկ տեղ է գրադեցնում տեղեկատվական հոսքի մեջ, իսկ գովազդի լեզուն առանձնանում է իր ոճական հնարների բազմազանությամբ՝ ընթերցողի վրա հնարավորին մեծ ազդեցություն բռնկելու միտումով: Աստիճանաբար գովազդը դառնում է այն հիմնական միջոցներից մեկը, որով կարելի է ձևավորել հասարակական գիտակցության, վարքի և հարաբերությունների որոշակի կանոններ:

Ժամանակակից գովազդը մեծապես տարբերվում է իր նախատիպերից թե՛ բովանդակությամբ, թե՛ ուսուրանություն և թե՛ ազդեցության մեխանիզմներով: Եթե նախկինում գովազդների հիմնական նպատակը հասարակ միջոցներով այս կամ այն ավանդի կամ ծառայության առկայության մասին իրազեկումն էր, ապա այժմ գլխավոր նպատակը համոզումն է՝ տարարնություն համոզական մեխանիզմների կիրառմամբ, որում առանձնակի դեր ունի գովազդի լեզու: Ուստի և միանգամայն տրամաբանական է գովազդի՝ իրու խոսությի տեսակի առանձնացումը լեզվաբանության մեջ: «Գովազդը դիտվում է որպես խոսությի ձև, քանի որ այն իր ազդեցությունն է բողել ոչ միայն լեզվի կառուցվածքի, այլ նաև կենսակերպի և առօրյա հաղորդակցման բովանդակության վրա: Գովազդը ներբափանցել է մշակույթի մեջ» /Hosney, 2011: 26/:

Գովազդային խոսությը լեզվաբանության և խոսությի վերլուծության տեսանկյունից սահմանվում է որպես «լեզվի տարրեր ձևերի և լեզվական, իսկ երբեմն նաև տեսողական և լսողական միջոցների տեղակայում գովազդային

ժանրում՝ առանձին գովազդների, գովազդային արշավների կամ ավելի լայն իմաստով՝ գովազդային շուկայի շրջանակներում» /Oxford Reference/:

Գովազդի ստեղծումից ի վեր՝ գովազդային խոսույթը պարբերաբար ենթարկվել է փոփոխությունների: Այսպես, 19-րդ դարում՝ արդյունաբերության զարգացմանը զուգընթաց, սկսեց կարևորվել գովազդային տեքստի ոճը՝ համոզական նպատակին ավելի դյուրին հասնելու համար: Գովազդի ոճի փոփոխությունը հանգեցրեց լեզվի կառուցվածքի և կիրառման, ինչպես նաև խոսքային հաղորդակցման փոփոխության: Արդեն իսկ 19-րդ դարի ավարտին ամերիկյան գովազդին բնորոշ էր խոսակցական և ոչ պաշտոնական լեզուն՝ գուգակցված տարբեր ճարտասանական հնարներով՝ միտված ուշադրություն գրավելու: Ընդ որում, այսպիսի գովազդային լեզուն այնքան համոզիչ էր, որ ներթափանցեց նաև հասարակական խոսույթի մեջ՝ փոխելով հաղորդակցման լեզվի բնույթը /Hosney, 2011: 26/:

1920-ականներից սկսած ի հայտ եկան տարբեր գովազդային գործակալություններ, որոնք ընդլայնելով ու խորացնելով նախորդ գովազդային փորձերը՝ ճգոսում էին ավելի համոզիչ միջոցներով կապ ստեղծել ապրանքի և գնորդի գիտակցության միջև: Ինչ վերաբերում է ժամանակակից գովազդներին, շեշտն արդեն դրվում է ոչ թե ինքնին ապրանքի վրա, այլ այն առավելությունների (երջանկություն, առողջություն, հասարակական դիրք և այլն), որոնք զնորդը կունենա ապրանքը ձեռք բերելու դեպքում: Իսկ գովազդ ստեղծողների թիրախը գնորդի ոչ այնքան գիտակցականն է, որքան ներագիտակցականը /Hosney, 2011: 26-27/: Այսպիսով, գովազդը իրեն խոսույթի տեսակ հզոր ներգործություն է ունենում մարդու ինքնության ձևավորման վրա: Գովազդային խոսույթը իր ազդեցությունն է թողել ճանաչողական ընկալման վրա: Գովազդի ազդեցությամբ ճանաչողությունն ավելի տեսողական է դարձել՝ հիմնված տեսողական պատկերների վրա, ինչի արդյունքում էլ ճանաչողությունն ավելի ամբողջական ու ամփոփ է: Գովազդային խոսույթի զարգացմանը զուգընթաց մարդկային ճանաչողությունը դարձել է ավելի արագ, բայց պակաս ոեֆլեկտիվ /Hosney, 2011: 35/:

Այսպիսով, գովազդի զարգացումը դարեր շարունակ հանգեցրել է գովազդային խոսույթի՝ արդյունքում նաև հասարակական խոսույթի և մարդկային մտածողության ու ճանաչողության փոփոխության:

Այս առումով գովազդի հետաքրքիր բնորոշում է տալիս նաև O. Ֆեոֆանովը՝ մեջբերելով Դենիել Բուրստինի խոսքերը: «Գովազդը կյանքի հայելին է: Պատահական չէ, որ ամերիկացի սոցիոլոգ Դենիել Բուրստինը նշում էր. «Յույց տվեր ինձ այս կամ այն երկրի գովազդը, և ես ձեզ ամեն ինչ կպատմեմ այդ երկրի մասին» /Փեօֆանօվ, 2000: 15/:

Այսպիսով, գովազդը ունակ է ոչ միայն արտացոլելու իրականությունը, այլ նաև փոխելու այն՝ փոփոխելով հասարակական մտածողությունը:

Գովազդ ասելով և մեկնաբանելով գովազդը որպես երևոյթ՝ շատ հեղինակներ կենտրոնանում են առևտրային գովազդի վրա: Մինչդեռ սոցիալական գովազդը, իրեն գովազդի տարատեսակ, լայնորեն տարածված է

ամբողջ աշխարհում և իր ուրույն տեղն ունի հասարակական գիտակցության ձևավորման և փոփոխման մեջ:

Հարկ է նշել, որ կան գովազդի մի շարք դասակարգումներ: Ամենատարածված և ընդհանուր դասակարգումը առևտրային և ոչ առևտրային գովազդի տարանջատումն է: Առևտրային գովազդը հաղորդակցության վճարովի տեսակ է, որի նպատակն է ինչ-որ ապրանք կամ ծառայություն վաճառել, մինչդեռ ոչ առևտրային գովազդը որոշակի գաղափարներ է քարոզում և նպատակ ունի կյանքի կոչել այդ գաղափարները՝ ազդելով մարդկանց վարքագծի վրա: Ավանդաբար ոչ առևտրային են համարվում քաղաքական և սոցիալական գովազդները: Ընդ որում, սոցիալական գովազդը դուրս է գալիս տնտեսության շրջանակից՝ դառնալով մշակութային երևույթ:

Հարց է ծագում՝ ի՞նչն է ստիպում ժամանակ և ռեսուրսներ վատել սոցիալական գովազդի վրա, եթե այն իր բնույթով եկամտաբեր չէ: Այլ կերպ ասած, ո՞վ է սոցիալական գովազդի պատվիրատուն, և ի՞նչ նպատակ է նա հետապնդում:

Յուրաքանչյուր հասարակություն, պատմական շրջան ունեն իրենց արժեհամակարգը, մարտահրավերները, որոնք անմշականորեն արտացոլվում են սոցիալական գովազդում: Սոցիալական գովազդը ստեղծվում է հասարակության, պետության ճգնաժամային պահերին, երբ անհրաժեշտ է բնակչության իրազեկել սոցիալական խնդիրների մասին և փոխել նրանց վարքագիծը:

Որպես գովազդի տարատեսակ սոցիալական գովազդը համեմատաբար նոր է առանձնացվել: Ծիշտ է՝ որպես հասարակական երևույթ այն գոյություն է ունեցել դեռևս 20-րդ դարի սկզբից: 1906 թվականին Ամերիկայի հասարակական ասոցիացիան ստեղծեց առաջին սոցիալական գովազդը, որը կոչ էր անում պաշտպանել Նիագարայի ջրվեժը Էներգետիկ ընկերությունների կողմից հասցվող վճասներից [/http://hra.am/hy/point-of-view/2006/05/11/15945/](http://hra.am/hy/point-of-view/2006/05/11/15945/): Սոցիալական գովազդը սկսեց զարգանալ հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ տվյալ ժամանակաշրջանի պահանջներից ելնելով: Գովազդի հիմնական բովանդակային ուղղվածությունն էր զինվորների, նյութական միջոցների հավաքագրումը, թշնամու կերպարի ստեղծումը և քարոզչությունը նրա դեմ:

Ունենալով պետական կարևորություն՝ գովազդի և մասնավորապես սոցիալական գովազդի գործունեությունը հաճախ կարգավորվում է տվյալ պետության սահմանադրությամբ: Այսպես, Գովազդի մասին ՀՀ Օրենքում՝ ընդունված 30.04.1996, Հոդված 13-ը անդրադանում է սոցիալական գովազդին՝ բնութագրելով այն որպես «բնակչության առողջության և առողջապահության, բնության պահպանության, սոցիալական պաշտպանության հարցերով ազգային շահեր ներկայացնող և առևտրային բնույթ չկրող» /ՀՀ Օրենք Գովազդի մասին/:

Անդրադանությունը սոցիալական գովազդ եզրին՝ հարկ է նշել, որ այն առավել բնորոշ է ուսական դպրոցին, մինչդեռ արևմտյան մշակութում

առավել կիրառական են ոչ առևտրային գովազդ (Non-commercial Advertising), հասարակական գովազդ (Public Advertising) և հասարակական ծառայությունների գովազդ (Public Service Advertising/PSA) եղբերք: Այնուամենայնիվ, մենք որոշել ենք կիրառել սոցիալական գովազդ եզրը, քանի որ այս եզրը օրենսդրական հենք ունի՝ սահմանված լինելով ՀՀ Սահմանադրության մեջ և առավել տարածված ու ընկալելի է հայկական իրականության մեջ:

Սոցիալական գովազդի տարրերը բնորոշումներ ու մեկնարանություններ կան: Ընդգծելով սոցիալական խնդիրների վերհանման և լուծման գործում ունեցած դերը՝ Ս. Դվորկոն նշում է, որ «սոցիալական գովազդը սոցիալական խնդիրների արագ արձագանքման և նպատակային լուծման ամենաակտիվ գործիքներից է» /Դվորկո, 2007/:

Սոցիալական գովազդը եկամտաբերության տեսանկյունից դիտարկելով՝ կարելի է նշել, որ դա այն «գովազդն է, որը մեզ դրում է ոչ թե գնումների, այլ արարքների... Ոչ մի նյութական օգուտ այդպիսի գովազդը, բնականաբար, չի կարող տալ» /Հնկուտինա, 2014/:

Թեևստ սոցիալական գովազդը զիջում է առևտրային գովազդին իր եկամտաբերության տեսանկյունից, անհերքելի է նրա ունեցած դերը պետական, հասարակական, անգամ համամարդկային խնդիրների վերհանման և լուծման գործում:

Խոսելով այն մասին, թե ինչ է տալիս գովազդը՝ Գրեյ Գոլդսմիթը նշում է, որ գովազդի նպատակը ռացիոնալ շահ առաջարկելը չէ, այլ շահ, որը ռացիոնալ մարդու կհասկանա /Hosney, 2011: 27/: Այլ կերպ ասած, կարևոր չէ՝ ինչքանով է տվյալ ապրանքը անհրաժեշտ կամ օգտակար սպառողի համար, կարևորն այն է, որ սպառողի գիտակցության մեջ տվյալ ապրանքը գնելու պահանջ առաջանա: Նման մոտեցման արդյունքում է, որ այսօր գրեթե ամբողջ աշխարհում սպառողականության մոլուց է ձևափորվել: Վերաձևակերպելով Գ. Գոլդսմիթի քառերը՝ կարելի է նշել, որ ի հակառակ սպառողականությունը խթանող առևտրային գովազդին, սոցիալական գովազդը ռացիոնալ շահ է առաջարկում, որը ռացիոնալ մարդու կհասկանա:

Ս. Ժարովը սոցիալական գովազդը համարում է տեղեկատվական քաղաքականության կարևորագույն գործիք և այն դասակարգում է երեք խմբի: «Առաջինը քաղաքական քարոզարշավն է, երկրորդը՝ սոցիալական գովազդը՝ ստեղծված տարբեր ոչ պետական և ոչ առևտրային կազմավորումների կողմից, ինչպիսիք են Գրինֆիլդ, ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Եվ, ի վերջո, երրորդ դասը սոցիալական գովազդն է, որի պատվիրատուն անմիջականորեն պետությունն է: Արտերկրյա քազում պետությունների փորձը վկայում է, որ այդպիսի գովազդը պետական տեղեկատվական քաղաքականության կարևորագույն գործիք է» /<http://biblio.fond.ru/view.aspx?i=105358#1/>: Համաձայնելով Ժարովի այս բնորոշման հետ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ հարկ է տարանջատել քաղաքական գովազդը սոցիալականից: Նպատակահարմար ենք գտնում նրա առանձնացրած սոցիալական գովազդի առաջին դասը, որը միտված է քաղաքական քարոզարշավին, դիտարկել որպես քաղաքական

գովազդ՝ համաձայնելով երկրորդ և երրորդ դասի մեջ մտնող գովազդը համարել սոցիալական, և բաժանումը տալ ըստ պատվիրատուի, այն է, պետական և ոչ պետական հաստատությունների:

Այսպիսով, ընդհանրացնելով սոցիալական գովազդի տարրեր քնորոշումները, կարելի է փաստել, որ սոցիալական գովազդը պետության, հասարակական կազմակերպությունների և հասարակության միջև հաղորդակցման կարևոր միջոցներից է:

Հստ S. Աստախովայի՝ սոցիալական գովազդի նպատակն է «փոխել հասարակության կարծիքը որևէ խնդրի նկատմամբ, իսկ երկարաժամկետ հետանկարով ստեղծել նոր հասարակական արժեքներ» [/http://www.bibliofond.ru/view.aspx?id=105350/](http://www.bibliofond.ru/view.aspx?id=105350/):

Նման մոտեցումն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ սոցիալական գովազդը ոչ միայն տեղեկատվական գործառույթ է իրականացնում, այլև փոփոխություններ է հետապնդում, քանի որ սոցիալական գովազդը միտված է քենություն հասարակության ուշադրությունը առկա խնդրին և դրդելու իրավիճակի բարելավմանն ուղղված փոփոխությունների:

Ամփոփելով նշենք, որ սոցիալական գովազդը որպես գովազդի տարատեսակ առանձնացվել է վերջին տարիներին, թեպետ որպես երևույթ գոյություն է ունեցել դեռևս 20-րդ դարի սկզբից: Այդուհանդերձ, վերջին տարիներին սոցիալական գովազդի տարրերակումն ու ուսումնասիրությունը թույլ են տալիս գիտակցել դրա ունեցած տեղին ու դերը հասարակական տարաբնույթ խնդիրների վերհանման, լուծման, արժեհամակարգի թելադրման և հասարակական գիտակցության ձևավորման գործում: Սոցիալական գովազդը պետության, հասարակական կազմակերպությունների և հասարակության միջև հաղորդակցական հզոր գործիք է: Ուստի դրա մեխանիզմների ուսումնասիրությունն ու նպատակային կիրառումը թույլ կտան կանխել բազում խնդիրներ դրանց առաջացնան դեռևս սաղմնային փուլում: Հիրավի, սոցիալական գովազդը եկամտաբեր չէ, սակայն այն օգտակար ազդեցությունը, որը կարող է ունենալ նման գովազդը անզնահատելի է յուրաքանչյուր հասարակության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենքը Գովազդի մասին // Էլ. աղբյուր. <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=1707&lang=arm>
2. Սոցիալական գովազդ՝ ստեղծագործական խթա՞ն, թե՞ ապակողմնությունն 11.05.2006 // Էլ. աղբյուր. <http://hra.am/hy/point-of-view/2006/05/1>
3. Աստախովայի Հայաստանի Հանրապետության օրենքը Գովազդի մասին // Էլ. աղբյուր. <http://www.bibliofond.ru/view.aspx?id=105350>
4. Դվորկո С. Б. Значение социальной рекламы в формировании гражданского общества. 24.05.2007 // Электронный ресурс: http://www.socreklama.ru/list.php?ELEMENT_ID=4907&SECTION_ID=107

5. Жаров С. Понятие социальной рекламы // Электронный ресурс: <http://biblio.fond.ru/view.aspx?id=105358#1>
6. Никитина А. Ю. Социальная реклама как способ воздействия на общество. VI Международная студенческая электронная научная конференция, «Студенческий научный форум» // Электронный ресурс: <http://www.scienceforum.ru/2014/524/6954>
7. Феофанов О. А. Реклама: новые технологии в России. Санкт-Петербург, 2000.
8. Hosney M. El-daly. Towards an Understanding of the Discourse of Advertising // Review of Research with Special Reference to the Egyptian Media. United Arab Emirates University, African Nebula, Issue 3, June 2011, available online at: http://www.nobleworld.biz/images/M._El_daly_AN3.pdf.
9. Oxford Reference. Advertising Discourse // Oxford University Press, available online at: <http://www.oxfordreference.com/view/10.1093/oi/authority.20110803095352960>

Е. ХАРАЗЯН – *Социальная реклама как средство формирования социального сознания.* – В настоящей статье рассматриваются разного рода определения, а также роль и значение социальной рекламы в формировании социального сознания. Социальная реклама как разновидность рекламы была выявлена в последние годы, хотя как таковая она существовала с начала XX века. Социальная реклама имеет значительную роль в жизни общества, так как позволяет выявить разные социальные проблемы, способствует решению и предотвращению проблем социальной значимости, а также формирует общественную систему ценностей. Социальная реклама является эффективным инструментом коммуникации между государством, общественными организациями и обществом.

Ключевые слова: реклама, рекламный дискурс, коммерческая и некоммерческая реклама, социальная реклама, познание

H. KHARAZYAN – *Public Advertising as a Means of Developing Social Awareness.* – The paper deals with the peculiarities of public advertising focusing on its role in the formation of social awareness. As a type of advertising, public advertising has been singled out during the recent years, whereas it has existed for a long time since the beginning of the XX century. Public advertising has a significant role for the society as it reveals social problems, promotes their solution and prevention, as well as forms a system of values within the society. Moreover, public advertising is an effective tool for communication between the government, NGO-s and society.

Key words: advertising, advertising discourse, commercial and non-commercial advertising, public advertising, cognition

Լուսինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

**ԺԱՄԱՆԱԿԻ ՆՇՈՒՅԹԱՎՈՐՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Only time (whatever that may be) will tell.
Stephen Hawking, A Brief History of Time

Տվյալ հոդվածը ուսումնասիրում է ժամանակային նշոյթավորման լեզվաարտահայտչական միջոցները տնտեսական իրադարձությունները լուսաբանող նորություններում: Ժամանակի գործոնը ցանկացած իրադարձության բովանդակային կազմի անքանականությունը մասն է կազմում: Հոդվածում հատկորոշվում են հնարավոր լեզվամիավորները, ինչպես նաև քերականական հնարավորները, որոնք ապահովում են ժամանակային նշոյթավորման գործարար նորություններում: Բառային մակարդակում ժամանակը արտահայտվում է մի շարք բանաձևերով, որոնք ներառում են տարրեր խոսրի մասեր, մինչդեռ քերականական մակարդակում ժամանակի որոշարկումը իրականացվում է բայական ժամանակաձևերի միջոցով:

Բանափառեր. Ժամանակային նշոյթավորման, տնտեսական իրադարձություններ, գործարար նորություններ, իրադարձության բովանդակային կառուցվածքը, ժամանակային նշոյթավորման լեզվամիավորներ, քերականական հնարավորներ, ունակ ֆիզիկական ժամանակ

Իրադարձությունները գոյություն ունեն տարածության և ժամանակի կողորդինատներում, քանի որ համաձայն արդի գիտության տվյալների օրյեկտիվ աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչ ունի տարածաժամանակային բնույթ:

Վերլուծելով իրադարձության տարածաժամանակային առանձնահատկությունները, հարկ է նշել, որ իրադարձություններին վերաբերող ժամանակի և տարածության ցուցիչները միշտ չեն որ ունեն հավասարազոր նշանակություն: Այսպես, Զ. Վենդլերը նշում է, որ իրադարձություններն ամենից առաջ ժամանակային էություններ են /Vendler, 1967: 144/: Իրադարձության կառուցվածքը կազմող տարրերի դասակարգման մեջ ժամանակային վերագրության ցուցիչը առաջնայիններից նեկան է, որովհետև, ինչպես իր ուսումնասիրության մեջ նշում է Ն. Դ. Արուտյունովան, որոշ իրադարձություններ որոշակի իմաստով ընդհանրապես տարածական տեղայնացում չունեն և կարող են նկարագրվել միայն ժամանակի առանցքի վրա դրանց փոխդասավորության /կոնֆիգուրացիա/ եզրույթներով /Արյունովա, 1998: 508/: Իրադարձությունների հենց այդպիսի տեսակ է դիտարկում իր աշխատության մեջ Զ. Կիմը, սահմանազատելով երկու իրադարձություններ, որոնք նկարագրվում են տրամաբանական համարժեք միևնույն նախադասությամբ, տարրեր տեղայնացումների հիման վրա՝ տարածաժամանակային և զուտ

ժամանակային (հմտ. Սոկրատեսը մահացել է և Քսանտիպան այրիացել է) /Kim, 1969/: Այսպիսով, իրադարձությունների ժամանակային շրջանակները տարբեր են: Ժամանակային առումով հեղիեղուկ սահմաններ ունեցող իրադարձությունները լիակատար հստակությամբ չեն ընկալվում որպես իրադարձություններ: Հետևաբար, ժամանակի մեջ սովորաբար տեղայնացված են ընկալվում այն իրադարձությունները, որոնք կոնկրետ, որոշակի պահի կամ ժամանակահատվածում, իրականում կատարվող կամ կատարված իրադարձություններ են /Եղիշին, Շմելև, 1997: 47/:

Տվյալ ուսումնասիրության նպատակն է վերլուծել ժամանակային նշույթավորման հնարավոր լեզվաարտահայտչական միջոցները տնտեսական իրադարձություններ լուսաբանող նորություններում:

Խոսելով իրադարձության ժամանակային ցուցիչի մասին, պետք է տարբերակել ժամանակի հասկացությունն ընդհանրապես և կոնկրետ իրադարձության ժամանակը: Ժամանակն, ընդհանրապես շրջապատող աշխարհի, տիեզերքի և հենց իր մասին մարդու գիտական և կենցաղային բոլոր պատկերացումների հիմքերից մեկն է:

Մարդու պատկերացումները և ըմբռնումները ժամանակի մասին միաժամանակ բացարձակ են և հարաբերական: Բացարձակությունը կապված է ժամանակի որպես շարժվող մատերիայի գոյության հիմնական ձևերից մեկի օրյեկտիվ իրականություն լինելն ընդունելու հետ, իսկ հարաբերականությունն արտահայտվում է նրանով, որ մարդու պատկերացումները ժամանակի մասին ամբողջական չեն, փոփոխական են, կախված ժամանակի հատկանիշների մասին բնագիտական տվյալներից:

Ժամանակն այնպիսի կատեգորիա է, որը կարող է փոխել իր իմաստային լիցքը պայմանավորված լինելով նրանով, թե առարկաների ինչ տեսակի համար է կիրառվում, այսինքն՝ գոյություն ունի ֆիզիկական գործընթացների ժամանակ (իրական, ֆիզիկական ժամանակ) և մարդկային ժամանակ (պատմական, սոցիալական, հոգեբանական), եթե հարցը վերաբերում է հանրության զարգացման պատմությանը, անհատի հոգևոր կյանքին:

Փիլիսոփայության տեսանկյունից ժամանակը, որպես օրյեկտիվություն ունեցող իրականություն, իր տարածականության մեջ անդառնալի է: Արխտուտելի ըմբռնմամբ ժամանակը հարաբերական է, այն դիտարկվում է որպես մի բան, որը կարգավորում է անհատական գիտակցության տպավորությունները և գոյություն ունի միայն գիտակցության մեջ և գիտակցության շնորհիվ /տես Շարպով, 2000: 5-10/:

Ժամանակի մասին բնագիտական պատկերացումների զարգացման գործում կարևոր դեր է կատարել Ի.Նյուտոնի բացարձակ ժամանակի տեսությունը, որտեղ այն ներկայացված է հոսքի տեսքով, այսինքն՝ ընկալվում է որպես մաքուր վիճակում տևողություն, ինչը հավասարաշափ հոսում է անցյալից դեպի ապագան: Այն իրադարձությունների շտեմարան է, որոնք կարող են այն լցնել, կարող են և չլցնել. Իրադարձությունների ընթացքը

Ժամանակի շարժման վրա չի ազդում: Ժամանակը միաժամանակ անընդհատ է, անվերջ, համագործածական, միատարր /Հիյոտոն, 1936:/

Ըստ Պ. Դ. Ուսպենսկու, մենք ժամանակ ենք անվանում այն հեռավորությունը, որ բաժանում է իրադարձությունները նրանց հաջորդականության կարգով և կապում դրանք տարբեր նպատակներով /Սպենսկի, 1992:/

Ժամանակի հաջորդականության բնույթը նշվում է նաև Ե.Լ.Երզնկյանի մենագործությունում, որտեղ հեղինակը նշում է, որ ժամանակը՝ որպես մատերիայի գոյության ընդհանրական ձև, արտացոլվում է նրա բոլոր կառուցվածքային մակարդակներում և արտահայտում է եղելության, բոլոր երևույթների, գործողությունների, աշխարհի բոլոր նյութական համակարգերի, գործոնաբացների փոփոխության հաջորդականությունը /Երզնկյան, 2013: 273/:

Որպես այդպիսին, իրադարձության ևս մի բաղադրիչ է հաճախականությունը, ժամանակային տարածության մեջ իրադարձության կրկնողականության գաղափարը: Երևույթը կարող է իրադարձություն կոչվել, եթե այն կատարման իր բոլոր հատկանիշները և հանգամանքները պահպանելու պայմանով բավական հազվադեպ է կատարվում: Համապատասխանաբար, որքան հաճախ է կատարվում երևույթը, այնքան փոքր է հավանականությունը, որ այն իրադարձություն է /Իրիսխանովա, 1997: 10/: Հարկ է նշել, որ իրադարձության կատարման հաճախականությունը բավական հարաբերական է և որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ հաշվի առնելով նշյալ իրադարձության (մեր դեպքում՝ տնտեսական) կարևորությունը:

Ղննության առնելով իրադարձությունը լայն իմաստով, այսինքն այն ամենը, ինչ կատարվում է և գոյություն ունի աշխարհում (ներառյալ գործոնաբացներն ու գործողությունները), հարկավոր է նաև ուսումնասիրել իրադարձության բնութագրի ևս մեկ հիմնախնդիր՝ դրա տևողության փաստը: Բազմաթիվ գիտնականներ այն կարծիքին են, որ իրադարձությունը կարող է դիտարկվել և՝ որպես իրերի դրության ակնթարթային փոփոխություն, որևէ կետ ժամանակի առանցքի վրա, ինչին բնականաբար հետևում է ավարտուն ամբողջությունը, և՝ որպես իրադրություն, որը բնորոշվում է ժամանակային որոշակի, երբեմն բավական երկար տևողությամբ: Ցանկացած իրադարձություն, վերջին հաշվով, կարելի է բաժանել բաղադրիչների մի քանի այլ, ավելի փոքր իրադարձությունների, գործողությունների: Դա հատկապես վերաբերվում է ծավալուն, գլոբալ իրադարձություններին, որոնք դառնում են քողարկվող նորությունների իրական նշյալներ:

Կատարելով իրադարձության, նրա հատկանիշների և բաղադրիչների մասին առօրենական պատկերացումները բացահայտելուն ուղղված մի շարք հոգեկանական փորձեր, Վ. Յա. Շաբեսը հանգում է այն եզրակացության, որ իրադարձության մոդելը կարող է ներկայացվել եռամիության տեսքով, որպես միկրոիրադարձությունների իրագործման շարք. իրադարձությանը նախորդում է որևէ այլ իրադարձություն, ինչի հետևանք կարող է լինել մի այլ իրադարձություն (Նախաիրադարձություն – Բուն իրադարձություն –

Հետիրադարձություն): Ըստ Էռիքյան, իրադարձությունը (համապատասխանում է Բուն իրադարձությանը) տվյալ ըմբռնմամբ նույնպես ներկայացված է երեք բաղադրիչների միասնության տեսքով՝ Ներուժ – Իրազրութում – Արդյունք, այսինքն՝ իրադարձությունը հանում է որպես ժամանակի մեջ ծավալված համակարգված գործունեություն, ինչն ուղղված է որևէ նպատակի /Շաճես, 1989: 130:/

Այս առումով, հարկ է անդրադառնալ այն հարցին, թե ինչպես է զորդարար նորությունների տեսառում արտահայտվում նախաիրադարձությունը: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, հեղինակը հիմնականում իր հոդվածը մեկնարկում է նախաիրադարձության նկարագրմամբ, դրանով իսկ միանգամից ընթերցողին ծանոթացնելով բուն իրադարձության նախապատմությանը: Այդ մասին է վկայում փաստական նյութի ուսումնասիրությունը՝

When Apple bought Beats, best known for making brightly coloured headphones, for around \$3 billion last year, many wondered what the technology giant had in mind. They now have their answer. On June 8th, at Apple's annual gathering for software developers in San Francisco, it revealed a new music-streaming service, based on one it had acquired as part of Beats. Tim Cook, Apple's boss, promised that, "It will change the way you experience music forever." Others on the stage called it "revolutionary" (The Economist, June 13–19, 2015).

Այսպիսով, սույն իրադարձությունը մեկնարկում է նախաիրադարձության այն տեղեկույթից, որ Apple ընկերությունը անցյալ տարի գնել էր Beats-ը, արքնացնելով շատերի հետաքրքրությունը: Այսուհետև, երկրորդ նախադասությունը ընթերցողին իրազեկում է ներկայիս իրադարձության մասին, այն է թե Apple-ը հունիսի 8-ին հայտարարել է նոր երաժշտական ծառայության մեկնարկի մասին:

When the world's first electronic cigarette was invented in Beijing in 2003, the device was hailed as a godsend for tobacco friends.... Today over 95% of e-cigarettes are made in China, but until recently the Chinese themselves have shown little interest in the product (The Economist, June 13–19, 2015).

Այս օրինակում, հոդվածը սկսում է նախաիրադարձությունից, թե Պեկինում 2003 թվականին հայտնագրվել են էլեկտրոնային սիգարետներ, որոնք ծխողների համար համարվել են Աստծո կողմից շնորհված մի երևույթ: Արդյունքում, ներկայումս, 95% նույնանուն ապրանք է արտադրվում Չինաստանում, սակայն մինչ վերջերս չինացիները առանձնապես մեծ հետաքրքրություն շեն ցուցաբերել դրա նկատմամբ: Վերլուծենիք հաջորդ օրինակը՝

When Marissa Mayer joined Yahoo as chief executive, employees put posters on the walls emblazoned with the word "Hope", implicitly comparing their new leader to President Barack Obama by mimicking his campaign propaganda. Two and a half years later, Ms Mayer may have given some Yahoo staff a greater belief in the company (The Financial Times, January, 2015).

Վերոհիշյալ օրինակում, նախափրադրձությունում նշվում է երկու և կես տարի առաջ Մարիսսա Մեյերին որպես Yahoo ընկերության գործադիր տնօրենի նշանակման և մյուս աշխատողների՝ նրա անձի նկատմամբ թերահավատ մոտեցման մասին: Այդուհանդերձ, ներկայիս իրադարձությունում հաղորդվում է Մեյերի հաջողության մասին ընկերության աշխատակիցներին հավատ ներշնչելու գործում:

Այսպիսով, հոդվածներում, նախափրադրձությունների առկայության դեպքում, վերջիններս հիմնականում մեկնարկում են լրահոսք, տեղեկացնելով ընթերցողին նախապատմությանը, հաղորդելով նրան ընդհանուր պատկեր՝ ներկայիս կատարվող իրադարձության ամբողջական ընկալման համար:

Նշյալ մեկ խոչոր իրադարձությունը մի քանի իրադարձությունների մասնատելու գաղափարը հաճգեցնում է այդ իրադարձության տևողության, այս կամ այն իրադարձության զբաղեցրած ժամանակային հատվածի իմացական ընկալման և դրա տևողության տեսանկյունից նշյալ իրադարձության լեզվաարտահայտչական միջոցների որոշակիացման անհամապատասխանությունների առաջացմանը:

Իրականում գոյություն ունեցող ժամանակը իր դրսերումների բազմագանության մեջ արտացոլվում է լեզվի մեջ, սուրբեկտիվորեն միարժելով մարդու գիտակցության մեջ: Լեզուն, ինչպես հայտնի է, մարդկային վարքագծի այլ ձևերի հետ միասին շարունակականություն է ստեղծում, այդ պատճառով ժամանակի կատեգորիան լեզվում կարելի է դասել այն հասկացությունների շարքին, որոնց օգնությամբ որոշվում է մարդու լեզվական և արտալեզվական գործունեությունների միջև եղած այն հարաբերակցությունը, որի միջոցով իրական աշխարհը փոխակերպվում է մարդկային գիտակցության պրոյեկցված աշխարհի: Լեզվի մեջ ժամանակ արտահայտող բառային միավորները արտացոլվում են մարդու գիտակցության մեջ ժամանակային հասկացույթների ձևով՝ ձևավորելով հասկացական ժամանակ: Այսպիսով, ժամանակի լեզվաբանական մոտեցումը լեզվում, իրական ժամանակի որոշակի մոդելի արտացոլումն է: Այստեղից բխում է, որ ժամանակի լեզվաբանական ուսումնասիրությունը հետազոտություն է տարբեր լեզվական միջոցների, որոնք նպատակառուղղված են վերհանելու իրական ֆիզիկական ժամանակը /Երզնկյան, 2013: 275-276/:

Լեզվի մեջ ժամանակի կատեգորիան արտահայտելու համար գոյություն ունի քերականական և բառային միջոցների մի կուր ամբողջություն: Կրանք՝ ժամանակի հաղորդմանը ծառայող լեզվական հիմնական միջոցներն են՝ բայական հատուկ ժամանակային ձևերը (անցյալ, ներկա և ապառնի քերականական ժամանակ) և ժամանակ ցուցանշող բառային միավորները, որոնք շատ հաճախ աշքի են ընկնում իրենց անվանական հնարավորությունների բազմազանությամբ: Այսպես, ըստ հետազոտությունների, որոշ լեզուներում հնարավորություն կա իրենց սկզբնական իմաստով ժամանակահատված նշանակող բառերի և արտահայտությունների միջոցով (օրինակ՝ րոպե, ժամ, օր, տարի, դար, դարաշրջան և այլն) արտահայտել /բնութագրել

նաև իրադարձությունները, որոնք կատարվում են տվյալ ժամանակահատվածում (պատմի՞ր կիրակիի մասին= այն մասին, թե ինչ կլինի կիրակի օրը), ինչը հետազոտողների կողմից մեկնաբանվում է որպես առընթերական զուգորդմամբ փոխանունություն /Պացչևա, 2000/:

Լեզվաբանության մեջ ընդունված է ժամանակային նշանակությունների գործածության երկու տեսակ՝ ուղղակի (բացարձակ) և հարաբերական: Առաջինը՝ միաժամանակյա, նախորդող կամ հաջորդող: Հարաբերական ժամանակը ծառայում է իրադարձությունների միաժամանակության /տարածամանակության/ հարաբերություններն արտահայտելու համար, խորի պահից անկախ: Լրագրողական տեքստը, որը ներառում է տարբեր ոճերի տեքստերի բնութագրեր, տարբերվում է նրանով, որ որպես հաշվարկի սկզբնակետ օգտագործում է իրականության ընթացիկ պահը, պատմական այսօրը /Մատեևա, 1990: 101/: Տերատային մակարդակով դա իրագործվում է ժամանակի տարբեր հաճախանքների օգտագործմամբ, որոնք Օ.Ի.Սոսկալսկայան ձևակերպում է որպես սինսեմանտիկ՝ թվական+գոյական, որոնք նշում են ամիսը, գոյական, որը մատնանշում է շաբաթվա օրը, ժամանակի մակրայ /Москальская, 1981: 105/: Օրինակ՝ now, this week, on Thursday, September 21, 2015 լեզվական միջոցները ցուցադրում են ԶԼՄ հրապարակումներում ժամանակային նշույթների բազմազանությունը:

Անիրաժեշտ է իրադարձության ժամանակի տեքստային նշույթների փոխակերպման վրա ազդող արտակեզվական գործոնների շարքին դասել ԶԼՄ-ներում իրադարձության թվականի որոշման առանձնահատկությունը: Տեքստում բառային և քերականական ժամանակային նշույթների փոփոխությունները պայմանավորված են իրադարձության մասին տեքստի ստեղծման և ֆիզիկական իրականության մեջ այդ իրադարձության կատարման ժամանակային տարբերությամբ: ԶԼՄ հրապարակումները լույս են տեսնում ստույգ ամսաթիվ ունեցող լրագրում (օրաբերք, շաբաթաբերք): Էլեկտրոնային հրատարակության մեջ հրապարակումները զետեղման ամսաթիվ ունեն: Քանի որ բոլոր տեքստերը, որոնք ստացվում են օրվա ընթացքում, տեղադրվում են ժամանակագրական կարգով, դրանք ավտոմատ կերպով ներառվում են կայք-պարբերականի ժամանակային համատեքստում:

Այսպիսով, մանրազնին ուսումնասիրենը լեզվական բոլոր միջոցները, որոնք կիրառվում են տնտեսական իրադարձությունների ժամանակային կառուցվածքը ապահովելու համար:

Նորություններում իրադարձության իրական ժամանակը ցուցանշվում է ժամանակի պարագայի միջոցով, որի ընդունված բանաձևն է Num+N կամ N+Num, որտեղ Num-ը թվական է, իսկ N-ը տարին և/կամ ամիսը: Այս բանաձևը, համակցվելով բայի համապատասխան ձևերի հետ, հանդիսանում է իրադարձության ճշգրիտ ժամանակային նշույթավորման համընդիանուր միջոց: Օրինակ՝

The surprise ousting on **June 6th** of Deutsche Bank's embattled cobosses, Anshu Jain and Jargen Fitschen caused its share price to jump by 8% (The Economist, June13-19, 2015).

On **June 8th** the government announced the lifting of the controls the country imposed in 2008 – with one big caveat (The Economist, June13-19, 2015).

Տվյալ բանաձեռ կարող է ներառել ևս մեկ ժամանակի պարագա, որը ցուցանշում է օրվա կոնկրետ մի մաս՝ առավոտյան, երեկոյան և այլն: Օրինակ՝

On **the morning of April 22**, David Pyott, CEO of Allergan, woke up to a shock (The Bloomberg Businessweek, 2015, February, N2)

Վերոնշյալ բանաձեռի բացակայության դեպքում, տերսող ձեռք է բերում իր ժամանակագրական բնութագիրը ի շնորհիվ քերականական հնարինի, այսինքն բայի ժամանակաձերի, որոնք թույլ են տալիս տեղակայել իրադարձությունը անցյալի, ներկայի և ապագայի կողրդինատներում՝ ունալ ժամանակի վերաբերյալ (նորությունների տպագրվելու կամ վերկայքում տեղադրելու ժամանակը): Օրինակ՝

The government **is stepping up** efforts to persuade the country's 280m daily smokers – nearly one-third of the world's total – to give up (The Economist, June13-19, 2015).

Qatar Airways **has bought** a 9.99 per cent stake in British Airways' owner International Airlines Group, in a move that underlines the state-controlled Gulf carrier's determination to be a leading force in global aviation (The Financial Times, February, 2015).

The British Army **will revive** one of the most controversial special forces units of the second world war, the Chindits, as a new generation of "Facebook warriors" who will wage complex and covert information and subversion campaigns (The Financial Times, February, 2015).

Իր կիրառման հաճախականությամբ աչքի է ընկնում նաև Adj+N բանաձեռ, որտեղ Adj-ը ածական է, իսկ N-ը ժամանակային որևէ հասված ցուցանշող գոյական:

Last month Toronto became the fifth city where the firm's lunch-delivery service, UberEATS, is available (The Economist, June13-19, 2015).

Russia's Prime Minister Dmitry Medvedev proposed **last week** that the country formulate budgets for only one year instead of the traditional three (The Financial Times, September 8, 2015).

...the so-called Working Group, added that the Treasury's single cash account and Government Development Bank would exhaust available liquidity before the end of the year, creating a cash shortfall in **late November or early December** (The Financial Times, September 9, 2015).

So the cost of commuting has outpaced inflation? Over **the past decade**, yes (The Financial Times, February, 2015).

Տվյալ բանաձևում որակական ածականի առկայությունը կարող է ցուցանշող ժամանակային հատվածին հաղորդել իմաստային որոշակի երանգավորում: Օրինակ՝

Seven years after the peak of the financial crisis, Iceland said that it would gradually remove the capital controls it had imposed, a sign that the economy has moved beyond its **turbulent past** (The Economist, June 13-19, 2015).

On the other hand, there's a need, assiduously promoted by the present administration, to see Russia as a great country with a **glorious past** (The Financial Times, February, 2015).

But BT said that the new agreement with its pension trustees would help the group as it faces a few **crucial weeks** that will dictate the next stage of the company's growth (The Financial Times, February, 2015).

Իրադարձության ժամանակային նշույթավորման համար օգտագործվող ևս մեկ բանաձև է Pr+N, որտեղ Pr-ը հիմնականում հանդես է գալիս ցուցական դերանվան տեսքով, իսկ N-ն՝ ժամանակային որևէ հատված ցուցանշող գոյական է (շաբաթ, ամիս, տարի): Օրինակ՝

After rising by an annual average of 21% over the previous five years, visits by mainlanders are up just 6% so far **this year** (The Economist, June 13-19, 2015).

Verizon **this week** became the latest company to launch an online video service... (The Financial Times, September 9, 2015).

Վերոնշյալ Adj+N և Pr+N բանաձևերը, ընդհանուր առմամբ օգտագործվում են հեղինակի կողմից այն դեպքում, երբ տեղեկույթը ներկայացվում է իրադարձության տեղի ունենալուց առնվազն մեկ օր հետո:

Ժամանակ ցուցանշող մակրայների կիրառումը մեկ այլ միջոց է նորույթունների ժամանակային տեղակայումը ապահովելու համար:

Lately an unfamiliar emotion has washed over Cyprus: hope (The Economist, June 13-19, 2015).

Uber **now** operates in 311 cities in 58 countries, providing more than 1m rides each day (The Economist, June 13-19, 2015).

Իրադարձության ժամանակային նշույթավորման ևս մի տարրերակ է անցյալում կատարված իրադարձության նկարագրությունը և ժամանակի ցուցանշումը, որը ընթերցողի համար հանդիսանում է հաշվարկի սկզբնակետ՝ ճշգրիտ թվագրելու համար ներկայիս իրադարձությունը: Օրինակ՝

During the financial crisis, when the global economy faced its gravest threat since the 1930s, policymakers sprang into action. To stimulate the economy, central banks slashed interest rates and politicians spent lavishly...Unfortunately, however, that quick response nearly exhausted governments' economic arsenals. Seven years later they remain depleted (The Economist, June 13-19, 2015).

Սույն օրինակում ընթերցողը, իրազեկ լինելով 2008 թվականի մեծ ֆինանսական ճգնաժամի մասին, խոլոյն հաշվարկի սկզբնակետ է վերցնում դա և ծանոթանում այդ ժամանակվա դեպքերին: Հաջորդող նախադասու-

թյուններում, seven years later բառակապակցությունից, ոեալ ֆիզիկական ժամանակում գտնվող ընթերցողը հասկանում է, որ դեպքերը զարգանում են 2015 թվականին:

Half a year on from pro-democracy protests that gripped Hong Kong for weeks, the city's economy is – depending on your perspective – beginning to suffer the fallout or sailing along as if nothing much happened (The Economist, June 13-19, 2015).

Վերոհիշյալ օրինակում, ընթերցողը տեղակայված լինելով ոեալ ժամանակի մեջ և համարելով այն հաշվարկի սկզբնակետ, ես է զնում կես տարի անց կատարվող իրադարձություններին և ապա զալիս դեպի ներկա:

Իրադարձության ժամանակային նշույթավորման համար օգտագործվում են նաև կոնկրետ օրերի անվանումներ (այսօր, վաղը, երեկ, շաբաթվա օրեր), որոնք թվագրելու համար, ընթերցողի հաշվարկի սկզբնակետը համոլիսանում է իրական կյանքի այսօրը: Օրինակ՝

Oil prices rallied **yesterday**, with US crude futures jumping 8.3 percent to settle at \$48.24 a barrel and Brent crude up 7.9 percent to settle at \$52.99, its biggest one-day gain since 2009 (The Financial Times, January, 2015).

The public battle between Alibaba executives and a powerful Chinese regulator appeared to cool off **yesterday** as the two sides met and pledged to co-operate in fighting counterfeiting (The Financial Times, January, 2015).

It's getting more expensive to buy at auction, at least at Sotheby's. The rates haven't changed, but from **tomorrow** the thresholds have: commission is now 25 per cent on the first \$200,000 instead of the \$100,000 (The Financial Times, January, 2015).

The first Federal Reserve monetary policy meeting of 2015 takes place **today** and **tomorrow** (The Financial Times, February, 2015).

ExxonMobil, the world's biggest listed oil company by market value, is set to outline its response to a 60 per cent decline in crude prices when it issues its full-year results on **Monday** (The Financial Times, January, 2015).

Պետք է նշել, որ **today** բառային միավորը միշտ չէ, որ նշանակում է իրական ժամանակի այսօրը, այլ այն համատեքսում իրականացնում է իր երկրորդ իմաստը՝ այժմ, այս օրերին: Օրինակ՝

In the 1950s, the fattest profits were stamped out by manufacturers and heavy industry; the scene **today** is more raucous, with technology, healthcare, finance and telecoms among the biggest earners (The Financial Times, January, 2015).

Today, long after the fabled police of political correctness patrolled academic and public life in the late 1980s and 1990s, liberals are – according to Mr Chait – afraid of speaking up for fear of bullies denouncing them as bigots (The Financial Times, January, 2015).

Այսպիսով, նորություններում տնտեսական իրադարձությունների ժամանակային նշույթավորումը կապող օղակ է տեղեկութիւն և իրականության միջև՝

Ելնելով հոդվածի հեղինակի տեսանկյունից: Ժամանակային նշույթավորման լեզվական միջոցները ի հայտ են գալիս թե՛ քերականական (բայի ժամանակաձևեր), թե՛ բառային (թվականներ, գոյականներ, ածականներ, մակրայներ, վերջիններիս տարրեր համակցություններ) նակարդակներում: Գործարար նորություններում դրանք ապահովում են տեղեկույթի ճշգրտությունը, հավաստիթությունը, ինչպես նաև արդիականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Арутюнова Н. Д. Язык и мир человека. М.: Языки русской культуры, 1998.
2. Булыгина Т. В., Шмелев А. Д. Языковая концептуализация мира (на материале русской грамматики). М., 1997.
3. Ерзинкян Е. Л. Дейксис слова: Семантика и прагматика. Ереван: ЕГУ, 2013.
4. Ирисханова О. К. Семантика событийных имен существительных в языке и речи. Автореф. дис. канд. филол. наук. М., 1997.
5. Матвеева Т. В. Функциональные стили в аспекте текстовых категорий: синхронно-сопоставительный очерк. Свердловск: УГУ, 1990.
6. Москальская О. И. Грамматика текста. М.: Высшая школа, 1981.
7. Ньютон И. Математические начала натуральной философии. М.-Л.: ОГИЗ, 1936.
8. Падучева Е. В. Пространство в обличии времени и наоборот (к типологии метонимических переносов) // *Логический анализ языка. Языки пространств*. М., 2000.
9. Успенский П. Д. *Tertium Organum*. Ключ к загадкам мира. СПб.: Андреев и сыновья, 1992.
10. Шабес В. Я. Событие и текст. М.: Высшая школа, 1989.
11. Шарыпов О. В. Философские вопросы научных представлений о пространстве и времени: Введение: учеб. пособие. Новосибирск: НГУ, 2000.
12. Kim J. Events and their descriptions: some *considerations* // *Essays in Honor of Carl G. Hempel*. Dordrecht, 1969.
13. Vendler Z. Linguistics in philosophy. Ithaca, New York: Cornell University Press, 1967.
14. The Financial Times www.ft.com
15. The Economist www.economist.com

Л. АРУТЮНЯН – *Темпоральная маркированность экономических событий.* – Темпоральная маркированность экономических событий является неотъемлемым компонентом смысловой структуры любого экономического события. Реально существующее время во всем множестве своих проявлений отражается в языке, выражая отношения между реальной действительностью и данной информацией. Как свидетельствует анализ фактического материала, темпоральная маркированность экономического события осуществляется посредством широкого спектра грамматических и лексических средств, выбор которых, в основном, предопределен намерениями автора и включает прямое или косвенное указание на время происшествия события. В бизнес новостях темпоральные маркеры определяют точность, достоверность, а также актуальность информации.

Ключевые слова: темпоральная маркированность, экономические события, бизнес новости, смысловая структура события, грамматические средства, временные лексические маркеры, реальное физическое время

L. HARUTYUNYAN – *Temporal Markers of Economic Events.* – The present paper seeks to analyze the types and functions of temporal markers in economic events. As is known, time localization is considered to be an inextricable part of any economic event. Real physical time is reflected in the language, maintaining correlation between the objective reality and the information provided. The element under issue is achieved via a wide range of grammatical and lexical means, the use of which is substantially preconditioned by the intentions of the author to directly/indirectly indicate the time of the event. In business news, temporal markers define the reliability and actuality of the given information.

Key words: temporal markers, economic events, business news, semantic structure of events, grammatical means, lexical units of time identification, real physical time

Ծուշանիկ ՄԵԼԻՔ-ԱԴԱՍՅԱՆ
Հայ-ռուսական (Ալավոնական) համալսարան

**ԱՆԳԼԵՐԵՆՆՈՒՄ ԶԱՅՐՈՒՅՅԹ ՀՈՒՅՋԻ ՈՐՈՇ ԻՍԱՍՏԱՅԻՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Սույն հոդվածի նպատակն է անգլերեն լեզվում «զայրույյթ» հույզի որոշ իմաստային յուրահատկույթունների վերհանումը: Ի դերև են հանվում «զայրույյթ» հույզի հոմանիշային շարքի ինչպես ընդհանրական, այնպես էլ տարբերակիչ հատկանիշները՝ որպես հիմք առնելով սոյն հույզի տարատեսակ դասակարգումները:

Բանայի բառեր. զայրույյթ, հույզ, իմաստարանական հատկություն, հուզականություն, հոմանիշային շարք, ուժգնություն, ընդհանրական հատկանիշ, տարբերակիչ հատկանիշ

Ուսումնասիրության առարկայի խնդիրը բարդանում է այնքանով, որքանով դժվար է սահմանել վերացական եզրույթները, որոնք լեզվաբանության այս ճյուղի համար առաջնային են: Այդպիսի եզրույթներից է հույզը: Որպես վերացական երևոյթ այն չի կարող ունենալ գիտական գուտ մեկ սահմանում: Սակայն սահմանումների ընդհանրությունը կայանում է նրանում, որ հույզը դիտարկվում է որպես մարդկային զգացմունք, որը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական:

Հոդվածի շրջանակներում մենք կդիտարկենք հույզը իր ամենալայն իմաստով: Հուզականությունը լեզվաբանության մեջ հաճախ կապում են արտահայտչականության հետ: Լեզվաբան Վ. Ն. Տելիան, օրինակ, համարում է արտահայտչականությունը լեզվաբանության կարևորագույն հիմնախնդիրներից և նույնացնում է հուզականությունը և արտահայտչականությունը /Տելիա, 1986: 76/: Մենք նույնացնենք հարում ենք այդ տեսակետին:

Անգլերենում «զայրույյթ» ուղղի թարգմանությունն է anger բառը: Անգլերեն լեզվի ավանդական Oxford բառարանը /Oxford Dictionary/ սահմանում է anger-ը որպես «վրդովմունքի, դժգոհության կամ թշնամանքի ուժեղ զգացմունք», մինչդեռ ըստ Merriam-Webster բառարանի /Merriam-Webster Dictionary/ այն «ստխուր կամ վրդովված լինելու ուժեղ զգացմունք է, քանի որ որևէ բան սխալ է կամ չի ստացվել. այն զգացմունքը, որը ստիպում է մարդկանց ցանկանալ վնաս, ցավ պատճառել այլ մարդկանց»: Մեկ այլ՝ երրորդ բառարանը՝ Longman American English /Longman Dictionary, 2007: 35/, սահմանում է anger բառը հետևյալ կերպ: «որևէ մեկին վնաս, ցավ պատճառել կամ քննադատելու ուժեղ զգացմունք, քանի որ նա որևէ է վատ բան է Ձեզ արել կամ Ձեր նկատմամբ բարի չի գտնվել»: Ինչպես տեսնում ենք, առաջին երկու սահմանումների մեջ ընդհանրական է վրդովմունքի առկայությունը՝ որպես զայրույյթ հույզի անքակտելի մաս, մինչդեռ վերջին երկուսում ընդհանուր է որևէ մեկին վնաս

կամ ցավ պատճառելու ցանկությունը՝ որպես զայրույթ հույզի բնական հետևանք:

Ելնելով բառարանային սահմանումներից՝ կարող ենք եզրակացնել, որ, «զայրույթ» հույզ արտահայտող հոմանիշային շարքի համար որպես իմաստային միջուկ գործելով, anger բառը բնութագրվում է նվազագույնը երկու հատկանիշով՝ վրդրվածությունը և վնաս, ցավ պատճառելու ցանկություն: Առաջին խմբի իմաստային կորիգը կլինի համապատասխանաբար վրդրվածությունը հույզը, իսկ երկրորդը՝ զայրույթ հույզի պաճառով առաջացած վնաս կամ ցավ պատճառելու ցանկությունը: Այսինքն, առաջին դեպքում գործ ունենք հույզ-հոգեվիճակի հետ, իսկ երկրորդում՝ հույզից առաջացած ցանկության: Առաջին դեպքում «վրդրվածություն» հույզը ընդլայնում է «զայրույթ» հույզի իմաստային դաշտը, քանի որ վերջինս ներառում է իր մեջ նաև «վրդրվածություն» հույզի իմաստային դաշտը: Սահմանման հաջորդ կետը՝ ցավ, վնաս պատճառելու ցանկությունը, որն առաջացնում է զայրույթը, պարունակում է պատճառահետևանքային կապ: Սա նշանակում է, որ զոնեն բառարանային սահմանման մակարդակով զայրույթ հույզի բոլոր դրակոնիկ բնույթական նորմերը վրդրվածությունը և պատճառահետևանքային կապը:

Հարկ է նշել, որ ինչպես ցանկացած բառարանային սահմանում, այն ևս համապարփակ չէ: Այսպես, հոմանիշային շարքը դիտարկելու ի հայտ են զալիս հույզի այլ ընդհանրական հատկանիշներ՝ բացի վերոնշյալ երկուսից:

Vocabulary.com առցանց բառարանը տարբերակում է զայրույթի՝ որպես զգացմունքի 19 հիմնական տեսակ: Դրանք են՝

1. չափազանց ուժգին, կատաղության հասնող զայրույթի զգացմունք (fury, madness, rage),
2. չափազանց ուժգին, կատաղության հասնող զայրույթի զգացմունք (enragement, infuriation),
3. զայրույթի զգացմունքը, որն առաջացել է որևէ մեկին վիրավորելու հետևանքով (offence, umbrage),
4. զայրույթի զգացմունքը, որն առաջացել է որևէ մեկին վիրավորելու հետևանքով (indignation, outrage),
5. արդարացված զայրույթի զգացմունք (huffiness),
6. զայրույթի և վիրավորանքի անցողիկ վիճակ (dander, hackles),
7. զայրույթի և թշնամության զգացմունք (bad temper, ill temper),
8. շարունակական զայրույթի տրամադրություն (annoyance, chafe, vexation),
9. որևէ նյարդայնացնող բանի պատճառով առաջացած զայրույթ (dudgeon, high dudgeon),
10. ուժգին վրդրվածություն (այժմ օգտագործվում է միայն in high dudgeons արտահայտությամբ),
11. ուժգին զայրույթ (սովորաբար էպիկական մասշտաբով) (wrath),
12. զայրույթի այնպիսի մի աստիճան, որի պատճառով դեմքը կորցնում է իր գույնը (lividity),
13. զայրույթի հանկարծակի պոռկում (irritation, pique, temper),

14. խոշնդոտի հանդիպելու կամ քննադատության ենթարկվելու վրդովմունքի զգացումը (frustration),
15. վրդովմունքի սրտնեղած զգացմունք (aggravation, exasperation),
16. ուժգին վրդովմունքի զգացում, որը հետևանք է հալածանքների (harrassment, torment),
17. որևէ բանից կամ որևէ մեկից դժգոհ, վրդովված կամ չբավարաված լինելու զգացմունքը (displeasure),
18. անարդար վիրավորված լինելու զայրույթը (irascibility, quick temper, short temper, spleen),
19. վատ տրամադրության ցուցադրումը (conniption, fit scene, tantrum):
[/Vocabulary.com/](#)

Այս դասակարգումները առաջին հայացքից երբեմն կրկնվում են (ինչպես, օրինակ, համար մեկ և երկուսում), այսինքն՝ չունեն միայն մեկ սկզբունք, ըստ որի և ներկայացվել է զայրույթ հույզի իմաստաբանական դաշտը: Համենայն դեպք, կարող ենք ի դերև հանել մի քանի ընդհանրություններ, ինչպիսին են ուժգնությունը կամ մեղմությունը և պատճառահետևանքային կապը: Մինչդեռ ծայրային՝ պերիֆերալ իմաստ ցույց տվող հոմանիշները իրենցից ներկայացնում են արդարացված լինել կամ չլինելու փաստը: Այլ կերպ ասած՝ անպայման չէ, որ զայրույթը բնութագրվի որպես արդարացված կամ ոչ արդարացված: Սակայն հնարավոր չէ, որ այն չունենա ուժգնության կամ մեղմության որևէ աստիճան: Հաշվի առնելով այս ընդհանրությունները և տարբերությունները՝ վերաշարադրենք դասակարգումը:


Ըստ anger իմաստաբանական դաշտի մեղմության և ուժգնության՝ զայրույթի հիմնական և ընդհանրական հատկանիշի՝ կունենաք մի պատկեր, որտեղ վատ տրամադրության ցուցադրության (conniption, fit scene, tantrum) բառաշարը կլինի նվազագույն ուժգնություն ունեցողը: Սակայն եթե զայրույթի ամենամեղմ դրսնորման հետ կարելի է համաձայնել, ապա ավելի բարդ կլինի որոշել ամենաուժգին ցասում արտահայտող բառաշարը: Տարբերակները մի քանիսն են. դա կարող է լինել հալածանքների պատճառով առաջացած զայրույթի շարքը (harrassment, torment), էպիլական մասշտարով արտահայտված զայրույթինը (wrath), կամ զայրույթի այնպիսի մի աստիճան, որի պատճառով դեմքը կորցնում է իր գույնը (lividity): Քանի որ զայրույթը իրենից ներկայացնում է բասացական հույզ, ապա դրա առավել ուժգին, ուստի և ամենաբասացական լեզվական դրսնորումները կունենան ավելի ցայտուն և հարուստ դրսնորում, իսկ մեղմ, չնչին դրսնորումները կլինեն առավել նվազ: Այսինքն, քննական է, որ որևէ դրական հույզի մեջ ավելի թույլ և, այսպիսով, ավելի լեզվաբանորեն հստակ կլինի բացասական երանգի դրսնորումը, քան դրականինը, քանի որ վերջիններս կլինեն բազմազան: Այսպես, վերադառնալով զայրույթ իմաստաբանական դաշտի քննարկմանը՝ նշենք, որ իր բացասական հարանշանակությունն ավելի փառ է արտահայտված, և այդ իսկ պատճառով այս դաշտը ավելի հարուստ է ներկայացված ուժգնության ամեն համընթաց: [Vocabulary.com-ի կողմից ներկայացված դասակարգման 1 և 2 կետերը, բվում](#)

է, թե համընկնում են, քանի որ երկուսն էլ նկարագրում են ուժգին զայրույթի զգացմունք:


Fury, madness, rage բառաշարքի մի կողմից, իսկ մյուս կողմից՝ enrage, infuriation շարքի իմաստային տարրերությունը կդառնա, սակայն, ակնհայտ, եթե դիմենք անզերենի առցանց տեսողական թեզառուսի օգնությանը:

Տեսողական թեզառուսը մի առցանց համակարգ է, որը պատկերավոր ցուցադրում է բառի իմաստային դաշտը: Իմաստաբանական վերլուծության համար այն կարող է շատ օգտակար լինել, քանի որ կենտրոնում ներկայացնում է որևէ իմաստային դաշտի միջուկը՝ տվյալ դեպքում anger՝ զայրույթ բառը, որը և զայրույթ հույզի ուղղակի թարգմանությունն է, ինչպես նշել ենք վերևում: Գ-ձային պատկերմանը տեսողական թեզառուսը թույլ է տալիս նշել բառերի՝ միմյանցից ունեցած հեռավորությունը: Իհարկե, բառը չի կարելի նույնականացնել հույզի հետ, սակայն տվյալ դեպքում, քանի որ anger բառը համընկնում է anger հույզի հետ, նպատակահարամար ենք գտնում այս համակագից օգտվելը: Ի թիվս այլ դրական կողմերի՝ թեզառուսը կարող է օգնել հատակ տեսնել բառերի միջև եղած հեռավորությունը, այսինքն՝ իմաստային տարրերակում մտցնել և ներկայացնել նրանք փոխկապակցվածության աստիճանը: Ստորև բերված առաջին նկարում ընտրել ենք առաջին խմբի rage բառը, իսկ երկրորդում՝ infuriation-ը: Սա թույլ է տալիս իմաստային առումով տարրերակել երկու՝ ուժգին զայրույթի զգացմունք ցույց տվող բառախմբերը և համեմատել դրանց ուժգնության աստիճանը:

Նկար 1.



Նկար 2.



Այս պատկերավոր թեզառուուսը զայրույթը (anger) ներկայացնում է որպես այդ զգացմունքի իմաստային միջուկ, որը fury, madness, rage շարքը կրկին ներկայացված է միմյանց ավելի մոտիկ քան enragement, infuriation շարքը: Դա պատկերված է վերը բերված նկարներում:

Ներկայացված նկարների մեր ուսումնամիրությունը նպատակահարմար ենք գտնում կատարել աջից ձախ, քանի որ anger՝ զայրույթ լեզվական միավորը, որն այս դեպքում հանդես է գալիս որպես միջուկ, իր իմաստային ամենահեռավոր դրսեորումներով էապես հեռանում է իր հիմնական իմաստային միջուկից, սակայն այն իմաստային դաշտը, որը միացնում է զայրույթը իր հեռահար հոմանիշային շարքի հետ, ներկայացված է rage բառով: Վերջինս կապող օրակ է հանդիսանում այլ հասկացությունների և anger-ի միջև ու հաճացնում է որակական իմաստային փոփոխությունների ինչպիսին են՝

anger→rage→violence
 anger→rage→storm
 anger→rage→passion
 anger→rage→fury և այլն:

Հատկանշական է, որ բնության տարրերը ինչպիսին են փոթորիկը՝ storm-ը, բխում են rage-ի՝ կրիտիկական կետից, և «զայրույթ» հասկացությունը փաստորեն անցնում է մի վիճակից մեկ այլ վիճակի:

Նկար 1-ից /Visual Thesaurus.com/ տեսնում ենք, որ rage-ը՝ fury և madness հոմանիշների հետ ուղիղ կապ ունի anger-ի հետ իմաստաբանական տեսակետից և, այսպիսով, զայրույթի ուժքին տեսակ է, մինչդեռ նկար 2-ից /Visual Thesaurus.com/ պարզ է դառնում, որ enragement-ը և infuriation-ը զայրույթի ուղղակի միջուկից հեռվագած են: Ստացվում է, որ չնայած այն փաստին, որ այս երկու բանիմաստային խմբերը արտահայտում են ուժքին զայրույթ, դրանցից առաջնը (rage, fury, madness) իմաստաբանական տեսակետից զայրույթի անմիջական դրսեորում է, մինչդեռ երկրորդը (enragement, infuriation) զայրույթի դույզն-ինչ ավելի հեռվագած դրսեորում է, որը նրան այս առումով ավելի մեղմ է դարձնում:

Զայրույթը՝ որպես լայն տարածում ունեցող հույզ, իր դրսևորումն է գոնում նաև պատկերավոր խոսքում՝ փոխաբերության տեսքով: Եթե այդ փոխաբերությունները պատկերենք բայական տեսքով, ապա կստանանք հետևյալ պատկերը՝

1. Զայրույթը կարող է եռալ, օրինակ՝ She is boiling with anger, որը բառացիորեն բարգմանվում է որպես նա եռում է զայրույթից:
2. Զայրույթը որպես կրակ, զայրույթը կարող է այրվել, օրինակ՝ His anger is smoldering (իր զայրույթը այրվում է):
3. Զայրույթը որպես խելագարության, այն նման է խենթացման՝ The man was insane with rage (տղամարդը ցատումից խենթանում էր):
4. Զայրույթը որպես բախում, այն առաջացնում է պայքար՝ I was struggling with my anger (ես պայքարում էի իմ զայրույթի դեմ):
5. Զայրույթը որպես պոռքկում, այն կարելի է քարշ տալ՝ He unleashed his anger (նա բաց բողեց իր զայրույթը):
6. Զայրույթը որպես շարժում, այն կարելի է քարշ տալ՝ He carries his anger around with him (նա իր զայրույթը իր հետ է քարշ տալիս):
7. Զայրույթը որպես ձայնային համադրություն, այն կարող է գռմուլ՝ Don't snarl at me! (մի՛ գռնու ինձ վրա):
8. Զայրույթը որպես հանգուցալուծում, հասցնելու միջոց՝ that really got him going (դա նրան խսկապես հասցրեց):
9. Զայրույթը որպես կառավարման միջոց՝ His actions were completely governed by anger (իր գործողությունները ամբողջապես կառավարվում էին զայրույթի կողմից):
10. Զայրույթը որպես կլանող միջոց՝ He was consumed by anger. That just added fuel to the fire. (նրան կլանել էր զայրույթը) /Esenova, 2007: 3-7/:

Վերոնշյալ 10 բայր, կարծում ենք, չի կարող այս հույզի մասին սպառիչ պատկերացում տալ, քանի որ լեզուն՝ որպես փոփոխական օրգանիզմ, նախևառաջ փոփոխական է փոխաբերությունների հարցում. սա նշանակում է, որ տեսականորեն զայրույթ հույզի շուրջ կազմված փոխաբերությունները անվերջ են: Սակայն այս տարատեսակ օրինակների (և բազում այլ հնարավոր օրինակների) իմաստաբանական ընդհանրությունը կայանում է նրանում, որ դրանք բոլորը ցույց են տալիս ուժգին հույզեր: Դժվար թե գրնոալլ կամ այրվելը կարող են դիտարկվել որպես չեզոք հույզ արտահայտող բառեր: /O'Dell, McCarthy, 2010: 16/ Առաջին դասակարգման մեջ նշված anger՝ զայրույթ հույզի ընդհանրական իմաստային տարրը՝ ուժգնությունը, այսպիսով դրսևորվում է նաև պատկերավոր լեզվում: Վերոնշյալ բոլոր բայերն ունեն ուժգնության դաշտ, և նույնիսկ թվացյալ չեզոք

կառավարել բայր իմաստապես միշտ կապակցվում է ուժգնություն ունեցող իրավիճակների հետ, ինչպիսիք են՝ կառավարել իրավիճակը, համակարգը և այլն: Այսինքն, զայրույթ հույզը պահանջում է իր նկատմամբ ուժի այս կամ այն կիրառումը /Davey, Day, 2007: 293-309/:

Մինչդեռ, վերադառնալով վերոնշյալ արդարացվածության յուրահատկությանը՝ կարող ենք նկատել, որ վերոնշյալ 10 բայերում նույնպես այն ընդհանրական չէ: Պայքարել բայր իմաստապես կապված է զայրույթի արդարացված կամ ոչ արդարացված լինելու հետ: Օրինակում ասվում է. «Ես պայքարում եմ իմ իմ զայրույթի դեմ», որը նշանակում է, որ անձը հասկանում է, որ իր զայրույթը արդարացված չէ և այն հարկավոր է մեղմել: Ի հակառակ դրան՝ հասնել բայր ցույց է տալիս, որ զայրույթը արդարացված էր: Սակայն նույնը չի կարելի պնդել ներկայացված բոլոր բայերի մասին: Զայրույթից խենթանալը բնավ չի մատնանշում պատճառը, թե արդյոք այն արդարացված էր, թե՝ ոչ՝ ոչ:

Այսպիսով, զայրույթի արդարացվածության աստիճանը չի կարող անզերենում ընդհանրական յուրահատկություն համարվել, մինչդեռ ուժգնությունը ներկա էր ինչպես զայրույթի՝ 19 խմբից բաղկացած իմաստային դասակարգման, այնպես էլ փոխարերությունների մեջ բայերի արտահայտած իմաստի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Davey L., Day A. The Poetics of Anger Control: Metaphorical Conceptualisations of Anger Expression in Violent Offenders // *Psychology of Anger*. NY: Nova Science Publishers, 2007.
2. Esenova O. Anger metaphors in the English language. Helsinki: CA&CC Press, 2007.
3. O'Dell F., McCarthy M. English Idioms in Use. Cambridge: Cambridge University Press, 2010.
4. Телия В. Н. Коннотативный аспект семантики номинативных единиц. М.: Наука, 1986.
5. Longman Dictionary of American English. England: Pearson, 2007.
18. Merriam-Webster Dictionary // available online at: <http://www.merriam-webster.com/dictionary/anger>
6. Oxford Dictionary // <http://www.oxforddictionaries.com/definition/english/anger>
7. Visual Thesaurus.com // available online at: <https://www.visualthesaurus.com/>
8. Vocabulary.com <http://www.vocabulary.com/dictionary/anger>

III. МЕЛИК-АДАМЯН – *О некоторых семантических особенностях эмоции «злость» в английском языке.* – В статье рассматриваются семантические особенности эмоции «злость» в английском языке. Выявлены как общие, так и отличительные черты синонимичного ряда эмоции «злость» на основе различных классификаций данной эмоции.

Ключевые слова: злость, эмоция, эмотивность, синонимичный ряд, интенсивность, общая характеристика, отличительная особенность

SH. MELIK-ADAMYAN – *Some Semantic Peculiarities of the Emotion “Anger” in English.* – The purpose of this paper is to reveal some semantic peculiarities of the emotion “anger” in the English language. Both common and distinctive features of a number of synonyms of the emotion “anger” are presented on the basis of the various classifications of the emotion.

Key words: anger, emotion, emotiveness, set of synonyms, intensity, general characteristics, distinguishing characteristics

Արքուր ՄԵՍՐՈՊՅԱՆ
Եղևանի պետական համալսարան

**ՀԱՍՏԱՏԵՔԱԾԸ ՈՐՊԵՍ ՆՈՒՅՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՍՈՒՅԹՆԵՐԻ
ԱՊԱԿՈԴԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ**

Նոյնաբանական կառույցների գործարանական արժեքի որոշակիացման գործընթացում առկա են մի շարք լեզվական ու արտալեզվական գործոններ, որոնք հնարավորություն են տալիս խոսողին արտահայտելու իր հաղորդական նպատակը տվյալ կառույցի միջոցով: Սույն հոդվածի նպատակն է բացահայտել այդ գործոնները, ստուգել դրանց վավերականությունն ու հուսալիությունը, իիմնվելով փաստական նյութի քննության արդյունքների վրա, ինչպես նաև ըստ այդ արդյուքների ցոյց տալ խոսող-լսող հաղորդակցական հարաբերություններում նոյնաբանության մեկնաբանման հնարավոր սահմանները: Հոդվածում հասուն ուշադրություն է դարձվում նոյնաբանության ներիմաստի և գործարանական արժեքի մեկնաբանման հնարավոր սահմանների որոշման հարցին՝ փորձելով գոնել այդ գործընթացը պայմանավորող գործոնները:

Քանակի բառեր. Նոյնաբանություն, խոսքային իրադրություն, հաղորդակցական նպատակ, հանրային համատեքստ, հարատեքստ, հենքային գիտելիք, գործարանական արժեք, ներակա իմաստ

Ժամանակակից լեզվաբանության արդիական խնդիրներից է նոյնաբանությունների գործառական առանձնահատկությունների ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Սույն լեզվական երևույթը, որը խոսքաստեղծման անբաժանելի մասն է կազմում, դրսևորվում է լեզվական բոլոր մակարդակներում ձևաբանական, բառային, շարահյուսական և իմաստաբանական: Ավանդաբար նոյնաբանությունները դիտարկվել են որպես խոսքաստեղծման ընթացքում տեղ գտած սխալներ, ձախողված ասույթներ, խոսողի կողմից քույլ տվյալ կոպիտ վրիպակներ: Սակայն այս հարցի քննությունը ճանաչողական լեզվաբանության դիրքերից, որտեղ հասուն ուշադրություն է դարձվում բովանդակության պլանի ներակա և արտակա տեղեկատվական շերտերի վերաբաշխմանը, հնարավորություն է տալիս նորովի մեկնաբանել սույն կառույցների հաղորդակցական-գործարանական արժեքը:

Նոյնաբանական կառույցների մեկնաբանման, դրանց հաղորդակցական-գործարանական արժեքի վերաբերյալ մի շարք ուսումնասիրություններ են կատարվել ու մշակվել որոշակի մեխանիզմներ, մոտեցումներ ու հայցակետեր համապատասխան արդյունքներով: Կրանց մի մասը նոյնաբանության մեկնաբանության հարցը կապում է Գրայսի /Grice, 1975/ կարգախոսների հետ /Levinson, 1983: 124/, ոմանք զարգացնում են այս մոտեցումը և առաջարկում նոյնաբանության գործարանական արժեքի այլընտրանքային տարրերակների բացառման սկզբունքի վրա հիմված մոտեցում /Ward and Hirschberg, 1991: 513/, իսկ Վերժբիցկան էլ առաջարկում է դասակարգել նոյնաբանություններն ըստ նշանակության և յուրաքանչյուր խմբի համար

դուրս բերել առանձին բանաձև /Wierzbicka, 2003: 395-396/: Որոշ լեզվաբաններ էլ, ինչպես Ուոլթերը և Մայքրաուերը, դիտարկելով այս մոտեցումներն ու վերլուծելով դրանց արդյունքները, առաջարկում են միջանկյալ մոտեցում նույնարանությունների մեկնարանության ու առհասարակ դրանց գործարանական արժեքի հանդեպ /Walter, 2008: 14, Meibauer, 2008: 457/: Հստ վերջինների անհրաժեշտ չէ անպայմանորեն որդեգրել միայն մի դիրքորոշում՝ ի սպառ բացառելով մյուսը: Ուսումնասիրելով սույն խնդրի հանդեպ առկա տարրեր մոտեցումները պետք է նկատել, որ վերջիններս հաճախ հիմնվում են երկու ընդհանուր սկզբունքների վրա: Դրանք կամ նույնարանությունը մեկնարանում են հիմնվելով վերջինիս բուն կառուցվածքային առանձնահատկությունների վրա (գոյականի թիվ, բայի ժամանակաձև, որոշյալ կամ անորոշ հոդի առկայություն կամ բացակայություն, որոշիչի/հատկացուցիչի առկայություն կամ բացակայություն) կամ էլ դիտարկում են հարատեքստն ու համատեքստը պարզապես որպես ֆոն, որտեղ ներկայացվում է նույնարանությունը: Ինչպես ցույց է տալիս նյութի մեր քննությունը, լեզվի նասին գիտելիքի զարգացման արդի փուլում, երբ կարևորվում է խորաստեղծման գործընթացը, անհրաժեշտություն է առաջանում անդրադարձ կատարել լեզվական միավորների իրական գործառության օրինաչափություններին: Սույն հոդվածում մեր նպատակն է բացահայտել համատեքստի ու հարատեքստի դերը նույնարանական կառույցներին քննորշ ներակա իմաստների մեկնարանման գործընթացում և ցույց տալ, թե որքանով են նրանք պայմանավորում տվյալ խոսքային իրողության հաղորդակցական արժեքը: Այլ կերպ ասած փաստական նյութի մեր քննությունը իր մեջ ներառելու է վերոնշյալ երկու սկզբունքները, ինչը կարծում ենք հնարավորություն կտա համալիր մոտեցում ցուցաբերել խնդրին և վեր հանել այն գործոնները, որոնցով պայմանավորված են քննվող լեզվական միավորի հաղորդակցական-գործառական առանձնահատկությունները:

Սույն առաջարկում ենք դիտարկել մի քանի գործոն, որոնք կարծում ենք էական նշանակություն ունեն հաղորդակցման պրոցեսում նույնարանության գործարանական արժեքի իրականացման գործում: Այստեղ թերևս պետք է սկսել նրանից, որ համատեքստը, որպես լեզվական միավոր անհրաժեշտ է դիտարկել որպես առանձին բաղադրիչների միավորում, որոնք միասին ստեղծում են այնպիսի իրավիճակային նախապայմաններ, որոնց ազդեցությամբ նույնարանությունը ձեռք է բերում որոշակի հաղորդակցական-գործառական առանձնահատկությունները:

Խոսելով իրավիճակային նախապայմանների մասին, թերևս արժե սկսել հանրային համատեքստից: Հանրային համատեքստ ասելով նկատի ունենք այն հասարակական-մշակութային-պատմական ֆոնը, իենքային գիտելիքը, քաղաքական-տնտեսական իրավիճակը, որի պայմաններում ձևավորվում է դիմունը ու կիրառվում է նույնարանական կառույցը: Այս նախապայմանների ազդեցությունն էական է խոսողի հաղորդակցական նպատակի կայացման համար, ինչն իր հերթին, քնականարար ազդում է նույնարանական կա-

ոույցի գործարանական ներուժի վրա: Առաջարկում ենք դիտարկել հետևյալ օրինակները:

A: Iran allows women into sports stadiums, but not for anything “too masculine”

B: Well progress is progress. (The Independent, THURSDAY 07 MAY 2015,
<http://www.independent.co.uk/news/world/middle-east/iran-allows-women-into-sports-stadiums-but-not-for-anything-too-masculine-10157705.html?cmpid=facebook-post>) comment by Jonny Gadd)

Այս հատվածում *progress is progress* (առաջընթացը առաջընթաց է) նույնարանությունը մեկնարանելու, դրա գործարանական արժեքը որոշելու, խոսողի հաղորդակցական նպատակին հաղորդակից դառնալու համար անհրաժեշտ է, որ խոսողի ու նրան լսողի՝ գրուցակցի միջև լինի ընդհանուր տեղեկույթի առկայություն: Այսինքն, թե՛ խոսողը ու թե՛ լսողը պետք է տեղյակ լինեն Իրանում կանանց իրավունքների սարսափելի սահմանափակ վիճակից: Անհրաժեշտ նախապայման է, որպեսզի խոսողը վստահ լինի, որ լսողը տեղյակ է Իրանում առկա իրավիճակից ու ի վիճակի է համապատասխան կերպով մեկնարանելու իր խոսքը ու դրանում առկա նույնարանական կառույցը: Կարևոր նախապայման է նաև, որ խոսողը ունենա որոշակի վստահություն, որ լսողը համակարծիք է իրեն: Հակառակ պարագայում, ըստ եռության սպորտային մարզադաշտից գնալու թույլտվությունը, այն էլ ոչ «չափազանց տղամարդկային» մարզաձևերի հանդիսատեսք լինելու համար առնվազն տարօրինակ կրթար լսողի համար, ով տեղյակ չէ Իսլամական հեղափոխությունից հետո Իրանում հաստատված կարգերից: Ու հետևաբար նաև քիչ հավանական է, որ նա առաջընթաց համարեք մի բան, որն ինքնին հասկանալի է ու վաղուց ընդունելի ամբողջ քաղաքակիրք աշխարհում: Թերևս կարելի է վստահորեն ասել, որ նրա համար տարօրինակ կհնչեր «չափազանց տղամարդկային» արտահայտությունը: Հետևաբար տվյալ պարագայում Իրանում առկա հասարակական-քաղաքական իրավիճակը ու դրանում կանանց իրավունքների սահմանափակումը այն հանրային համատեքստն են, որոնք հնարավոր են դարձել *progress is progress* նույնարանության կիրառությունը:

Նյութի քննությունից պարզ է դառնում, որ նույնարանության գործարանական արժեքի որոշման գործընթացում կարևոր գործոն է նաև գրուցակիցների հենքային գիտելիքը: Էական է, թե ովքեր են նույնարանության կիրառողները: Չափազանց շատ բան է կախված նույնարանությունը կիրառող մարդու աշխարհայացքից, նրա ունեցած դիրքորոշումից տվյալ խոսքային իրադրությունում քննարկվող հարցի առնչությամբ, ինչպես նաև նրանից, թե ում է ուղղված նույնարանություն: Ընդհանուր խոսակցության մասնակիցների ով լինելը նույնպես էական է նույնարանության հաղորդակցական-գործարանական արժեքի ձևավորման և տարրուշման համար:

Մեր դիտարկած օրինակում նոյնաբանության մեկնաբանման հարցում վերոնշյալ գործոնը մեծ կշիռ ունի: Կարևոր է կոնկրետ դիսկուրսի հեղինակի անձը, նրա պատկանելությունը որևէ քաղաքակրթական ճամբարի: Տվյալ օրինակում ենթադրվում է, որ զրուցակիցները կամ մուսուլման չեն, կամ առնվազն չեն խրախուսում իրանում կանանց իրավունքների սահմանափակումները:

Ինչպես ցույց է տալիս ստորև բերվող օրինակաների քննությունը, նոյնաբանական կառույցների գործարանական արժեքը որոշարկող գործոններից է այն լեզվական միջավայրը/համատեքստը, որտեղ հանդես է գալիս տվյալ նոյնաբանությունը: Նոյնաբանությունից առաջ ու/կամ դրանից հետո գտնվող նախադասությունները իրենց արտահայտած նշանակությամբ տալիս են լսողին տեղեկույթ, որը կողմնորոշիչ դեր է ունենում դիսկուրսում առկա նոյնաբանության մեկնաբանման համար: Կախված այդ լեզվական համատեքստը կազմող քաղաքիցների շեշտադրությունից ու հաղորդած տեղեկույթից նոյնաբանության գործարանական ներուժը նոյնապես փոխվում է: Դիտարկերն հետևյալ օրինակները.

A: She is really in a big trouble and has turned to her mother though I am not sure that will help much.

B: I have known their family since childhood. Her mother is her mother. She comes from an influential family and has good connections. Trust me she will absolutely be helpful. (Julian Barnes “Levels of Life”)

Նախ պետք է արձանագրել, որ այս երկխոսության մասնակիցները բավարար չափով տեղյակ են ընդհանուր թեմայից, որ իրենց ընկերը դժվարին կացության մեջ է, ու երկուսն էլ գիտակցում են, որ դիմացինը հավասարաշափ տեղյակ է իրադարձությունների ընթացքից: Առաջին զրուցակիցը կասկած է հայտնում, թե արդյոք իրենց ընկերոց մայրը կկարողանա օգնել նրան: Երկրորդ զրուցակիցը, ավելի լավ ճանաչելով իրենց ծանոթի մորը ու ավելի տեղեկացված լինելով վերջինիս ազդեցիկ ընտանիքի ու կապերի մասին, պնդում է, որ նրա մայրը հաստատապես ի վիճակի է օգնելու, ու հիմնավորում է դա մոր՝ ազդեցիկ ընտանիքից լինելու ու դրանից բխող կապերի առկայությամբ: Այս տեղեկույթը օգնում է հասկանալու, որ նրա մայրը ոչ միայն իրենց ընկերոց կենսաբանական մայրն է, կամ հոգատար կին է ու անհանգստանում է իր զավակի համար, ինչպես բերևս բոլոր մայրերը, այլ այս ամենի հետ մեկտեղ նաև տալիս է տեղեկույթ, որ մայրն ունի ազդեցություն ու հնարավորություններ, որոնք կարող ենք գործի դնել: Այս հնարավորությունները առանձնացնում են նրանց ընկերոց մորը ընդհանրապես մայրերից, քանի որ բնականաբար ոչ բոլոր կանայք ու առհասարակ մարդիկ ունեն մեծ հնարավորություններ: Այստեղ մենք կարող ենք արձանագրել, որ նոյնաբանությանն ուղեկցող լեզվական համատեքստը մեզ ու առաջին զրուցակին տալիս են անհրաժեշտ տեղեկույթ, որպեսզի նոյնաբանությունը մեկնաբանվի մոր լայն հնարավորությունները փաստող լեզվական կառույցի նշանակությամբ: Այլ կերպ ասած, սույն օրինակում լեզվական համատեքստը

ձևավորում է նույնաբանական կառույցի գործաբանական նշանակությունը տվյալ դիսկուլպաւում: Հատկանշական է նաև *I have known their family since childhood* ուղեկցող նախադասության նշանակությունն ու դրա դերը նույնաբանության արտահայտած ներակա իմաստի մեկնաբանման գործում: Այդ նախադասությունը հղում է կատարում անցյալին, մանկությանը՝ դրանով էլ ավելի շեշտելով տեղեկույթի ժամանակով ճշգրտված լինելու հանգանանքը: Այսինքն խոսողը մտավոր հղում է կատարում մի իրականության՝ «անցյալի մտապատճերի», որն ուղակիորեն ոչ մի կերպ արտացոլված չէ նշված դիսկուլպաւում, սակայն որի հիշատակումը բավարար է որպես համատեքստ, նույնաբանության գործաբանական արժեքի որոշակիացման համար:

Դիտարկենք ևս մեկ իրավիճակ, որտեղ նույն նույնաբանությունը այլ գործաբանական արժեք ունի:

A: Currently she is awfully busy working two jobs and doing extra hours to be able to pay all the bills. And now on top of this all she has to take care of her handicapped mother.

B: Well her mother is her mother. She can't help but taking care of her.
(Gabrielle Kent “Alfie Bloom and the Secrets of Hexbridge Castle”)

Այս երկխոսությունը դիտարկելիս պետք է կրկին արձանագրել ընդհանուր բեմային խոսողի ու լսողի տեղեկացվածությունն ու փոխադարձ վստահությունը. Խոսողի տեսանկյունից, որ դիմացինը ունի շատ թե քիչ հավասարաշափ տեղեկություն իրավիճակի ու դեպքերի մասին ու ի վիճակի է ընկալելու իր խոսքը, իսկ լսողի տեսանկյունից, որ դիմացինը զիտի, որ ինքը համարժեք է ընկալում խոսքը: Առաջին գրուցակիցը մատնանշում է այն սրբեսային ու գերծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկը, որով իրենց ընկերը ստիպված է աշխատել ու այժմ էլ պետք է հաջողացնի այդ ամենից զատ նաև հոգ տանել իր հաշմանդամ մոր մասին: Երկրորդ գրուցակիցը համաձայնություն արտահայտելով՝ ավելացնում է, որ նա այլընտրանք չունի, ու մայրը, մնում է մայր: Տվյալ պարագայում նույնաբանության արտահայտած ներակա իմաստը, որը ձևավորում է նրա հաղորդակցական-գործաբանական նշանակությունը, իրավիճակի ընդունումն ու հանդուրժողականության արտահայտումն է, քանի որ մայրը ամենաբանկ անձնավորությունն է, ու ցանկացած պարագայում պետք է ուշադիր լինել նրա հանդեպ ու հոգ տանել նրա մասին: Այստեղ գործում է հանրային համատեքստում ընդունված ու ամրագրված բարոյական արժեքը, որ ծնողի մասին պետք է հոգ տանել ու հնարավոր ամեն ինչ անել նրան օգնելու համար: Թեպես այս հասարակական սկզբունքը ոչ մի կերպ չի նշվում ու չի էլ ակնակրվում, թե խոսողը ու թե լսողը ու թե նաև մենք՝ կողքից դիտարկողներս, մեր մտապատճերում ունենք այս սկզբունքը ու ընդունում ենք այն որպես հենք ամբողջ խոսքային իրողության ու հատկապես նույնաբանության մեկնաբանման համար:

Ինչպես տեսանք այս երկու օրինակներում միևնույն նույնաբանական կառույցն ունի երկու իրարից տարբեր ներակա իմաստներ: Նույնաբա-

նությունը այդ նշանակությունները ձեռք է բերում նաև ուղեկցող լեզվական համատեքստի միջոցով: Առաջին օրինակում վերջինս արտահայտում է անհրաժեշտ տեղեկություն այն մասին, որ մայրը տարբերվում է այլ մայրերից ու ընդհանրապես առանձնանում է որպես մարդ իր կապերի ու հնարավորությունների առումով, իսկ երկրորդ օրինակում ուղեկցող նախադասությունների արտահայտած նշանակության շնորհիվ նույնարանությունը նշանակեց, որ մոր համար միշտ պետք է ժամանակ գտնել ու հոգ տանել նրա մասին, հատկապես, եթե դրա անհրաժեշտությունն ակնհայտ է:

Նույնարանությունների գործարանական նշանակության մասին խոսելիս պետք է նշել խոսողի հաղորդակցական նպատակը: Բերված օրինակներից, և ոչ միայն, կարելի է եզրակացնել, որ նույնարանության գործարանական ներուժը մեծապես կախված է այն նպատակից, որին խոսողը իր խոսքը ծառայեցնում է: Ստացվում է, որ արդարացված չէ փորձել ստեղծել նույնարանությունների իմաստային դասակարգման աղյուսակ ու պնդել, որ որևէ նույնարանություն կարելի է կիրառել միայն մեկ նշանակությամբ կամ բեկոզ մի քանի ֆիքսված նշանակություններով: Նույնաչի հեռանկարային չէ ստեղծել բանաձեռ ու համապատասխանարար ասել, որ որևէ բանաձևով կառուցվող նույնարանությունը պետք է արտահայտի որոշակի նշանակություն: Մյուս կողմից սակայն կարող է հարց առաջանալ, եթե հրաժարվում ենք նույնարանական կառույցները դասակարգել ըստ դրանց կառուցվածքային բանաձևի կամ դասակարգել ըստ ֆիքսված նշանակության ու ասում, որ նույնարանության գործարանական արժեքը կախված է խոսողի հաղորդակցական նպատակից ու իրավիճակային նախապայմաններից, ապա միթե հնարավոր է դիցուք ցանկացած նույնարանությամբ ցանկացած նշանակություն փոխանցել, և որևէ այն գործարանական սահմանը, որի շրջանակում կարող է նույնարանությունը գործածվել:

Այս հարցին պատասխանելու համար առաջարկում ենք դիտարկել նույնարանական կառույցների մի քանի նմուշ ևս: Այս օրինակների քննության արդյունքում կփորձենք գտնել ու ցույց տալ այն սահմանը, որի տիրույթում նույնարանությունը կարող է կիրառվել:

I am a man, I'm 21, I play rugby, soccer, I swim and go to the gym. I'm 6'5 and even if I'm in good shape for my training, I can't say I'm manly, like really manly because of the morphology of my body, caused by my genes.

There are men that are men and men that are manly men. Manly does not have anything to do with having big muscles and acting like a stupid tough guy, not at all. /comment by Rubenz69 "RubenzUniversum – 6.9.7" Universum d7 under <https://www.youtube.com/watch?v=BiYBAmCE7d0>)

Այս օրինակում ուսումնասիրենք *men* գոյականի նշանակությունները ու փորձենք պարզել, արդյոք դա որևէ կերպ ազդում է նույնարանության հաղորդակցական-գործարանական արժեքի ձևավորման վրա: Եվ այսպես մենք տեսնում ենք, որ *men* բառը կիրառվել է երեք տարբեր նշանակություններով: Նույնարանության կառույցի մեջ առաջին *men*-ը նշանակում է

արական սեռի ներկայացուցիչ, իսկ երկրորդը վերաբերում է տղամարդու հիմնարար հատկանիշներին, ինչպիսիք են ֆիզիկական ուժ, քաջություն, և այլն, որոնք տարրերակում են տղամարդուն կնոջից: Տվյալ նույնաբանական կառույցի ըստ հերքականության երրորդ *men*-ը կրկին նշանակում է արական սեռի ներկայացուցիչ՝ բարի բառարանային առաջին նշանակությամբ (տես ստորև), իսկ արդեն թվով չորրորդ *men*-ը (*manly men*) շեշտում է տղամարդուն ամենաբնորոշող հատկանիշների այն նեղ շրջանակը (համարձակություն, ուժ, ինքնավատահություն), որ խիստ արտահայտված է որոշակի ուժեղ, քաջ տղամարդկանց մոտ: Այդ հատկանիշներն արդեն մի ուժեղ տղամարդուն առանձնացնում են մյուսից: Այլ կերպ ասած, եթե փորձենք բացել այս նույնաբանությունը, կստացվի հետևյալը. կան տղամարդիկ (արական սեռի ներկայացուցիչներ), որոնք տղամարդ են (քաջ, ուժեղ) և կան տղամարդիկ (արական սեռի ներկայացուցիչներ), որոնք տղամարդ են (չափազանց ուժեղ, ընդժամանակ կերպով համարձակ, վստահություն ներշնչող): Այստեղ հարկ ենք համարում նշել, որ թվով չորրորդ *men*-ի նշանակության նմանատիպ ընկալումը պայմանավորված է նաև *manly* ածականով: Այժմ դիմենք Օքսֆորդի բառարանին և ստուգենք *man/men* բառի նշանակությունը:

Man

1. Male person, an adult male human: a good-looking young man. *The relationship between men and women*
2. Strong/Brave Person. A person who is strong and brave or has other qualities that some people think are particularly male: 1. *Come on, now – be a man.* 2. *She's more of a man than he is.* (Oxford Advanced Learner's Dictionary, Seventh Edition, Oxford University Press, p. 932)

Բառարանում նշվում է տասնչորս նշանակություն *man* բառի համար, սակայն մեզ տվյալ դեպքում հետաքրքրում են առաջին ու տասներկուերրորդ նշանակությունները: Հաշվի առնելով, որ Օքսֆորդի բառարանը *men* բառի նշանակության համար հղում է կատարում բառի եզակի թվի բառարանային հոդվածին, մենք համարել ենք, որ հոգնակի ու եզակի թվի պարագայում նշանակությունը նույնն է: *Man* բառի առաջին նշանակությունը վերաբերում է նրա սեռին ու տարիքին՝ արական սեռի ներկայացուցիչ, ով հասուն տարիքում է: Միայն տասներկուերրորդ նշանակությունն է վերաբերում այն հատկանիշներին ու որակներին, մասնավորապես ուժ, քաջություն, որոնք բնորոշ են տղամարդկանց, ըստ հանրության մեջ ընդունված կարծրատիպի: Ինչպես տեսանք, այս օրինակում խոսողը տարրերակում է *men* բառի մի քանի նշանակություն: Նույնաբանության գործարանական նշանակությունը վերլուծելիս մենք տեսնում ենք, որ գործ ունենք մի դեպքի հետ, երբ բառի իմաստային դաշտի նշանակությունները կիրառվում են առանձին և յուրաքանչյուր դեպքում բառը որոշակի նշանակություն է արտահայտում: Այսպես նույնաբանական կառույցի առաջին *men*-ը վերաբերում է բառի առաջին բառարանային նշանակությանը, իսկ երկրորդ *men*-ը վերաբերում է

ընդհանրապես արական սեռի ներկայացուցիչներին, ովքեր իգական սեռից տարբերվում են արտաքին և ֆիզիոլոգիական հատկություններով: Երրորդ *men*-ը կրկին վերաբերում է արական սեռի ներկայացուցիչներին, իսկ արդեն նույնարանական կառույցի չորրորդ *men*-ը (manly men) վերաբերում է որոշակի տեսակի տղամարդկանց, որոնք ունեն ոչ միայն տղամարդուն քնորոշ քաջություն, ուժ, այլ դրան հավելյալ այլ ընդգծված առնական հատկանիշներ, ընդ որում այդ հատկանիշները պարտադիր չեն, որ կապված լինեն անմիջապես արտաքին տվյալների հետ: Խոսքը այստեղ ավելի հոգևոր, մտավոր կարողությունների մասին է, որակներ, որոնք կապված են տղամարդու խառնվածքի, կամքի ուժի ու պահպածքի հետ: Այսինքն ընդհանուր արական սեռի ներկայացուցիչներից արդեն առանձնացվում է որոշ մաս՝ ըստ նրանց քնորոշ խիստ «տղամարդկային» համարվող հատկանիշների: Տվյալ պարագայում այդ տարբերակից հատկանիշը առնականությունն է կամ այն հատկանիշները, որոնք քնորոշ են «տղամարդու» արբետիպին:

Տվյալ նույնարանության գործարանական նշանակության ընկալման առումով կարևոր է ինչպես լեզվական համատեքստը, այնպես էլ հանրային համատեքստը/հարատեքստը: Նույնարանությանն ուղիւղող համատեքստը տալիս է այն իմաստային դաշտի շրջանակը, որտեղ իրականանում է նույնարանության գործարանական նշանակությունը: Համատեքստից է կախված, թե նույնարանությունը կազմող գոյականի տարրեր նշանակություններից կոնկրետ որ մեկը պետք է արտահայտվի տվյալ գոյականի միջոցով տվյալ նույնարանական կառույցում: Այստեղ կարևոր է առանձնացնել հանրային համատեքստը/հարատեքստը: *Man* բառի պայմանականորեն երկրորդ (բառարանում տասներկուերրորդ) նշանակության մեջ շեշտվում է, որ տղամարդուն վերագրվող հատկանիշները համապատասխանում են հանրության որոշ շերտերում ընդունված մտածալակերպին ու հանրային կարծիքին: Սա ցույց է տալիս, որ որոշ բառեր, ինչպես ասենք դարձվածքները, լեզվակիր հանրույթի մոտ ունեն որոշակի արմատացած գործարանական նշանակություն: Դա այն կարծրատիպային նշանակությունն է, որ ձևավորվել ու կցվել է այս կամ այն բառին կամ լեզվական կառույցին կախված դրա վերաբերականի, տվյալ դեպքում տղամարդու, ունեցած հանրային գործառույթից, դերից: Տղամարդը պատմության վաղընջական ժամանակներից սկսած կատարել է ավելի շատ ֆիզիկական աշխատանք, վարել պատերազմներ, արել գյուտեր ու բացահայտումներ ու ձևավորել տղամարդու քիչ թե շատ ընդհանրական կերպար, ինչը անքակտելիորեն կցվել է նաև *man* բառին: Հետևաբար *man* գոյականը պարունակող նույնարանական կառույցը կրում է այս հանրային համատեքստի ազդեցությունը:

Դիտարկենք և երկու նմուշ, որոնցից մեկում նույնարանությունը հանդես է գալիս որոշակի լեզվական համատեքստում: Վերջինս ստեղծում է այն մեկնարանելու համար անհրաժեշտ իմաստային դաշտ, իսկ երկրորդ դեպքում նույնարանությունը կդիտարկենք առանց համատեքստի:

The longer I stayed in Azizya, the older I got, the less I liked life. It wasn't enough to be safe and to be home, because home wasn't home anymore. Because we no longer trusted the Turks, our lives were now confined to the Armenian quarter. The Turks I knew or spoke to in Azizya all said they were sorry about what had happened. They blamed the government, not the civilian population, which they said was innocent. It was true that many had harboured Armenians and had protested their treatment by the gendarmerie, the bashibouzouks (irregulars) and the Kurdish brigands, but it was impossible now for us to trust the Turks again or to forgive them (David Kherdian "The Road from Home; the story of an Armenian Girl").

Այս հատվածում ընթերցողը նույնարանության հաղորդակցական արժեքը մեկնարանելիս հիմնվում է այն տեղեկույթի վրա, որ փոխանցվում է համատեքստով և հարատեքստով: Այսպես նա տեղյակ է, որ մեջբերվող հատվածն արտաքերռող՝ խոսողը այլևս չի կարող վստահել թուրքերին, նույնիսկ, եթե նրանք ասում են, որ շատ են ցավում կատարվածի համար: Նա իրեն անվտանգ չի զգում իր մանկության տաճը, քանի որ միջավայրը լիովին փոխվել է: Այժմ կյանքը սահմանափակվել է միայն հայկական թաղամասով ու տունն այլևս մանկության այն տունը չէ, որը նա գիտեր: Այստեղ ենթադրվում է, որ ինչ որ սարսափելի դեպքեր են կատարվել, որոնց մասին ուղղակիորեն չի նշվում հատվածում, որոնք սակայն հիմք են ծառայում նման մտքեր արտահայտելու համար: Հենց այս համատեքստային և հարատեքստային առանձնահատկություններից հասկանալի է դառնում, որ տունն այլևս հարմարավետ չէր: Ստացվում է, որ տվյալ նույնարանության գործարանական նշանակությունն այս դիսկուրսում այն է, որ տունը որտեղ խոսողն իրեն հարմարավետ ու ապահով էր զգում ու համարում չերմ անկյուն, այլևս դադարել է այդպիսին լինելուց: Ըստ Էության բուն նույնարանության մեջ ոչինչ ուղղակիորեն չի մատնանշում հենց «հարմարավետության» հանգամանքին: Սա ցույց է տալիս, որ նույնարանության գործարանական նշանակությունը իրականացել է համատեքստի անմիջական դերակատարմամբ: Համատեքստն ու հարատեքստն տալիս են այն անհրաժեշտ տեղեկույթը, որի հիման վրա ընթերցողը գալիս է իր եզրահանգմանը: Թուրքերի հանդեպ անվտահությունը, հայկական թաղամասի սահմաններից դուրս չգալը ստեղծում են այն իմաստային դաշտը, որի տարածքում «ոռունը, այլևս տուն չէր» լեզվական կառույցը նշանակում է, որ շատ բաներ անվերադարձ փոխվել են, ու այն, ինչ ճիշտ էր ասել մի բանի մասին մի ժամանակ, այլևս ճիշտ չէ:

Home wasn't home նույնարանությունը հետաքրքրական է նաև կառուցվածքային տեսանկյունից, մասնավորապես, որ ժխտական է: Նախկինում լեզվաբանները, քննելով նույնարանությունները, հիմնականում դիտարկել են հաստատական կառույցներ, ինչպիսիք են օրինակ *Boys will be boys* կամ *The law is the law*: Եթե հաստատական նույնարանությունների պարագայում ճիշտ է Ուարդի և Հիրշբերգի /Ward, Hirschberg, 1991/ այն պնդումը, թե նույնարանական կառույցը բացառում է այլընտրանքային տարբերակների հավա-

նականություն՝ մատնանշելով այն միակ հնարավոր տարբերակը, որը հենց նշվում է նույնարանական կառույցում, ապա ժխտական նույնարանությունների պարագայում այդ պնդումը դառնում է կրկնակի ժխտում: Այսպես մի կողմից *home wasn't home* կառույցը թեպետ ժխտական է, սակայն մենք այն չենք ընկալում, որ «սունը, այլևս տուն չէր, այլ նավ կամ ավտոտնակ կամ մեկ այլ այլընտրանքային տարբերակ», մյուս կողմից էլ տեսնում ենք, որ տունը իրականում տուն չէ: Այստեղից հետևություն է արվում, որ խոսողը նկատի ունի, որ ոչ թե տունը մեկ այլ կառույց է դառել, այլ տունը կորցրել է իր ամենակարևոր հատկանիշներից մեկը կամ մի քանիսը: Կրկին դիմենք Օրսֆորդի բառարանին *home* բառի նշանակությունները ստուգելու համար:

Home

1. HOUSE, ETC. The house or flat/apartment that you live in, especially with your family: We are not far from my home now. 1) *Old people prefer to stay in their own homes.*

2. TOWN/COUNTRY The town, district, country, etc. that you come from, or where you are living and that you feel you belong to: Jane left England and made Greece her home.

3. FAMILY used to refer to a family living together, and the way it behaves:

1) She came from a violent home. 2) He had always wanted a real home with a wife and children. (Oxford Advanced Learner's Dictionary, Seventh Edition, Oxford University Press, p. 744)

Այստեղ տեսնում ենք, որ «սուն» բառի բառարանային առաջին նշանակությունն է միայն վերաբերում դրա ֆիզիկական տեսքին, կառույցին, մինչդեռ երկրորդ ու երրորդ նշանակությունները վերաբերում են այն միջավայրին, շրջապատին ու իրականությանը, որը կապված է տան, ընտանիքի հետ: Զննվող նույնարանության կառույցի մեջ առաջին *home*-ը արտահայտում է բառի առաջին բառարանային նշանակությունը՝ ֆիզիկական հատկանիշները, իսկ կառույցի երկրորդ *home*-ը արտահայտում է երկրորդ ու երրորդ նշանակությունները՝ ժխտական ձևով: Այսպիսով մի կողմից նույնարանությունը բացառում է այլընտրանքային տարբերակները, իսկ մյուս կողմից ժխտում այն նշանակությունները, որոնք վերաբերում են «սուն» ամենաբնորոշ հատկանիշներին:

Այժմ դիտարկենք *home wasn't home* նույնարանությունն առանց համատեքստի: Մեր կողմից իրականացրած ուսումնասիրության արդյունքում, որի ժամանակ լեզվակիր հարցվողները պետք է առանց համատեքստի փորձեին մեկնարանել նույնարանությունը, ստացվել են մի շաբթ պատասխաններ, ըստ որոնց հարցվողների մի մասը ընկալում է կորստի առկայությունը այս նույնարանական կառույցում, սակայն նրանք չեն ընկալում դրա ահազնացող շափը (աս արտահայտվում է նրանց մեկնարանությունների մեջ) կամ էլ չեն մեկնարանում նույնարանական կառույցի ներիմաստը որպես կորուստ, ինչպես այս օրինակում.

Totally fine – there are lots of country songs with this phrase, too ☺

Հարցվողը կարծիք է հայտնել, որ տվյալ նույնաբանությունը իմաստային ու գործարանական առումով բավարար է և այն ասցացվել է քանիքի ոճի երգերի հետ: Այս նույնաբանությունը նաև մեկնաբանել է իմմնվելով հարատեքստի՝ մասնավորապես քանիքի ժանրին բնորոշ առանձնահատկությունների վրա: Նրա մոտ դրական էմոցիաներ է առաջացնում նույնաբանությունը, ինչը պայմանավորված է հանրային համատեքստում այս արտահայտության կիրառության իր անձնական փորձով: Ուշագրավ է հարցվողի պատասխանի վերջում դրված ժախտի էմուտիվունը: Սա բացահայտ կերպով ցույց է տալիս, որ հարցվողը բացարձակ ոչ մի բացահական լիցք չի ստացել նույնաբանական կառույցից: Ընհակառակը՝ միայն համեմի զգացողություններ: Դիտարկենք ևս երկու մեկնաբանություն տվյալ նույնաբանական կառույցի արտահայտած ներակա իմաստի վերաբերյալ: Հարցվողներից մեկը նշված նույնաբանությունը համատեքստից դուրս մեկնաբանել է հետևյալ կերպ:

Change is inevitable.

Ըստ նրա նույնաբանության արտահայտած իմաստը փոփոխության անխուսափելի լինելն է: Նա չի դիտարկում նույնաբանության նշանակությունը որպես կորուստ, այլ մի վիճակից անխուսափելի անցում մեկ այլ վիճակի:

Մեկ այլ հարցվող այս նույն նույնաբանությունը համատեքստից դուրս մեկնաբանել է հետևյալ կերպ:

Home changed.

Այստեղ հարցվողը նույնաբանության արտահայտած ներիմաստը կրկին համարել է փոփոխությունը: Վերլուծության արդյունքներն փաստում են, որ սույն նույնաբանական կառույցը համատեքստից դուրս հարցվողների մոտ ընդհանուր առմամբ կամ դրական վերաբերմունք է առաջացրել, կամ էլ ընկալվել է որևէ նոր փոփոխությունների, նոր ակնկալիքների իմաստով: Հարցվողների համար էականը դարձել է «տուն» բառի նշանակությունների տարրերությունը: Առաջին դեպքում որպես կառույց, կացարան նշանակությամբ, իսկ երկրորդ դեպքում որպես ջերմ միջավայր ու ընտանեկան ապահովածության զգացողություն փոխանցող բառեր: Նույնաբանական կառույցը չի մեկնաբանվել անդառնալի կորստի ու անվերադարձ վերհուշի նշանակությամբ: Մինչդեռ համատեքստի առկայությամբ հարցվողների մեկնաբանությունները այս նույն նույնաբանության վերաբերյալ բոլորովին այլ են, քանի որ դրանք առնչվում են հայոց ցեղասպանության հետ և չեն կարող առաջացնել անխուսափելի փոփոխության մասին դատողություններ կամ դրական զգացողություններ:

Այսպիսով, ակնհայտ է և անհերքելի խոսքային իրադրության, իրավիճակային նախապայմանների, նույնաբանությանն ուղեկցող նախադասությունների նշանակության, խոսողի հաղորդակցական նպատակի, հենքային գիտելիքի ու հանրային համատեքստի դերը նույնաբանությունների մեկնաբանման ու դրանց գործարանական ուղղվածության և հարորդակցական արժեքի որոշման գործում: Կարելի է փաստել նաև, որ նույնաբանական

կառույցի գործարանական նշանակության իրականացման համար շատ կարևոր է այդ կառույցը կազմող գոյականների նշանակությունը: Հաճախ, իմշպես տեսանք վերոբերյալ օրինակներում, միևնույն գոյականը նոյնարանական կառույցի առաջին ու երկրորդ դիրքում կիրառվում է բարիմաստի տարրեր նշանակություններով: Հենց այս երեսույթն էլ, գոյականի տարրեր նշանակությունների իրականացումը, եապես ազդում է նոյնարանական կառույցի հաղորդակցական-գործարանական արժեքի ձևավորման վրա: Մյուս կողմից խոսքային իրադրությունն ու պայմաններն ել իրենց հերթին նապաստում են նոյնարանության նշանակության կոնկրետացմանը: Հաճախ, նոյնարանությունը լեզվում ձեռք է բերում կարծրատիպային արժեք և ստանում կայուն նշանակություն, որը սակայն կախված հարատեքստ/համատեքստային առանձնահատկություններից կարող է ձևավորել այս կամ այն իմաստային բնութագիրը և դիսկուրսին հաղորդել որոշակի գործարանական ուղղվածություն: Այսպիսով կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել համատեքստի և հարատեքստի կարևորագույն դերը նոյնարանական կառույցներում արտահայտված ներակա տեղեկատվության բացահայտման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Grice H. P. Logic and Conversation // P. Cole and J. L. Morgan (eds.) *Syntax and Semantics*, vol.3: Speech acts. New York: Academic Press, 1975.
2. Meibauer J. Tautologies as Presumptive Meaning // *Pragmatics & Cognition*, Johannes Gutenberg University Mainz, John Benjamins Publishing Company, 2008.
3. Oxford Advanced Learner's Dictionary, Seventh Edition, Oxford University Press, 2005.
4. Walter J. Conversational Tautologies in English: Theoretical approach and investigation of examples. Norderstedt Germany: GRIN Verlag GmbH, 2008.
5. Ward G. L., Hirschberg J. A Pragmatic Analysis of Tautological Utterances // *Journal of Pragmatics*, vol. 15, 1991.
6. Wierzbicka A. Cross-Cultural Pragmatics: The Semantics of Human Interaction. New York: Mouton de Gruyter, 2003.
7. Barnes J. Levels of Life. Vintage Random House, 2014.
8. Kent G. Alfie Bloom and the Secrets of Hexbridge Castle. Scholastic Children's Books, 2015.
9. Kherdian D. The Road from Home: the story of an Armenian Girl. Scholastic Inc., 1992.

10. Rubenz69 “RubenzUniversum – 6.9.7” Universum d7 under <https://www.youtube.com/watch?v=BiyBAmCE7d0>
11. The Independent, THURSDAY 07 MAY 2015, <http://www.independent.co.uk/news/world/middle-east/iran-allows-women-into-sports-stadiums-but-not-for-anything-too-masculine-10157705.html?cmpid=facebook-post>
comment by Jonny Gadd.

А. МЕСРОПЯН – *О контекстуальной обусловленности декодирования тавтологических высказываний.* – Как показывают исследования, интерпретация имплицитных значений и понимание pragматической ценности внешне простых тавтологических конструкций не всегда однозначны. В настоящей статье выявлено, что интерпретация тавтологий в значительной мере зависит от ряда факторов, в их числе от языкового и внеязыкового контекстов, фоновых знаний собеседников и.т.д. Показано, что в зависимости от контекста тавтологические высказывания могут служить той или иной коммуникативно-прагматической цели.

Ключевые слова: тавтология, речевая ситуация, коммуникативная цель, социальный контекст, лингвистический контекст, фоновые знания, прагматическое значение, имплицитность

A. MESROPYAN – *Context as the Key to the Calculation of Tautologies.* – Tautology seems to be quite a simple topic in the realm of linguistics, yet the understanding and calculation of it is rather complicated for many factors are involved. As is shown in the present paper, the interpretation of tautologies largely depends upon the context, including specific conversational context, the large cultural and language context, and the mutual knowledge between the speakers. It is indicated that, determined by the context, tautological utterances may serve different pragmatic and communicative imports.

Key words: tautology, speech event, communicative purpose, context, co-text, background knowledge, pragmatic value, implicit meaning

Տաքակի ՄովսեսՅան
Երևանի պետական համալսարան

**ՈՒՂՂԱՋԻԳ ՀԱՍՏԵՔՍԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ**

Հոդվածում դիտարկվում է «ուղղաձիգ համատեքստ» լեզվաբանական խնդրի պատմությունը՝ հենվելով տարրեր սերունդների և դպրոցների լեզվաբանների աշխատությունների վրա: Ներկայացվում են նաև խոսրի պատկերապերնան անդրադարձ (allusive) հնարների մի շարք դասակարգումներ, ինչպես նաև մեջբերումների հիմնական աղյուրները: Հոդվածում փորձ է արվում նաև համադրել ուսական և հայկական լեզվաբանական դպրոցների ներկայացուցիչների եզրահանգումներն ու համապատասխան տերմինարանությունը արևմտյան դպրոցների գիտնականների եզրահանգումների և տերմինարանության հետ:

Բանակի բառեր. ուղղաձիգ համատեքստ, հորիզոնական համատեքստ, գրական անդրադարձ, մեջբերում, լեզվաբարտահայտչական հնար

«Ուղղաձիգ համատեքստը գրական ստեղծագործության մեջ տեղ գտած պատմաբանասիրական բնույթի տեղեկությունն է», իսկ ցանկացած տեսքի հասկացման համար ընթերցողից պահանջվում է նախազիտելիք ուղղաձիգ համատեքստի վերհաննան համար /Ախմանովա, 1977: 47/:

Սոհասարակ «ուղղաձիգ համատեքստ» եզրը ներմուծվել է 20-րդ դարի երկրորդ կեսին ուսու լեզվաբաններ O. Ախմանովայի և Ի. Գյուրբենետի կողմից: Տեքստում ուղղաձիգ համատեքստի ներդրման միջոցներով պայմանավորված տարբերակում են բանասիրական (գրական անդրադարձներ, մեջբերումներ, այլակերպված դեֆորմացված, դարձվածքներ) և սոցիալ-պատմական ուղղաձիգ համատեքստի տարրեր (ուսալիաներ՝ իրակություններ, հատուկ անուններ կամ տեղանուններ):

Ուղղաձիգ համատեքստը՝ որպես բանասիրական խնդիր, մանրամասնորեն դիտարկված է Ի. Վ. Գյուրբենետի աշխատություններում: Բանասիրական և սոցիալ-տնտեսական ուղղաձիգ համատեքստին նվիրված շատ աշխատություններում խնդիր է դրված պատասխանելու մի շարք հարցերի, մասնավորապես ինչպես ու է ուղղաձիգ համատեքստը ներկայացված այս կամ այն գրական ստեղծագործության մեջ, որո՞նք են ուղղաձիգ համատեքստի արտահայտման հիմնական միջոցները, որո՞նք են խոսրի արտահայտման անդրադարձ հնարների հիմնական աղյուրները, և ինչպես ս կարելի է որոշել գրական անդրադարձի առկայությունը տեքստի այս կամ այն հատվածում:

Թվարկված հարցերից առաջինի բարդությունն այն է, որ գոյություն ունեն անդրադարձ հնարներ արտահայտող տարրեր եզրեր, ինչպիսիք են, օրինակ, գրական անդրադարձները, մեջբերումները և իրակությունները: Այս առումով Ի. Գյուրբենետն առաջարկում է հետևյալ տարբերակումը՝ բանասիրական համատեքստը ներկայացվում է այլակերպված դարձվածքներով,

մեջքերումներով և գրական անդրադարձներով, իսկ սոցիալ-պատմական ուղղաձիգ համատեքստը հատուկ անունների և տեղանունների միջոցով:

Մեկ այլ ռուս լեզվաբան՝ Լ. Բոլդիխեան, տարանջատում է սոցիալ-պատմական ուղղաձիգ համատեքստ, ինչն, ըստ նրա, «գրական ստեղծագործությունում տեղ գտած պատմաբանական տեղեկության մասն է և ընթերցողին տալիս է արտաքին աշխարհի, իրականության որոշակի հատվածի պատկերը իր՝ ամբողջ էությամբ», և դարաշրջանի սոցիալ-պատմական հիմնապատկերը այն հատկանիշների ամբողջությունը, որը բնութագրում է մարդկանց՝ որպես կոնկրետ պատմական ժամանակահատվածի կոնկրետ սոցիալական խնդիր ներկայացուցիչների կյանքի կարևորագույն կողմերը /Յոլդիխեան, 1991: 207/:

Դարձվածքների՝ որպես ուղղաձիգ համատեքտի կարևորագույն տարրերից մեկի, ինչպես նաև բանավոր և գրավոր խոսքում դրանց գործառության մասին մանրամասնորեն խոսվում է Լ. Չիշենովայի աշխատության մեջ, որտեղ նշվում է, որ դարձվածքների գործառության առանձնահատկություններն ու դրանց կիրառման հաճախականությունը պայմանավորված են ոչ միայն լեզվական, այլ նաև արտակեզվական գործուներով: Չիշենովան մատնանշում է դարձվածքների՝ այլակերպման ենթարկվելու ունակությունը՝ կախված դրանց կառուցվածքից, և շեշտում է, որ դարձվածքների մի ամբողջ շարքի այլակերպումը կարող է դիտարկվել ոչ թե որպես անհատական հեղինակային, մոտեցում, այլ որպես դարձվածքներին բնորոշ գործառական հատկանիշ՝ դրանց խոսքային վարքագծի նորմ /Կիչենովա, 1986: 101/:

Ինչ վերաբերում է մեջքերումներին, Գյուրբենետն իր գրքերում օգտագործում է Ն. Կատինինեի դասակարգումը, որը դիտարկում է ամբողջական, հատվող և այլակերպված մեջքերումները /տե՛ս Կատինի, 1983/: Անդրադարձ տարրերի և արտահայտչամիջոցների նմանատիպ դասակարգում է՝ առաջարկում նաև Ի. Խրիստենկոն, ըստ որի, օբյեկտով պայմանավորված տարրերակում են նախատեքստի և նախադրականության գրական անդրադարձներ: Իսկ կառուցվածքի դիտակյունից ենթելով լեզվաբանն առանձնացնում է բովանդակային՝ տեքստում ցայտուն կերպով ներկայացված, և ոճական՝ անուղղակի անդրադարձներ դեպի աղբյուրը /Христенко, 1993/:

Հարկ է նշել, որ հաճախ դժվար է հստակ եզրագիծ անցելացնել գրական անդրադարձների և մեջքերումների միջև, ուստի որոշ գիտնականներ չեն տարանջատում գրական անդրադարձները և մեջքերումները որպես առանձին հասկացություններ. նրանք պարզապես առաջարկում են հիերարխիա՝ դրանցից մեկը ընդունելով որպես առավել ընդհանուրացնող կարգ, իսկ մյուսը որպես վերջինիս տարատեսակ: Օրինակ՝ Ի. Գյուրբենետը գրական անդրադարձ է անվանում առավելագույնս այլակերպված մեջքերումը:

Գեղարվեստական ստեղծագործության մեջ ուղղաձիգ համատեքստ ներդնելու տարրեր միջոցներ գոյություն ունեն: Ի. Գյուրբենետն, օրինակ, առանձնացնում է հետևյալները՝ 1. հեղինակն ինքն է տալիս մանրամասն տեղեկություն աղբյուրի վերաբերյալ, 2. գեղարվեստական ստեղծագործու-

թյան հերոսներն են ընթերցողին տալիս այդ տեղեկությունը, 3. միտումնավոր կերպով ակնարկվում է սխալ աղբյուր երգիծական ազդեցության հասնելու նպատակով, 4. հայտնի մեջբերումները ներկայացվում են որպես անանուն մեջբերումներ կամ որպես ասացվածքներ կամ առածներ, 5. արվում է հեղինակային մեկնաբանություն, 6. մեջբերումն այլակերպվում է, ինչը հաճացեցնում է խոսվածքների և ոճերի ձուլմանը, 7. արվում է համեմատություն (փոխառու տեքստի որևէ տարր բաղդատվում է սկզբնաղբյուրից որևէ կոճկուես տարրի հետ, ինչն օգնում է ընթերցողին հնարավորինս ըմբռնել տեքստը, եթե, իհարկե, ընթերցողն ունի բավարար նախագիտելիք), 8. տեքստում ուղղաձիգ համատեքստը ներմուծվում է առանց որևէ գրաֆիկական նշանակության, ինչի արդյունքում հեղինակի խոսքը և մեջբերվող խոսքը ձուլվում են:

Հարկ է նշել, որ առավել դժվար է վեր հանել այն ուղղաձիգ համատեքստերը, որոնք ներկայակած են տեքստին՝ առանց որևէ մեկնաբանության կամ գրաֆիկական ցուցիչների: Այս պարագայում դժվար է ոչ միայն վեր հանել ուղղաձիգ համատեքստը, այլ նաև կռահել նախագիտելիքը, որա սկզբնաղբյուրը գրական անդրադարձներով չափազանց հարուստ տեքստի ճիշտ մեկնաբանման և պատշաճ հասկացման համար: Հեղինակի կողմից խոսքի անդրադարձ տարրերի չափից շատ կիրառումը կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ ընթերցողի համար գեղարվեստական ստեղծագործության ընկալման տեսանկյունից:

Գրական անդրադարձների և առհասարակ ուղղաձիգ համատեքստի արտահայտման միջոցների մասին խոսելիս անհրաժեշտ է նաև անդրադառնալ այն աղբյուրներին, որոնց հաճախ դիմում են անվանի հեղինակները: Այս առումով Գյուքբենետն առանձնացնում է խոսքի անդրադարձ հնարների հետևյալ հիմնական աղբյուրները՝ Շեքսպիր, Աստվածաշունչ, անգլիական դասականների արձակն ու պոեզիան, համաշխարհային գրականություն, անտիկ դիցարանություն և գրականություն, պատմական գրականություն, պատմական դեմքների կողմից և մասին արված արտահայտություններ, մանկական բանաստեղծություններ, ասացվածքներ և առածներ:

Ուղղաձիգ համատեքստի ուսումնասիրմանը նվիրված աշխատություններում նաև փորձ է արվում պատասխանելու այն հարցին, թե ինչ նպատակով են կիրառվում խոսքի անդրադարձ հնարները: Այս առումով մեծ ավանդ ունի լեզվաբան Մ. Պրոխորովան, ով լեզվաբանական ուսումնասիրության մեջ համեմատականներ է անցկացնում երկու աղբյուր և թիրախային, տեքստերի միջև: Արդյունքում նա առաջարկում է. 1. գտնել անդրադարձ հնարները երկու տեքստերում էլ, 2. իմաստարանության մակարդակում մեկնաբանել երկու տեքստերում առկա անդրադարձ հնարները, 3. մեկնաբանել ուղղաձիգ համատեքստը փոխառու տեքստում լեզվաբանաստղեծական դիտանկյունից /Պրոխորովա, 1989: 182/:

Հարկ է նաև նշել, որ արևմտյան գիտնականների աշխատություններում և հոդվածներում բուն «ուղղաձիգ համատեքստ» տերմինը քիչ է կիրառվում, փոխարենը գործածվում են համանման հասկացություններ: Ուղղաձիգ

համատեքստի և հորիզոնական համատեքստի նախատիպերը Քլ. Սխաարի կողմից առաջարկված ենթահամատեքստն (infracontext) է և մակերեսային համատեքստը (surface context) /Schaar, 1978: 377-387/:

Չորջ Հենրի Վալլիսը դեռևս 1960-ականներին ուշադրություն էր դարձնում մեջբերումների և գրական անդրադարձների միջև եզրագծի բափանցիկությանը: Չնշելով «նախագիտելիքի» մասին՝ նա խոսում է «զրավոր ժառանգության» և «վեզվի մեջ ներքափանցող իիշելի արտահայտությունների» մասին /Vallins, 1960: 59/: Հենց Վալլինսին է պատկանում այն փոխաբերությունը, որը լեզվաբանները կիրառում են ուղղաձիգ համատեքստը բնորոշելիս. հեղինակը ընկալվում է որպես այն խաչքարի կամ գլուխկոտրուկի հեղինակ, որը պետք է ընթերցողը լուծի (But in fact all allusion, which travels far beyond the limits of classical mythology and ranges the whole world, is bound in the nature of things to leave the reader parting a little away. The writer, like settler of a quiz or a crossword puzzle, has the advantage) /Vallins, 1960: 27/:

Վալլինսի փոխաբերությունը շեշտադրում է այն հանգամանքը, որ արդյունավետ ընթերցանությունը պայմանավորված է ընթերցողի հենքային գիտելիքի և գեղարվեստական ստեղծագործության հեղինակի կողմից առաջ քաշված փաստերի համակցմանը: Հարող Բլումի պնդմանը գեղարվեստական ստեղծագործության պատշաճ ընթերցումը սկզբունքորեն անհնար է, քանի որ տեքստն ինքնին այլ տեքստերի մեկնաբանությունն է, իսկ տեքստի ընթերցումը՝ տեքստի մեկնաբանության մեկնաբանությունն է: Հետևաբար տեքստը մեկնաբանելու փորձը առավել բարդ առաջարկանք է մեկնաբանությունների այդ շղթայում /Bloom, 1975: 3/:

Այն, ինչի մասին խոսում է Բլումը, անմիջականորեն կապված է միջտեքստայնություն հասկացության հետ, ինչն, ի տարբերություն ուղղաձիգ համատեքստի, լայն կիրառում ունի ոռուսական և արևմտյան գիտնականների աշխատություններում: Միջտեքստայնություն ասելով՝ նկատի է առնվում տեքստի՝ «մեջբերման խճանկարի» տեսքով հանդես գալու հատկությունը: Յուրաքանչյուր տեքստ ընկալվում է որպես «մեկ այլ տեքստի յուրացում և փոխակերպում» /Կրիստեա, 2004: 167/:

Այս առումով արևմտյան գիտնականների եզրահանգումներն ու դիտարկումները հիմնականում համընկնում են ոռուսական լեզվաբանների կողմից արված դատողությունների և եզրահանգումների հետ, որոնք առնչվում են ուղղաձիգ համատեքստի ուսումնասիրությանը: Հիմնական տարբերությունն այն է, որ «ուղղաձիգ համատեքստ» հասկացությունը բացակայում է ոռուսական/սովետական բանասիրության եզրագծից այն կողմ:

Գ. Գիրունյանը նշում է. «Ի տարբերություն միջտեքստայնության խորագիրի ներքո հրատարակվող աշխատանքների խայտարդես բազմազանության՝ ուղղաձիգ համատեքստի խնդրով զբաղվող հետազոտողները պահպանում են վերլուծությունների ընդհանուր տրամաբանությունը, որում, ինչպես երևում է ուղղության անվանումից, գերակա հասկացությունը ուղղաձիգ համատեքստն է, որի նկարագրմանն են ուղղված մյուս բոլոր հասկացությունները» /Գրականության ակադեմիա, 2010: 10/:

յունները: Այս իմաստով օժանդակ դեր ունի նույնիսկ հորիզոնական համատեքստը և ծառայում է ուղղաձիգի բացահայտմանը» / Գիրունյան, 2014: 72/:

Ուղղաձիգ համատեքստի պատմության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սույն բանասիրական խնդրի բուն առարկան գրեթե մշտապես եղել է գեղարվեստական գրականությունը / Իզոտովա, 1992: 124/: Իսկ անգիտական մշակույթի, մասսավորապես՝ գրականության մեջ ուղղաձիգ համատեքստն իր դրսնորման ամենացայտուն ձևերով գրական անդրադարձներով և մեջքերումներով հանդերձ, մշտապես աննկարագրելի դեր է ունեցել: Եվ պատահական չել այն փաստը, որ ոչ մի եվրոպական լեզվում գոյություն չունեն գրական անդրադարձների և մեջքերումների այդ չափ տարատեսակ բառարաններ, որքան անգիտենում: 19-րդ դարի ողջ ընթացքում Անգլիայում մեջքերումների և հղումների, գրական անդրադարձների հանդեպ միտումը առանձնացնում էր ոչ միայն գրողներին, այլ նաև շարժային անգիտացիներին, ինչի մասին են վկայում գեղարվեստավավերագրական գրականության տեսակ հուշագրությունը, օրագրերը, նամակները և այլն / Գյոճենետ, 2010: 6/:

Հողվածն ու ուղղաձիգ համատեքստի վերաբերյալ ուումնասիրություններ կատարած լեզվաբանների փորձն ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ «ուղղաձիգ համատեքստ» եզրույթի գոյության մի քանի տասնամյակներում լեզվաբանության մեջ մանրամասնորեն ուսումնասիրվել է բանասիրական ուղղաձիգ համատեքստ հասկացության կառուցվածքը և առանձնացվել են վերջինիս հիմնարար բաղադրիչները (այլակերպված դարձվածքներ, մեջքերումներ, գրական անդրադարձներ), ինչպես նաև ուղղաձիգ համատեքստի հիմնական աղբյուրները, առաջարկվել և մեկնաբանվել են խոսքապահայտչական հնարների բացահայտման և քայլ առ քայլ դիտարկման մեթոդները, ուսումնասիրվել են գեղարվեստական գրականության մեծ թվով տեքստեր ուղղաձիգ համատեքստի գործառնության տեսանկյունից:

Եվ, թեպետ, արևմտյան լեզվաբանական դպրոցում բուն ուղղաձիգ համատեքստ տերմինը քիչ է կիրառվում, մշտապես ուշադրության կետրունում է «միջտեքստայնություն» հասկացությունը: Իսկ, ինչպես նկատելի է հոդվածում, արևմտյան լեզվաբանների դիտարկումները քննարկվածի շուրջ հիմնականում համադրելի են ուսու լեզվաբանների կարծիքների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գիրունյան Գ. Գրական անդրադարձի մեկնողական ընդգրկումը, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2014:
2. Ахманова О. С., Гюобенет И. В. «Вертикальный контекст» как филологическая проблема // Вопросы языкоznания, 1997, № 3.
3. Болдырева Л. В. Социально-исторический вертикальный контекст и проблема понимания литературно-художественного текста: дис. канд. фил. наук. М., 1991.

4. Гюббенет И. В. К проблеме понимания литературно-художественного текста (на английском материале). М.: МГУ, 1991.
5. Гюббенет И. В. Основы филологической интерпретации литературно-художественного текста. М.: МГУ, 1991.
6. Изотова А. А. Деформация английских фразеологических единиц в функциональном освещении: дис. канд. фил. наук. М., 1992.
7. Катинине Н. Ф. Глобальный вертикальный контекст романов Т. Гарди: дис. канд. фил. наук. М., 1983.
8. Кристева Ю. Избранные труды: Разрушение поэтики / Пер. с франц. – М.: РОССПЭН, 2004.
9. Прохорова М. Ю. Филологический вертикальный контекст в прагмалингвистическом освещении: дис. канд. фил. наук. М., 1989.
10. Христенко И. С. Лингвостилистические особенности аллюзии как средства создания подтекста: дис. канд. фил. наук. М., 1993.
11. Чиченова Л. А. Английская фразеология в языке и речи. М.: МГУ, 1986.
12. Bloom H. A Map of Misreading. NY: Oxford University Press, 1975.
13. Schaar C. Linear Sequence, Spatial Structure, Complex Sign and Vertical Context System // Poetics 7. North-Holland Publishing Company, 1978.
14. Vallins G. H. The Best English. London: Andre Deutsch, 1960.

Т. МОВСИСЯН – *Вертикальный контекст как объект лингвистического анализа.* – В статье рассматривается история лингвистической проблемы «вертикальный контекст», опираясь на работы лингвистов разных поколений и лингвистических школ. В работе представлены разные классификации аллюзивных фигур речи, а также основные источники цитирования. В ней также делается попытка сопоставить выводы и терминологию представителей русской и армянской лингвистических школ с выводами ученых аналогичных западных школ.

Ключевые слова: вертикальный контекст, горизонтальный контекст, аллюзия, цитата, фигура речи

T. MOVSISYAN – *Vertical Context as a Subject of Linguistic Study.* – The paper presents the history of the linguistic problem of “vertical context”, based on the relevant works of a number of linguists belonging to different generations and linguistic schools. Various classifications of allusive figures of speech, as well as the principal sources of quotations are introduced. An attempt is made to compare the relevant conclusions and terminology of the representatives of the Russian and Armenian linguistic schools with those of the scholars of western linguistic ones.

Key words: vertical context, horizontal context, allusion, quote, figure of speech

Асмик ГАЛУСТЯН

*Ереванский государственный университет
языков и социальных наук имени В.Я. Брюсова*

КОГНИТИВНЫЕ ОСНОВЫ РАЗВИТИЯ ПРИЧИННОГО ЗНАЧЕНИЯ В СЕМАНТИКЕ ПЕРВООБРАЗНЫХ ПРЕДЛОГОВ

Статья посвящена изучению семантической структуры многозначных первообразных предлогов. В частности, изучен процесс развития причинного значения в семантике предлогов, обозначающих пространственные и временные отношения. В результате проведенного исследования было выяснено, что общим в семантике первообразных предлогов является компонент 'барьер', который в человеческом сознании может ассоциироваться с 'причиной'. А причина, как известно, в большинстве случаев получает негативную оценку.

Ключевые слова: первообразные предлоги, семантическая структура, причина-барьер, собственно причинные предлоги, многозначные предлоги

Причинные предлоги в русском языке представлены в следующих группах: первообразные предлоги *из, по, с, от, за*; парный предлог-сращение *из-за*; составные отыменные предлоги с одним первообразным предлогом *вследствие, по причине, в силу, ввиду, по поводу, в результате, на основании, под видом, под предлогом*; с двумя первообразными предлогами *в связи с*; простой отглагольный *благодаря*, составной отглагольный *исходя из*. Некоторые из них специализируются на выражении причинных отношений (в первую очередь, это относится к составным отыменным предлогам), другие – могут выражать и иные отношения (например, локальные – *с горы, из класса* и т.п., темпоральные – *с утра, по вечерам* и т.п.). Эта реальность нашла свое отражение в толковых словарях. Ср.:

из-за

1. обозначает направление, движение откуда-нибудь, из места, закрытого чем-нибудь, с противоположной стороны чего-нибудь,
2. по причине, по вине кого-чего-нибудь.

И это свидетельствует о факте признания за предлогами семантической наполненности – факте нетривиальном и поэтому не раз обсуждавшемся в лингвистической литературе. Так, некоторые авторы замечают, что «неспособность предлогов самостоятельно выражать свои значения не означает, что они лишены лексического значения» /Шанский, Тихонов, 1987/. Также определяется специфика их лексического значения: «Лексическим значением предлога как отдельно взятого слова является значение того или иного отношения. Это отношение может быть или максимально абстрактным, широким, или более конкретным, определенным, узким. Однако в любом

случае предлог имеет лексическое значение, различна лишь степень абстрактности. Семантически «пустых» предлогов не существует» / Русская грамматика, 1982/.

В семантике большинства составных предлогов компонент 'причина' является единственным, ср.: *по причине, под предлогом, в силу, в связи, ввиду, благодаря, вследствие, в результате, исходя из*, также: *по поводу (по причине) и на основании*. «Однозначными чаще всего являются производные, “молодые” предлоги» /Шанский, Тихонов, 1987/. У первообразных многозначных предлогов это значение развивается на базе первичных, центральных. В рамках данной статьи делается попытка понять, на основе чего, какого метафорического переноса развивается причинное значение в частности у предлогов *из-за, за, от, из, с, по, а также под, в, на, перед, при*.

О способности предлогов *от, из, с* обозначать причину того или иного состояния говорится в работе В.В. Виноградова «Русский язык. Грамматическое учение о слове»: «Так, предлоги, обозначающие удаление, отделение, исхождение, а следовательно, и происхождение и причину, источник (например: *от, из, с*) сочетаются с родительным (отложительным) падежом» /Виноградов, 2001/.

Предлог *из* в русском языке указывает не просто на внутреннюю причину, а внутреннюю *причину- побуждение, причину-толчок*, которые диктуют либо активное действие, либо вовсе бездействие. Предлог *из* сочетается с чувствами человека, которые обычно имеют выход, оттого и возможно варьирование *из страха/ из чувства страха; из милосердия/из чувства милосердия; из любви/ из чувства любви; из сострадания/из чувства сострадания; из жалости/из чувства жалости; из симпатии/ из чувства симпатии* и т.д. В конструкциях с предлогом *из* ситуация, описанная в следственном блоке, зависит преимущественно от воли субъекта:

Основал обицины и монастыри, из любви к Богу и сострадания к людям /Зоя Масленников. Жизнь отца Александра Меня (1992)/.

Одной из своих знакомых Скотт впоследствии признался, что они с миссис Скотт “решили вступить в брак из чувства самой искренней и взаимной симпатии, и за двенадцать лет супружества это чувство не только не уменьшилось, но скорее возросло /Юрий Безелянский. В садах любви (1993)/.

Предлог *от* вводит указание на причину-источник. В формах *из страха – от страха, из ненависти – от ненависти* в первом случае субъект контролирует ситуацию, отмеченную в следственном блоке, во втором реагирует лишь механически и автоматически, поэтому достаточно трудно представить ситуации **из усталости (но: от усталости), *из неуверенности (но: от неуверенности), *из негодования (но: от негодования)* и т.д. Ср.:

В тот миг, когда встал от усталости, чтобы перевести дух, Алеша бесчувственными губами словил в морозном жгучем воздухе легкое

дыхание /Олег Павлов. Карагандинские девятины, или Повесть последних дней // «Октябрь», 2001/.

Предлог *с* указывает на более тесную связь между причиной и следствием. Эта связь характеризуется стихийностью и меньшей контролируемостью следствия со стороны субъекта ситуации. Ср.:

Отец со страхом так рванул весла, что одна из деревянных уключин с треском обломилась /Р.Б. Ахмедов. Промельки (2011) // «Бельские Просторы»/.

Так, для того чтобы ярче представить семантические различия этих предлогов, а значит и указываемые ими оттенки ‘причины’, стоит провести параллели между семантикой предлогов и следующих приставочных глаголов:

- *изгнать из города (выгнать)*
- *избыть горе (избавиться)*
- *извергнуть (выпускать: Вулкан изверг лаву)*
- *излечь (вынуть, достать)*
- *излиться (выразить, высказывать: Излить чувства)*

В семантике этих глаголов есть компонент ‘выход наружу’, который сопоставим с семантическим содержанием предлога *из* в сочетаниях *из милости, из зависти, из любви, из сочувствия*. Чувства, испытываемые человеком, будучи направленными на объект, преобразуются в определенные действия: *Из ненависти подожгли дом // Из любви к нему продала все имущество* и т.д.

Предлог *от* обнаруживает смысловые сходства с приставками в таких глаголах, как *отъехать* (от дома), *отскочить* (от стены), *отпрыгнуть* (от змеи), *отсесть* (от печи). Действия, указанные этими глаголами, можно назвать «ретроспективными», так как они отсылают нас непосредственно к исходным событиям, в которых *дом, стена, змея и печь* предстают как своего рода отправные точки.

Эффект внезапности, который пересекается со стихийностью причинно-следственной связи, указываемой предлогом *с*, сохраняется в глаголах: *соскочить*:

- с коня
 - гонор сразу соскочит (*перен. исчезнуть сразу, внезапно*)
- срезать:*
- обидным замечанием (*перен. оборвать, резко прервать говорящего*)
- сорваться:*
- с обрыва (оборвавшись, не удержавшись, упасть)
 - с цепи (рывком отделиться)
 - топор сорвался и ударил по ноге (резко соскользнуть)
- также: *сорвался с места; сорвалось с языка; сорвали дело; сорвался и накричал* и т.д.

Итак, такие параметры значений глаголов, как ‘источник’, ‘выход наружу’, ‘стихийность’, в точности отражают семантику предлогов *от*, *из*, *с*. Более того, во всех рассмотренных нами ситуациях прослеживается преодоление *пространства*, некоего *барьера*, который сопоставим с понятием *причина*. По нашим наблюдениям, таким образом, общим в семантике рассмотренных нами предлогов является компонент ‘барьер, преграда’, которому в ментальном пространстве, то есть в сознании человека, может соответствовать ‘причина’. Эти категории объединяет признак негативности. *Барьер* так же, как и *причина*, получает негативную оценку в сознании человека. В работе Н. Д. Арутюновой делается замечание о том, что «категория причины ассоциируется с ненормативными явлениями и отрицательной оценкой» /Арутюнова, 1992/. Примечательно отметить, что в словаре Ачаряна, согласно одному из отмеченных им источников, существительное չշիփ (причина) в армянском языке восходит к персидскому слову *badkār* – չարզգործ/злодей/Цбшпեшб, 1926/.

Так, в русском языке немало предлогов, которые в определенном лексическом окружении выражают причинное значение. Эту группу составляют предлоги, которые в обычном своем употреблении выражают пространственное или временное значения. Ср.:

В темноте я не заметила, как он вошел.

В этом платье ты выглядишь намного красивее.

Он чувствовал себя лишним *в окружении* этих людей.

Так *под нашим натиском* пала Мировая лига.

Он все разболтал *под воздействием* алкоголя.

Цветы завяли *под солнечными лучами*.

Цветы завяли *на солнце* (= *под солнцем*)

Некоторые лингвисты объясняют развитие причинного значения у предлогов, первично обозначающих пространственные и временные отношения, следующим образом: «<...> a preposition that denotes a vaguer or more general location is more apt to develop metaphorical extensions <...>, a preposition that denotes a more concrete location or a specialized visual location or which has a negative polarity meaning is less apt to develop metaphorical extensions» /Zelinsky-Wibbelt, 1993/.

Если все дело в характере обозначения пространственных и временных отношений, то возникает вопрос, почему, например, возможно развитие причинного значение у предлога *за*, но не антонимичного *перед*, или у предлога *под*, но не *над*. По данным словаря под редакцией Ожегова, предлог *за* имеет 20 значений, среди них выделяется причинное значение: «по причине, вследствие чего-н.» /Ожегов, 1984/. У предлога *перед* всего 4 значения. Предлог обозначает пространственные, временные отношения, объекта действия и сравнение. В паре *под* и *над* «привилегированное» положение занимает опять-таки первый предлог. Обнаружено 12 значений

этого предлога, в том числе причинное: «вследствие чего-н.» /Ожегов, 1984/. Предлог *под* имеет всего 2 значения и обозначает пространственные отношения и направленность действия. Почему у одних предлогов наблюдается такой богатый потенциал значений, в то время как у других он крайне ограничен? И как объяснить появление у рассмотренных предлогов именно причинного значения? В семантике предлогов *за* и *под* опять наблюдается наличие компонента *барьер*. Ср.:

сидеть за столом; стоять за деревом //
не звонить за отсутствием времени; выбросить за ненадобностью;
браниТЬ за непослушание
под землей; под зданием //
под давлением; под воздействием

Этот компонент присутствует также в семантике предлога *из-за*, в котором центральным, первичным значением является отнюдь не причинное. Более того, предлог *из-за* в основном указывает на неблагоприятную ситуацию. Ср.:

выгляднуть из-за дерева; встать из-за стола
опоздать из-за кого-то; не суметь выехать из-за дождей

Аналогично можно объяснить употребление предлогов *в* и *на* в причинном значении. Заметим, что в отличие от предыдущих, в словарных статьях этих предлогов нет значения причины. Ср.:

в комнате (замкнутое пространство); в тюрьме (замкнутое пространство)

выглядеть красиво в платье; выглядеть представительно в костюме

Замкнутое пространство и причина здесь воспринимаются одинаково негативно.

Также:

цветы вянут на солнце (= под солнцем)

Причинного значения нет и в словарных статьях предлогов *перед*, *при*. Несмотря на это, в определенном лексическом окружении эти предлоги способны фиксировать причину.

Ср.: *стоять перед домом – дрожать перед начальством/*
столб при дороге – при свете луны

Каузативное употребление этих предлогов контекстуально обусловлено.

Примечательно, что предлог *по* при указании на внутреннюю причину присоединяет имена, характеризующие либо самого человека с отрицательной стороны, либо ситуацию в целом:

Частю по глупой честности, Частю по простоте, Пропадаю в неизвестности, Пресмыкаюсь в нищете /Л.К. Чуковская. Памяти детства: Мой отец – Корней Чуковский (1971)/.

Именно поэтому практически невозможны ситуации: **по зрелости* (но: *по молодости*), **по опытности* (но: *по неопытности*), **по храбрости* (но: *по*

трусости). Этим и объясняется развитие причинного значения в семантике этого предлога.

Таким образом, мыслительная категория причины, так же, как и категория пространственных и временных отношений, пронизывает всю жизнь человека. Именно поэтому в семантике рассмотренных нами многозначных предлогов причинное значение реализуется всегда, даже если употребление некоторых из них в причинном значении зависит от конкретного контекста. Эта тенденция наблюдается и в армянском, и в английском языках. Ср.:

Ո՞ր մեկը մեզանից երջանիկ չէր լինի Ալեքսանդրի պայծառ հայացքի ներքո /Կաֆկա Ֆրանց. Առակներ և պարագորաններ. 2004/.

Գրիգորի համարյա չէր երևում ծածկոցի տակ: Սարոյի ձայնից զուխը վեր բռավ բարձից, ապա անկողնուց ելավ անտվոր մի ծնով, կարծես ուորը չէր ենթարկվում նրան, քաշեց, միացրեց մարմնին տերոցով, հետո մյուսը /Ազգ. 2007.05.11/.

Նեղացել էր նա մարդկանց անարդարության վրա:

Ոստիկան մշները այնքան էին զանակոծել քշվառ պոչ սրբության, որ բրգած մուկ էր դարձել ու հոգևարքի մեջ ապուշ-ապուշ ժամանում էր /Տավուշյան Էսքիզներ. Հավաքածու/.

<...> Ես գիշահակ եմ զայիս քեզ մոտ և ամաշում եմ սարսափելի <...> /Հովհաննես Գրիգորյան. Նամակը, որը քեզ երբեք չի հասնելու/.

They always argue over money.

I even agreed under her pressure.

Everyone congratulated her on good results.

I was surprised by her behaviour.

Так, собственно причинными являются составные производные предлоги. Многозначные первообразные предлоги могут употребляться не только в причинном значении, но и в пространственном, временном и других значениях. Заметим, что если целевые, объектные и другие значения отсутствуют у отмеченных первообразных предлогов, то причинное значение реализуется всегда.

Общую картину можно представить в таблице, отражающей основные типы отношений, указываемых рассмотренными нами предлогами.

Таблица 1

Предлог	Пространственные	Временные	Объектные	Целевые	Сравнения	Лишние	Орудия	Определительные	Образа действия	Причины
из	+							+	+	+
из-за	+									+
от	+					+		+	+	+
с	+	+	+	+	+			+	+	+
за	+	+	+	+						+
по	+		+							+
благодаря										+
вследствие										+
в результате										+
ввиду										+
в силу										+
в связи										+
под предлогом										+
под видом										+
по поводу										+
по причине										+
на основании										+
исходя из										+
в согласии с										+
под	+	+	+	+				+		+
в	+	+	+	+	+			+		+
на	+	+	+	+			+			+
перед	+	+	+		+					+
при	+	+								+

ЛИТЕРАТУРА

1. Арутюнова Н. Д. Язык цели // *Логический анализ языка. Модель действия*. М.: Наука, 1992.
2. Виноградов В. В. Русский язык. Грамматическое учение о слове. М.-Л.: «Учпедгиз» 2001.
3. Русская грамматика. Том 1. Фонетика. Фонология. Ударение. Интонация. Словообразование. Морфология. М.: Наука, 1982.
4. Ожегов С.И. Словарь русского языка. М.: «Русский язык», 1984.
5. Шанский Н.М., Тихонов А.Н. Современный русский язык. Ч 2. М.: «Просвещение», 1987.
6. Աճառեան Հ. Հայերէն արմատական բառարան. Եր., Հայաստանի Խ.Ս. Հանրապետութեան Պետական Համալսարանի Հրատարակչութիւն, 1926.
7. Zelinsky-Wibbelt C. The Semantics of Prepositions: from mental processing to natural language processing. Berlin, New York: Mouton de Gruyter, 1993.

Հ. ԳԱԼՈՒՏՅԱՆ – Պարզ կապերի պատճառական իմաստի զարգացման ճանաչողական (կոզմիսիվ) նախադրյալները. – Սույն հոդվածում ուսումնափրկում է բազմիմաստ կապերի իմաստային կառուցվածքը՝ մասնավորապես, պատճառի իմաստի առաջացման ընթացքը սկզբնապես տեղի և ժամանակի իմաստ արտահայտող կապերում: Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ վերոնշյալ կապերի իմաստային կառուցվածքում ընդհանուր իմաստային բաղադրիչ է «խոչընդոտ»-ը, որը մարդու գիտակցության մեջ կարող է ասցանցվել «պատճառ»-ի հետ: Իսկ պատճառը, ինչպիս հայտնի է, տարրեր համատերսատերում մեծամասամբ բացասական գնահատական է ստանում:

Բանափառ բառեր. պարզ կապեր, իմաստային կառուցվածք, պատճառ-խոչընդոտ, բուն պատճառական կապեր, բազմիմաստ կապեր

H. GALUSTYAN – Cognitive Aspects of Developing Causative Meaning in Simple Prepositions. – The paper studies the semantic structure of polysemantc prepositions. In particular the author analyses how causative meaning develops in semantics of spatial and temporal prepositions. The research shows that the semantic component ‘barrier’ is present in the semantic structures of all mentioned prepositions. Moreover, in human mentality it is associated with ‘cause’, which has a negative evaluation in many contexts.

Key words: simple prepositions, semantic structure, cause–barrier, causative prepositions, polysemantic prepositions

Кристине ГЕВОРГЯН

Ереванский государственный университет

ЧЕЛОВЕЧЕСКАЯ ТЕЛЕСНОСТЬ В СОВРЕМЕННОЙ ЛИНГВИСТИКЕ: СОМАТИЗМЫ В ЯЗЫКЕ И КУЛЬТУРЕ

Восприятие человеческого тела и его концептуализация в языке является одним из обсуждаемых вопросов в современном лингвистическом дискурсе. В статье рассматривается «антропология тела» и представлены различные теории, встречающиеся в социальных науках (философии, культурологии, лингвистике) касательно представления образа тела и схемы тела. Проводится анализ идиоматических выражений в английском, русском и армянском языках, содержащих такие соматические концепты, как глаза, голова, сердце, руки, ноги и т.д. Особое внимание в статье уделяется представлению концепта «eye».

Ինչպես հայտնի է լեզվաբանությունից, դարձվածքանությունը լեզվաբանության այն բաժինն է, որտեղ մեկ ընդհանուր եզրույթի մեջ միահյուսվում են լեզվի բառագիտական, շարահյուսական, իմաստարանական և խոսքի գործարանական շերտերը: Այդ իսկ պատճառով հարկ է սահմանել «դարձվածքային միավոր» եզրույթը, այնուհետև, հաշվի առնելով դարձվածքային միավորների մշակութային կարևորությունը լեզվում, քննարկել դրանց դերը օտար լեզուներ դասավանդելիս:

Իսպաներեն դարձվածքային միավորների բովանդակային և գործառական առանձնահատկությունները

Ընդհանուր առմանք, ցանկացած լեզու ուսումնասիրելիս, լեզվաբաններն առանձնացնում են բառակապակցությունների մի ստվար զանգված, որոնք կայուն արտահայտություններ են, և լեզվակիրները դրանք օգտագործելիս հիմնականում փոփոխությունների չեն ենթարկում: Այդպիսի կառույցներն ընդունված է համարել դարձվածքներ կամ դարձվածքային միավորներ:

Հայտնի է, որ դարձվածքային միավորներ են համարվում իմաստաբանորեն բառային անբաժան այնպիսի կազմակցությունները, որոնց ընդհանուր իմաստը չի համապատասխանում դարձվածքը կազմող առանձին բառերի՝ բաղադրիչների բառային իմաստներին: «Դարձվածքանական միակցության հիմնական հատկանիշը նրա բաղադրիչների բառային անբաժանելիությունն է, իմաստային բացարձակ սերտաճումը՝ գողվածությունը, երբ դարձվածքի իմաստը չի բխում նրա բաղադրիչների բառային իմաստներից: Դարձվածքանական միակցության հիմնական հատկանիշներից է նաև այն, որ նա մեծ մասամբ համարժեք է բառին կամ համանշանակ բառի կամ բառերի հետ գոնիվում է հոմանշային հարաբերության մեջ» /Սուրբիասյան, Գալստյան, 1975: 8/:

Ինչպես հայտնի է ընդհանուր լեզվաբանությունից, դարձվածքային միավորները որպես լեզվաբարտահայտչամիջոցներ արտացոլում են հատկորեն մշակութային, ազգամշակութային հասկացությները: Ավելին, դրանք ուսումնասիրելով կարելի է ճիշտ պատկերացում կազմել տվյալ ժողովրդի աշխարհայացքի, նոտածելակերպի մասին /Ալեքսիրենկո, 2005; Երանես, 2007/:

Լեզվամշակութաբանության տեսանկյունից նույնպես շեշտադրվում է դարձվածքային միավորների ազգամշակութային բաղադրիչի առանձնացման և յուրացման դերը, քանի որ տվյալ լեզվի դարձվածապաշարն արտացոլում է հոգևոր մշակույթի նյութական փաստերը:

Իսպաներենի դարձվածքային միավորների ուսուցման գործընթացում ազգամշակութային բաղադրիչի առանձնացումը և յուրացումը տեղի է ունենում հիմնանշանակային (denotative) (լեզվամիավորների նշանակության հիմնական, կայուն տարրերին վերաբերող), նշանակական /significative/, հարանշանակային /connegative/ մակարդակներում:

Ակնհայտ է, որ իսպաներենի դարձվածքային միավորների ուսուցման կարևոր պայման է այսպես կոչված դարձվածապաշարի կորպուսի հետ աշխատանքի ընթացակարգերի ծանոթացումը /Ագաֆոնova, 2009: 80-88./:

Մեր հետազոտության համար կարևոր են հասկացույթի այն սահմանումները, որոնք վերաբերում են դարձվածքային միավորների ազգամշակութային բաղադրիչին: Այդ առումով հետաքրքրություն է ներկայացնում Յ. Ս. Ստեփանյանի մոտեցումը, ըստ որի, հասկացույթը մշակույթի թանձրույթ է նարդու գիտակցության մեջ, որի տեսքով մշակույթը մտնում է մարդու մտավոր /մենքալ/ աշխարհը: Մյուս կողմից, հասկացույթի միջոցով մարդը մտնում է մշակույթի մեջ և որոշ դեպքերում ազդում է նրա վրա /Ստեփանօվ, 1997: 41-43/: Դ. Ս. Լիխաչյովը ներմուծում է հասկացութային ոլորտ /կոնցեպտոսֆերա/ հասկացությունը, որի միջոցով հնարավոր է դառնում բացահայտել այս կամ այն էթնոսի մտավոր աշխարհը /Լիխաչյով, 1991/:

Իսպաներենի դարձվածքային միավորների ուսուցման հասկացութային մոտեցումը

Իսպաներենի դարձվածքային միավորների ուսուցման տեսանկյունից կարևոր է հասկացույթի ճիշտ սահմանումը, քանի որ ցանկացած լեզվի իմաստային տիրույթ ներկայացնում են հասկացույթները: Ըստ այդմ, հնարավոր չէ յուրացնել որևէ լեզվի դարձվածքային միավորները, առանց յուրացնելու նրա լեզվի իմաստային, ավելի ճիշտ դարձվածքային-իմաստային դաշտերը: Հասկացութային մոտեցման կիրառման անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ ցանկացած լեզվական գիտելիք կյանքի է կոչվում կոնկրետ մշակույթով, մշակույթում:

Հասկացույթը մեկնարանվում է կողմիտիվաների կողմից որպես բարդ ճանաչողական լեզվամշակութային կառույց: Ըստ Ստեղանովի հասկացույթը ներկայանում է որպես որոշակի հանրագումարային երևույթ, որը բաղկացած է բուն հասկացությունից և նրա մասին մարդու արժեքային պատկերացումից /Степанов, 1997: 40-43/: Ըստ Կրասավսկու «հասկացույթն արտացոլում է արտալեզվական օրյեկտի լեզվաբանական արժեքը» /Красавский, 2001:40-59/: Ինչպես և դարձվածքային միավորների պարագայում, հասկացույթի դեպքում նույնական առանձնացնում են մշակութային-էքսիկական բաղադրիչը, որը բնորոշում է բնական լեզվի միավորների իմաստարանության յուրահատկությունը և այն կրողների աշխարհի լեզվական պատկերը /Красавский, 2001: 40-59/: Ինչպես նշում է Ս.Խ. Լյազինը. «հասկացույթը ներառում է ինչպես հասկացական, պատկերավոր, արժեքային, վարքագծային, ծագումնաբանական, այնպես էլ մշակութային շափումները» Красавский, 2000: 78-89/: Ըստ այդմ, հասկացույթը, ի տարբերություն հասկացության, դիտարկվում է ոչ միայն մտածական, այլ հուզական մակարդակներում:

Հատկանշական է այն, որ Ա. Պ. Բարուշկինը դասակարգում է հասկացույթը ըստ բառային և դարձվածքային բնութագրերի /Бабушкин, 1996: 12/: Կոնկրետ լեզվի դարձվածքային միավորները ներկայացնում են որոշակի կոնցեպտոլորտ:

Ըստ մշակութաբանական մոտեցման հասկացույթը դիտարկվում է որպես մշակույթի բջիջ մարդու մտավոր աշխարհում /Степанов, 1997; Телия, 1996/: Իմաստաբանական մոտեցումը ենթադրում է, որ հասկացույթը հիմնվում է լեզվական նշանի իմաստի վրա: Ըստ լեզվամշակութաբանական մոտեցման՝ հասկացույթը բարի նշանակության, անձնական և մարդկության ժողովրդական փորձի բախումն է /Лихачев, 1991/:

Ուսուցողական նպատակներով հասկացույթների բովանդակային բնութագրերը հաշվի առնելը հիմք է ստեղծում տվյալ հասկացության կամ դարձվածքային միավորի դարձվածքային-իմաստաբանական դաշտը յուրացնելու համար: Օրինակ վերցնում ենք իսպաներեն և հայերեն «Աստված» հասկացույթը և փորձում ենք ուսումնասիրել ուսանողների հետ միասին նրա դարձվածքային-իմաստաբանական դաշտը: «Աստված» հասկացույթին վերաբերող հայերեն և իսպաներեն դարձվածքային միավորների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ունեն ընդհանուր և տարբերակիչ գծեր:

Աստված զիտի, միայն Աստված զիտի — Dios lo sabe
 Փառ Աստծու — ¡gracias a Dios!
 Աստված շանի — ¡no lo quiera Dios!, ¡Dios nos guarde!
 Աստված տա — ¡permítalo Dios!
 Աստված քն հետ — ¡con Dios!, ¡vaya con Dios!
 Հանուն Աստծու — por Dios
 Ինչպես Աստված կամենա — como Dios manda
 Աստված նրա հետ — Dios le (la,) ampare, Dios le (la,) proteja
 Աստված տեսնում է — bien sabe Dios que...
 Աստված ազատիր — Dios nos coja confesados, Dios nos asista, Dios nos
 tengaa de su mano
 Աստված իմ — ¡válgame Dios!
 Ինչպես կույրն Աստծուն, այնպես է Աստված կույրին — dar a Dios lo que
 es de Dios y a César lo que es de César
 Աստված ներռղամին է — Dios aprieta, pero no ahoga
 Աստծուց առաջ մի ընկիր — el hombre propone y Dios dispone
 Հույսդ դիր Աստծու վրա — encomendarse a Dios
 Ոչ մի բանի համար պիտանի չի — no servir a Dios ni al diablo

Համապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ «Աստված» հասկացույթի միջուկը երկու լեզուներում էլ «Աստված» բառն է: Սակայն ներկայացված դարձվածքային միավորներում հիմնականում «Աստված» միջուկին հարող մերձակա գուգորդական դաշտերը տարբեր են: Ուսանողները կարող են հստակորեն սահմանել «դարձվածքային միավոր», «հասկացույթ», «փնտեսիոնալ» /1/ կամ «միջուկ», «փնպլիկացիոնալ» /2/ կամ «գուգորդական գոտի» և այլ հասկացությունները, բացահայտել դրանց տարբերությունները և ըստ ներկայացված դարձվածքային միավորների ցանկի, համեմատել հայերեն և խալաներեն տարբերակները: Այդպիսի աշխատանքն օգնում է ակտիվ խոսքային գործունեությամբ յուրացնել նոր լեզվաբանական հասկացություններ, սահմանել դրանք՝ հիմք ընդունելով կոնկրետ օրինակները, գործածել տարբեր խոսքային իրադրություններում: Ակնհայտ է, որ քերականական և բառային բնույթի առաջադրանքները համադրվում են և նպաստում են ուսանողների լեզվաբանական, ինչպես նաև բառային և հաղորդակցական կոմպետենցիաների զարգացմանը:

Աստծուն վերաբերող դարձվածքային միավորները արտահայտում են իրավիճակ, հոգեվիճակ, վերաբերմունք և այլն: Դա հնարավորություն է ընձեռում դասերին կիրառել ուսուցման անձնակողմնորոշիչ, ինտերակտիվ մեթոդներ, տեխնոլոգիաներ դերասյուժետային խաղեր, նախագծեր, մտագրոհ, մոդելավորում և այլն:

Խսպաներենի դարձվածքային միավորների ուսուցման ազգամշակութային մոտեցումը

Նույն տրամաբանությամբ գիտնականաները պնդում են, որ դարձվածքային միավորների կառուցվածքում առաջին պլան է մղվում ազգամշակութային բաղադրիչը: Նշված բաղադրիչը յուրացնելու արդյունավետ միջոցներից է առաջին և ուսումնասիրվող լեզուների համեմատությունը, որը հիմնված է դարձվածքային միավորների լեզվական և արտալեզվական յուրահատկաթյունները բացահայտելու վրա: Այդպիսի համեմատական-գուգադրական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում բացահայտել միջնակութային բնույթի դարձվածքային գուգահեռները, առանձնացնել լեզվական ունիվերսալները:

Դարձվածքային միավորների դասավանդումը համարվում է օտար լեզվի դասավանդման գործընթացում գուցե, ամենանուրը բաժիններից մեկը, և առաջին հայացքից հաճախ կասկածելի է բվում դրանց դասավանդման կարևորությունը: Լեզվի դասավանդման գործընթացում մեծ ուշադրություն է դարձվում հաղորդակցական կարողությունների զարգացմանը, ուսանողների օտարալեզու խոսքի ձևավորմանը: Այդ համատեքստում նույնպես դարձվածքային միավորների ուսումնասիրության նպատակահարմարությունը կասկած չի հարուցում: Դարձվածքային միավորների միջոցով հնարավոր է դառնում արտահայտել զգացմունքները, վերաբերմուրը, անել դատողություններ, խոսքը դարձնելով պատկերավոր, տպավորիչ, հուկական:

Ակնհայտ է, որ օտարալեզու խոսքը միայն արտադրողական մակարդակում կարող է հարուստ լինել դարձվածքային միավորներով: Ի շնորհիվ իրենց, բազմակի հաղորդակցական նշանակություն ունեցող կարողությանը դարձվածքային միավորները նպաստում են խոսքի հարստացմանը և կարող են գործածվել տարբեր ենթատեքստերում /Մարտինես, 1996: 33/: Նման կայուն արտահայտությունների տեղին կիրառումը բանավոր խոսքում ոչ միայն խոսքն ավելի կենդանի է դարձնում, այլ նաև ավելի անկեղծ և բնական մքնողութ է ստեղծում, ինչին և ձգտում են բոլոր օտար լեզու դասավանդողներն ու սովորողները: Խոսողը միշտ չէ, որ հաղորդակցվելիս, այս կամ այն նկատառումներով, նույնությամբ արտահայտում է այն, ինչ մտածում է: Նման դեպքերում նա կարող է դիմել դարձվածքային միավորների օգնությանը՝ ենթադրելով, որ խոսակիցը կանի համապատասխան եզրակացություններ և լիովին կրմրոնի իրեն ուղղված միտքը:

Բացի նշված հանգամանքներից, դարձվածքային միավորներն իրենց մեջ ներառում են հասարակական–մշակութային տարրեր, որոնք արտահայտում են տվյալ լեզվով խոսողների հասարակական, մշակութային, կրոնական և ավանդական սովորույթները, որ ակնհայտ և լիովին հասկանալի են տվյալ ազգի ներկայացուցիչներին, բայց ոչ այդ լեզուն որպես օտար լեզու ուսումնասիրողների համար: Այստեղ խոսք է գնում անհամարժեք դարձվածքային միավորների մասին, որոնք չունեն իրենց համարժեքն ուսանողների լեզվում:

Օտար լեզու դասավանդողը պետք է հաշվի առնի դարձվածքային միավորների դասավանդման գործառույթները, ինչն էլ կնպաստի դրանց ճանաչողական հմտությունների գնահատմանը: Այդ իսկ պատճառով

շափազանց կարևոր է դասավանդողի կողմից դարձվածքային միավորների ճիշտ ընտրությունը և դրանց կիրառումն ակտիվ բառապաշտում: Դարձվածքային միավորների ընտրությունը և ուսուցումն ամենաբարդ գործընթացներից մեկն է, քանզի ուսանողը պետք է լիովին հասկանա դրանց հիմնանշանակային և հարանշանակային իմաստները, կիրառման ենթատեքստերը, ինչպես նաև դրանց քերականական և շարահյուսական կիրառումները:

Ն. Վ. Տիտարենկոն առանձնացում է դարձվածքային միավորների ազգամշակութային բաղադրիչի հետևյալ գործառույթները՝

1. գուգորդական-ընդունող գործառույթը
2. մասնավոր-իմաստային կամ գնահատողական-իմաստային
3. իմաստ ձևավորող
4. պատկերային-կազմակերպող
5. կենցաղային /Տիգարենկո, 2007: 98-101/:

Հաշվի առնելով դարձվածքային միավորների հաղորդակցական գործառույթը, նապատակահարմար է դարձվածքային միավորները դասավանդել գրավոր և բանավոր տեքստերի շորոջ աշխատանքի ընթացքում, քանի որ կոնտեքստը տվյալ հանգամանքում ավելի քան անփոխարինելի է: Որևէ հետաքրքիր տեքստի շորոջ աշխատանքը կատարում է լեզվի ոչ միայն մնենաւեխնիկական կամ մտապահման գործառույթ, այլ նպաստում է տեղեկատվության մտապահմանը և յուրացմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտար լեզվի դասավանդնան նպատակն է սովորողին պատրաստել լարանային միջավայրից դուրս հաղորդակցմանը ցանկալի է զարգացնել սովորողների այնպիսի կարողությունները, որ կծառայեն իրական հաղորդակցական իրավիճակներում: Դարձվածքային միավորները փոխանցվում են մի սերնդից մյուսին, արտացոլելով մարդկային կենսափորձը, սովորույթները, կենցաղի, կենցաղավարության առանձնահատկությունները: Ազգամշակութային բաղադրիչը իր խորը կնիքն է դնում գրեթե բոլոր դարձվածքային միավորների վրա:

Այդ առումով հետաքրքրություն է ներկայացնում հայ լեզվաբան Պ. Ս. Բեղիրյանի մոտեցումը, ով գրում է. «Դարձվածաբանությունը լեզվաբանության ճյուղերից է, որում վառ կերպով արտացոլված է լեզվի ազգային իմքնատիպությունը» /Բեղիրյան, 1973: 25/: Միշտ չէ, որ օտար լեզու ուսումնասիրողը ծանոթ է տվյալ լեզվով խոսող անձնանց, աշխարհի լեզվական պատկերին: Այստեղ խոսք է զնում նրանց հանրամշակութային կոմպետենցիայի մասին: Եվ այստեղ է, որ կարևորում է դարձվածքային միավորների իմաստի բացահայտումը ենթաքեստի ընկալման շնորհիվ:

Դարձվածքային միավորների դասավանդման գործընթացում կարևոր է ուշադրություն դարձնել այն դարձվածքային միավորների վրա, որոնք ձևավորվել են նոյն սոցիալ-տնտեսական, պատմական պայմաններում, և հաշվի առնել այն դարձվածքային միավորները, որոնք անհամարժեք են: Դրանց ուսուցումն ուղեկցվում է ընկալման կամ բարգմանության դժվա-

բություններով: Օրինակ՝ հնարավոր է, որ միևնույն դարձվածքային միավորը գոյություն ունենա մայրենի և օտար լեզուներում միևնույն գործառական, ճանաչողական կամ գնահատման գործառույթների համընկնումով, ինչպես օրինակ, և՛ հայերենում, և՛ խսպաներենում գոյություն ունի միևնույն դարձվածքը.

«Լավ է ուշ, քան երբեք» – “Más vale tarde que nunca”:

Կարող են հանդիպել տարբեր դարձվածքային միավորներ նույն գործառույթներով, սակայն տարբեր քերականական կամ շարահյուսական կարգերով, ինչպես օրինակ՝ «Սիայն սա էր պակաս» հայերենում, մինչդեռ խսպաներենում “Lo que faltaba”: Այլ դեպքերում միևնույն դարձվածքային միավորն ունի տարբեր գործառական, ենթատերստային և ճանաչողական գործառույթներ: Կարող է պատահել այնպես, որ նույն դարձվածքային միավորները տարբեր իմաստներ արտահայտեն, և երկու տարբեր լեզուներում միևնույն իրավիճակը բնորոշող դարձվածքային միավորները կարող են արտահայտվել տարբեր լեզվաարտահայտչամիջոցներով:

Դարձվածքային միավորները ճիշտ օգտագործելու համար նպատակահարմար է դասապրոցեսի ընթացքում կիրառել դերասյուժետային խաղեր, գծագրական դասակարգիչներ, ինտերկատիվ առաջադրանքներ՝ ստեղծելով համապատասխան իրավիճակներ դրանք տարբեր իրական խոսքային իրավիճակներում գործածելու համար:

Ընդհանուր առմամբ, օտար լեզուների ֆակուլտետում սովորող ուսանողները, սիրով են ուսումնասիրում խսպաներենի դարձվածքային միավորները՝ ասույթները, ասացվածքները, առածները, թևավոր խոսքերը, խոսքային կաղապարույթները, քանի որ դրանք կազմում են տվյալ լեզվի ատաղձը:

Համապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ հնարավոր չէ յուրացնել որևէ լեզվի դարձվածքային միավորները՝ առանց խորասուզվելու տվյալ լեզվի իմաստային, դարձվածքային-իմաստային դաշտերի մեջ և քայլ առա քայլ հետևողականորեն յուրացնելու դրանք: Հասկացութային մոտեցման կիրառումը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել դարձվածքային միավորների ազգամշակութային բաղադրիչը, ընդ որում ոչ միայն մտածական, այլ հուզական մակարդակներում:

Ուսուցողական նպատակներով հասկացույթների բովանդակային բնութագրերը հաշվի առնելը հիմք է ստեղծում տվյալ հասկացության կամ դարձվածքային միավորի դարձվածքային-իմաստարանական դաշտը յուրացնելու համար՝ միաժամանակ բացահայտելով տվյալ լեզվի ազգամշակութային ինքնատիպությունը:

Հասկացութային մոտեցման կիրառումը հնարավորություն է ընձեռում բարձր լեզվաբանական ռեֆերատիվ մակարդակում առանձնացնել ուսումնասիրով հասկացույթի միջուկը, մերձակա և հեռակա գործառդաշտական գոտիները: Նշված գոտիներում դիտարկելով դարձվածքային միավորները՝ հնարավոր է դառնում ոչ միայն առանձնացնել դարձվածքային սերտաճումները,

միահյուսումները և բառակապակցությունները, այլև ենթարկել դրանք որոշակի փոփոխությունների:

Անձնակողմնորշչիչ տեխնոլոգիաներն արդյունավետ է կիրառել հատկապես ուսումնասիրվող հասկացույթի հեռակա զուգորդական գոտում, քանի որ այնտեղ պայմանական է դառնում դարձվածքային բառակապակցությունների կառուցվածքային կայունությունը: Կիրառելով դարձվածքային սերտաճումները և միավորումները, հաշվի առնելով խնդրի առարկա հասկացությունները մերձակա գոտում, հնարավոր է դառնում մոդելավորել տարբեր իրական խոսքային իրադրություններ:

Նպատակահարմար է դիտարկել դարձվածքային միավորների ուսուցման հիմնախնդիրը, դրանց հաղորդակցական, մնեմոտեխնիկական, ճանաչողական, քննադատական մտածողության զարգացման գործառույթների տեսանկյունից, որոնք ներկայացնում են դարձվածքային միավորների ազգամշակութային բաղադրիչի որոշակի հայեցակերպ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինտեսիվնալ /լատ. *intentio* — ինտեսիվություն, լարվածություն, ջանք/ — իմաստաբանության եզրույթ, որը նշանակում է հասկացության բովանդակություն: Եթե ինտեսիվնալը ներկայացնում է իմաստային հատկանիշների բազմություն, որը մտնում է բառային նշանակության միջուկի մեջ, ապա իմալիկացիոնալը ներկայացնում է իմաստային հատկանիշների մերձակա գոտին, որը ընդգրկում է այդ միջուկը կամ շրջապատում է այն /Նիկիտին, 1983: 18/:
2. Լեզվաբանության մեջ իմալիկացիոնալը մեկնաբանվում է որպես զուգորդական դաշտ, ի հակադրություն ինտեսիվնալի, որը կազմում է հասկացույթի միջուկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բերիքյան Պ. Ս. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., Լույս, 1973.
2. Սուրբիասյան Ս. Մ., Գալստյան Ս. Ա. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 1975.
3. Агафонова Л. И. Некоторые вопросы использования корпусных технологий как фактора повышения качества обучения иностранным языкам // *Известия Российского государственного педагогического университета имени А.И. Герцена*, № 87, 2009.
4. Алефиренко Н. Ф. Спорные проблемы семантики: монография. М.: Гнозис, 2005.

5. Ангелова М. М. «Концепт» в современной лингвокультурологии // *Актуальные проблемы английской лингвистики и лингводидактики*. Сборник научных трудов. Выпуск 3. М., 2004.
6. Бабушкин А. П. Типы концептов в лексико-фразеологической семантике языка. Воронеж, 1996.
7. Базарова Л. В. Конструктивный анализ фразеосемантических полей на материале фразеологических единиц, репрезентирующих концепт 'бог' в английском, русском, татарском и турецком языках // *Вестник Челябинского государственного университета*, № 20, 2011.
8. Виноградов В. С. Лексикология испанского языка. М., 2003.
9. Брагина Н. Г. Язык межкультурного общения: теоретическое обоснование // *Языки и культуры народов мира в лингводидактической парадигме (Лемпертовские чтения – IX)*. Сборник статей по материалам Международного научно-методического симпозиума «Языки и культуры народов мира в лингводидактической парадигме» (Пятигорск, 30-31 мая 2007г.). Пятигорск: ПГЛУ, 2007.
10. Красавский Н. А. Концепт “Zorn” в пословично-поговорочном фонде немецкого языка // *Теоретическая и прикладная лингвистика. Выпуск 2: Язык и социальная среда*. Воронеж. Изд-во ВГТУ, 2000. С. 78-89 // eidos.rsl.ru.
11. Красавский Н. А. Эмоциональные концепты в немецкой и русской лингвокультурах. Волгоград, 2001.
12. Лихачев Д. С. Логический анализ языка. Культурные концепты. М., 1991.
13. Ляпин С. Х. Концептология: к становлению подхода // *Концепты*. Вып. 1. Архангельск, 1997.
14. Никитин М. В. Лексическое значение слова. Структура и комбинаторика. М.: Высшая школа, 1983.
15. Степанов Ю. С. Константы. Словарь русской культуры. Опыт исследования. М., 1997.
16. Телия В. Н. Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты. М., 1996.
17. Титаренко Н. В. Функции национально-культурного компонента фразеологического значения при образовании межъязыковых параллелей // *Известия*, выпуск № 2, 2007.

Л. АРСЕНИЯН – Национально-культурный аспект обучения фразеологических единиц испанского языка в языковом вузе. – В статье рассматривается проблема обучения фразеологических единиц испанского языка в языковом вузе с точки зрения концептуального или когнитивного подхода. Определены понятия «фразеологическая единица», «концепт», «интенсионал», «импликационал» и т.д. В общих чертах представлен национально-культурный компонент фразеологических единиц, который приобретает новые содержательные характеристики в ближайших и отдаленных ассоциативных зонах. Выделяются основные функции фразеологических единиц, используемых в учебных целях.

Ключевые слова: фразеологическая единица, национально-культурный компонент, концепт, коммуникативная функция, социально-лингвистическая компетенция, фразеологическое сращение, денотативный, коннотативный, ментальный мир, лингвокультурная конструкция, фразеологическое семантическое поле

L. ARSENYAN – National-Cultural Aspect of Learning Spanish Phraseological Units in a Linguistic University. – The paper studies the problem of learning Spanish phraseological units in higher linguistic university in terms of conceptual or cognitive approach. It defines such notions as “phraseological unit”, “concept”, “intensional”, “implicature”, etc. In general, it represents the cultural component of phraseological units, that acquires new content features in the nearest and remote areas of associative zones and distinguishes the basic functions of phraseological units used for learning/teaching purposes.

Key words: phraseological unit, cultural component, concept, communicative function, socio-linguistic competence, phraseological fusion, denotational, connotational, the mental world, linguo-cultural construct, phraseological-semantic field

ՀԱՍՄԻԿ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՀԱՌՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԴԵՐԸ ԻՍՊԱՆԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ
ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ**

Սույն հոդվածում քննվում է իսպաներենի դասավանդման գործում հաղորդակցական մեթոդի դերը, որի լայն կիրառումը կապված է նաև լեզվական տարրեր գիտակարգերում տեղի ունեցած էական փոփոխությունների հետ, որտեղ լեզվի՝ որպես կանոնների համակարգի ընկալումից անցում է կատարվել դեպի նոր՝ լեզվի՝ որպես հաղորդակցական համակարգի ընկալում՝ կարևորելով լեզվի գործառական և հաղորդակցական հայեցակերպերը։ Հոդվածում քննվում են իսպանական իրականության մեջ հաղորդակցական մեթոդի հիման վրա ստեղծված տարրեր դասագրեր՝ հասուապես կարևորելով հաղորդակցական-քերականական մեթոդաբանության դերը իսպաներենի՝ որպես օտար լեզվի ուսուցման համար նախատեսված դասագրերի մշակման գործում։

Բանալի բառեր. հաղորդակցական մեթոդ, հաղորդակցական իրակելություն, իրադրություն, դասագիրք, դասավանդում առաջադրանքների միջոցով, հաղորդակցական գործընթացներ, քերականական և գործառական մեթոդաբանություն

Օտար լեզուների դասավանդման գործընթացում հաղորդակցական մեթոդի կիրառումը նոր մեթոդական մոտեցում է, որը կապված է վերջին տարիներին լեզվական տարրեր գիտակարգերի բուռն զարգացման հետ, որտեղ լեզվի՝ որպես քերականական կանոնների և բառային միավորների համակարգի ընկալումից անցում է կատարվել դեպի նոր՝ լեզվի՝ որպես հաղորդակցական համակարգի ընկալում՝ կարևորելով լեզվի գործառական և հաղորդակցական հայեցակերպերը։ Այս պարագայում օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակը ոչ միայն լեզվական, այլ առավելապես հաղորդակցական իրազեկության զարգացումն է։ ՈՒսումնառության/ուսուցման այս նոր մոտեցումը արտացոլում է նաև վերջին տարիներին տարրեր գիտակարգերի՝ հատկապես հանրակեզմականության, գործառական լեզվաբանության, գործարանական լեզվաբանության, հոգելեզվաբանության, ճանաչողական հոգեբանության ձեռքբերումները։ Այս տեսանկյունից մեծ կարևորություն են ձեռք բերում ուսուցման բովանդակությունը, սովորողի և դասավանդողի դերը, ուսումնական նյութերը, դասավանդման պրոցեսում օգտագործվող հնարներն ու միջոցները, գործարանական ներուժ ունեցող բառապաշտի ուսուցումը, իսկ դասավանդման հիմնական նպատակը սովորողի հաղորդակցական նպատակների իրագործումն է՝ պայմանավորված որոշակի անհրաժեշտություններով։ Հաղորդակցական մեթոդը ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները։

1. Իրադրություններ, որտեղ գործածվում է լեզուն (օրինակ՝ հիվանդանոց):

2. Գործառույթներ, որոնք համապատասխանում են լեզվի գործածման հիմնական նպատակներին (այցելել բժշկին, խնդրել բուժօգնություն, գրել դեղատոմս, խորհուրդ տալ և այլն) և արտահայտում են խոսողի հաղորդակցական այս կամ այն դիտավորությունը:

3. Նշված նպատակներն իրագործելու համար անհրաժեշտ գաղափարներ (տվյալ առարկաներին, գործողություններին, հատկանիշներին առնչվող բառապաշտ): Վերոհիշյալ իրադրության դեպքում խոսքը վերաբերում է բժշկական մասնագիտական բառապաշտիքն, քաղաքավարության տարրական նորմերին, ողջույնի խորերին, տեղեկատվություն ստանալու միջոցներին և այլն:

4. Լեզվական այն ձևերը (արտահայտություններ, կլիշեններ, շարահյուսական կառույցներ և այլն), որոնք հատուկ են տվյալ իրադրության մեջ օգտագործվող լեզվական նշակարգին:

Հաղորդակցական մերորդի կարևորագույն հասկացություններից է հաղորդակցական իրազեկությունը: Հայտնի լեզվաբան Հայմսը /Hymes, 1972: 269-293/ իր աշխատություններում առաջին անգամ մանրամասն ներկայացրել է հաղորդակցական իրազեկության զաղափարը, ըստ որի սովորող պետք է իմանա ի՞նչ ասել, ու մ ասել, ինչպես ս ասել հարկ եղած ձևով հաղորդակցական տվյալ իրադրության մեջ: Իրազեկության նման ընկալումը շատ ավելի լայն է, քան Ն. Խոնսկու քերականական իրազեկությունը, որը վերաբերում է վերացական քերականական գիտելիքներին: Այսօր ենթով «Լեզուների իմացության/իրազեկության համաելքոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում» աշխատության սկզբունքներից՝ հաղորդակցական իրազեկությունը դիտարկվում է որպես մի քանի քաղադրիչների ամբողջություն՝ լեզվական, հանրալեզվական և գործարանական: Լեզվական իրազեկությունը ներառում է գիտելիքներ և կարողություններ բառապաշտիք, հնչյունարանության և շարահյուսության, ինչպես նաև լեզվի՝ որպես համակարգի այլ հայեցակերպերի վերաբերյալ: Հանրալեզվական իրազեկությունը վերաբերում է լեզվի կիրառության սոցիալ-մշակութային պայմաններին, մինչդեռ գործարանական իրազեկությունը առնչվում է լեզվական միջոցների գործառական կիրառմանը /MCER, 2002: 24-25/:

Ենթով Եվրոխորհրդի լեզվաբաղադրականության հիմնադրույթներից՝ Դ. Ա. Վիլկինսը 1972թ. առաջադրել է գաղափարական-գործառական ծրագրագործման գաղափարը, որը հիմնվում է սովորողի հաղորդակցական դիտարկության վերլուծության վրա: Նա տարբերակում է 2 տեսակի կարգեր. գաղափարական կարգեր, որոնք իմաստային- քերականական բնույթ ունեն (խոսքն այն հասկացությունների մասին է, որ մենք արտահայտում ենք լեզվի միջոցով՝ ժամանակ, տեղ, հաջորդականություն, քանակ և այլն) և գործառական կարգեր, որոնք գործարանական բնույթի են և առնչվում են խոսողի դիտավորությանը: Տվյալ դեպքում խոսքը հաղորդակցական գործառույթների

մասին է, ինչպես օրինակ, ներկայանալ, ներողություն խնդրել, խորհուրդ հարցնել, արտահայտել իր ուրախությունը, դժգոհությունը և այլն /Wilkins, 1972; 1976/: Ավելի ուշ՝ 1975թ., Վիլկինսի առաջադրած գաղափարական գործառական ծրագրավորման տեսական կաղապարը հիմք հանդիսացավ մշակելու Un Nivel Umbral (Ընմային մակարդակ) փաստաթղթի դրույթները, որը մեծ նշանակություն ունեցավ հաղորդակցական մեթոդի վրա հիմնված եվրոպական տարրեր ծրագրերի և դասագրքերի ստեղծման գործում:

Գաղափարական-գործառական կաղապարի վրա հիմնված իսպաներեն լեզվի (օտարերկրացիների համար նախատեսված) առաջին դասագիրքը հրատարակվել է 1982թ.: Դա Ռ. և Մ. Սանչեսի «Entre nosotros» դասագիրքն էր, որը սակայն լիովին չէր ձերբագատվել ավանդական մեթոդաբանությունից և աչքի չէր ընկնում իր նորարարությամբ: Վիլկինսի առաջադրած կաղապարի վրա իրավես հիմնված իսպանական առաջին դասագիրքը՝ «Para empezar: Curso comunicativo de español para extranjeros», հրատարակվել է 1984թ. Pragma խմբի կողմից: Ավելի ուշ՝ 1986 թ., նոյն խմբի կողմից հրատարակվում է հայտնի «Esto funciona» դասագիրքը, իսկ Avance խմբի կողմից՝ Antena-ն:

Վերջին տարիներին հաղորդակցական մեթոդաբանության կարևոր ներդրումներից է համարվում օտար լեզուների դասավանդման պրոցեսում միջմշակութային իրազեկության զարգացումը: Սա ենթադրում է նաև այլ մշակույթների նկատմամբ հետաքրքրության խթանում, մշակութային տարրերությունների ճիշտ ընկալում, փոխրմբուման, այլ մշակույթների նկատմամբ հարգանքի և հանդուժողականության մթնոլորտի ստեղծում:

Հաղորդակցական մեթոդի վրա հիմնված դասավանդման պրոցեսում կարևոր նշանակություն ունի նաև հուզական հայեցակերպը: Այս առումով առանձնանում է Մ. Սեռոլասայի, Օ. Սեռոլասայի և Բ. Լյովետի Planeta (1998) հաղորդակցական դասընթացը՝ 4 մակարդակներով: Գրքի հեղինակները՝ Բ. Լյովետը և Մ. Սեռոլասան, նշում են, որ սովորողը զգացական էակ է, հետևաբար և դասավանդման ժամանակ հաղորդակցական դիրքորոշումը պետք է միավորել հուզական և հոգեբանական գործոնների հետ՝ ուսումնառության օպտիմալացումը ապահովելու նպատակով /Llovet, Cerrolaza, 2010: 127/: Դասավանդման ընթացքում անհրաժեշտ է տվյալ անձին ընկալել իր հուզական ողջ բնութագրով՝ խթանելով նրա ինքնազմնահատականը և կարևորելով ուսումնառության նպաստավոր մթնոլորտը, ինչը խրախուսում և մոտիվացնում է ն ուսանողին, ն դասախոսին:

Հաղորդակցությունը երկու գրուցակիցների միջև իրագործվող հաղորդակցական ակտ է, որն ունի կոնկրետ նպատակադրում, հետևաբար և անհրաժեշտ է, որ հաղորդակցական ակտի մասնակիցները մասնակցեն իրական առաջադրանքների կատարմանը և օգտագործեն իրենց լեզվական գիտելիքները (բառապաշար, քերականական, հնչյունական կանոններ և այլն) ասույթի խմաստքը «քանակցելու» նպատակով: Իրական հաղորդակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է առաջադրանքները կազմելիս հաշվի առնել հետևյալ սկզբունքները.

1. Հաղորդակցական բացեր. գրուցակիցների միջև առկա է իրական հաղորդակցություն, քանի որ նրանցից յուրաքանչյուրը ցանկանում է ձեռք բերել այն տեղեկատվությունը, որը հայտնի է միայն իր գրուցակցին: Եթե նա ձեռք չի բերում այդ տեղեկատվությունը, ապա չի կատարում իր առաջադրանքը և չի կարող կարծիք հայտնել քննարկվող խնդրի շուրջ:

2. Արտահայտության ազատություն. խոսողը ազատ է բովանդակության, լեզվական ձևի, տոնի, խոսքի պահի և այլնի ընտրության հարցում:

3. Զրուցակցի խոսքային և ոչ խոսքային հակազդեցությունները հաղորդակցական դիտավորությունները իրագործելու ցուցիչներ են:

Հաղորդակցական դասավանդումը առաջադրանքների միջոցով, որտեղ առավելապես կարևորվում է լսարանում իրական հաղորդակցական գործընթացների ստեղծումն ու զարգացումը, այսօր օտար լեզուների դասավանդման կարևոր ձեռքբերումներից է: Այս դեպքում յուրաքանչյուր դաս (դասագրքի միավոր) ծրագրավորվում է որևէ վերջնական առաջադրանքի շուրջ, օրինակ՝ գրել հանրաճանաչ որևէ գրողի կամ երաժշտի կենսագրությունը, պատրաստել խավանական ազգային որևէ ճաշատեսակ, վերջերս տեղի ունեցած քաղաքական կամ մշակութային որևէ իրադարձության վերաբերյալ գրել կարծիք և այլն: Լսարանում նման աշխատառի վրա հիմնված դասագրքերից են Մ.Պերիսի և Ս. Բառվենասի Gente-ն (1997), Մ. Սեռոլասայի, Օ. Սեռոլասայի և Ք. Լյովետի Planeta-ն (1999), Խ. Կորպասի, Ա. Գարմենդիայի և Կ. Սորիանոյի Aula-ն (2008): Նշված դասագրքերում ներառված նյութերը կարելի է վերափոխել և ստեղծագործարար զարգացնել՝ հաշվի առնելով յուրաքանչյուր լսարանի հետաքրքրությունները, առանձնահատկությունները, ինչպես նաև ուսանողների մոտիվացիան: Եթե քննենք Gente-ի վերջնական առաջադրանքները, ապա ակնհայտ է, որ ենթադրելով ուսանողների պարտադիր ներգրավումը դասապրոցեսում, վերջիններս մեծ հնարավորություններ են ընձեռում հաղորդակցական հմտությունների զարգացման համար:

Այդուհանդերձ, բացառապես հաղորդակցական մեթոդով դասավանդելը, որը հիմնվում է բանավոր խոսքի վրա, դարձել է տարրեր քննադատությունների առարկա: Այդ դեպքում հաշվի չեն առնվում հաղորդակցության համար անհրաժեշտ բոլոր լեզվական հմտությունները, հաղորդակցական ակտը գերազանցապես հիմնվում է խոսակցական լեզվի վրա՝ բավարար չափով հաշվի չառնելով սոցիալ-մշակութային համատեքստը, հաղորդակցության կոնկրետ նպատակները և այլն: Կարևորելով լեզվի գործածությունը զուտ հաղորդակցական նպատակներով՝ քննականարար թերագնահատվում է ասույթի քերականական բովանդակությունը, և այդ պատճառով տարրեր մասնագետների մոտ կասկածներ են առաջանում, թե արդյոք այս մոտեցումը կիրառելի է դասականդման բոլոր մակարդակների և տարիքային բոլոր խմբերի նկատմամբ, արդյոք այս մեթոդով կարող են աշխատել այն դասախոսները, որոնց մայրենի լեզուն ուսուցանվող լեզուն չէ, արդյոք կարելի է գնահատել հաղորդակցական իրազեկությունը և այլն /Melero Abadía, 2000: 104-105/: Իհարկե, դասավանդման գործընթացում մեծ դեր են խաղում նաև

այլ մեթոդներ՝ նկատի ունենալով, որ յուրաքանչյուր մեթոդի գործածությունը խնդնանպատակ չէ, այլ իրականում այն միջոց է կամ գործիք կոնկրետ նպատակներ իրագործելու համար: Առաջադրանքների միջոցով հաղորդականական դասավանդումը չի բացառում քերականական տարրեր կանոնների և երևույթների քննություն: Խնդիրը պարզապես նրանում է, թե ինչպես դասավանդել քերականություն: Ի վերջո, դասավանդման առանցքն այստեղ վերջնական առաջադրանքն է, որն էլ մատնացույց է անում, թե ինչ պետք է խնանան ուսանողները այն կատարելու համար (ասույթի հնչյունական, ձևաբանական, իմաստային, շարահյուսական, գործարանական, գործառական և այլ բաղադրիչներ):

Խսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման գործում հաղորդական և ձևական-ավանդական մոտեցումները ներդաշնակ ձևով միահյուսելը մարտահրավերներ է ներկայացնում և տեսական, և գործնական առումով: Վերջին տարիներին հրատարակված խսպաներենի՝ որպես օտար լեզվի դասագրքերում ակնհայտ է հաղորդակցական դասավանդման սկզբունքների (լեզուն որպես հաղորդակցության միջոց) միահյուսումը քերականական-բառային կառույցների ուսուցման հետ (լեզուն որպես համակարգ) տարաբնույթ վարժությունների միջոցով /Melero Abadía, 2004: 710/: Լեզվի՝ որպես հաղորդակցական գործիքի և համակարգի միաժամանակյա ընկալումը հիմք է հանդիսացել «քերականական և գործառական մեթոդաբանության» կամ «հաղորդակցական և քերականական մոտեցման» հիման վրա վերջին տարիներին Խսպանիայում հրատարակված որոշ դասագրքերի ստեղծման համար, որոնց շարքում առանձնանում են Cumbre-ն, Sueña-ն, Método de español para extranjeros, Español sin fronteras և այլ դասագրքեր: Վերջին դասագրքի հեղինակները՝ Խ. Սանչեսը, Կ. Սորենոն և Խ. Սանտոսը, ելնելով լեզվի երկակի՝ որպես համակարգի և հաղորդակցության գործիքի դիտարկումից, իրենց մեթոդը բնորոշում են որպես «միաժամանակ հաղորդակցական և քերականական», որպես դասական, բայց միաժամանակ նորացված ու արդիականացված, իսկ դասագիրքը հիմնվում է հավասարակշռված մեթոդաբանության վրա՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողի լեզվական և հաղորդակցական կարողությունները: Խսկ ահա Sueña 2 (Libro del alumno) դասագրքի հեղինակները նախարարում նշում են, որ գրի նպատակն է, որ ուսանողները ձեռք բերեն լեզվական միջին իրազեկություն և կարողանան հաղորդակցվել առօրյա բարդ իրադրություններում:

Վերոհիշյալ բոլոր դասագրքերում քերականական նյութն ուսուցանվում է կոնկրետ հաղորդակցական իրադրություններում: Թեև գործնական կիրառության ժամանակ ի հայտ են գալիս այս դասագրքերի միջև առկա մի շարք տարրերություններ, այնուամենայնիվ, կարելի է փաստել, որ քերականական նյութն ամրապնդող ավանդական բնույթի վարժությունները բոլոր դասագրքերում միահյուսված են հաղորդակցական բնույթի վարժությունների հետ՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողների հաղորդակցական կարողությունները: Հաղորդակցական քերականությունը դասագրքերում ներա-

ոելիս հաշվի է առնվում համատեքստը, սովորողների տեղեկատվական պաշարը, ինչպես նաև լեզվի գործածության «արտահայտչական էֆեկտները», քանի որ լեզուն սույ քերականական համակարգ չէ: Եվ որպես Հորացիոսի հնագույն պատվիրանի՝ delectare et prodesse նորագույն տարրերակ՝ հաղորդակցական մեթոդը փորձում է դասավանդումը կազմակերպել «հաճույք պատճառելով» կամ էլ այս դեպքում «ցույց տալով մեզ լեզվի առավել պարզ և նվազ քերականական դեմքը» /Gutierrez Rivero, 2004: 449/:

Որոշ մասնագետների (Գուտիերես Ուիվեռ և այլք) կարծիքով Planeta-ն առավելապես օգտագործվում է խապաներեն լեզվի ինտենսիվ կուրսերի համար: Այն, ինչպես և շատ այլ դասագրքեր, հիմնական դասագրքից բացի ներառում է նաև ուղեցույց դասախոսի համար և քերականական ձեռնարկ, որտեղ քերականությունը ներկայացված է ավելի ավանդական ձևով: Prisma-ն հրատարակվել է Edinumexen հրատարակչության կողմից 2002թ.-ին, այն համապատասխանում է Լեզուների հմացության/իրազեկության համաեվրոպական համակարգի, Սերվանտեսի հնատիտուտի Plan Curricular-ի սկզբունքներին և բաժանված է 6 մակարդակների՝ ըստ լեզուների իմացության ընդհանուր սանդղակի: Այս դասագրքում քերականությանն ավելի մեծ տեղ է տրվում, քան Planeta և Gente դասագրքերում: Ներածության մեջ գրքի հեղինակները նշում են, որ Prisma-ն համարդական մեթոդ է, քանի որ հաղորդակցական հնարները նրանում միավորվում են այլ՝ ավելի համակարգային մեթոդների հետ, սակայն միշտ հաղորդակցական տեսանկյունից: Այդուհանդերձ, նշանակած դասագրքերում ավելի շատ կարենրվում է ոչ թե քերականությունը, այլ հաղորդակցական նպատակադրումները:

Օտար լեզուների դասավանդման գործում մեծ դեր է խաղում նաև հաղորդակցական-ճանաչողական մոտեցումը, որի հիմնական նպատակը խոսքային հաղորդակցության ուսուցումն է, օտարալեզու խոսքի բառաթերականական հիմքերի զարգացումն ու կատարելագործումը, որը ենթադրում է լեզվական նյութի ճիշտ ընտրություն և համակարգում, ինչպես նաև «աշխարհի պատկերի» վերաբերյալ տարրեր լեզվամշակութային համայնքների ներկայացուցիչների հենքային գիտելիքների ընդլայնում: Տվյալ դեպքում, իրադրային համատեքստից բացի, կարենրվում են նաև հաղորդակիցների մտավոր, հոգեբանական, մշակութային և այլ առանձնահատկություններ:

Այսօր լեզուների դասավանդման գործընթացում ակնհայտ են նորարարական մոտեցումները: Առանձնահատուկ նշանակություն են ձեռք քերել հաղորդակցական իրազեկությունն ապահովող գործընթացները, փոխներգործուն ուսուցման, սովորողների հենքային գիտելիքների զարգացման և այլ խնդիրներ: Բնութագրելով հաղորդակցական մեթոդի զարգացման ճանապարհը՝ խապանացի հայտնի մեթոդիստ Պ. Մելերո Աբադիան նշում է, որ եթե ավելի վաղ մեծ ուշադրություն էր դարձվում, թե ինչ պետք է դասավանդել (զարդարենք և գործառույթներ), այնուհետև՝ ինչպես դասավանդել (հաղորդակցական մեթոդաբանություն), ապա ավելի ուշ կարենրվեց, թե ինչպես

զարգացնել հաղորդակցական գործնթացները լսարանում (դասավանդում առաջադրանքների միջոցով) /Melero Abadía, 2004: 711/: Այս գործնթացում մեծ դեր ունեն նաև «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում» հիմնարար աշխատությունը, ինչպես նաև Սերվանտեսի ինստիտուտի կողից առաջարկված Plan Curricular-ը, որտեղ առաջադրվում են ընդհանուր շափորշչներ ուսումնական ծրագրերի մշակման, դասագրքերի ստեղծման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Álvarez Martínez M. Á. y otros. Sueña, Madrid: Anaya, 2000.
2. Cerrolaza M., Cerrolaza Ó y Llovet B. Planeta E/LE, Madrid: Edelsa Grupo Didascalia, 1999.
3. Corpas J., Garmendia A., Soriano C. Aula Internacional. Barcelona: Difusión, S.L., 2008.
4. Equipo Prisma, Prisma. Método de Español para Extranjeros, Madrid: Edinumen, 2002.
5. Gutiérrez Rivero A. La gramática en tres manuales de ELE actuales // XV Congreso Internacional de la ASELE, *Las Gramáticas y los Diccionarios en la Enseñanza del Español como Segunda Lengua: Deseo y Realidad*, Sevilla, 2004.
6. Hymes D. On communicative competence // J. B. Pride y J. Holmes (eds. *Sociolinguistics*). Hardmondsworth: Penguin, 1972.
7. Instituto Cervantes: La enseñanza del español como lengua extranjera. Plan curricular del Instituto Cervantes, Madrid: Instituto Cervantes, 1994.
8. Llovet B., Cerrolaza M. Una visión humanista del aprendizaje /enseñanza de E/LE: valores y principios metodológicos // *Didáctica del español como lengua extranjera* (Coordinación: L. Miquel y N. Sans), Madrid: Fundación Actilibre, 2010, 10.
9. Marco común europeo de referencia para las lenguas: aprendizaje, enseñanza, evaluación, Madrid. Secretaría General Técnica del MECD y Grupo Anaya, traducido y adaptado por el Instituto Cervantes, 2002.
10. Martín Peris E. y Sans Baulenas N. Gente. Curso comunicativo basado en el enfoque por tareas. Barcelona: Difusión, 1997.
11. Melero Abadía P. De los programas nacionales-funcionales a la enseñanza comunicativa // J. Sánchez e I. Santos (eds.), *Vademécum para la formación de profesores. Enseñar español como segunda lengua (L2)/lengua extranjera (LE)*, Madrid: SGEL, 2004.
12. Melero Abadía P. Métodos y enfoques en la enseñanza/aprendizaje del español como lengua extranjera. Madrid: Edelsa, 2000.

13. Sánchez J., Moreno C. y Santos I. *Español sin fronteras*. Madrid: SGEL, 2003.
14. Wilkins D. *Linguistics in language teaching*. London: Arnold, 1972.
15. Wilkins D. *Notional Syllabuses*. Oxford: Oxford University Press, 1976.

А. БАГДАСАРЯН – Роль коммуникативного метода в преподавании испанского языка как иностранного. – В статье обсуждается роль коммуникативной методики в преподавании испанского языка, широкое применение которой связано также с существенными изменениями, имеющими место в разных языковых дисциплинах. В последних восприятие языка как системы правил перешло к восприятию языка как коммуникативной системы с учетом значимости функциональных и коммуникативных аспектов. Рассматриваются разные учебники, составленные по коммуникативной методике в испанской действительности, в частности, принимая во внимание существенную значимость коммуникативно-грамматической методологии для составления учебников испанского как иностранного языка.

Ключевые слова: коммуникативная методика, коммуникативная компетенция, ситуация, учебник, преподавание с использованием упражнений, коммуникативные процессы, грамматическая и функциональная методология

H. BAGHDASARYAN – The Role of Communicative Method in Teaching Spanish as a Foreign Language. – The paper deals with the communicative method in teaching Spanish. The extensive use of the method is connected with the significant changes which took place in different linguistic disciplines, whereby the initial perception of language as a system of rules was gradually replaced by language being perceived as a communicative system, attaching importance to its functional and communicative aspects. The research is based on the study of various Spanish textbooks which, being based on the communicative method, highlights the role of the communicative-grammatical methodology in developing textbooks for teaching Spanish as a foreign language.

Key words: communicative method, communicative competence, situation, textbook, teaching exercises, communicative processes, grammatical and functional methodology

Լիանա ԲԱՐՄԵԴՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՋ ԵՐԱԺԾՏՈՒԹՅՈՒՆՆ
ԻՆՏԵԳՐԵԼՈՒ ՈՐՈՇ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ուսուցման գործընթացը գլորալ տեղեկատվական հասարակության մեջ պահանջում է ավելի ստեղծագործական մոտեցում կրթության նկատմամբ: Հողվածում ուսումնասիրվում է երաժշտության ազդեցությունն անհատի զգացմունքների վրա, դիտարկվում են երաժշտության կիրառության օգուտը թժկության, կրթության և մասնավորապես օտար լեզվի դասավանդման մեջ: Համատեղելով երգն ու երաժշտությունը օտար լեզվի դասավանդման հետ կարելի է քափանցել ենթագիտակցության խորքերը, ոգևորել և հետաքրքրություն առաջացնել մեծ դասականների, նրանց մշակույթի, պատմության, արվեստի նկատմամբ, նպաստել անձի լիարժեք զարգացմանը, ձևավորել ստեղծագործական մտածողություն և ճաշակ:

Քանակի բառեր. Երգ և երաժշտություն, անգլերեն լեզվի դասավանդում, դասական երաժշտություն, բաց դասերի շարժում, երաժշտական թերապիա, տրամադրության երաժշտություն

Անգլերեն լեզվի դասավանդումը իմ մասնագիտությունն է և իմ կյանքի անբաժանելի մասը վերջին տասնինակ տարիների ընթացքում: Գիտամեթոդական աշխատանքների ուսումնասիրության բնագավառում հետաքրքրվել եմ լեզվաբանության և լեզվի դասավանդման մի շարք բնագավառներով, հիմնականում հեռուստատեսային գովազդների լեզվի ուսումնասիրությամբ, գործարար անգլերենի դասավանդման հետ առնչվող հիմնահարցերով: Մասնագիտական որոնումներին զուգահեռ, ինչպես ցանկացած անհատ, հետապնդում եմ մի շարք հետաքրքրություններ և նախասիրություններ, որոնցից կարևորագույնը, թերևս, երաժշտությունն է: Ավարտել եմ յոթնամյա երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը, երգել եմ դպրոցի երգչախմբում և հստակ գիտակցում եմ, թե որքան նշանակալից է եղել երաժշտական կրթության դերն ու ազդեցությունը իմ՝ որպես անհատի կայացման, զարգացման և հետազում ճաշակի ձևավորման գործում: Վստահ եմ, նմանապես, լեզուները, երաժշտությունն ու կրթությունը կազմում են թե առանձին անհատի, և թե հավաքական մարդկային պատմության, մշակության կյանքի կարևորագույն մասը: Երաժշտությունն ու երգերը մեզ ուղեկցում են ողջ կյանքի ընթացքում, տարբեր իրավիճակներում, ուրախ և տիսուր պահերին: Դրանք հաճույքի, զվարճանքի և ոգեշնչման մեծ աղբյուր են, հաղորդակցման ու շփման հզորագույն միջոց:

20-րդ դարի երկրորդ կեսից երաժշտական ստեղծագործությունները դարձան մուլտֆիլմերի անբաժանելի մասը: Երիտասարդներից շատերը դասականների որոշ ստեղծագործություններ ճանաչում են հենց խաղար-

կային ֆիլմերի շնորհիվ: Օրինակ՝ Դիսնեյի, Ուորներ Բրուսի և ՍՉՈՒ հայտնի ստուդիաների մուլտֆիլմերում հնչում են Լիստի, Բեթհովենի, Բախի, Բրահմսի, Շոպենի, Մոցարտի և այլ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Շատ անգամ երիտասարդները ճանաչում են դրանք, սակայն ծանրը չեն ստեղծագործության անվանն ու հեղինակին: Բազմաթիվ ուսանողների հետ շփման ընթացքում պարզեցի, որ երիտասարդների մեծ մասը հիմնականում նախընտրում է ժամանակակից երաժշտությունը դասական երաժշտությանը: Նման կարծիքը հիմնավորելու համար անցկացրեցի մի փոքրածավալ հարցում հարյուր ուսանողների շրջանակում՝ պարզելու երիտասարդների երաժշտական նախասիրությունները: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ ուսանողների մեծ մասը ամեն օր լսում է երաժշտություն, հատկապես դաս սովորելիս: Նրանցից իննառուն նշեցին, որ լսում են երաժշտություն թե՝ ուրախ, և թե՝ տխուր պահերին: Ինչ վերաբերում է երաժշտության ոճին, հարցաթերթիկը լրացրած հարյուր ուսանողներից միայն տասնինգն էին նշել, որ լսում են դասական երժշտություն: Վերոհիշյալ գործոններն ել պատճառ հանդիսացան մի նոր գաղափարի և հետազոտության համար:

Սույն հոդվածում քննարկվելու է երաժշտության հզոր ազդեցությունն անհատի վրա, վերջինիս բուժիչ հատկությունները: Այնուհետև կփորձեմ հիմնավորել, թե ինչու այն պետք է և ինչպես կարող է կիրառվել օտար լեզվի դասավանդման մեջ, կամ լեզվի դասավանդման հետ միավորված, ինչ օգուտներ և արդյունքներ կարող է տալ լեզվի և երաժշտության համակցված մատուցումը: Թեման ուսումնասիրված է տարբեր բնագավառների մասնագետների և հետազոտողների կողմից Զ. Շեն, Վ. Ռոստվա, Ա. Թսե, Թ. Միքի: Եթե նշված աշխատությունների ուշադրության առանցքում հիմնականում գտնվում են երգերը, ապա սույն հոդվածի ուշադրության կենտրոնում դասական երաժշտությունն է: Հետազոտության գործնական արդյունքները կամփոփեն մեթոդական-ուսումնական ձեռնարկում՝ նվիրված դասական երժշտության և օտար լեզվի փոխարժեակցության վրա հիմնված դասավանդմանը:

Եթե լեզուն մարդկային հաղորդակցության, որոշակի հասարակության, մարդկանց խմբի մեջ մտքերի փոխանակման և փոխըմբռնման հիմնական միջոցն է, ապա երաժշտությունը վերազգային լեզու է, որը բոլորն են հասկանում անկախ ազգային, սեռական, տարիքային պատկանելությունից: «Երաժշտությունը հաղորդակցման հզոր միջոց է, որի օգնությամբ մարդիկ փոխանցում և կիսում են հույզեր, իմաստներ, մտադրություններ և զգացմունքներ, չնայած այն տարբեր լեզուներին, որոնցով իրենք խոսում են» /Miell, 2015/: Լինելով մասնագիտությամբ բանասեր և երաժշտության մեծ սիրահար այս առնչությամբ ինձ առավել հետաքրքրում է երաժշտության դերն ու ուժը ուսուցման մեջ. ինչպես այն կարող է ուսուցման գործընթացը դարձնել առավել հետաքրքիր և գրավիչ, իսկ նյութը հեշտ հիշվող ու յուրացվող:

21-րդ դարում գլոբալացման, տեղեկատվական տեխնոլոգիաների սրբնթաց զարգացման պայմաններում փոխվում են նաև դասավանդման մեթոդները, նյութի բովանդակությունը, ուսուցիչների և ուսանողների դերերն ու

որոշ գործառույթները: Բարձր տեխնոլոգիաներն ու համացանցը մեծ հնարավորություններից և առավելություններից բացի առաջացրել են նաև նոր մարտահրավերներ: Կրոպության մեջ տեղեկատվության համատարած հասանելիության պայմաններում ավելի ու ավելի դժվար է դառնում աշակերտներին և ուսանողներին գրավելը, հետաքրքրելն ու մոտիվացնելը: Է՛լ ավելի մեծ կարևորություն են ձեռք բերում դասավանդողների և սովորողների գործնական հմտությունները, համակարգչից ու համացանցից գրագետ օգտվելու, ժամանակի ու նոր զարգացումների հետ համընթաց քայլելու կարողությունը: Եվ վերջապես, ինչ գիտելիքներ ու հմտություններ կարող են մատուցել ուսուցիչները, որոնք չեն կարող ձեռք բերել ինքնուրույն համակարգչի և համացանցի միջոցով:

Ահա այս մարտահրավերներն են, որ բելադրում են կրթական նոր հրամայականներ: Հետազոտության ընթացքում որպես օրինակ են վերցրել ֆիննական կրթական համակարգի նորարարական մոտեցումը, այն է մարդկային գործունեության տարբեր ոլորտների մասին գիտելիքների և հմտությունների դասավանդում առարկաների միավորման միջոցով: Ըստ Pearson հրատարակչական ընկերության անցկացրած համաշխարհային ամենամյա հետազոտության արդյունքների, Ֆինլանդիան իր կրթական համակարգի որակով հինգերորդ տեղում է՝ զիջելով Հարավային Կորեային, ճապոնիային, Սինգապորին և Հոնկոնգին /www.edudemic.com/learning-curve-report-education/: Հարցումը հաշվի է առնում մի շարք գործոններ և հիմնականում իիմնվում է աշխարհի ամենազարգացած վարչունիհինգ երկրների տասնինգամյա աշակերտներին տրված միջազգային ստանդարտացված թեստերի արդյունքների վրա: Ֆիննական մոդելը օրինակ է ծառայում շատ երկրների, այդ թվում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համար: Որո՞նք են դրա հաջողության բանալիները: Ֆիննական կրթական համակարգում մինչ ավագ դպրոցը չի կիրառվում թեստային համակարգ: Դասավանդումը ցածր դասարաններում իրականացվում է խաղերի միջոցով: Բոլոր դասերի միջև աշակերտներին հատկացվում է տասնինգ րոպե ընդմիջում: Իսկ ուսուցիչներին, ովքեր բարձր որակավորում (պարտադիր առնվազն մագիստրոսական աստիճան) ունեցող մասնագետներ են, տրվում է լիակատար ազատություն իրենց համապատասխան առարկայի դասավանդման մեթոդների ընտրության մեջ: Ուսուցչի մասնագիտությունը մրցակցային է, հետևաբար ուսուցիչները բարձր են վարձատրվում և ըստ գեկույցի ավելի շատ են վաստակում, քան իրենց ամերիկյան և մյուս եվրոպական գործընկերները /www.csmonitor.com/World/Global-News/2015/: Չնայած արձանագրված հաջողություններին, ֆինները աշխատում են կրոպության ոլորտի բարելավման ուղղությամբ և մշակում են նոր ծրագրեր: Այդ նորամուծություններից մեկն առավել հետաքրքրեց ինձ: Դա առարկաները միավորելու գաղափարն է, որը դեռ հետազոտման և մշակման փուլում է: Ֆինները այն անվանում են «երևույթների» կամ «իրավիճակների» դասավանդում: Օրինակ՝ աշակերտը մասնագիտական դասընթացներից կարող է ընտրել սրճարանում աշխատելը:

Նման իրավիճակում նա ստանձնում է մատուցողի կամ գանձապահի դեր և պետք է կիրառի մաքենատիկայի, մայրենի և օտար լեզվի գիտելիքների տարրեր, օգտագործի իրական կյանքին մոտ շփման, համակարգչային, տարրական հաշվապահական հմտությունները: Երեխաները դեռ հիմնական դպրոցում սովորում են, թե ինչպես պետք է օգտվել բանկային քարտերից, բանկումատից, ստեղծել ինտերնետային կայք, ձևավորել այն, առցանց գնումներ կատարել, պատվիրել ինքնարիոի տոմս, հյուրանոցային համար: Նույն մոտեցումը մենք կիրառում ենք ուսանողների հետ, օրինակ՝ գործարար անգերենի դասերի ժամանակ խնդրահարույց իրավիճակների (case studies) ուսումնասիրության, դերային քննարկումների և զանազան լուծումներ առաջարկելու միջոցով:

Առարկաների միավորումը դասավանդվող նյութի ընկալման դյուրացման նպատակով նոր չէ: Այն համարյա մեկ դարի պատմություն ունի, երբ ամերիկացի փիլիսոփա, ռեֆորմիստ Ջոն Դյուին առաջ քաշեց այն գաղափարը, որ դպրոցն ու դասավանդումը պետք է հնարավորին արտացոլեն իրական կյանքը [/www.csmonitor.com/](http://www.csmonitor.com/): Ավելի ուշ «քաց դասերի» (open classroom) շարժումը ծագել է Մեծ Բրիտանիայում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Շարժման հիմնադիրները դասավանդման ընթացքում կարևորում էին աշակերտների գործնական հմտությունները: Հիմնական նշանաբանն էր «սովորել կատարելով» (learning by doing): Նրանք գտնում էին, որ կրթության դասական մեթոդները խանգարում են երեխաների ստեղծարարությանը: Դասասենյակում ստեղծվում էին հասուլ պայմաններ, որտեղ անհատական կամ փոքր խմբերով, երեխաները առնչվում էին տարրեր առարկաների, իրերի, գրքերի հետ: Զկային խիստ ուսումնական ծրագրեր, ժամկետներ, դասասեղաններ: Մենյակները նման էին արվեստանոցների: Երեխաներից չէր պահանջվում պարտադիր նստել, նրանք ազատ տեղաշարժվում էին: Այդ ամենի հիմքում գործում էր հետևյալ սկզբունքը՝ երեխաները լավագույնս սովորում են, երբ հետաքրքրված են, ազատ են և հասկանում են ուսման մեջ իրենց գործողությունների նպատակն ու կարևորությունը [/www.educationnext.org/the-openclassroom/](http://www.educationnext.org/the-openclassroom/): Նման մոտեցումները ունեցել են և՝ աջակիցներ, և՝ ընդհիմախոսներ, սակայն ինչպես տեսնում ենք, որոշ սկզբունքներ դեռ ոչ միայն արդիական են, այլ նաև փորձարկվում են որպես նորամուծություններ լավագույն կրթական համակարգերում:

Այժմ անդրադասնանք այն հարցին թե ինչո՞ւ է անհրաժեշտ երեմն համակցել երաժշտությունն ու օտար լեզուն, ինչ առավելություններ է ընձեռում երգն ու երաժշտությունը դասավանդման մեջ, ինչպես այն կարող է օգնել սովորել և հիշել նյութը հեշտությամբ ու հաճույքով: Անգերեն լեզվի դասավանդման ընթացքում հաճախ են օգտագործվում երգեր: Թ.Մրֆին նշում է, որ երգերը օտար լեզվի դասավանդման ժամանակ կարող են մի քանի նպատակներ հետապնդել. 1) դրանք նպաստում են աշակերտների ունկնդրման հմտության զարգացմանը, ճիշտ առողջանությանը, հետևաբար բարելավում են նրանց բանավոր խոսքը, 2) կարող են օգտակար գործիք հանդիսանալ նոր

բառապաշարի, արտահայտությունների, քերականական կառույցների ձեռքբերման համար: Հստ Թ. Միքիի, երբեմն ավելի հեշտ է օտար լեզվով երգել, քան խոսել: Այնուամենայնիվ, նա կարծում է, որ դասարանում երգերի օգտագործման մեծագույն առավելությունն այն է, որ դրանք զվարճալի են: Իսկ զվարճանքն ու հաճույքը, իրենց հերթին, սովորելու և գիտելիք ձեռքբերելու կարևորագույն նախապայմաններից են /Murphy, 1992/:

Գոյություն ունի մեծածավալ հետազոտություն նվիրված նաև երաժշտության բուժիչ ազդեցությանը: Նրանցից թերևս ամենաարժեքավորներից է 1806թ. U. Սեբյուսի և Π. Վագների “On the Effects of Music in Curing and Palliating Diseases” գիրքը /Mathews, Wagner, 1806/: Նույն թեմային անդրադառներ են R. Քրոուն, Ω. Դարնի-Սմիթը, Φ. Քենդիրելը և բազմաթիվ այլ հեղինակներ: Վերը նշված հեղինակների ուսումնասիրությունները կատարվել են հիմնականում հոգեբանության և բժշկական գիտությունների լույսի ներքո:

Կատարված հետազոտությունների արդյունքները բույլ են տակա վստահաբար հայտարարել, որ երաժշտական թերապիան (music therapy) առողջապահական մասնագիտություն է երաժշտական թերապևտներով, ովքեր երաժշտության միջոցով վերականգնում են իրենց իիվանդների ֆիզիկական, մտավոր և հոգեկան առողջությունը: Երաժշտական թերապիայի հիմնական երեք մոտեցումներ՝ Գերբրուդ Օքֆի, Նորդոֆ Ռոբինսի և Հելեն Բոնիի մեթոդներն են /www.wikipedia.org/Musicotherapy//: Ապացուցված է, որ երաժշտությունը կարող է բարերար ազդեցություն ունենալ մարդու մտավոր, հոգեկան և ֆիզիկական առողջության վրա. այն բարելավում է իմունային համակարգը, վերացնում անհանգստությունն ու վախերը: Վերն ասվածից կարելի է եզրակացնել, որ երգն ու երաժշտությունը ներդաշնակություն են մտցնում մտքի, մարմնի և հոգու միջև:

Անհերքելի է նաև այն փաստը, որ դրական մթնոլորտը աշակերտների առաջադիմության գրավականներից մեկն է: Երաժշտությունը առաջացնում է որոշակի էմոցիոնալ ֆոն, դրական հույզեր և ոգևորություն, բարձրացնում է տրամադրությունը: Այս առնչությամբ նշենք «տրամադրության երաժշտություն» (mood music) երևույթը, որը վաղուց արդեն նորույթ չէ: Շատերն են առնչվել ձայնագրված երաժշտության հետ սրճարաններում, խանութներում, ատամնաբուժարաններում կամ մերաման սրահներում: Նման երաժշտության ոճը կախված է նապատակներից՝ հանգստացնել, լիցքաբափել կամ հակառակը՝ ոգևորել, աշխուժացնել, դրդել որոշակի գործողության: Ուսանողներից շատերը պմղում են, որ նրանք երաժշտություն են լսում դաս սովորելիս, քանի որ այն օգնում է նրանց հեշտ յուրացնել նյութը: Օտար լեզվով երգեր լսելը նույնապես նպաստում է լեզվի յուրացմանը: Իսկ ինչպես և կարելի ինտեգրել դասական երաժշտությունը ուսուցման գործընթացում: Ահա մի քանի օրինակները

Ուսանողները լսում են մի հատված Բեթհովենի N 5 սիմֆոնիայից և նկարագրում իրենց զգացորություններն ու հույզերը: Նրանք ծանոթանում են կոմպոզիտորի նկարի հետ, սովորում են ճիշտ արտասանել նրա անունը: Սինչ

ունկնդրելը կարելի է գրատախտակին զրել մի շաքք ածականներ, օր.՝ «bright, dark, gloomy, sunny, mournful, sad, happy, monotonous, lively, slow, fast, frightening, motivating, scary, windy, dangerous, threatening, misty... » և քննարկել, թե որոնք են բնորոշում տվյալ հատվածը, ի՞նչ մտավոր պատկերներ են ունկնդրողները ունենում այն լսելիս:

Այնուհետև ուսանողները ծանոթանում են կոմպոզիտորի հակիրճ կենսագրության հետ, պատախանում են տեքստի վերջում տրված հարցերին: Կոմպոզիտորի կյանքի, երկրի, ապրած ժամանակաշրջանի մասին հանձնարարվում են տարրեր արտադասարանական անհատական կամ խմբային առաջադրանքներ, ռեժիսուրներ: Ուսանողների ձեռք բերած գիտելիքները ստուգվում են խաչքառների և վիկտորինաների միջոցով: Դասի ընթացքում դիտվում են մուլտֆիլմերից հատվածներ, որտեղ հնչում են տվյալ կոմպոզիտորի մյուս ստեղծագործությունները:

Դասական երաժշտությունը հիանալի միջոց է զարգացնելու ստեղծագործական գրավոր հմտությունները: Ուսանողներին տրվում է պատմվածքի սկիզբը, օր.՝ “The carriage began to sway in the high winds and rain. With a violent crack of lightning, the horses cried out and the carriage was flung onto its side and slid down the muddy road. Charlie was thrown into the darkness and found himself in the branches of the giant oak tree that had just fallen...” և հանձնարարվում է երաժշտությունն ունկնդրելով՝ շարունակել պատմվածքը: Առաջադրանքը կարելի է կատարել անհատապես կամ խմբերով: Այնուհետև պատմվածքները ընթերցվում և քննարկվում են: Բացատրվում է թե ի՞նչպես է ստեղծագործության զարգացումը ազդել պատմվածքի սյուժեի զարգացման վրա:

Վերը բերված փաստարկներն ու օրինակները մեկ անգամ ևս ապացուցում են, որ թե՛ օտար լեզվի իմացությունը, և թե՛ երաժշտությունը, հատկապես վաղ հասակից դասականներին և նրանց ստեղծագործությունները ճանաչելը, մեծ դեր են խաղում անձի աշխարհայացքի, լայն մտահորիզոնի ձևավորման ու զարգացման գործում: Ինչպես ներկայացվեց հոդվածում, երաժշտությունը կարող է ստեղծել լավ տրամադրություն, դարձնել ուսուցումը ավելի հաճելի: Հետևաբար, դասական երաժշտությունը, մեծ կոմպոզիտորների կենսագրությունն ու գործունեությունը անգերեն լեզվի դասավանդման համար մեծ աղբյուր են հանդիսանում: Նման մոտեցումը կարող է դառնալ «լեզուն երաժշտության միջոցով և երաժշտությունը լեզվի միջոցով» երկկողմանի մի ուազմավարություն, որը կարող է ոչ միայն անգերենի լեզվի գիտելիքներ տալ, այլև բազմակողմանիորեն կրթել ներառելով հարակից բնագավառների մշակույթի, պատմության, արվեստի, աշխարհագրության տարրեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Mathews S., Wagner P.K. On the effects of music in curing and palliating diseases. Philadelphia: University of Pennsylvania, 1806.

2. Miell D. Musical communication. Abstract // *Oxford Scholarship online*, March 2012.
3. Murphy T. Music & songs. Oxford: Oxford University Press, 1992.
4. Rosova V. The use of music in teaching English, diploma thesis. Brno, 2007.
5. Shen C. Using English songs: an enjoyable and effective approach to ELT // *English Language Teaching*, vol. 2, 2009, № 1.
6. Tse A., Malaysian teachers' perspective on using songs in English language teaching// *International Journal of Social Science and Humanity*, vol. 5, № 1, January, 2015.
7. <http://www.edudemic.com/learning-curve-report-education/html>
8. <http://www.csmonitor.com/World/Global-News/2015/html>
9. <http://www.csmonitor.com/html>
10. <http://www.educationnext.org/the openclassroom/html>
11. <http://www.wikipedia.org/Musictherapy/html>

Л. БАРСЕГЯН – *О некоторых преимуществах интегрирования музыки в преподавании иностранного языка.* – Процесс обучения в глобальном информационном обществе требует более творческого подхода к преподаванию. Одним из наиболее эффективных способов воздействия на чувства и эмоции учащихся является музыка, которая широко применяется в области медицины, а также обучения и, в частности, в преподавании иностранного языка. В статье рассматривается важная роль музыки в создании позитивного эмоционального фона для восприятия и запоминания материала. Сочетая не только песни на иностранном языке, но и классическую музыку, можно проникнуть в глубины подсознания, мотивировать и приобщить к творчеству великих классиков, истории, страноведению, таким образом способствуя всестороннему развитию личности учащегося, стимулируя его образное мышление и формируя хороший вкус.

Ключевые слова: преподавание английского языка, песня, классическая музыка, движение открытых уроков, музыкальная терапия, музыка настроения

L. BARSEGHYAN – *On Some Advantages of Integrating Music into Foreign Language Teaching.* – The teaching process in the global information society requires a more creative approach to education. One of the most effective ways to influence the feelings and emotions of students is music, which is widely used in medicine, education, and in particular foreign language teaching. The paper is devoted to the important role and effectiveness of music in creating positive emotional background for easy perception and memorization of material. Combining not only foreign language songs, but also classical music, it is possible to penetrate into depths of subconsciousness, motivate and boost interest towards cultures of the great classical composers, history, regional studies, thus contributing to students' all-round development, stimulating creative thinking and forming good taste.

Key words: English language teaching, song, classical music, open classroom movement, music therapy, mood music

Լուսինե ՀԱՅԹՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ԸՆԹԵՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՏԵԶՈՑՈՎ ՏԵԶՄՏԸ ԸՄԲՈՆԵԼՈՒ
ՈԱԶՄՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ընթերցման միջոցով տեքստը ըմբռնելու ուղղմավարությունը օտար լեզվի գործնական իմացության հիմքում է: Որպեսզի ուսանողները ավելի արագ և հեշտ ընկալեն ընթերցածը, դասավանդողը պետք է ճշգրիտ ուղղորդի այդ գործընթացը: Հոդվածում նշված են տեքստն ըմբռնելու քայլերը, որոնք դիտարկվում են առանձին-առանձին: Ցուրաքանչյուր քայլի համար ներկայացված են ոչ միայն սպասվելիք արդյունքները, այլև անհրաժեշտ վարժությունների համակարգը այդ քայլերն իրականացնելու համար: Հոդվածում նշված ուղղմավարությունները չեն սահմանափակվում մեկ լեզվով: Չնայած նրան, որ հիմնական նյութն անզերենն է, այն կարելի է կիրառել ցանկացած լեզվով տեքստի վրա աշխատելիս:

Բանափառեր ընթերցանության տեսակները, ճանաչողական ընթերցանություն, ուսումնական ընթերցանություն, որոնողական ընթերցանություն, տեքստի ըմբռնում

Ընթերցելու միջոցով սովորողը հարստացնում է լեզվական պաշարը: Ընթերցածը հասկանալու կարողությունը զարգացնելու համար, ցանկալի է ուսանողներին ակտիվ ընթերցողների վիճակում դնել: Այդ նպատակով, մինչև տեքստի ընթերցումը, նրանց պետք է տալ կոնկրետ առաջադրանքներ, որոնք կմուտեցնեն նրանց տեքստին:

Ուսանողները տրված խնդրին համապատասխան, կսովորեն օգտագործել թե՝ ընթեցելու տարրեր ուղղմավարությունները, թե՝ տեսակները (ճանաչողական, հետազոտական, որոնողական):

Ճանաչողական ընթերցանության (scanning/global reading) /Alderson, 2002: 10-11/ դեպքում ուսանողները դիտարկում են տեքստի կառուցվածքը, վերնագիրը, պարբերությունները, պատկերազարդումները, մակագրությունները, ընդգծված բառերը՝ կանգ չառնելով անծանոթ բառերի վրա:

Ուսումնական (հետազոտական) ընթերցանության (detailed reading) /Alderson, 2002: 28-31/ դեպքում ուսանողները առաջին անգամ կարդալիս ամբողջությամբ ծանոթանում են տեքստին: Բարդությունները հաղթահարելու համար վերընթերցում են անհասկանալի, բարդ կամ կարևոր մասերը: Համատեքստի, փորձառության կամ բառարանի միջոցով ճշտում են անծանոթ բառերի նշանակությունը:

Որոնողական ընթերցանության դեպքում (selective reading) սովորողները /Աստվածատրյան 1985, 24-31/ կոնկրետ տեղեկատվությունը գտնելու նպատակով ուսանողները արագ վերընթերցում են տեքստը, փնտրում հենարաններ՝ համգուցային բառերը, պարբերությունների առաջին նախադասությունները, խորագրերը, մեկնարանությունները, սխեմաները, աղյուսակները և այլն:

Որոնողական (մանրամասն) ընթերցանությամբ հասկանալը ավելի հազ-վաղեալ է հանդիպում և գործածվում է սահմանափակ շրջանակում (օր՝ դեղատոմտում):

Առավել հաճախ հանդիպող երևոյթ է հետազոտական ընթերցանությունը, եթե հատկապես պահանջվում է տեղեկատվություն՝ որոշակի ոլորտի կամ խնդրի մասին: Շանաչողական (հետազոտական) ընթերցանությունը հանդիսանում է ընթերցելով հասկանալու բոլոր տեսակների առանցքային տեսակը: Կախված այն բանից, թե ընթերցանությունը ինչ նպատակ է հետապնդում, օգտագործվում է համապատասխան ընթերցանության տեսակը:

Այժմ կներկայացվեն տեքստը հասկանալով ընթերցելու ռազմավարությունները, որոնցից կարելի է օգտվել բոլոր տեսակի տեքստերի դեպքում:

Զայլ I – Նախապատրաստական փուլ

Տեքստը հասկանալու համար շատ կարևոր դեր են խաղում նախնական գիտելիքները: Հարկավոր է ուսանողներին փոխանցել այն գգացողությունը, որ նրանք դեռևս նախքան տեքստը ընթերցելը արդեն շատ ավելի բան գիտեն այդ տեքստի վերաբերյալ, քան իրենք կարծում են: Եվ եթե մենք հենվենք մեր ուսանողների նախնական գիտելիքների վրա, կարող ենք առաջացնել տեքստի հանդեալ հետաքրքրություն, այն ընթերցելու պատրաստակամություն, ինչպես նաև կրաքարձությունը մոտիվացիան և այդ ամենով կրաջալերենք նրանց: Դրանում մեզ կարող են օգնել ասսցիոգրամները, մտագրոհը (brainstroming), վերնագիրը, ենթավերնագրերը, տեքստի վերաբերյալ նկարները, պատկերները, անգամ տեքստի տեսակը:

Տարբեր տարրերի օգնությամբ (վերնագիր, պարբերությունների սկիզբ, հանգուցային բառեր, պարբերություններից մեկը, ընդգծված բառեր), ուսանողները կարծիք են հայտնում տեքստի բովանդակության մասին: Դիտարկենք վերոհիշյալը առանձին-առանձին:

ա) Նախնական գիտելիքները կարելի է վեր հանել ասսցիոգրամների միջոցով. Օր՝

գրատախտակին գրում ենք թեմայի անունը և գրի առնում ուսանողների առաջին գգացողությունները (պատկերացումները) այդ թեմայի շուրջ:

բ) Ցուցադրում ենք թեմատիկ նկարներ և առաջարկում ուսանողներին նկարների միջոցով տեքստի վերաբերյալ որոշակի մտահայացումներ կատարել՝

- ո՞րն է տեքստի թեման.

- ովքե՞ր են տեքստի գործող անձինք.

- ինչի՞ մասին է տեքստում խոսվում.

- առանձնացնել ստեղծագործության սյուժեի գարգացման աստիճանները (սկիզբը, դեպքի ընթացքը, ավարտը):

գ) Մտագրոհը աշխատանքային մի մեխանիզմ է, որի ժամանակ քննարկում և առաջարկում են տարբեր կարծիքներ ու մոտեցումներ: Այն օգնում է, որ ուսանողները պատկերացում կազմեն տվյալ ոլորտի մասին: Ուսանողներին առաջարկում է ազատ մտածել, որից հետո հանպատրաստից ի մի բերել

իրենց մտքերը: Որպեսզի ստեղծվի ստեղծագործական մթնոլորտ, խրախուսվում են տարբեր կարծիքների: Ուսանողների մտքերի և գաղափարների անկանոն հավաքագրումից հետո կարելի է դրանք դասավորել ըստ որոշակի հասկացությունների:

դ) Գրատախտակին գրում ենք վերնագիրը, այնուհետև առաջարկում ենք ուսանողներին, ելնելով վերնագրից, հիպոթեզներ առաջ քաշել տեքստի բովանդակության վերաբերյալ:

ե) Կոնկրետ տեղեկատվություն գտնելու նպատակով՝ուսանողները դիտարկում են ողջ տեքստը, դրա բառային և ոչ բառային կառուցվածքային տարրերը (օր., վերնագիր, խորագիր, մակագրություն, պարբերություն, սյունակ, լոգո, տառատեսակ և այլն) և գործածում դրանք որպես հենարան:

գ) Առաջարրում ենք հարցեր տեքստի տեսակի վերաբերյալ: Օր.`

- Որտեղի՞ց է վերցված տեքստը:

-Ի՞նչ տիպի տեքստ է՝ գովազդ, հերիաք, հոդված:

Տեքստի տեսակը շատ կարևոր է, որովհետև դրանով ենք որոշում լորեցանության տեսակը՝ ճանաչողական, հետազոտական, թե՝ որոնողական:

Այսպիսով, պետք է ուսանողներին բացատրենք, որ նրանք նախքան տեքստն ընթերցելը պետք է ուշադրություն դարձնեն վերնագրին, նկարներին, պատկերներին: Նման նախնական աշխատանքը կօգնի ուսանողներին ծանոթանալ տեքստին՝ դրանով իսկ փարատելով ուսանողների անհանգստությունն ու մտավախությունը:

Քայլ II – Աշխատանք տեքստի հետ

Որպես 2-րդ քայլ հանդիսանում է անմիջական տեքստային աշխատանքը: Այն իր մեջ ներառում է հետևյալ տեսակները:

ա) Տեքստի պարզեցում՝

- Տեքստի բովանդակությունից անկախ հարցերի միջոցով, այլ կերպ ասած՝ հարցեր, որոնք ուղղակի արձանագրում են՝
 - փաստը,
 - իրադարձությունը,
 - միտքը,
 - գործողության ժամանակն ու տեղը և այլն:

Ուսանողները կարող են հետագայում այս հարցերը յուրաքանչյուր նոր տեքստի դեպքում կիրառել և յուրաքանչյուր նոր տեքստ ինքնուրույն հասկանալ:

- Տեքստի բովանդակության հետ առնչվող հարցերին պատասխանելու միջոցով:

Դրանք այն հարցերն են, որոնք տեքստից հետո են դրված: Նման հարցերը կարդացածը հասկանալու ստուգման ամենատարածված առաջդրանքներից են:

- Տեքստի պարզեցում բառ-բանալիների միջոցով:

Տեքստի գլխավոր տեղեկատվությունը պարունակող բառ-բանալիները կարելի է գտնել տեքստի կամ սկզբում կամ վերջում: Բառ-բանալիները կապված են թեմայի հետ և հաճախ գտնվում են հենց վերնագրերի մեջ: Նրանք հաճախակի կրկնվում են, կամ փոխակերպված են և շատ հաճախ հանդես են գալիս որպես գոյական: Օր՝

Ecology – Էկոլոգիա

Environment – շրջակա միջավայր

Pollution – աղտոտվածություն

Industrial waste – արդյունաբերական թափոններ

Economic activities – տնտեսական գործունեություն

Nuclear waste – միջուկային թափոններ

Contamination – քունավոր նյութեր

Rainforest – անձրևաշատ անտառներ

Endangered species – վտանգված տեսակներ

Habit – սովորություն

Ցանկացած, մանավանդ դժվարին և երկար տեքստերի վրա աշխատելիս, շատ օգտակար կարող է լինել տեքստի բաժանումը ըստ իմաստային մասերի: Այդ պատճառով առաջարկանք ենք տալիս.

• Տեքստը բաժանել իմաստային մասերի (ենթաթեմաների) և վերնագրել դրանք: Այս աշխատանքի արդյունքում տեքստի բովանդակությունը դառնում է ավելի ամբողջական և հասկանալի:

• Հայտնաբերել տեքստի տարրեր մասերի միջև առկա տրամաբանական կապը (պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն և այլն):

• Առանձնացնել սյուժեի զարգացման աստիճանները (սկիզբ, հանգույց, զարգացումը, գագաթնակետը, հանգուցալուծումը, ավարտը):

բ) Տեքստի իմաստային բաժանումը կարելի է կատարել շաղկապների կամ կապական բառերի միջոցով (օր՝ and, that's why, because, otherwise, though):

Խոսքը գնում է ոչ թե այս բառերի իմաստի մասին, այլ նրանց գործառույթների մասին: Օր՝ “that's why”-ը մատնանշում է, որ տեքստի այս հատվածը ներառում է հիմնական գաղափարի հետևանքային կապը: Իսկ “otherwise”, “but”, “nevertheless” բառերը մատնանշում են հակադրություն:

Ուսանողները, որոնք արդեն սովորել են օտար լեզվով տեքստ կարդալու ժամանակ ուշադրություն դարձնել շաղկապների վրա, կարող են հետևել տեքստի կազմությանը, քայլ առ քայլ հետևել նրա իմաստային և տրամաբանական կառուցվածքին:

Ընթերցելով հասկանալու արդյունավետ միջոցներից են՝

• Նշումները, որոնք կարող են արվել լուսանցքում կամ գրվել կետերով:

Օր՝

Խնդիր –

Պատճառ –

Օրինակ –
 Արդյունք –
 Կամ՝
 Ներածություն –
 Գլխավոր տեղեկատվություն –
 Ավարտ –
 • Փոխներգործուն ընթերցանության նշանները.
 V – հայտնի է
 + – հետաքրքիր է
 - – անհավանական է
 ? – կարելի է մանրամասն իմանալ

Չայլ III – Բառերի բացատրություն

Ենք զիտենք, որ բառերը, որոնք մենք ինքններս ենք գտնում, ավելի երկար են պահպանվում հիշողության մեջ, քան այն բառերը, որոնց նշանակությունը կամ բացատրությունը նախապես է տրված լինում։ Այդ նապատակով հարկավոր է տանել համապատասխան աշխատանք, որպեսզի ուսանողները կարողանան սեփական ուժերով կռահել անձանոք բառերի նշանակությունը։

Անձանոք բառերը կռահելու չորս ռազմավարությունները՝

- 1) Ինչի՞ մասին է խոսքը զնում։
- 2) Տեքստի ո՞ր բառերի հետ է անձանոք բառը իմաստով համակցված։
- 3) Կա՞ կապ տեքստի մյուս մասերի անձանոք բառերի հետ։

4) Փորձեք անձանոք բառը տեսնել համատեքստի մեջը, ըմբռնել նրա իմաստային կապը համատեքստի մյուս անդամների հետ։ Ինչպիսի՞ զաղափարներ, զգացողություններ, ենթադրություններ եք ունենում։ Եվ միայն վերջում է օգնության գալիս բառարանը։

Չայլ IV – Ընթերցելով հասկացածի ստուգում

ա) Multiple-choice վարժություններ (բազմընտրական) – տրվում է հարցը և պատասխանի մի քանի տարբերակ, առաջարկվում է դրանցից ընտրել ճիշտը։

բ) Ծիշտ/սխալ վարժություններ – տրվում են տեքստի բովանդակությանն առնչվող ճիշտ և սխալ պնդումներ, առաջարկվում է տարբերակել դրանք։

գ) Համապատասխանեցնող վարժություններ – առաջարկվում է կարդալ տեքստը և առաջադրանքում տրված նախադասությունների մեջ նշել տեքստի բովանդակությանը համապատասխանողները։

դ) Կարճ պատասխանով առաջադրանքներ – ընդհանուր բառախմբից գտնել ճիշտ բառը և լրացնել տեքստը։

ե) Տրամաբանական – տրվում են տեքստի բովանդակությանն առնչվող հարցեր, որոնք նպատակ ունեն բացահայտել, ասենք՝ պատճառահետևանային կապերը, գործողությունների տրամաբանական ընթացքը և այլն։

Չայլ V – Անցում ընթերցելուց գրելուն կամ խոսելուն

Տեքստը ընթերցման միջոցով ըմբռնելու ուազմավարությունը ամբողջական դարձնելու համար հարկավոր է ամրապնդել ընթերցելով հասկացածը: Այդ իսկ պատճառով ուսանողներին տրվում են որոշակի առաջադրանքներ: Օր՝`

- անավարտ տեքստերի ավարտում,
 - նույն տեքստի վերարտադրությունը մեկ այլ անձի տեսանկյունից,
 - սեփական փորձից ելնելով տեքստի մեկնաբանություն:
- Որպես ամփոփիչ աշխատանք հիմնականում ուսանողներին տրվում է առաջադրանք՝
- սեփական տեքստի ստեղծում

Անցումը տեքստ ստեղծելուն պետք է լինի սահման և սկսվի տեքստի ենթավերնագրերը, տեքստի վերաբերյալ նշումները՝ բառ-բանալիներ, ընդգծումներ, կետեր, գլխավոր մտքեր հայտնաբերելուց: Ըստ կարևոր է, որ տեքստը հասկանալու և տեքստ ստեղծելու ժամանակ արված սխալներին դասախոսները խիստ շնորհնան: Ավելի զգույշ և տարբերակված ուղղումները (իհարկեն ոչ ամեն դասի և ոչ բոլոր դեպքերում) ստեղծում են կարևոր նախապայմաններ, որպեսզի ուսանողները կարողանան անկաշկանդ աշխատել: Դասախոսը պետք է այդ աշխատանքում կարողանա քաջալերել ուսանողներին:

Որպես սեփական տեքստի տարբերակներ կարող են առաջարկվել՝

- նման այլբնտրանքային տեքստի ստեղծում,
- գրել նամակ, որում կպատճի այդ տեքստի մասին,
- գրել հեռագիր,
- գրել բաց նամակ հրատարակչությանը, կրթության նախարարությանը,
- վարել հարցազրույց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ. Օտար լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1985:
2. Լեզուների իմացության / իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Երևան, 2005:
3. Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր, Երևան, 2009:
4. Երգնլյան Ե., Հովհաննիսյան Գ., Առաքելյան Մ., Կարապետյան Մ. Ուսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագրեր և նյութեր, Երևան, Անտարես, 2008:
5. Նախազգեթի իրականացում <http://ganjalyanyura.wordpress.com/2015/03/>
6. Фоломкина С. К. О работе над компонентами чтения // Иностранные языки в высшей школе, вып. 14. Москва, 1979.
7. Alderson J. Ch. Assessing reading. Cambridge: Cambridge University Press, 2002.

Л. АЙТАН – *O стратегиях восприятия текста при чтении.* – Стратегии восприятия текста при чтении лежат в основе практического знания иностранного языка. Для того чтобы студенты легче и быстрее воспринимали прочитанное, преподаватель должен правильно направлять этот процесс. В статье отмечены шаги восприятия текста при чтении, которые рассматриваются по отдельности. Для каждого шага отмечаются не только ожидаемые результаты, но и система необходимых упражнений для осуществления этих шагов. Представленные в статье стратегии не ограничиваются рамками одного языка. Несмотря на то, что основным базовым материалом послужил английский язык, их можно применять при работе над текстом на любом иностранном языке.

Ключевые слова: разновидности чтения, познавательное чтение, обучающее чтение, поисковое чтение, восприятие текста

L. HAYTYAN – *On Reading Comprehension Strategies.* – Reading comprehension strategy teaching techniques have a great role in the language learning process. To make it easier for the students to comprehend the text, the teacher should guide them, explain what strategies to use, why and when to use the strategies, and how to apply them. The steps of text comprehension are observed in the paper one by one. The system of necessary exercises to complete the steps are mentioned as well.

Key words: types of reading, scanning/global reading, detailed reading, selective reading, reading comprehension

**Հռիփսիմե ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Բելա ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
Երևանի պետական համալսարան**

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ
ՈՒՍՈՒՅՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅՑՈՒՄ**

Օսար լեզվի ուսուցումը ակտիվ և բարդ գործընթաց է, որի վրա ազդում են տարրեր արտավեզվական գործոնները: Սոյն հոդվածում արտավեզվական գործոնների շարքում դիտարկվում են մոտիվացիան, տարիքը, հիշողությունը, մշակութային իրազեկությունը և գեղարվեստական գրականություն կարդալը, որոնք մեծ դեր են խաղում օսար լեզմներ յուրացնելու ընթացքում: Հոդվածում քննարկվող օրինակները ցույց են տալիս, թե ինչպես կարելի է ուսանողների մոտ առաջացնել մոտիվացիան և մշակութային իրազեկություն և հասնել օսար լեզվի իմացության՝ գրականություն կարդալու միջոցով:

Բանալի բառեր. արտավեզվական գործոնները, մշակութային իրազեկություն, հաղորդակցության գործառույթ, մոտիվացիա, հաղորդակցություն, օսար լեզվի ուսուցման գործընթաց

Օսար լեզվի ուսուցման գործընթացի վրա մեծ ազդեցություն ունեն արտավեզվական գործոնները՝ սովորողի տարիքը, հիշողությունը, լեզվական հնտուիցիան, կրթական մակարդակը, կենտրոնացումը, մոտիվացիան, մշակութային իրազեկությունը, շրջապատող միջավայրը, համբերատարությունը, աշխատափրությունը, ուսուցչի դերը, հոգեբանական գործոնը և այլն: Սույն հոդվածում մենք կանդրադանանք այնպիսի գործոնների, ինչպիսին են տարիքը, հիշողությունը, մշակութային իրազեկությունը, քանի որ գտնում ենք, որ վերոնշյալ գործոնները մեծ դեր են խաղում լեզու ուսումնասիրելու պրոցեսում: Ուսանողների մոտ ցանկություն, պահանջ, հետաքրքրություն և պատրաստակամություն (այլ կերպ ասած՝ մոտիվացիա) առաջ բերելու նապատակով դասավանդող ուսուցիչները (կամ դասախոսները) օգտագործում են տարրեր մեթոդներ և նյութեր, քանի որ օսար լեզու սովորողները ունեն տվյալ լեզուն յուրացնելու անհրաժեշտ տարրեր ունակություններ ու հնտություններ: Եթե անզամ սովորողները արտաքերում են բառեր, արտահայտություններ և նախադասություններ ճիշտ արտասանությամբ, առողանության և շեշտի սխալները շատ տարածված երևույթ են: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ օսար լեզու սովորողները ընկալում են նյութը տարրեր ձևերով և տարրեր ժամանակահատվածում: Բավական կարճ ժամանակամիջոցում հաջողության հասնելու համար դասավանդող մասնագետները պետք է գիտակցեն, թե օսար լեզու ուսումնասիրողները ինչ են ուզում սովորել առաջնահերթ: Անհատի սովորելու ոճը այս կամ այն մեթոդին առաջնայնություն տալու ձևն է: Ոմանք սովորում են անզիր անելով, մյուսները՝ գրելով, երրորդ խումբը՝ պարզապես հիշելով և այլն: Երբ սովորելու

գործընթացը ընթանում է այն ձևով, որը առավել գերադասելի է լեզուն ուսումնասիրողի համար, կարճ ժամանակահատվածում կարելի է հասնել դրական արդյունքի: Ըստ լեզվաբանական հարաբերակցության սկզբունքի՝ լեզվակրի մոտ աշխարհի պատկերը ձևավորվում է տվյալ լեզվի քերականական և բառապաշտարային դասակարգման միջոցով, այսիքան՝ օբյեկտիվ իրականության պատկերը տարբեր է տարբեր լեզվով խոսող մարդկանց մոտ, քանզի այդ տարբեր լեզվի քերականությունն ու բառապաշտարը տարբեր ձևով է դասակարգում իրականության երևոյթները /Sapir, 1921: 215/:

Ինչպես հայտնի է, լեզվի ամենակարևոր գործառույթներից մեկը *հաղորդակցություն* է, և մեր օրերում անհրաժեշտ պայման է ուսանողների մոտ հաղորդակցական հմտությունների զարգացումը վերջնական նպատակին հասնելու համար, այն է՝ օտար լեզվի գերազանց իմացության:

Ժունալիստիկայի ֆակուլտետում մոտ քանի դասավանդելու ընթացքում մեր կողմից մշակվել է հասուն մոտեցում և մեթոդիկա տարբեր մակարդակների ուսանողների մոտ օտար լեզվի՝ հատկապես անգլերենի նկատմամբ հետաքրքրություն և լեզուն սովորելու մեծ ցանկություն առաջացնելու ուղղությամբ:

Օտար լեզու դասավանդող մասնագետները պետք է սովորողներին տրամադրեն լայն հետարակություններ շփման համար՝ նրանց առաջարկելով թեմաներ, որոնք վերաբերում են թե՛ առօրյա կյանքին, թե՛ քաղաքականությանը, թե՛ տնտեսությանը, թե՛ իրենց մասնագիտությանը: Ուսանող-ուսանող-դասախոս կապը պետք է լինի ակտիվ և անմիջական՝ դիմացինին լսելու կարողությամբ և փոխըմբռնմամբ:

Հայաստանի տարբեր շրջաններում օտար լեզվի ուսուցման մակարդակը, դժբախտաբար, բավականին ցածր է, որի հետևանքով դիմորդներից շատերը չեն ունենում օտար լեզվի համապատասխան գիտելիքներ: Արդյունքում շատ ֆակուլտետներ ընդունելության քննությունների ցանկից հանել են օտար լեզվի քննությունը: Ուսանողները հաճախ հանդիպում են դժվարությունների, քանի որ կարճ ժամանակահատվածում մեծ ջանքերի գնով ստիպված են լինում հասնել լեզվի իմացության պատշաճ մակարդակի՝ քաջ գիտակցելով, որ մեր օրերում անհնար է լավ մասնագետ դառնալ առանց օտար լեզվի (մասնավորապես անգլերենի) իմացության: Օրինակ, լավ լրագրող դառնալու կարևոր նախապայմաններից մեկը օտար լեզվի գերազանց իմացությունն է, քանի որ լրագրողները հաճախ հարցազրույցներ են վարում ոչ միայն ազգությամբ հայ, այլև օտարազգի դիվանագետների, դեսպանների, հյուպատոսների կամ այլ անգլախոսների հետ: Շատ կարևոր է, որպեսզի լրագրողի անգլերենը լինի ոչ միայն գրագետ, այլ վարժ և շատ սահուն:

Դպրոցում ստացած օտար լեզվի ոչ բավարար գիտելիքները հետագայում խոչընդոտում են ուսանողին լեզուն յուրացնելու ճանապարհին /Niederhauser, 2012: 28/: Բոնի ընդունվելու համար դիմորդները ձեռք են բերում որոշ գիտելիքներ օտար լեզվի քերականությունից և բառապաշտարից, որոնք, սակայն, բավարար չեն սահուն ձևով հաղորդակցվելու համար: Առաջին

կուրսի ուսանողներից շատերը գիտակցում են իրենց օտար լեզվի իմացության ցածր մակարդակը և միևնույն ժամանակ հասկանում այդ լեզվին տիրապետելու անհրաժեշտությունն ու կարևորությունը: Դասընթացներին մասնակցելու ժամանակ նույն խմբում են հայտնվում օտար լեզվի տարրեր մակարդակներ ունեցող ուսանողներ, ինչը դժվարացնում է ուսումնական գործընթացը: Ոչ բավարար գիտելիքներ ունեցող ուսանողները կաշկանդվում են, ինչը վաստ է անդրադառնում նրանց առաջընթացի վրա:

Մեր կարծիքով, այս հարցի հնարավոր լուծումը նրանց տարրեր խմբերի մեջ ընդգրկելն է՝ ըստ լեզվի իմացության մակարդակի:

Օտար լեզվի ուսումնասիրության մեջ հաջողության հասնելու հարցում որոշիչ դեր է կատարում տարիքը: Լեզվի ուսումնասիրությունն ավելի վաղ տարիքում սկսելը սովորողին լեզվի տիրապետման բարձր մակարդակի հասնելու հնարավորություն է ընձեռում: Մեծահասակների շրջանում տարածված է այն կարծրատիպը, որ մեծ տարիքում ոչ բոլորը կարող են ճեռք բերել օտար լեզվի իմացություն, կամ որ օտար լեզու սովորելու համար հատուկ լեզվական ունակություններ են անհրաժեշտ: Շատերի մոտ նոր լեզու ուսումնասիրելու հետ կապված բարդույթներ են առաջանում, և նրանց թվում է, թե դրանք հաղթահարելն աստիճանաբար ավելի դժվար է դառնում: Այուս կրոմից, մեծ տարիքում օտար լեզու սովորողներն ավելի հստակ են պատկերացնում, թե ինչո՞ւ է իրենց անհրաժեշտ օտար լեզվի իմացությունը, և սովորաբար նրանք ավելի հաստատակամ են հնարավորինս կարճ ժամանակամիջոցում լեզուն տիրապետելու հարցում:

Օտար լեզվով ելույթ ունենալը, հատկապես անգլալեզու լսարանի առջև, շատերի մոտ հուզմունք և լարվածություն է առաջացնում: Ծայրահեղ լարվածությունը երբեմն հանգեցնում է շփորձունքի, որն էլ իր հերթին հիանալի հետագա ու լեզվի հետագա ուսումնասիրությունը շշարունակելու պատճառ է դառնում: Ի տարրերություն երեխաների, մեծահասակներին մեծապես հետաքրքրում է շրջապատի կարծիքն իրենց լեզվի իմացության վերաբերյալ: Նրանք մեծ զգուշավորություն են ցուցաբերում լեզվական սխալներ կամ սայրաքումներ քույլ շտալու հարցում:

Ահա թե ինչո՞ւ, օտար լեզվի դասավանդման պրոցեսում կարենք է հաշվի առնել ուսանողների տարիքային գործոնը:

Լեզվի ուսումնասիրության գործում էական նշանակություն ունի նաև հիշողությունը:

Երբեմն ուսանողները կարծում են, որ եթե հասկացել են այն, ինչ լսել են կամ կարդացել, ապա նաև յուրացը են այն: Հիշողության մեջ ամրապնդելու համար քայլեր չձեռնարկելը տարածված սխալ է: Հնարավոր է հիշել այն, ինչը մեկ անգամ լսել կամ կարդացել եք և ապա նաև հասկացել: Հիշելու առաջին մակարդակը ճանաչումն է: Որևէ տեղեկության կրկին առնչվելիս հեշտությամբ ճանաչում ենք այն: Երկրորդ մակարդակը հիշողությամբ վերարտադրումն է: Սա լսածը կամ կարդացածը ճշգրտությամբ վերարտադրելու կարողությունն է: Այս մակարդակին բնորոշ է տարրեր

տեղեկությունները միմյանց կապելը և այդ տեղեկությունները նոր ու տարբեր ձևերով կիրառելը:

Հիշելու արդյունավետությունը կախված է երկու գործոնից: Դրանք են՝ նոր տեղեկությունն արդեն ձևավորված գիտելիքին ավելացնելը և այդ գիտելիքի հաճախակի կիրառելը, ինչն էլ իրականացնում ենք օտար լեզվի դասավանդման գործընթացում:

Դրական կամ բացասական հույզերը նպաստում են որոշակի իրադարձություններ հիշելուն: Որևէ դեպքի հետ կապված հուզական ազդակները առաջանում են դիպվածային հիշողություն: /Knight, 1993: 67/

Մշակույթն ու հաղորդակցությունն անբաժանելի են, քանի որ մշակույթով է պայմանավորված, թե ով է խոսում և ում հետ, ինչի մասին է խոսում, և թե ինչպես է ընթանում հաղորդակցական գործընթացը: Եվ, իհարկե, օտար լեզու սովորելու կարևոր գործոններից է նաև *մշակութային իրազեկությունը*, այն է՝ լեզվակիրների մշակույթի հետ ծանրությունը: Ըստ մարդաբանների՝ մշակույթը մարդկանց մի խմբի կենսակերպն է, այն իր մեջ ընդգրկում է հասարակական գործունեություն, որ կապում է մի խումբ մարդկանց միմյանց և միաժամանակ տարբերակում է նրանց մյուսներից /Montgomery and Reid-Thomas, 1994: 5/:

Ըստ Ֆրանկի՝ երբ մենք օգտագործում ենք *մշակույթ* բառը, իհարկե, նկատի ունենք գրականություն, երաժշտություն և արվեստի մյուս տեսակների ամբողջությունը: Բայց չպետք է մոռանանք, որ յուրաքանչյուր ժողովրդի ուտեստները, տոնները, տարազները, սովորույթները նույնպես կազմում են մշակույթի զգալի մասը, ինչպես նաև այդ ժողովրդի համար էական արժեհամակարգը, այս կամ այն հարցի շուրջ յուրօրինակ մոտեցումներն ու վերաբերմունքը /Frank, 2013: 3/:

Մեզ՝ անգլերենի մասնագետներիս համար, շատ կարևոր է հասկանալ, թե ինչպես անգլախոս երկրների մշակույթի մասին ունեցած մեր գիտելիքներն ու պատկերացումները կարելի է օգտագործել անգլերեն լեզու դասավանդելու ընթացքում /Frank, 2013: 2/:

Կրամշը նշում է, որ ուսուցչի պարտականությունն է սովորեցնել ուսանողներին հասկանալ, թե ինչու են տվյալ լեզուն կրողները խոսում հենց այդ ձևով, և թե ինչու են նրանք լրում /Kramsch, 1993: 245/

Միայն արտասանության, քերականության և բառապաշարին ուշադրություն դարձնելով երբեք չի կարելի խորությամբ ուսումնասիրել լեզուն: Դասավանդող մասնագետները պետք է զինված լինեն խորը և բազմակողմանի գիտելիքներով ուսանողների մոտ այդ երկրների մշակույթի, ու սովորույթների նկատմամբ մեծ հետաքրքրություն առաջացնելու նպատակով:

Օրինակ՝ այդ բանին մեծապես նպաստում են ազգային տոներին նվիրված դասերը:

Գոհունակության տոնը (Thanksgiving) նշելիս ուսանողները ծանրանում են տոնի ծագմանը, համեմատում այն բարեկենդանի տոնի հետ: Նրանց հանձնարարվում է նմանություններ, տարբերություններ կամ ընդհան-

բություններ գտնել, որի ընթացքում ուսանողները փութաջանորեն պրատում են հանացանցի տարրեր կայրերում և, բարեբախտաբար նաև զքերում՝ փորձելով գտնել որքան հնարավոր է շատ ու հետաքրքիր փաստեր: Ակտիվ և արդյունավետ քննարկումներից հետո ուսանողները խոստովանում են, որ վերոնշյալ մթնոլորտը նպաստում է իրենց մոտ մեծ հետաքրքրություն առաջացնելուն, որը, մեր կարծիքով, *մոտիվացիոն* գործոն է անզերենը խորությամբ ուսումնասիրելու համար:

Եթե ամեն տարի հոկտեմբերի 31-ին տոնվում է *Halloween* կոչվող տոնը, որոշ դասախոսներ իրենց ուսանողներին հանձնարարում են տեղիկություններ հավաքել այդ տոնի մասին և ելոյթ ունենալ գեկուցումներով: Սա մեծ խանդակառություն և ոգևորություն է առաջացնում ուսանողների շրջանում:

Ուսանողներն անհամբերությամբ են սպասում են նաև Սուրբ Ծննդյան տոնին նվիրված դասերին, որոնց ընթացքում նրանք հնարավորություն են ստանում ծանրանալու տարրեր երկրներում տոնին առնչվող ավանդույթներին, պատմություններին, սովորում են երգեր և բանստեղծություններ: *Մշակուրայիմ իրազեկուրյունը* կարևոր է, որպեսզի մարդիկ հասկանան, թե ինչու մի երկրում կարելի է այս կամ այն բանն անել, իսկ մյուսում՝ ոչ, թե ինչու մի երկրում առաջնային են համարվում որոշ հատկանիշներ, իսկ մյուսում՝ ոչ: Օրինակ, մեզ՝ հայերիս համար, առաջնային են հավատարմությունը, հյուրասիրությունը, առատաձեռնությունը, հարգանքը մեծերի նկատմամբ, մինչդեռ, օրինակ, ամերիկացիները հակված են գնահատելու անկախությունը, ինքնավստահությունը, հավասարությունը և այլն: Եթե մենք սովորեցնում ենք օտար լեզու (մասնավորապես անգլերեն), սովորողները պետք է իմանան, թե ինչ անհարմար իրավիճակներում կարող են հայտնվել նրանք օտար երկիր ճանապարհորդելիս: Չէ՞ որ շատ հաճախ մեր հայրենակիցները մշակութային շոկ են ապրում, եթե, օրինակ, օտար երկրներում ամեն ոք վճարում է իր համար կամ էլ, ասենք, 1-2 լուսե ուշանալու դեպքում խիստ նկատողություն է ստանում վերադասից:

Մեր օրերում տարածված է այն կարծիքը, որ մարդիկ սկսել են քիչ կարդալ կամ, երբեմն էլ, ընդհանրապես չկարդալ *գեղարվեստական գրականություն*: Իհարկե, մասամբ դա այդպես է, բայց, հուրախություն մեզ, երբեմն կարելի է հանդիպել շատ կարդացած երիտասարդի, ում հետ շփումը միայն մեծ բավականություն և հաճույք է պատճառում: Կուգենայի նաև նշել, որ մենք՝ մեծերս, սիրում ենք համեմատել այսօրվա երիտասարդությանը մեզ հետ՝ մոռանալով, որ եթե նրանք էլ մեզ նման լինեին, առաջընթաց չեր լինի ընդհանրապես: Չէ՞ որ վերջին 20-30 տարիների ընթացքում աշխարհը թևակիսեն է նոր դարաշրջան՝ բարձր տեխնոլոգիաների դարաշրջանը, և շատ բնական է, որ ժամանակակից երիտասարդները գերադասում են պրոգրեսիվ լինել՝ դրանով ցույց տալով, որ իրենք համընթաց քայլերով առաջ են գնում դարի պահանջներին:

Նախ ասենք, որ *գեղարվեստական գրականություն* կարդալն ամեն ոք հասկանում է յուրովի: Շատ հաճախ երիտասարդներին (և երբեմն էլ

դեռահասներին) ստիպում են կարդալ գեղարվեստական գրականություն, ինչը դրական արդյունքի փոխարեն հակառակ, բացասական ռեակցիա է առաջացնում: Երեխան սկսում է հաշվել գրքի էջերը և ծնողներին տեղեկացնել, թե քանի էջ է կարդացել, ասենք, մեկ ժամվա ընթացքում:

Սեր կարծիքով, պետուրյան կողմից պետք է մշակվի հասուկ պարտադիր ծրագիր դպրոցում և ԲՈՒՀ-ում համաշխարհային և հայ գրականություն դասավանդելու համար: Հարկավոր է ստեղծել բանհմաց մասնագետների մի խումբ, որը կկարողանա հստակ որոշել, թե որ դասարանում երեխան ինչ գրականություն պետք է կարդա: Ընդ որում, մեր կարծիքով այդ խմբի մեջ պետք է ընդգրկվեն ոչ միայն ուսուցիչներ, դասախոսներ, մեթոդիստներ, այլև գրականագետներ ու արվեստի գործիչներ:

Օրինակ՝ առաջինից չորրորդ դասարաններում երեխան կարող է կարդալ հերթարթներ (ընդ որում, ոչ միայն հայկական այլև արտասահմանյան հեղինակների): Չորրորդ դասարանից սկսած՝ երեխան կարող է սկսել կարդալ արկածային գրականություն (Մայն Ռիդ, Ստիվենսոն, Դանիել Դեֆո, Ժյուլ Վեռն և այլն):

Չատ կարենոր է զուգահեռներ անցկացնել տարբեր գրական գործերի միջև, նրանց միջև ընդհանրություններ և տարբերություններ գտնել: Օրինակ, եթե ուսանողին հանձնարարվում է տնային ընթերցանություն, դասախոսը, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները, կարող է առաջարկել կարդալ Վիլյամ Սարոյանի «Մարդկային կատակերգությունը» կամ ել, օրինակ, Սելինցերի «Տարեկանի արտում, անդունդի եզրին» ստեղծագործությունները:

Սեր կարծիքով, գրականությունը կարող է ոչ միայն կրթել, այլ նաև հայրենասեր սերունդ դաստիարակել, որը հստակ կպատկերացնի մեր ժողովրդի տեղն ու դերը ոչ միայն համաշխարհային գրականության, այլև համաշխարհային քաղաքակրթության համատեքստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Peter M. Responses to English for Specific Purposes. California: San Jose State University, 1998.
2. Theodore O. K. Study Strategies for Careers. Boston, 1993.
3. Linda K. L. ASAP – Academic Skills Achievement Program. Boston, 1994.
4. Montgomery M., Raid-Thomas H. Language and Social Life, British Council, 1994.
5. Frank J. Raising Cultural Awareness in the English Language Classroom // *Forum*, N 4, 2013.
6. Niederhauser J. S. Motivating Learners at South Korean Universities // *Forum*, N 3, 2012.
7. Sapir E. An Introduction to the Study of Speech, Boston, 1921.
8. Kramsch C. Context and Culture in Language Teaching. Oxford: OUP 1993.

Р. НИКОГОСЯН, Б. САРУХАНЯН – Роль культурной грамотности в процессе преподавания иностранного языка. – Преподавание иностранного языка – активный и всеобъемлющий процесс. Данная статья посвящена некоторым аспектам преподавания английского языка. В числе различных экстравербальных факторов рассматриваются мотивация и культурная грамотность, которые играют большую роль в общении людей, изучающих английский язык. В статье приводятся примеры того, как можно стимулировать мотивацию и повышать культурную грамотность у студентов, изучающих английский язык.

Ключевые слова: экстравербальные факторы, культурная осведомленность, функция общения, мотивация, коммуникация, процесс обучения иностранному языку

H. NIKOGHOSYAN, B. SARUKHANYAN – The Role of Cultural Awareness in Foreign Language Teaching. – Foreign language learning is an active and complex process of acquiring knowledge and skills. There exist a number of extralinguistic factors affecting language learning. This paper touches upon factors as motivation, age, memory, cultural awareness and reading fiction as nowadays they play a great role in the communication process.

Key words: extralinguistic factors, cultural awareness, communicative function, motivation, communication, foreign language learning/teaching process

**Սուսաննա ՉԱԼԱԲՅԱՆ
Լիլիթ ՂԱԶԱՐՅԱՆ
Հայաստանի պետական
տման ազգային համալսարան**

**ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐ ԼԵԶՈՒԻ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ
ՀԱՍԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

Սույն հոդվածն անդրադառնում է դասավանդման ժամանակակից մոտեցումներից մեկի՝ ուսանողակենտրոն ուսուցման առանձնահատկություններին։ Կարևորվում են դրա հիմնական դրույթները, մասնավորապես օտար լեզուն հասող նպատակների համար դասավանդելիս։ Ընդհիվ ուսանողակենտրոն ուսուցման ստեղծվում է այնպիսի միջավայր, որի արդյունքում ուսանողները զարգացնում են իրենց ոչ միայն հաղորդակցական հմտություններն, այլ նաև քննադատական մուածելակերպի, բանակցելու, ինչպես նաև որոշումներ կարողությունները։

Քանակի բառեր. ուսանողակենտրոն ուսուցում, դասախոսակենտրոն ուսուցում, օտար լեզուն հասող նպատակների համար, ուսումնական գործընթաց, դասավանդման ժամանակակից մեթոդներ, նորարարական մոտեցում

Ժնակությունը նոր դարաշրջան անհրաժեշտություն առաջացրեց լրջորեն վերանայել և վերարժնորել կրթական ողջ համակարգը։ Կրթական բարեփոխություններ իրականացվում են համակարգի գրեթե բոլոր շերտերում՝ կրթության նորարարական մոտեցումներ, ինչպես նաև նորովի մեկնաբանելով ավանդական մեթոդները։

Վերջին տարիներին շատ է խոսվում ուսանողակենտրոն ուսուցման մասին։ Նախկինում կիրառվող դասախոսակենտրոն ուսուցումն աստիճանաբար իր տեղն է զիջում ուսանողակենտրոն մոտեցմանը։

Համաձայն դասախոսակենտրոն ուսուցման՝ դասախոսն ունի գիտելիքի փոխանցման ձևութեալու բավարար ինքնուրույնություն և ազատություն՝ որպես հիմնական միջոց կիրառելով դասախոսության դասական նորելու։ Դասախոսը մտնում է լսարան, կարդում դասախոսություն, տալիս հանձնարարություններ, որոնց կատարման ընթացքը ստուգվում է սեմինար-պարապմունքների ժամանակ, իսկ զիտելիքի հիմնական ստուգումը բանավոր քննության արդյունքում։ Ի տարբերություն դասախոսակենտրոն ուսուցման՝ ուսանողակենտրոն կրթության դեպքում ուսանողն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ուսումնական գործընթացի և՝ ձևավորման, և՝ իրականացման հարցերում։

«Ուսանողակենտրոն ուսուցում» եզրը մասնագիտական գրականություն է մուտք գրծել XX դարի սկզբներին, երբ Միացյալ Նահանգներում, ինչպես նաև Եվրոպայի մի շարք երկրներում սկսեցին կրթության դասախոսակենտրոն տարբերակելու

դասավանդման ավանդական և ժամանակակից, նորարարական մոտեցումները: Այն վերաբերում է մի շարք կրթական ծրագրերի, մոտեցումների, ուսումնավարությունների մշակմանն ու կիրառմանը, որոնց նպատակն է անդրադարձ առանձին ուսանողների և նրանց խնդրերի ուսումնական կարիքներին, հետաքրքրություններին, ձգումներին /The Glossary of Education Reform/: Այն ի հայտ եկավ ի պատասխան կրթական որոշումների, որոնք լիովին և հանգամանորեն չեն արտացոլում սովորողների կարիքները և անտեսում են մերողները, որոնց կիրառումը հեշտացնում էր ուսումնական գործընթացը: Եզրը բազմիցս լուսաբանվել և մեկնաբանվել է Զոն Դյուիի, Ժան Պիաժեի, Լև Վիգուսկու աշխատություններում: Ուսանողակենտրոն ուսուցման ջատագովները ցանկանում են նաև մարտահրավեր նետել լայն տարածում գոտած, բայց ժամանակի փորձությանը չփմացած դասավանդման մերողներին: Նրանք գտնում են, որ կրթությունը պետք է ծառայի մեկ գլխավոր նպատակի՝ այն է, բարեկավել և հեշտացնել ուսումնական գործընթացը: Իսկ այն ուսումնավարությունները, որոնք չեն բավարարում վերը նշված պահանջը, ժամանակի ընթացքում արժեգրկվում են:

Հստ ուսանողակենտրոն ուսուցման կանոնների՝ դասախոսը դասընթացի ժամանակ պետք է լինի ուղղողողի դերում, ինչն էլ պահանջում է, որ նա լինի հմուտ, բանիմաց, դասընթացը կառավարի այնպես, որ մի կողմից ուսանողը լինի հիմնական դերակատար, իսկ մյուս կողմից կարողանա ճշգրիտ իրականացնել իր գործառությները: Այս կարգի մոտեցումը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն, քան ուղղակի դասախոսություն կարդալ է, քանի որ դասընթացն իրականացնելու համար բավարար չէ ուսանողին միայն նյութի բովանդակությունը մատչելի ներկայացնելը: Հարկ է, որ դասախոսը կիրառի տարբեր մերողներ, պատրաստի այնպիսի աշխատանքային նյութ, որի կիրառման շնորհիվ ուսանողը կամա, թե ակամա դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից: Արդի պայմաններում դասախոսների առջև դրված են նոր մարտահրավերներ՝ ուսանողներին տալ ոչ միայն անհրաժեշտ գիտելիքներ, այլև ուսուցանել հմտություններ և կարողություններ՝ ինքնուրույն մտավոր աշխատանքներ իրականացնելու համար: Դասախոսը՝ որպես ուսումնական գործընթացի կազմակերպիչ, պետք է ապահովի ուսման բարձր որակ, ինչն էլ կհանգեցնի կոնկրետ իրավիճակներում անհատի կոնկրետ խնդիրներ լուծելու կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը:

Դասախոսակենտրոն ուսուցումից ուսանողակենտրոն ուսուցման անցման գործընթացը ենթադրում է, որ դասընթացը կառուցվի այնպես, որ ուսանողը հայտնվի դրա կենտրոնում, ձգտի ինքնուրույն ձեռք բերել իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները, սովորի օգտվել նյութին առնչվող գրականությունից, կարողանա գտնել և մշակել իրեն անհրաժեշտ տեղեկություններ հասնելով ակնկալվող վերջնարդյունքների /Lynch, 2010/: Ուսուցման գործընթացը կազմակերպվում է այնպես, որ խնդիրների լուծման բացահայտմանը մասնակցեն բոլոր ուսանողներն առանց բացառության: Համատեղ աշխատանքը նշանակում է, որ նրանցից յուրաքանչյուրն իր

ուրույն ներդրումն է ունենում առաջադրված խնդրի լուծման գործում: Դասախոսը ստանձնում է նոր դեր. նա ուղղորդում է՝ աշխատելով հնարավորինս քիչ միջամտել ճանաչողական գործընթացին: Նրա նոր գործառույթներն են.

1. բացատրել աշխատանքի նպատակը,
2. ուսանողներին բաժանել խմբերի,
3. խմբերին տալ հանձնարարություններ,
4. վերահսկել խմբերի աշխատանքը,
5. երբեմն մասնակցել խմբերի աշխատանքներին՝ չպարտադրելով իր սեփական դիրքորոշումը,
6. խմբերի կատարած աշխատանքի վերաբերյալ կատարել դիտողություններ, տալ եզրահանգումներ:

Ուսանողակենտրոն ուսուցումը կարևորվում է օտար լեզվի դասընթացը կազմակերպելիս, հատկապես այն հատուկ նպատակների համար դասավանդելիս: Ուսանողակենտրոն ուսուցման վերը նշված բոլոր դրույթները լիովին կիրառելի են օտար լեզվի դասաժամին: Ծառայելով երկակի նպատակի օտար լեզուն հատուկ նպատակների համար դասընթացը ենթադրում է.

1. օտար լեզվով հաղորդակցում,
2. օտար լեզվով մասնագիտական զանազան խնդիրների լուծում:

Դասընթացի ծրագիրը մշակելիս՝ դասավանդողները պետք է հաշվի առնեն այն հանգամանքը, որ այսօր ուսանողներն օտար լեզվի դասընթացից ակնկալում են ոչ միայն հաղորդակցական հմտությունների, այլ նաև իրենց հետագա մասնագիտության առնչվող որոշ կարողությունների ուսուցանում: Մասնավորապես կարևորվում է քննադատական մտածելակերպ, բանակցել, ինչպես նաև որոշումներ կայացնել ուսուցանելը: Ստեղծելով միջավայր, որտեղ ուսանողները կարող են զարգացնել վերը նշված իրենց կարողությունները՝ դասախոսները կիրառում են օտար լեզվի դասավանդման ուսանողակենտրոն մոտեցում: Շատ կարևոր է, որ դասավանդման նյութերի ընտրության ժամանակ արվեն հետևյալ հարցադրումները.

1. արդյո՞ք բոլոր ուսանողներն են ընդգրկված,
2. արդյո՞ք նրանք ունեն ընտրելու հնարավորություն,
3. օգտագործում են արդյո՞ք նրանք լեզուն որպես հաղորդակցման միջոց,
4. արդյո՞ք առաջադրանքները պարունակում են ցանկացած պատասխաններ ակնկալող հարցեր:

Բավարարելով վերը նշված պայմանները՝ ուսումնական նյութը նպաստում է ուսանողների հաղորդակցական հմտությունների, քննադատական մտածելակերպի ձևավորման ու զարգացմանը:

Այսպիսով, ուսանողակենտրոն լսարանում դասախոսները կենտրոնացնում են իրենց ուշադրությունն ուսանողների վրա, խրախուսում նրանց ստեղծագործելու, խնդիրներ լուծելու, որոշումներ կայացնելու, և այլ կարողությունները /Wright, 2011/:

Ինչևէ, որքան էլ քննադատաբար մոտենանք դասավանդման դասախոսակենտրոն մոտեցմանը, չենք կարող ամբողջովին հերթել դրա դրական կրկները, օրինակ՝ դասախոսը վերահսկում է լսարանը, որտեղ տիրում է կարգ ու կանոն, ի տարբերություն ուսանողակենտրոն լսարանի, որը ենթադրում է ավելի աշխույժ մքնուղորտ. ուսանողներն ընդգրկված են ակտիվ բանավեճերում, երբեմն նրանք մոռանում են, որ աղմուկը կարող է խանգարել իրենց ընկերներին: Ինչպես Դեվիդ Նունանն է նշում. «ցանկացած փոփոխություն նախատեսելիս՝ մեր նպատակն է ոչ թե դեն նետել ինն գործելակերպը, այլ համարել այն նորի հետ» /Nunan, 2013: 65/:

Վերջարանի փոխարեն ստորև ներկայացնում ենք մի քանի խորհուրդ լսարանն ավելի ուսանողակենտրոն դարձնելու համար: Կարելի է.

1. ուսանողներին բաժանել 3-4 հոգանոց խմբերի այնպես, որ բոլորը հնարավորություն ունենան մասնակցելու համձնարարությունների կատարմանը,
2. տալ հանձնարարություն և հնարավորինս քիչ միջամտել՝ ստանձնելով ուղղողորդի դեր,
3. ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ ուսանողներն ազատ կլինեն իրենց տեսակետներն արտահայտելու այս կամ այն հարցի շուրջ,
4. ապահովել հետադարձ կապ, անդրադառնալ ուսանողների ձեռքբերումներին և բացքողումներին:

Այսպիսով, ուսանողակենտրոն ուսուցումը լայն հնարավորություններ է ընձեռում զարգացնելու ուսանողների հաղորդակցական հմտությունները, ստեղծարար և քննադատական մտածելակերպը, ինչն էլ անշափ կարևոր է ուսար լեզուն հատուկ նպատակների համար դասավանդելիս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Выготский Л. С. Педагогическая психология. Москва: Изд. Педагогика-Пресс, 1996.
2. Lynch D.H. Student-Centered Learning: The Approach that Better Benefits Students. Virginia, 2010.
3. Nunan D. Learner-Centered English Language Education. New York and London: Routhledge, 2013.
4. Wright GB. Student-Centered Learning in Higher Education // *International Journal of Teaching and Learning in Higher Education*, №. 23(3), 2011.
5. The Glossary of Education Reform, www.edglossary.org/student-centered-learning
6. Bean J.C. Engaging Ideas: The Professor's Guide to Integrated Writing, Critical Thinking and Active Learning in the Classroom. Jossey-Bass, San Francisco, 2011.
7. Blumberg P. Developing Learner-Centered Teaching: A Practical Guide for Faculty. Jossey-Bass, San Francisco, 2009.

8. Doyle T. Learner-Centered Teaching: Putting the Research on Learning into Practice. Stylus Publishing, Sterling, Virginia, 2011.
9. McCombs B.L., Miller L. Learner-Centered Classroom Practices and Assessments: Maximizing Student Motivation, Learning and Achievement. SAGE Publications, Los Angeles, 2007.
10. Weimer M. Learner-Centered Teaching: Five Key Changes to Practice. Jossey-Bass, San Francisco, 2002.

С. ЧАЛАБЯН, Л. КАЗАРЯН – *О важности личностно-ориентированного обучения иностранному языку для специальных целей.* – В данной статье рассматриваются особенности одного из современных методов преподавания – личностно-ориентированного обучения, подчеркивается его важность в преподавании иностранного языка. Благодаря этому подходу формируется учебная среда, в которой развиваются коммуникативные компетенции, аналитическое мышление и такие качества личности будущих специалистов, как культура общения, умение работать в сотрудничестве, готовность к дальнейшему самообразованию в профессиональной деятельности с помощью иностранного языка.

Ключевые слова: личностно-ориентированное обучение, иностранный язык для специальных целей, традиционное обучение, учебный процесс, современные методы преподавания, инновационный подход

S. CHALABYAN, L. GHAZARYAN – *The Importance of Learner-Centered Approach to Teaching Foreign Languages for Specific Purposes.* – The aim of the present paper is to discuss the peculiarities of learner-centered approach as a modern and innovative approach to teaching. The importance of embracing it when teaching foreign languages cannot be overestimated. Thanks to the application of the approach students co-operate with one another and get involved in the learning process developing their communicative competence, analytical thinking, as well as decision-making and negotiation skills.

Key words: learner-centered teaching, instructor-centered teaching, foreign languages for specific purposes, teaching process, modern methods of teaching, innovative approach

**Мара БАГДАСАРЯН
Сусанна КОЧАРЯН**

Ереванский государственный университет

К ВОПРОСУ О ПРЕПОДАВАНИИ ИНОСТРАННЫХ ЯЗЫКОВ В ВУЗОВСКОЙ СИСТЕМЕ АРМЕНИИ

Одним из приоритетов профессионального образования в Армении является знание английского и русского языков. В преподавании иностранного языка как языка специальности наиболее эффективным является коммуникативный метод обучения, в основе которого лежит функциональный подход. Данный метод, будучи направленным на приобретение и развитие коммуникативно-языковых навыков студента, в то же время способствует повышению его общей профессиональной коммуникативной компетенции. На эффективное решение указанных задач направлены как выбор учебного материала, так и структура курса.

Ключевые слова: иностранный язык, английский язык, русский язык, язык специальности, коммуникативный метод обучения языку, слабый и сильный коммуникативные подходы, коммуникативная компетенция, учебные и аутентичные материалы и задания

Знание иностранных языков в современном мире стало настоятельным требованием времени. Армения в этом плане не является исключением. Активизация процесса глобализации в политике и экономике и всеобщей интеграции в сегодняшнем мире приводит к росту интереса к английскому языку как первому по своей значимости в международной коммуникации. В этом контексте неоценима роль английского языка также и в культурной и научно-образовательной сферах во всем мире. Армения, являясь частью мирового сообщества, членом Совета Европы, также вовлечена в этот глобальный процесс. В связи с этим с каждым годом возрастает необходимость владения английским языком.

Следует отметить также не менее важное значение в армянской действительности русского языка. Как известно, русский язык в Советской Армении, являясь политически необходимым, был также частью общей культуры, пользовался большим престижем в обществе. Однако недальновидная языковая политика в начале 90-х годов прошлого века по отношению к русскому языку, игнорировавшая реальные потребности и интересы общества, привела к разрушению сложившейся мотивационной основы изучения русского языка. Сброшенный с «корабля истории» в переходный для Армении период, русский язык временно утратил свою прежнюю значимость. Однако закон, согласно которому спрос определяет предложение, выражаясь языком экономики, не преминул проявить себя и в сфере социолингвистики.

Историческая связь культур, политическая необходимость, армянский национальный менталитет (народная мудрость гласит: «Որքի լեզու գիտես, այնքան մարդ ես» – «Чем больше языков знаешь, тем более значим/ценен ты»), pragmatичность, ставшая одним из основных приоритетов времени, – вот те причины, которые привели к сравнительно быстрому восстановлению значимости русского языка в Армении.

В связи с историческими, культурными и geopolитическими условиями развития нашей страны, а также процессом более тесной интеграции Армении и России в рамках Евразийского экономического союза (ЕАЭС) в настоящее время, возрастает роль русского языка в Армении как одного из самых востребованных иностранных языков для нашего региона.

В контексте сказанного представляет интерес положение, согласно которому иностранным считается «язык, который обычно не используется для коммуникативных целей в конкретном обществе» /Tomlinson, 2001/. В настоящее время русский язык в Армении классифицируется как иностранный, поскольку, являясь в определенной мере языком межличностной коммуникации, тем не менее утратил свое назначение в качестве средства коммуникации в обществе в целом. Однако, принимая статус русского как иностранного языка, мы не можем не признать тот факт, что для его изучения по сравнению с английским в армянской действительности есть ряд преимуществ социального характера, корни которого, в частности, уходят в недавнее советское прошлое страны.

В настоящее время одним из приоритетов качественного профессионального образования в Армении является обязательное знание английского и русского языков. В связи с этим повышается значимость преподавания иностранных языков в образовательной системе, как в средних, так и в высших учебных заведениях. Значительная роль в процессе подготовки квалифицированных специалистов в разных сферах принадлежит Ереванскому государственному университету как ведущему вузу Армении.

В современном мире среди общественно-гуманитарных наук особенно приоритетными становятся такие специальности, как экономика, политология и психология. В период интенсивной интеграции мировой экономики, а также на фоне частых экономических кризисов повышается роль высококвалифицированных экономистов в разработке путей дальнейшего развития локальных и глобальной экономики. Мировая политика как продолжение экономики также ставит перед специалистами ряд острых проблем. Профессиональный анализ сложившихся критических ситуаций, знание закономерностей развития политики и эффективное использование ее регулятивного потенциала может привести к их правильному разрешению. В связи с этим в нашей действительности все более востребованными становятся грамотные политики и политологи. На фоне проблем политического, социально-экономического, интеграционно-культурологичес-

кого, а также информационного характера в XXI веке, где, определению М. Н. Эпштейна, происходит «отставание человека от человечества», возрастают случаи психологическихувечий, травматизма, депрессий, стрессов. В последние десятилетия теория травмы считается одним из самых «динамичных разделов психологии и вообще гуманитарных наук» /Эпштейн, 2005: 48/. Общество все более и более нуждается в опытных специалистах в области психологии, особенно травматической. Непосредственный опыт работы на факультетах по указанным специальностям и общение со студентами показывает понимание с их стороны значимости выбранных специальностей и подтверждает их желание по окончании университета стать конкурентоспособными специалистами в выбранной сфере. Помимо понимания важности знания иностранных языков для получения хорошего образования вообще, большинство обучающихся осознает необходимость владения английским и русским языками как средством приобщения к специальной профессиональной литературе, что также является мотивационной основой при изучении иностранных языков в высших учебных заведениях. Если еще пару десятилетий назад доступ к мировой научной литературе в Армении в основном осуществлялся через русские переводы, то теперь обучающиеся часто имеют возможность приобщиться к ней и на языке оригинала, как правило, на английском. Таким образом, знание иностранных языков рассматривается не просто как явление, представляющее ценность само по себе, а как средство достижения поставленных задач. Большинство студентов поступает в высшие учебные заведения с определенной подготовкой по английскому и русскому языкам. Однако этой подготовки оказывается недостаточно для их полноценного участия в учебном процессе при огромном количестве специальной литературы на иностранных языках и сложности материала, обусловленной как насыщенностью терминами, так и научным стилем речи текстов по специальности. Работа в аудитории в процессе обучения должна производиться с учетом выбранной студентом специальности, что в свою очередь также послужит стимулированию и повышению его мотивационной активности.

Подготовка высококвалифицированных специалистов в любой области в наше время – время интенсивной межкультурной коммуникации, время беспрецедентного развития информационных технологий –/Эпштейн, 2005/. предполагает знание нескольких иностранных языков. Знание иностранных языков, в особенности английского и русского, рассматривается как необходимый фактор становления и развития личности как специалиста.

В связи с этим приоритетными становятся разработки по теории и практике преподавания английского и русского языков как языка специальности, или, как принято называть это явление в англоязычном академическом дискурсе, иностранных языков для специальных целей (Foreign Language for Special Purposes /FLSP/). Этим обусловлена интенсивная

работа по созданию как методических, так и практических специальных разработок на соответствующих кафедрах факультета романо-германской филологии и факультета русской филологии ЕГУ. Следует отметить, что в связи с введением в программу обучения в сфере высшего образования ряда необходимых общественных, гуманитарных и узкоспециальных дисциплин, возникает дефицит времени, отводимого на обучение иностранным языкам. В условиях сокращающегося количества часов появляется потребность применения более эффективных методов преподавания в аудитории, а также активизации и интенсификации процесса обучения. Для достижения поставленных целей наиболее эффективным является коммуникативное обучение языку (Communicative Language Teaching /CLT/), которое включает в себя и цели, и процесс /Savignon, 1991/.

В высшей образовательной системе на первый план выдвигаются коммуникативные формы обучения иностранным языкам. Практическая направленность, функциональный подход, прагматизм – вот основные требования, предъявляемые в вузах в настоящее время к преподаванию иностранных языков в качестве языка специальности.

«Коммуникативность обучения в том, прежде всего, и состоит, что учащемуся интересна работа на уроке, ибо она согласована с целью, ради которой он сел за парту, что он чувствует пользу от любого изученного предложения, слова, падежа и т.д. Он их изучает не потому, что «так надо» для овладения языком, а потому, что может (и хочет!) немедленно использовать их в своих целях, для осуществления своих помыслов, желаний, стремлений» /Костомаров, Митрофанова, 1978: 11/. На первый план выходит функция, а не теория, и изучение структуры мотивировано именно функцией.

Все те явления, факты языка, которые при линейном изучении преподносятся в определенной последовательности как часть формализованной, логико-грамматической системы, при коммуникативном обучении приобретают иную значимость. Они оцениваются по-новому – в зависимости от того места, которое занимают в речи, в дискурсе, в ситуации, в зависимости от того, насколько они важны в конструировании сообщения и его осмысливания. Заметим, что принципы методики коммуникативного обучения иностранным языкам практически применимы ко всем языкам, в том числе английскому и русскому. Однако при обучении иностранному языку по указанному методу необходимо учитывать специфику того или иного языка. Так, например, известные российские методисты в области преподавания русского языка как иностранного В. Г. Костомаров и О. Д. Митрофанова считают, что гораздо проще осуществить обучение иностранным языкам по коммуникативному методу при изучении языка с аналитическим строем, например, английского. Считается, что при изучении синтетических, или флексивных, языков, например, такого, как русский, есть опасность со стороны преподавателей увлечься грамматическими формами, в частности

множеством падежных окончаний /Костомаров, Митрофанова, 1978/. Необходимо помнить, что изучение языковых явлений и усвоение грамматики не должно стать самоцелью, а должно осуществляться естественным образом, в конкретной ситуации, на материале по специальности.

При овладении иностранными языками на первый план выдвигается практическая речевая деятельность, а не теория. В этом контексте может возникнуть другая крайность – недостаточное внимание к лингвистическим явлениям при преподавании иностранных языков. Поэтому преподаватель должен помнить, что «знания, теоретические сведения составляют определенную базу практической деятельности, а установление обоснованной пропорции теории и практики в обучении (1:3) является одним из условий эффективной системы преподавания» /Рожкова, 1983: 14/.

Кроме того, в теории коммуникативной методики преподавания иностранных языков различают слабый и сильный подходы. В зависимости от преследуемой цели в каждом из подходов меняется соотношение теории и практики, иначе говоря, цель определяет пропорции. «Слабый коммуникативный подход включает в себя непосредственное обучение языковым формам и функциям, чтобы помочь обучающемуся развить способность применить их для коммуникации. Сильный коммуникативный подход опирается на предоставление обучающимся опыта использования языка как основного средства научиться применять язык. При этом подходе обучающиеся, например, скорей всего говорят, чтобы научиться, нежели учатся, чтобы говорить» /Tomlinson, 2011: viii/.

Для овладения иностранным языком необходим тщательно продуманный подбор изучаемого материала, в первую очередь научных текстов по специальности, как учебных, то есть специально подготовленных (сокращенных, адаптированных, упрощенных и т. д.), так и аутентичных.

В процессе обучения языку специальности необходимо использовать также научно-публицистические и публицистические материалы. Тексты такого рода усваиваются легче, в отличие от строго научных текстов, которые являются непривычными для студентов первого курса и в результате воспринимаются, следовательно, и усваиваются ими с трудом. Эти материалы, как правило, отличаются занимательностью и познавательностью. Заметим, что познавательный интерес, который лежит в основе интеллектуализации процесса обучения, является стимулятором внутреннего побуждения при изучении иностранных языков. Занимательность предлагаемого материала способствуют повышению заинтересованности студента и активизирует его деятельность, что также является немаловажной мотивационной основой при обучении иностранным языкам вообще и английскому и русскому языку в частности. Чтобы активизировать познавательный интерес студентов необходимо создать условия, максимально близкие к реальности. В связи с этим неоценима роль

аутентичного материала, особенность которого заключается в том, что он не написан, не создан специально в целях обучения иностранному языку. Материалы такого рода являются выражением реальной действительности. Аутентичным может считаться практически любой необработанный специалистом – лингвистом, методистом – языковой материал, взятый из жизни. Это может быть научный, научно-публицистический или публицистический текст по специальности, газетный материал, выступление какого-либо деятеля в данной области, радиопередача, интервью, информационный блок новостей, открытое письмо в прессе, документы, фильмы, словом, все то, что взято из реальной жизни. К разряду аутентичных материалов можно отнести также пословицы и поговорки, крылатые выражения, изречения, интересные высказывания известных людей разных исторических эпох, цитаты из художественных произведений, тематически связанные со специальностью. Подобный материал дает возможность обучения иностранным языкам посредством опыта применения языка, специально не фокусируясь на грамматических явлениях. Вовлечение студентов в деятельность, связанную с реальной действительностью, происходит благодаря аутентичным заданиям, или «заданиям реального мира» (real world tasks) (Tomlinson). В результате студент учится развертывать обсуждение, участвовать в дискуссии, готовить презентацию, выражать собственное мнение, сравнивать и противопоставлять разные точки зрения, составлять документацию, писать письма, проводить интервью, словом, применять знания по языку специальности в конкретной жизненной ситуации в конкретных коммуникативных целях. Подобный тип заданий, направленный на развитие коммуникативно-языковых навыков студента, в то же время способствует интеллектуализации личности, приобретению реального жизненного опыта и повышению общей профессиональной коммуникативной компетенции.

Коммуникативная компетенция наряду с морфолого-синтаксической включает в себя и прагматическую, с учетом культурных, гендерных, социальных и других контекстуальных явлений /Savignon, 1991/. Посредством прагматической составляющей коммуникативной компетенции при обучении иностранному языку как языку специальности происходит вовлечение обучающегося в общий профессиональный дискурс.

Как видим, при обучении иностранному языку как языку специальности по коммуникативному методу ставится задача не только овладения профессиональной лексикой, выработки и автоматизации лексико-грамматических и словообразовательных навыков, понимания и воспроизведения научных текстов по специальности, конструирования собственного свободного речевого поведения на специальные темы, но и формирования творческого подхода к обсуждаемой проблеме, умения самостоятельно мыслить и отстаивать свою точку зрения.

На эффективное решение задач по обучению иностранному языку как языку специальности должны быть направлены как особенности материала, так и структура курса в целом. Тематический охват текстов по специальности должен быть достаточно широким, чтобы обеспечить наличие значительного лексико-терминологического пластика. Немаловажное значение при обучении имеет правильная последовательность текстов: она должна быть основана на соблюдении принципа возрастающей сложности.

Начальный этап обучения в основном должен быть нацелен на ознакомление обучающихся со специальной лексикой. На этой стадии желательно, чтобы основному аутентичному тексту предшествовали специально подготовленный учебный текст и задания. Промежуточный этап обучения предполагает как закрепление пройденного материала, так и более глубокое введение обучающегося в специальную терминосистему. На данном этапе также необходимо усложнение текстов по специальности и типов лексико-грамматических заданий на их основе. Заключительный этап обучения в частности ориентирован на развитие свободной диалогической и монологической профессиональной речи, следовательно, акцент необходимо ставить на речевые задания. На этой стадии неоценима также роль творческих заданий, способствующих развитию студента как личности в избранной специальности. И если вначале говорилось о формировании личности как специалиста, то теперь, как видим, уже ставится вопрос о формировании специалиста как личности. Это тоже одна из задач преподавательской деятельности. В системе высшего образования в процессе коммуникативного обучения важно помнить, что преподаватель должен осуществлять направляющую функцию, а студент должен занимать центральную активную позицию. Что касается отношений между обучающим и обучающимся на этом уровне обучения, то они должны носить характер сотрудничества. Коммуникативное обучение языку рассматривается с точки зрения социальной интеракции, и студент в ней выступает в качестве партнера.

ЛИТЕРАТУРА

1. Костомаров В. Г., Митрофанова О. Д. Методическое руководство для преподавателей русского языка иностранцам. Москва: Издательство «Русский язык», 1978.
2. Рожкова Г. И. К лингвистическим основам методики преподавания русского языка иностранцам. Москва: Издательство Московского университета, 1983.
3. Эпштейн М. Н. Постмодерн в русской литературе. Москва: Издательство «Высшая школа», 2005.

4. Savignon S. J. Communicative Language Teaching: State of the Art // *TESOL Quarterly*, v. 25, N 2. TESOL, 1991.
5. Tomlinson B. Glossary of Basic Terms for Materials Development in Language Teaching // *Materials Development in Language Teaching*. Cambridge: Cambridge University Press, 2011.

Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Ս. ՔՈՉԱՐՅԱՆ – Հայաստանի բուհական համակարգում օտար լեզուների դասավանդման հարցի շուրջ. – Հայաստանում մասնագիտական կրթության առաջնահերթություններից է անգլերենի և ռուսերենի իմացությունը: Օտար լեզուների՝ որպես մասնագիտական լեզվի դասավանդման մեջ առավել արդյունավետ է հաղորդակցական մեթոդը, որի հիմքում ընկած է գործառական մոտեցումը: Լեզվի հաղորդակցական դասավանդումը, որն ուղղված է ուսանողի լեզվահաղորդակցական հմտությունների ձեռքբերմանը, միաժամանակ խթանում է նրա ընդհանուր մասնագիտական հաղորդակցական իրազեկությունը: Նշված խնդիրների արդյունավետ լուծմանն են ուղղված ինչպես ուսումնական նյութի ընտրությունը, այնպես էլ դասընթացի կառուցվածքն ընդհանրապես:

Քանայի բառեր. օտար լեզու, անգլերեն, ռուսերեն, մասնագիտական լեզու, լեզվի ուսուցման հաղորդակցական մեթոդ, թույլ և ուժեղ հաղորդակցական մոտեցումներ, հաղորդակցական իրազեկություն, ուսուցողական և առուտենտիկ նյութեր ու առաջադրանքներ

M. BAGHDASARYAN, S. KOCHARYAN – *On the Issue of Teaching Foreign Languages in Higher Education Establishments of Armenia.* – One of the priorities of professional education in Armenia is the knowledge of English and Russian. The method of communicative language teaching is considered most effective in teaching foreign languages for special purposes as it is based on the functional approach. This method is aimed at the acquisition of communicative language skills by the student and at the same time promotes his general professional communicative competence. Both the teaching material and the structure of the course as a whole are intended at the effective fulfillment of the mentioned tasks.

Key words: foreign language, English, Russian, foreign language for special purposes /FLSP/, communicative language teaching /CLT/, weak and strong communicative approaches, communicative competence, teaching and authentic materials and tasks

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արա ԱՌԱՋԵԼՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՖՐԱՆՑ ԿԱՖԿԱՅԻ «ՕՐԱԳՐԵՐԻ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համաշխարհային գրականության ամենահայտնի դեմքերից մեկի՝ Ֆրանց Կաֆկայի գրական ժառանգության մեջ բացառիկ տեղ են գրավում «Օրագրերը»։ Ստեղծվելով 1910-1924թթ. ընթացքում, այդ օրագրերը, փաստորեն, գրողի կյանքի և ստեղծագործական աշխարհի մասին պատմող թերևս միակ փաստարությն են։

Հոդվածում հեղինակը դիտարկում է Ֆրանց Կաֆկայի «Օրագրերի» կառուցվածքը և գտնում, որ այն ունի համադրական կառուցվածք և բաղկացած է փաստագրական և մտահղացված տեքստերի համադրությունից։

Բանափառը. համադրական կառուցվածք, փաստական տեքստեր, մտահղացված տեքստեր, պատկերագրություն, ինքնաքննադատություն, արտաքին կենսագրություն, ներքին կենսագրություն։

Կաֆկայի «Օրագրերը» համադրական կառուցվածքը ունի։ Դա պայմանագրված է այս երկի գործառնական նպատակների երկակիությամբ, որի հետևանքով ստեղծվել է ոչ միայն ինքնակենսագրական, այլև գեղարվեստական արժեք։ Թեև այս նպատակներից առաջնայինը, ինչպես նշում է Kindler-ի մեկնաբանը, եղել է «իրադարձությունների շտեմարան լինելը» /Kindlers, 1988: 51/, սակայն գրական նյութերի անընդհատ ներմուծումը նկատելիորեն փոխում է դրանց պատկերը։ Դասական պատկերացումներին համապատասխան, այսինքն միատարր օրագիր ունենալու գրողի մտահղացումը, որ ինչ-որ շափով նկատելի է սկզբնական գրառումներում, աստիճանաբար տեղի է տալիս խառը գրելանձին, այն է՝ ինքնակեսագրական և գրական նյութերի համատեղմանը։

Այս հանգամանքը «Օրագրերին» հաղորդում է յուրահատուկ բնույթ և թելադրում մոտեցումների տարրերակում։ Եթե բուն օրագրերի մասով դրանք կապվում են ավանդույթի հետ, պահպանված են դասական մի շարք սկզբունքներ՝ ժամանակագրական հաջորդայնություն, գրառման և գրառվող նյութի համաժամանակություն և ներկայացնում են ժանրի գոյաբանականանձնական ենթատեքստը (Ամիել, Կյերկեգոր), ապա ստեղծագործական նյութերի ընդգրկման առումով գրեթե նորություն են։

«Օրագրերում» կառուցվածքային յուրաքանչյուր տարր, յուրաքանչյուր միավոր ծառայում է երկի գործառնական նպատակների, հեղինակի ինքնաճանաշման և ինքնարասահայտման կազմակերպմանը։ Դա վերաբերում է նշված մակարդակներում կառուցվածքային հիմնական տարրերին։

Հոգեբանական մակարդակում, օրինակ, դրանք գլխավորապես կապվում են գրողի ոչ թե գործնական հատկանիշների դրսևորման (Կաֆկան գրքունեության մարդ չէր), այլ հոգեմտավոր ընկալումների և ապրումների հետ (հիշողություն, խորհրդածություն, տառապանք, վախ, երկատվածություն, հուսահատություն և այլն): Ասվածը վերաբերում է նաև տարածության և հատկապես ժամանակային դրսևորման ձևերին, որոնցով հարուստ են «Օրագրերը»: Ժամանակի և տարածության ձևերը այստեղ փաստորեն միմյանց հատվող այն առանցքային գծերն են, որոնց հատման կետում մշտապես գտնվելով, Կաֆկան ստեղծում է օրագրային իր հյուսվածքը:

Գտնում ենք, որ «Օրագրերում» առկա են սկզբունքորեն միմյանցից տարբեր երկու տիպի փաստագրական և մտահղացված տեքստեր:

Փաստագրական տեքստերը ներկայանում են երեք տարատեսակներով՝

1. Նկարագրական տեքստեր. սրանք այն տեքստերն են, որոնցում հեղինակը, օրագրային ես-ի տեսանկյունից, դիտում, նկարագրում է երևույթները, մարդկանց:

2. Պատմողական տեքստեր. սրանք հեղինակի հետ կատարված իրադարձությունների, դեպքերի մասին գրառումներն են:

Տեքստային այս խճի մեջ պետք է առանձնացնել նաև հեղինակի գրառումները սեփական երազների մասին: Դրանց թիվը հասնում է 23-ի:

3. Ինքնաքննական-բացատրական տեքստեր. սրանք այն գրառումներն են, որոնցում արտահայտություն են գտնում հեղինակային ես-ի ինքնաւանդադրումները: Նման գրառումների ծավալը «Օրագրերում» չափազանց մեծ է: Դա հնարավորություն է տալիս այս խճի գրառումները բաժանել մի քանի ենթախմբի: Ամենից ավելի աչքի են ընկնում այն գրառումները, որոնցում հեղինակը անմիջականորեն խոսում է իր վիճակի մասին: Կաֆկան հաճախ է վերլուծում իր ներաշխարհը, ցանկանում հասկանալ ոգևորության, տագնապի, վախի և հույսի իր ապրումները, որոնք մեծ մասամբ կապված են գրելու ընդունակության կամ անընդունակության վրա: Կաֆկայի շատ տեքստեր մեկնաբանում են հեղինակի գրական արտադրանքը:

Ինքնաքննական-բացատրական առանձին տեքստերում Կաֆկան խոսում է իր ներաշխարհային կացության մասին՝ անուղղակիորեն՝ «տառ» անորոշ մասնիկի միջոցով ստեղծելով միակազմ նախադասություններ.

«Օրագրերում» տեքստերի մյուս տիպը մտահղացված գրառումներն են: Դա գեղարվեստական տեքստերի ամբողջությունն է, որը նույնպես կարելի է բաժանել երեք խճի:

1. Ազատ տեքստեր, որոնք ունեն օրագրային գրանցում, բայց պատկանելությունը Կաֆկայի որևէ ստեղծագործությանը դեռևս ճշտված չէ: Փաստորեն դա գրառումների այն ամբողջ զանգվածն է, որին անենից ավելի է համապատասխանում Մ. Բրոդի «Անմշակ մարմար» բնորոշումը: Կիսավարտ այս գրքերը, որոնց արժեքը հենց կիսավարտությունը ու հատվածայնությունն է, «Օրագրերին» հաղորդում են մանրանկարչությանը յուրահատուկ գեղեցկություններ:

2. Աշակման փուլում գտնվող տեքստեր, որոնք հայտնի պատմվածքների, մանրապատումների և վեպերի հատվածներ կամ նախնական ուրվագծեր են:

3. Ավարտված գեղարվեստական տեքստեր, որոնք համեմատաբար քիչ թիվ են կազմում:

Տեքստային կառուցվածքին զուգահեռ «Օրագրերը» կարող ենք դիտարկել նաև բովանդակային կառուցվածքի տեսանկյունից: Այս մակարդակում, բնականաբար, հիմնականը Կաֆկայի կենսագրության և մտքերի ընթացքն է, նորա էության դրսնորման տարածաժամանակային մանրամասները: Տեսանելի է Կաֆկայի ինքնության (հեղինակի ես-ի) դրսնորման երկու արտաքին և ներքին տարրերակներ: Այս առումով «Օրագրերի» կառուցվածքի այն պատկերը, որը ներկայացնում է Հ. Կորտը՝ «...ստեղծագործական ուրվագծեր, էսքիզներ, հատվածներ, տեքստերի սկզբնամասեր, նամակների համառոտագրություններ, իրադարձային փաստեր, դիետիկ ծրագրեր և ամեն կարգի գրառումներ...» /Kafka, 1994: 256/, կարելի է տրոհել գրառումների, որոնք ներկայացնում են հեղինակի արտաքին կենսագրությունը, և գրառումների, որոնք ներկայացնում են հեղինակի ներքին կենսագրությունը: Քանի որ արտաքին աշխարհի հետ գրողի առնչությունները աչքի չեն ընկնում հարուստ իրադարձություններով, ուստի նրա ինքնության բացահայտման հիմնական ծանրությունը ընկնում է ներքին կենսագրությանը վերաբերող գրառումների վրա: Դա հաստատվում է վիճակագրական փաստերով: «Օրագրերում» գրառումների ընդհանուր թիվը շուրջ 1150 է: Եթե այդ ամբողջությունը դիտարկում ենք նշանակած զույգ տարրերակների տեսանկյունից, ապա պարզվում է, որ Կաֆկայի մասին փաստական տեղեկություններ պարունակող այս տարրերակների հարաբերակցությունը ուղղակիորեն կապված է գրողի կյանքի ընթացքի հետ: Եթե սկզբնական շրջանում գերակշռությունը արտաքին կենսագրությանը առնչվող գրառումների կողմն է, ապա վերջին տարիներին այդ հարաբերակցությունը ստանում է ճիշտ հակառակ պատկերը: 1921 թ. հետո յուրաքանչյուր երեք գրառումներից երկուսը խոսում են գրողի ապրած հոգեկան դրամայի մասին, մինչդեռ 1911-13թթ. գրառումներում դրանք կազմում են 15-20 տոկոս:

Արտաքին կենսագրական գրառումները հնարավորություն են ընձեռնում հետևելու Կաֆկայի հեղինակային ես-ի՝ արտաքին աշխարհի հետ ունեցած փոխհարաբերություններին: Այդ աշխարհը, իբրև մերժելի կամ ընդունելի շափանիշ (Dominante), առկա է գրառումներում նույնիսկ այն դեպքում, եթե գրողը ներաշխարհային խնդիրներ է քննում (Կաֆկայի ինքնությունը պարզվում է արտաքին աշխարհի հետ ունեցած հակասությամբ միայն): Դա գրողի ստեղծագործական և գործնական կյանքի ողջ աուրան է՝ հանդիպումներ, գրական ընթերցումներ, գրականության և արվեստի մեծերի նասին խորհրդածություններ, գրքերից ստացած տպագորություններ, նամակներ, ընտանեկան, ամուսնական խնդիրներ (վեճեր), ծրագրեր, ծառայություն, փողոց, կանայք, ընկերներ: Սկզբնական գրառումներում նրա հետաքրքրու-

թյունները շատ են. հրեականություն (պատմություն, թատրոն), կրոն, մշակույթ, Ֆ. Բաուեր (Կաֆկայի նշանածն է), Վ. Գյորե, սակայն տարիների հետ նա աստիճանաբար մերժում և գրեթե նվազագույնի է հասցնում դրանք: «Օրագրերից», օրինակ, ոչ մի կենդանի տպավորություն չի ստացվում ժամանակի քաղաքական – հասարակական իրադարձությունների մասին, դրա փոխարեն հստակորեն գծագրվում է արտաքին աշխարհի միջական շափերի հասնող թշնամական առկայությունը: Ահա թե ինչու սկզբնական շրջանի գրառումներում արտաքին կենսագրության փաստերի հետ մեկտեղ առկա է նաև «սոցիալական ազատության միտումը» /Kindlers, 1988: 52/:

Կաֆկայի գրյաբանական տառապանքի հոսքը հիմնական է դառնում ողջ «Օրագրերի» համար: Այն ներկայանում է գրողի հոգեկան ապրումների, ինքնազննության և ինքնաճանաշման, գոյաբանական խորհրդածությունների, երազմների, ստեղծագործական դժվարությունները հարթահարելու խնդիրների մասին պատմող գրառումների տեսքով: Նկատվում է հեղինակային ես-ի երկասում իրական ես-ի և մտահղացված ես-ի: Իրական հեղինակային ես-ի դրսևորման ձևերով (դա հարուստ գամմա է օտարացումից մինչև մենակություն, վախից մինչև սարսափ, անելանելիությունից մինչև հաշտեցում) պայմանավորված է «Օրագրերի» բովանդակային դեմքը: 1911թ. մարտին, այցելելով Ռ. Շբայներին, Կաֆկան խոստովանում է, որ իր դժբախտության միակ պատճառը խառնաշփոքն է, որը ծնվում է արտաքին և ներքին պարտականությունների կատարման և դրանց հաշտեցման անհնարինությունից: «Զկատարված ներքին յուրաքանչյուր պարտականություն,- գրում է Կաֆկան, – վերածվում է դժբախտության զգացման» /Kafka, 1951: 39/: Դրսի և ներսի խզման հիմքի վրա գոյացած այս տառապանքը Կաֆկան չկարողացավ (չեր ուզում) հարթահարել ամբողջ կյանքի ընթացքում: Արտաքին, իրադարձային փաստերը «Օրագրերում» իրենց տեղը աստիճանաբար զիջում են ինքնազննության և տառապանքի պատկերներին, որոնք վերջին տարիների գրառումներում դառնում են գրեթե հիմնական և «Օրագրերին» հաղորդում խոստովանանքային արձակի գծեր: Ահա Կաֆկայի մենակության պատկերից մեկը.

«Մենակությունը մի զորություն ունի ինձ վրա, որ բնավ չի անցնում: Իմ ներաշխարհը առանձնանում է նրանից... պատրաստվում բացվել խորագույն ծալքերով: Եվ իմ ներսում ծնվում է մի նոր, փոքրիկ կարգուկանոն, որից բացի ես ուրիշ ոչ մի բանի կարիք չունեմ» /Kafka, 1951: 24/:

Օտարացման

«Ինչն է քեզ կապում այս նստած, պնդացած, խոսող, սուրաչք մարմինների հետ ավելի, քան որևէ առարկայի, ասենք, գրիշի կամ ձեռքիդ նամակի հետ: Միթե այն, որ դու նրանց ցեղից ես: Բայց դու նրանց ցեղից չես, և դրա համար էլ այդպիսի հարց տվեցիր» /Kafka, 1951: 342/:

Վախի

«... Ես ուզում էի մոտենալ լվացարանին, և լսեցի կարճ, անծանոթ շնչառություն: Բարձրացրի աչքերս և սենյակի խուլ անկյուն տարված

վառարանի վրա, կիսամթի մեջ նկատեցի ինչ-որ կենդանի բան: Դեղնավոն փայլով աշքերը կանգ առան ինձ վրա...» /Kafka, 1951: 249-250/: «Օրագրերի» կառուցվածքում, ինչպես արդեն նշվեց, որոշակի գործառնական նշանակություն ունեն երազները /տարօրինակ երազներ էր տեսնում Կաֆկան/, ինչպես նաև հիշողությունը: Կաֆկային բնորոշ է պատկերավոր (Eidetik) հիշողության տարրերակը: Թե՛ արտաքին և թե՛ ներքին ինքնակենսագրությանն առնչվող իրադարձությունները Կաֆկան հիշում և վերապրում է մեծ մասամբ իրեն պատկեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Kafka F. Tagebücher 1910-1923. Frankfurt am Main: Fischer Taschenbuch Verlag, 1951.
2. Gunterman G. Vom Fremdwerden der Dinge beim Schreiben. Niemeyer, 1991.
3. Kindlers Neues Literatur Lexikon. München, 1988. Bd. 9.
4. Kafka F. Text und Kritik, Sonderband VII, 1994.

Ա. ԱՐԱԿԵԼՅԱՆ – *Структура «Дневников» Фр. Кафки.* – В статье автор, рассматривая структуру «Дневников» Фр. Кафки, приходит к выводу о том, что произведение имеет синтетическую структуру и состоит из документальных и вымышленных текстов.

Ключевые слова: синтетическая структура, документальные тексты, вымышленные тексты, образная память, самокритика, внешняя биография, внутренняя биография

A. ARAKELYAN – *The Structure of Franz Kafka's "Diaries".* – In the present paper the author analyzes the structure of Franz Kafka's "Diaries" and comes to the conclusion that this structure is comparative, it combines the literary imagination with publicism.

Key words: synthetic structure, documentary texts, made-up texts, memory of images, selfcriticism, outer biography, inner biography

Վերոնիկ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ԱՄԵՐԻԿՅԱՆ «ՔԻԹՆԻԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ»
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ Չ. ԲՈՒԿՈՎԱԿՈՒ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ՎՐԱ**

Հողվածում ուսումնասիրվում են Զարլգ Բուկովսկու և քիթնիկների ստեղծագործությունների ընդհանուր և տարրերվող գծերը, մասնավորապես համեմատություններ են անցկացվում Չ. Բուկովսկու և Զեր Քերոսակի՝ «քիթնիկական շարժման» առաջնորդի ստեղծագործությունների զաղափարական գծերի միջև։ Այս համեմատական վերլուծությունը կարևոր նշանակություն ունի Չ. Բուկովսկու գեղագիտական հայացքների և գեղարվեստական սկզբունքների ձևավորման վրա քիթնիկների զաղափարախոսության ազդեցությունը բացահայտելու տեսանկունից։

Քանակի բառեր. Բուկովսկի, քիթնիկ, հիմնախնդիր, ոճ, աշխարհայացք, իրականություն, հակամշակույթ, մարզինալ, արժեք, մեկուսացում։

XX դարի ամերիկյան գրականության մեջ քիչ չեն այնպիսի գրողները, ովքեր փոխել են իրենց ժամանակաշրջանի մտածողությունը, դարձրել այն առավել առաջադեմ ու հումանիստական։ Սակայն նրանց շարքում առանձնակի տեղ ունի Զարլգ Բուկովսկին, ով առանձնացավ իր ժամանակի գրողներից ոչ միայն իր ստեղծագործություններով, այլև՝ սկանդալային վարք ու բարքով։ Բուկովսկու գլխավոր հերոսը կյանքն է, որի մոտ անկյունները բացահայտում են նրա գրիչը յուրաքանչյուր ընթերցողի համար, ով ծանոթանում է նրա բանաստեղծություններին, վեպերին ու պատմվածքներին։

Զարլգ Բուկովսկու անկեղծության խիզախս պոռթկումներն ինքնակենսագրական բնույթ ունեն, քանի որ դրանցում հեղինակը հանդես է զայս իր անվանք ու հիմնականում պատմում է իր անձնական, այդ թվում՝ և ինտիմ կյանքի մասին։ Իր մասին պատմելիս Բուկովսկին առավել հաճախ կիրառում է «լուսանկարչական ճշտությունը»։

Իր ստեղծագործություններում ճշտորեն վերարտադրելով իրեն ու շրջապատող իրականությունը, ոչինչ չափելացնելով ու չնվազեցնելով եղածին՝ նա հաճախ բոլոր մանրամասներով, երեմն՝ նոյնիսկ փողոցային ժարգոնով ու ամերիկյան «հատակում» գործածվող «հյութեղ» հայիոյանքներով է ստեղծում իրականության «ճշմարիտ լուսանկարը»՝ ցուցադրելով կյանքն ինչպես որ է։ Այս է պատճառը, որ Զարլգ Բուկովսկու ստեղծագործությունները, առանձնապես արձակը, մշտապես հեղեղված են ամենատարբեր հայիոյախառն արտահայտություններով ու անատոմիական-ինտիմ նկարագրություններով։ Արդյունքում, նա մնացել էր երկարեւ վարագույրից անդին։

1970-80-ական թվականների Միացյալ Նահանգների գրականությանը նվիրված խորհրդային շրջանի գրականագետների մենագրություններում, ուսումնական ձեռնարկներում կամ տեղեկատուններում Զարլզ Բուկովսկու անունը երբևէ չիշատակվեց, այն էլ այս դեպքում, եթե այդ տասնամյակներում արդեն գրողը մեծ ճանաչում էր գտել ոչ միայն և ոչ այնքան Ամերիկայում, այլև դրա սահմաններից դուրս՝ Եվրոպայում ու հատկապես Գերմանիայում: Բուկովսկին նշված ժամանակահատվածում Արևմուտքում ամենամեծ պահանջարկ ունեցող ամերիկացի գրողն էր: Եթե որևէ խորհրդային քննադատ համարձակվեր անդրադառնալ Բուկովսկու ստեղծագործություններին, ապա ստիպված պետք է լիներ, գոնեւ հպանցիկ, խոսել դրանց բովանդակության, ոճավորման հնարների մասին, ինչն անհնար էր այդ ժամանակաշրջանում գործող խիստ գրաքննության պայմաններում:

Չ. Բուկովսկին նոր ժամանակների գրողներից տարբերվող ճանապարհ էր ընտրել հիմնախնդիրներ վեր բարձրացնելու համար: Նրա ստեղծագործություններն առանձնանում էին ուրույն թեմատիկայով, լեզվաոճական ինքնատիպ բառուբանով, գեղարվեստական խոսքը կառուցելու օրինաչափություններից շեղվելով և կյանքի «մուր կողմը» ներկայացնելու յուրատիպ մեկնաբանություններով: Այս պարզ պատճառով խորհրդային կարգերի օրոք անհաղթահարելի պատճեց էր դրված Բուկովսկու ստեղծագործությունների վրա:

Իրավիճակը կտրուկ փոխվեց XXI դարի սկզբին, եթե ամբողջ աշխարհում և այդ թվում՝ Ռուսաստանում, մեկը մյուսի հետևից սկսեցին բարգմանել, տպել ու վերատպել Զարլզ Բուկովսկու պատմվածքներն ու վեպերը, սակայն դեռևս դժվար է հավատալ, որ մոտ ապագայում Բուկովսկու վեպերից կամ, առավել ևս, պատմվածքների ժողովածուներից որևէ մեկը բարգմանվի հայերեն լեզվով:

Բուկովսկին հաճախ նշում է, որ թե՛ գաղափարական, թե՛ թեմատիկ և թե՛ ոճական առումներով իր ստեղծագործությունը հոգեհարազատ է «քիթնիկական» շարժման ոգուն և ստեղծվել է դրա գաղափարախոսության ընդհանուր համատեքստում:

Քիթնիկ գրականության առաջատար արձակագիր Զեք Քերուակը, ում ամերիկացի հայազգի գրականագետ Արամ Սարոյանն անվանում է «քիթնիկների բազավոր» /Saroyan, 1992: 6/, իր ոճով, լեզվով, ստեղծագործությունների խնդրայնությամբ լինելով Բուկովսկուց խիստ տարբերվող արձակագիր, միաժամանակ, շատ մոտ է վերջինիս իր աշխարհայացքով, Միացյալ Նահանգներին տված իր գմանատականներով:

Բուկովսկին Քերուակի նման իր երիտասարդ ու հասուն կյանքի մեծ մասն անց է կացրել Ամերիկայով մեկ քափառումների մեջ, ինչի արդյունքում էլ ծնվել է նրա «ճանապարհին» (On the Road, 1957) վեպը, ուր բացահայտվում են քիթնիկների գաղափարական, քաղաքական ու կրոնական սկզբունքները, նրանց աշխարհայացքը: Քիթնիկներն ու նրանց առաջնորդը

կրողներն էին ամերիկյան նոր մտածողության, նոր կենսակերպի, իրականության նոր մեկնարանության: Նրանց գլխավոր սկզբունքներից մեկն էր մերժել ամերիկյան քաղքենիական կենցաղը, միմիայն նյութականի վրա հենված ապրելակերպը: Զ. Քերուակն ինչպես իր ստեղծագործություններում, այնպես էլ հարցագրույցներում ու հրապարակախոսական գործերում ցույց էր տալիս հանրահայտ «ամերիկյան երազանքների» ժամանակակից մեկնարանությունների արժեզրկվածությունը:

Իր «Թեթևամիտների աղանդը» հոդվածում քննադատ արվեստագետ Ռոբերտ Բրուսթեյնը, քննադատելով այս երիտասարդական շարժումը, մասնավորապես նրանց մասին գրում է. «Թերի մտքով, մեծ մկաններով մարդիկ, ովքեր պատրաստ են դաժանության» /Brustein, 2001: 50/:

Ինչպես Զարլ Բուկովսկու, այնպես էլ Քերուակի համար անհրաժեշտ էին գրականության մեջ անվերջությունն ու օրյունիվորթյունը՝ որպես կենսափիլիստիայության բացահայտման պայմաններ: «...Անկեղծ լինելու համար կյանքը մեր վերջին հնարավորությունն է», – գրում է Քերուակը /Kerouak, 2006: 395/:

Ներկայացնելով բիթնիկների գեղագիտական-գեղարվեստական հայեցակարգը՝ Ալեն Գինզբերգը գրում է. «Բիթնիկների նպատակն է հասնել այնպիսի մերկուրյան, որ հնարավոր լինի տեսնել երևակայական աշխարհը. սա այն դասական հայեցակարգն է, որը օգնում է հասկանալու, թե ինչ է կատարվում հոգու հետ գիշերվա խավարում» /Plummer, 1981: 116/:

Լինելով ազատամտության կողմնակիցներ՝ բիթնիկներն իրենց ստեղծագործություններում գերադասում էին իրենց հերոսների ինտիմ կյանքը ներկայացնել բաց տերսոով, հաճախ բոլոր մանրամասներով: Այսպիսին է նաև Քերուակի «Ծանապարհին» վեպը, որի մասին Գինզբերգը գրում է. «Ես չգիտեմ, թե ինչ կերպ պետք է այն հրատարակվի. այն խիստ անձնական է ու լի սեռական բառապաշտով» /Charters, 1995: 520/:

Նման գրելանքը շատ բնորոշ է նաև Զարլ Բուկովսկուն, ինչի պատճառով որոշ քննադատներ այն փորձում են ներկայացնել որպես պոռնոգրաֆիկ գրականություն, ինչը ամենին էլ չի համապատասխանում իրականությանը: Զարլ Բուկովսկու ստեղծագործությունները ձեռք բերեցին մշակութային մեծ արձագանք, որն անուղղակի կերպով նպաստեց գրական ձևերի և արտահայտչամիջոցների նորացմանը, նոր մտածողության ի հայտ գալուն: Այս գրական շարժման շրջանակներում է ծնունդ առնում սոցիալական «մարգինալի» կերպարը, որը կենտրոնական տեղ է գրադեցնում Զարլ Բուկովսկու ստեղծագործություններում: Հիմնախնդիրների շարքը, որոնք կապված են հասարակության մարգինալների հետ, կրում են ոչ այնքան քաղաքական, որքան գաղափարական և սոցիալական բնույթը:

Հիմնական շեշտը և՝ բիթնիկների, և՝ Զարլ Բուկովսկու ստեղծագործության մեջ՝ ոյլվում էր բուրժուական «կարծրացած նորմերի» հաղթահարման և կյանքում ու արվեստում փորձարարության վրա: Նրանք

առաջ են քաշում «նոր զգացմունքայնության», էմոցիոնալ անմիջականության պաշտամունքը:

Եվ Բուկովսկին, և բիթնիկները ձգտում են միաձուել խոսքի, ձայնի, տեսողական պատկերի արտահայտչական հնարավորություններն ու փոխել իրականության գեղարվեստական ընկալումը թմրադեղերի միջոցով։ Սա է պատճառը, որ բիթնիկներին համարում են «հակամշակույթի» նախակարապետներ։ Դրանցից է սկիզբ առնում նաև հիփիների շարժումը և մինչև մեր օրերը հասած՝ պանկերի շարժումը։

«Բիթնիկական» կենսակերպին բնորոշ է կամավոր աղքատությունը, սիրո և ինքնարտահայտման ազատությունը, ինքնամփոփածությունը։ այս ամենը կազմում են Չարլզ Բուկովսկի նարդու և գրողի ամբողջ էությունը և նրա բոլոր ստեղծագործությունների հիմնաքարերն են համարվում։

Չարլզ Բուկովսկին, բիթնիկներին հետևելով, ցույց է տալիս, որ հասարակության ծաղկման հետ ավելի է մեծանում այն անջրպետը, որը բաժանում է հասարակության «մարգինալների», կյանքի այս դաժան մրցավազքում դուրս մղվածներին բարգավաճող խավերից։ Միևնույն ժամանակ դասային կոնֆլիկտները և դասային պայքարը նրանց կողմից մղվում է հետին պլան կամ ընդհանրապես շնչվում է օրակարգից։

Այսպես, 1950-60-ական թվականները կարելի է համարել բարգավաճման և տագնապայնության պարադրսալ համադրություն։

Չարլզ Բուկովսկին բիթնիկների հոգևոր առաջնորդ Ջեք Քերուակի նման իր ամբողջ կյանքն անցկացրեց թափառումների մեջ և իր բոլոր ստեղծագործությունները նվիրեց այդ բոհեմական կյանքի գեղարվեստական արտացոլմանը։ Ջեք Քերուակին ուղղված ժամանակակիցների «Մեծ հուշագրողը» անվանումը հավասար չափով կարող էր վերաբերել նաև Բուկովսկուն, քանի որ Քերուակի նման Բուկովսկին էլ իր ստեղծագործության նյութ դարձրեց սեփական կյանքի դրվագների աստիճանական նկարագրումը։

Եթե համեմատական զուգահեռներ անցկացնենք բիթնիկների և Չարլզ Բուկովսկու ստեղծագործական մոտեցումների միջև, կարելի է արձանագրել, որ՝

1. Ինչպես բիթնիկները, այնպես էլ Բուկովսկին, չին ընդունում ժամանակակից «քաղաքակրթության» արժեքները, և նրանց կյանքն ու ստեղծագործությունը այդ արժեքների դեմ ըմբռստացման ձևն է։

2. Բուկովսկին, ինչպես և բիթնիկները, ամբողջ կյանքն անցկացրել է թափառումների մեջ, օրվա հացը վաստակել պատահական աշխատանքներով։

3. Եվ բիթնիկները, և Բուկովսկին հեռու են քաղաքականությունից, և նրաց բոլորն ու ըմբռստացումը կրում են ոչ թե քաղաքական, այլև հասարակական բնույթ։

4. Թե՛ Քերուակը, և թե՛ Բուկովսկին իրենց ստեղծագործությունը նվիրել են սեփական թափառական կյանքի նկարագրությանը, և այդ մասին են

վկայում անգամ նրանց ստեղծագործությունների վերնագրերը՝ «Ճանապարհի վրա», «Դհարմայի բափառականները», «Ընդհատակի բնակիչները»:

5. Հասարակությունից մեկուսանալու նրանց ձգումը արտահայտվում էր ոչ միայն անայի ճանապարհներով բափառելով, այլև թմբիրի մեջ լինելով՝ «ինքնաթմբեցմամբ», որը Քերուակի դեպքում տեղի էր ունենում թմբադեղերի, իսկ Բուկովսու դեպքում ալկոհոլի միջոցով:

6. Եվ, վերջապես, նրանք իրենց կենսակերպով քարոզում էին ազատ կյանք և ազատ սեր՝ դնելով իրենց կեղծ բարոյականությունից և հասարակական օրենքներից դուրս:

7. Ինչպես Քերուակի, այնպես էլ Բուկովսկու վեպերը հաճախ միայն պայմանականորեն կարելի է կոչել այդպիսին, քանի որ դրանք ավելի շատ կրում են մանրակրկիտ արձանագրային-նկարագրական բնույթ:

Թերևս միակ տարրերությունը, որը բաժանում էր նրանց իրարից, դա այն է, որ Քերուակը և բիթնիկները նաև հավատքի հարցում իրենց ազատություն են վերապահում տարբեկ բուդիզմով, մինչդեռ Բուկովսկին չի ընդունում ոչ մի կրոն, ոչ մի հավատք:

Վերադառնալով Քերուակ-Բուկովսկի համադրությանը՝ նշենք, որ ինչպես «բիթնիկների արքան»՝ Ջեք Քերուակը, այնպես էլ Չարլզ Բուկովսկին կյանքի վերջին տարիներն անցկացրին ամբողջական մեկուսացման մեջ և այդպես էլ մահացան միայնակության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Brustein R. The Cult of Unthink // *Beat Down to Your Soul*. New York: Penguin Books, 2001.
2. Charters A. J. Kerouak: Selected letters 1940-1956. New York, 1995.
3. Kerouak J. Windblown World. New York: Penguin Books, 2006.
4. Plummer W. The Holy Coop: A Biography of Neal Cassady. New Jersey: Prentice Hall Trade, 1981.
5. Saroyan A. Forward to Big Sur. New York: Penguin Books, 1992.

В. ХАЧАТУРЯН – *Формирование художественного мира Чарльза Буковского и американское «битническое движение»*. – Творчество американского писателя Чарльза Буковского также противоречиво, как и вся его жизнь. Гуманист и маргинал, большой мастер слова, чьи произведения полны жаргонно-некцензурными выражениями. Главный герой прозы Буковского – сама жизнь. Основные романы и рассказы писателя создавались в период «битнического движения», и по своему духу и идеиному содержанию они вписываются в общий контекст этого движения.

В данной статье исследуются общие черты, а также специфические различия между творчеством Чарльза Буковского и произведениями битников,

в частности, романами Джека Керуака – идейного вождя этого движения. Этот сравнительный анализ имеет важное значение, поскольку именно эстетические и мировоззренческие положения битников в большей степени повлияли на формирование художественно-эстетических и мировоззренческих принципов Буковского. Неприятие ложных моральных и духовных ценностей американского общества – основная художественно-идеологическая платформа, на которой строилось как творчество битников, так и творчество Чарльза Буковского.

Ключевые слова: Буковски, битник, проблема, стиль, мировоззрение, реальность, антикультура, маргинал, ценность, изоляция

V. KHACHATURYAN – *Development of Charles Bukowski's Literary Outlook and the American "Beat Movement".* – Charles Bukowski's literary career and life was full of contrasts. Bukowski was a great humanist, a marginal, master of word whose works are full of jargonisms and non-censored expressions. Charles Bukowski's principal hero is life itself. His novels and stories were written during the period of "the beat movement", and they can be truly considered part of this movement. The paper studies the common features and also the specific differences between Charles Bukowski's works and "the beat movement writers" works in particular those of J. Kerouak who is considered to be the ideological founder of this movement. This comparative analysis is of vital importance as aesthetic principles and outlook of beatniks had a great impact on the formation of Bukowski's literary attitude. Opposing moral and spiritual values of the American society forms the common ground on which Bukowski's and beat writers' ideological standpoint developed.

Key words: Bukowski, beatnik, issue, style, outlook, reality, anticulture, marginal, value, isolation

Վիոլետա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**Դ. Հ. ԼՈՈՒՐԵՆՍԻ «ԱՐՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ»
ԸՄԲՈՆՈՒՄԸ**

Սույն հոդվածը նվիրված է Դ. Հ. Լոուրենսի աշխարհներակալմանը, որը ձևափրկել է Լոուրենսի «արյան գիտակցության» ըմբռնման արդյունքում և հետագայում իր արտացոլումն է զտել իր ստեղծագործություններում։ Նրա արտահայտած զարդարները՝ գիտակցության, իդեալների ժխտման, անգիտակցական մակարդակում տեղակայված բնագըներով, ցանկությամբ առաջնորդվելու վերաբերյալ դժվար են ընկալել և բազմից քննադատության են արժանացել իր ժամանակակիցների կողմից։

Բանափառեր. ինտուիցիա, բնագդային կյանք, անգիտակցական, գիտակցական, արյան գիտակցություն, իդեալներ, ցանկություն

1913թ. հունվարին Էրենեսթ Ջոլինգվին ուղղված իր նամակում Լոուրենսը գրում է. «Իմ կրոնը իմ հավատքն է արյան մեջ, քանի որ վերջինս ավելի իմաստուն է, քան բանականությունը» /Լոուրենս, 1979: 503/:

«Արյան կամ արյան գիտակցության» վերաբերյալ մանրամասնորեն կարելի է կարդալ «Հոգեվերլուծություն և անգիտակցական» (1921) և «Անգիտակցականի երևակայություն» (1922) աշխատություններում, որը վերջինիս շարունակությունն է։ Այս երկու աշխատություններում Լոուրենսը խրախուսում է, որպեսզի իր ընթերցողները ճանաչեն «արյան գիտակցությունը» որպես անգիտակցականի վերաբերյալ իր սեփական տեսություն, որը, ըստ նրա, հակադրվում է Զիգմոնդ Ֆրոյդի անգիտակցականի տեսությանը։ «Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատության մեջ Լոուրենսը հիշում է, թե ինչպես եր իմքը և իր ժամանակակիցներն անհամբեր և, միևնույն ժամանակ, վախի զգացումով հետևում Ֆրոյդին, որը դեռևս նոր էր «ուղևորվել» վտանգավոր ճամփորդության՝ դեպի մարդու գիտակցություն։ Շուտով Ֆրոյդը գիտակցական աշխարհից քայլ է կատարում դեպի անգիտակցականը, որը մինչև այդ իր ժամանակակիցների համար դեռևս ոչինչ չէր նշանակում, և հանկարծ այդ անգիտակցականն այլևս դադարում է ոչինչ լինել /Լոուրենս, 2003: 89/։

«Հոգեվերլուծություն և անգիտակցական» աշխատության երկրորդ գլխում Լոուրենսը շարունակում է բացահայտել իր սեփական՝ «արյան գիտակցության» տեսության ձևավորման ակունքները։ Նա գրում է, թե ինչ է անգիտակցականը։ «Անգիտակցականը (անգիտակցական) գիտակցականի ժխտումն է։ Եվ ոչ մի կասկած չկա, որ հենց այս պատճառով է, որ Ֆրոյդը նախընտրել է այս եզրույթը։ Նա անտեսել է այնպիսի եզրույթն, ինչպիսին ենթագիտակցությունն է, քանի որ վերջինս ենթադրում է գիտակցության մեկ այլ ծնունդ։ Նա ցանկանում էր արտացոլել անգիտակցականում այն, ինչը

գիտակցության սահմաններից դուրս էր և ինչը հակադրվում էր բանականությանը /Լոռիրենս, 2003: 91/:

Ծիշտ է՝ «Հոգեվերլուծություն և անզիտակցական» աշխատության մեջ Լոռիրենսը գրում է Ֆրոյդի մասին, ում գաղափարներն իրեն հոգեհարազատ էին և ում անզիտակցականի մասին տեսությունը հետագայում հիմք է դառնում իր սեփական տեսության ձևավորման գործում, սակայն իր և Ֆրոյդի «անզիտակցականների» միջև լուրջ հակասություններ կային:

Անզիտակցականը, ըստ Ֆրոյդի, մտքի գործընթացների արդյունքում է առաջանում, մինչդեռ Լոռիրենսն իր անզիտակցականի մասին տեսության մեջ հակադրվում է ֆրոյդին ամբողջովին բացառելով միտքը: Նա հստակ տարանջատում է միտքը, գիտակցությունը և անզիտակցականն իրարից: Նրա համար միտքը և անզիտակցականը տարբեր բնեուներում են գոտնվում: Մարդու գիտակցությունը բաղկացած է «գիտակցական մտքից», իսկ անզիտակցականը՝ «արյան գիտակցությունից»: Անզիտակցականը «ցածր հարթության» վրա է գտնվում, այսինքն՝ զգայական մակարդակի, իսկ գիտակցականը՝ «վերին հարթության» վրա է, այսինքն՝ հոգևորի /Լոռիրենս, 2004: 88/:

Լոռիրենսի մոտ այս մտքերն առաջացել են շատ ավելի վաղ, նախքան «Անզիտակցականի երևակայություն» (1922) աշխատության լույս տեսնելը: 1913 թ-ին Քոլլինզին ուղղված իր նամակում նա իր անհանգստությունն է արտահայտում մտքի անտեղի միջամտության և այն փաստի վերաբերյալ, որ մարդիկ ծիծաղելի կերպով նոտարադ են (mindful) /Լոռիրենս, 1979: 503/:

Լոռիրենսի արտահայտած մտքերը 21-րդ դարում քաղաքակիրք հասարակության ստվար զանգվածի համար թերևս նույնպես օտար կրվան, քանի որ մարդը, որը մտածում է, թե ինչպես կատարելագործի իր գիտելիքները և ինչպես կիրառի դրանք սեփական և իրեն շրջապատող մարդկանց կյանքը բարելավվելու համար, անկարող է հասկանալ, թե ինչպես կարելի է անտեսել միտքը, բանականությունը և ապրել ինքնարություն, առաջնորդվելով բնազդներով:

Լոռիրենսն «արյան գիտակցության» վերաբերյալ իր մտքերը շարադրում է արդեն իսկ 1915 թ-ին Բերտրան Ռասելին ուղղված նամակում, որտեղ նա հանգամանալից նկարագրում է, թե ինչ է «արյան գիտակցությունը»՝ բացարելով, որ գոյություն ունի մեկ այլ գիտակցություն, որն անկախ է ուղղեղի համակարգից: Սակայն մարդկանց կյանքի ողբերգությունն նրանում է, որ միտքն իշխում է «արյան գիտակցությանը» /Լոռիրենս, 1981: 470/:

Այս նամակն այն բանի ապացույց է, որ 1915 թ-ին Լոռիրենս արդեն իսկ հավատում էր, որ արյունը մարդու էության կարևորագույն մասնիկն է, ինչը մարդուն առաջնորդում է դեպի բնագդային կյանք՝ հետևում բողնելով գիտակցական կյանքը /Լոռիրենս, 1981: 470/: Այս նամակում արտահայտած մտքերը հիմք են դառնում Ֆրոյդի բիոհաղորդակցության վերաբերյալ գաղափարների բննադատության համար, քանի որ այստեղ Լոռիրենսը բիոհաղորդակցությունը նկարագրում է որպես «անցում արյան երկու հոսքերի միջև» /Լոռիրենս, 1981: 470/:

Լոռուրենսը Ռասելին ուղղված նամակում գրում է. «Եթք ես բիոհաղորդակցում եմ կնոջ հետ, ինձ իշխում է արյան գիտակցությունը: Նրա և իմ արյան միջև անցում է տեղի ունենում, որը մեզ միաձուլում է այնպես, որ նույնիսկ եթե իրարից հեռու ենք գտնվում, «արյան գիտակցությունը» մնում է մեր մեջ /Լոռուրենս, 1981: 470/:

Լոռուրենսը բնական մարդու վառ օրինակ է, որը կիրքը, ցանկությունը, քնազդները բարձր է դասում գիտակցությունից:

Լոռուրենսի «արյան գիտակցությամբ» բիոհաղորդակցություն ունենալու գաղափարը հակառակում է Ֆրոյդի բիոհաղորդակցության տեսության երեք էսաներում գրված գաղափարներին /Ֆրոյդ, 1953: 255-266/: Ֆրոյդի տեսությունը ստիպել է Լոռուրենսին կարծել, որ հոգեվերլուծությունը բիոհաղորդակցությունը դիտարկում է որպես ամորթալի գործընթաց, որի ցանկությունը պետք է ճնշել մտքում: Լոռուրենսը հակառակում է Ֆրոյդի տեսությանը՝ պնդելով, որ բիոհաղորդակցության ժամանակ միտքը կամ մտավոր գիտակցությունը տեղի է տալիս մեկ այլ գիտակցության, որը ոչ մի կապ չունի ուղեղի համակարգի հետ /Լոռուրենս, 1981: 470/: Լոռուրենսի անհամաձայնությունը Ֆրոյդի հետ նրանում է, որ վերջինս անգիտակցականի վերաբերյալ իր տեսությանը գիտականորեն է մոտեցել /Լոռուրենս, 1981: 471/:

Այսօր Ֆրոյդի հոգեվերլուծությունը ոչ մի կերպ չի առնչվում բժշկության որևէ ճյուղի հետ, սակայն Լոռուրենսը միակ մարդը չէր, որ կարծում էր, որ Ֆրոյդը գիտական տեսանկյունից է փորձում բացատրել իր տեսությունը /Լոռուրենս, 1981: 218/: Ֆրոյդը՝ ինքը, այդ կարծիքին էր:

Զեյմս Քովանը Լոռուրենսի և Ֆրոյդի հարաբերության մասին գրում է, որ Լոռուրենսը կտրականապես դեմ էր գիտության «ֆիքսված օրենքներին» և «համակարգերին», որը ասոցացվում է ֆրոյդիզմի հետ /Քովան, 1990: 306/:

Անբարոյականություն և լկտիություն («Порнография и непристойность») աշխատության մեջ Լոռուրենսը բացատրում է, թե ինչու են մարդիկ բիոհաղորդակցությանը վերաբերյում որպես սոսր գործընթաց. «Մարդիկ այդ գործընթացը դիտում են որպես ամորթալի մի երևոյթ, քանի որ չեն առաջնորդվում քնազդներով: Բիոհաղորդակցությունը՝ առանց քնազդներով առաջնորդվելու, հավասար է կեղտի, իսկ կեղտը՝ բիոհաղորդակցության: Այդ ժամանակ ինտիմ հարաբերություն ունենալու ցանկությունը վերածվում է կեղտի մեջ բավականություն ցանկության, իսկ ցանկացած հմայք կնոջ մեջ դիտվում է որպես մարդու բնության գարշելի արտահայտություն: Եթե մարդը ցանկանում է բիոհաղորդակցությունը նսեմացնել, դարձնել սոսր, կողտոտ երևոյթ, ապա դա է անբարոյականությունը /Լոռուրենս, 2003: 53-54/: Նա գրում է, որ «Աննա Կարենինա» և «Պամելա» վեպերը բիոհաղորդակցության ցանկություն են արքնացնում ընթերցողի մոտ միայն այն պատճառով, որ ստորացնեն այն, ծիծաղեն դրա վրա, ինչը ստեղծագործություններում անբարոյականության տարրերի առկայության ապացույցն է /Լոռուրենս, 2003: 55/:

Լոռուրենսը վստահ է, որ 19-րդ դարի գրականությունը լի է անբարոյականության տարրերով, ինչը և ընթերցողին ստիպում է նույնկերաց վերաբերվել

բիոհաղորդակցությանը /Լոռիրենս, 2003: 55/: «Այսօր իրավիճակը գնալով վատքարանում է, ինչը նշան է, որ հասարակությունը հիվանդ է: Անբարյական աշխարհայացք ունեցող մարդք տանել չի կարողանում Բոկաչչոյին, քանի որ իտալացի հոչակավոր տաղանդի կողմից ստեղծած թարմ, առողջ տեսարանները ժամանակակից անբարյական աշխարհայացք ունեցող մարդուն ստիպում են աղք, ճիճու զգալ իրեն՝ հենց այն, ինչ նա իրականում կա: Այդ իսկ պատճառով Լոռիրենսը խորհուրդ է տալիս կարդալ Բոկաչչո, քանի որ նա հակարույն է ժամանակակից հասարակության համար, որը կարող է «քումել հոգու վերքերը» /Լոռիրենս, 2003: 56/:

Լոռիրենսը քացատրում է, որ անբարյականության և բիոհաղորդակցության միջև տարրերությունն այն է, որ անբարյականությունը սերտորեն կապված է գաղտնիության հետ, իսկ բնական մարդք, հետևելով ինտուիցիային, առաջնորդվելով բնազդով, բիոհաղորդակցությունը դիտում է որպես մաքուր, բնական գործընթաց, այդ պատճառով, նա այն գաղտնի պահելու որևէ պատճառ չունի /Լոռիրենս, 2003: 58/:

Լոռիրենսը կարծում է, որ երիտասարդները ունակ են փոխելու հասարակության մտածելակերպը, սակայն, ընդհանուր առմամբ, երիտասարդ սերտունդը առաջվա նման գտնվում է հասարակության ազդեցության տակ /Լոռիրենս, 2003: 71/: Նրանք իրենց զգում են ինչպես բանտում, որտեղ լի են ստախոսները: Այդ պատճառով երիտասարդների մոտ հանգչում է բիոհաղորդակցության էներգիան, սպառվում է ցանկության աղբյուրը: «Երիտասարդները շղթայված են սոռվ, որը սպառում է բիոհաղորդակցություն ունենալու նրանց աղբյուրը» /Լոռիրենս, 2003: 71/:

Ահա սա է պատճառը, որ Լոռիրենսի հերոսները հիմնականում երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ են, որոնք դեմ են դուրս գալիս համընդհանուր կարծիքին՝ հանուն կրքի և ազատության: Նա բաց հարաբերությունների կողմնակիցն է: Եթե մարդք ցանկանում է ունենալ այդ հարաբերությունը, դա արդեն իսկ բնական երևույթ է, քանի որ ցանկությունը բնազդների արդյունքում է առաջանում, իսկ բնազդն իր հերքին արյան գիտակցության արդյունքն է: Լոռիրենսը հորդորում է մարդկանց, որ նրանք քույլ չտան, որպեսզի արտաքին աշխարհից եկող հասարակության կարծիքը ճնշի նրանց ներաշխարհի ցանկությունները /Լոռիրենս, 2003: 75/: Նա վստահ էր, որ իր կյանքը մի կոպեկ անգամ չէր արժենա, եթե հասարակությունը թելաղբեր նրան, թե ինչպես է պետք ապրել իր սեփական կյանքը. «Ազատությունն ամենակարևոր արժեքն է: Պետք է ազատվել ստից, որը գոյություն ունի մեր մեջ /Լոռիրենս, 2003: 75/: Միայն այն դեպքում, եթե մարդք վերջ դնի ստից իր ներաշխարհում, նա կկարողանա պայքարել արտաքին աշխարհի ստից դեմ: Մրանում է ազատության և հանուն ազատության պայքարի իմաստը»: Նա եզրափակում է, որ անհատը չի ընդդիմանում հասարակությանը՝ հիմար վիճակում չհայտնվելու համար» /Լոռիրենս, 2003: 79/:

Լոռիրենսը քաջատեղյակ էր հասարակության բացասական ազդեցության մասին, որն արգելք է դառնում, որպեսզի մարդն իր անձը լիովին ճանաչի և

ապրի ազատ: Նա «Ժողովրդավարություն» էսեում գրում է, որ խելացի մարդը պետք է պայքարի ընդդեմ մեխանիզմների և հյութապաշտության՝ իր հոգու ազատության համար: Ժամանակից մարդու ուղղությունը «ֆիքսված» է, և այն փոխելն անհնար է /Լոռիրենս, 1936: 716/:

«Ֆիքսված ուղղություն» ասելով՝ նա նկատի ուներ անհատի նպատակները, որոնք մեզ արդեն քաջ հայտնի են նրա էսեներից: Նպատակ ձեռք բերելու կարողություն, հոչակ, ուժ, որոնք, ըստ նրա, հոգու հիվանդություններ են և որոնք մարդուն տանում են ինքնակործանման: Այս «ֆիքսված ուղղությունը» նաև խոշոնդրություն է մարդկանց միջև բարի-դրացիական հարաբերություններ հաստատելուն /Լոռիրենս, 1936: 717/:

Լոռիրենսն ատելությամբ է լցված «արհեստական» կյանքի նկատմամբ: Իր կարծիքով՝ ժամանակակից գիտակցության պատճառով անհատը շեղվում է բնական կյանքով ապրելու ուղղուց՝ դառնալով արհեստական. «Տղանարդիկ, կանայք, մեծերն ու փոքրերն, ավա՞ն, իրենց սեփական խելքը չունեն և չեն ապրում իրենց կյանքով» /Լոռիրենս, 1936: 761/: Սինչև հոգու խորքը հիասքափելով հասարակության մտածելակերպից՝ Լոռիրենսը «Խսաղաղություն» էսեում» գրում է. «Սիակ ելքը մահն է, որը հնարավորություն կտա ազատել մեր հոգիները, մեր սեփական եսը հասարակության ազդեցությունից» /Լոռիրենս, 1936: 761/: Լոռիրենսը կարծում է, որ հասարակությունը մեծ վնաս է հասցրել անհատին, քանի որ նա չի կարողանում ազատորեն տնօրինել իր կյանքը: Լոռիրենսի կյանքի փորձը ցույց է տվել, որ հասարակությունը փշացնում է անհատին: Մարդ Գերթերին ուղղված մեկ այլ նամակում նա գրում է. «Անչափ հիասքափված եմ ժամանակակից մարդկանցից: Երբեք այդքան չեմ ատել նրանց, ինչպես այժմ: Ես կորցրել եմ իմ հույսը, որ անհատի մեջ մի օր փոխվելու ցանկություն կառաջանա /Լոռիրենս, 1984: 194/:

Ծիշտ է՝ Լոռիրենսը գիտակցում էր, որ մարդկանցից մեկուսանալը ճիշտ չէ, սակայն նրա հերոսները միշտ փորձել են փախչել, ազատություն ձեռք բերել: Այս գաղափարը կարելի է հանդիպել նրա «Տղանարդը, ով սիրում էր կողիները» (The Man Who Loved Islands) պատմվածքում: Նրա հերոսները սովորաբար չեն պատկանում ոչ մի դասի, ոչ մի խմբավորման, ինչը հատուկ էր ժամանակակից մարդկանց, սակայն նրանք, միևնույն ժամանակ, դժոնի էին մենակ ապրելուց: Դա նրանց, կարծես, չեր երջանկացնում:

Լոռիրենսի աշխարհնկալմամբ՝ աշխարհը ճանաչելու և կյանքը հասկանալու համար երկու ճանապարհ գյություն ունի: Առաջինը՝ հասարակությունից մեկուսանալն է, ինչը բերում է գիտական, մտավոր գործունեության, իսկ երկրորդ ճանապարհը հասարակության անքածանելի մասը կազմելն է, միավորվելը, ինչը հնարավոր է հավատքի շնորհիվ:

Պետք է նշել, որ Լոռիրենսի՝ հասարակությունից հեռանալու և հասարակության անքածանելի մասնիկը դառնալու այս գաղափարները բազմից քննադատության են արժանացել, քանի որ մի կողմից նա իր ընթերցողին կոչ է անում միանալ հասարակությանը, որի մասին նա հանգանանալից գրում է «Մարդու կրություն» էսեում, մյուս կողմից նա պնդում է, որ բնական մարդը

հասարակությունից հեռանալու կարիք ունի, քանի որ միմիայն այսպես նա կկարողանա ապրել բնազդներով: Այնուամենայնիվ, Լոուրենսը հստակ բացատրություն է տալիս իր գաղափարների վերաբերյալ: Նրա կարծիքով, շնայած մարդն ամենից առաջ անհատ է, սակայն իր անհատականությունը կարևորվում և դրսևրվում է միմիայն հասարակական կյանքում. «Կյանքը բաղկացած է ընկերների, հարեանների, բարեկամների հետ շփումից, համագործակցությունից և միմյանց սիրելուց» /Լոուրենս, 1936: 613-614/:

Լոուրենսը ցանկությունը (desire) հակադրում է իդեալին (ideal): Ցանկությունն առաջանում է բնական մարդու մոտ, իսկ իդեալը հասարակության կարծրատիպերի արդյունքն է:

Իդեալը, ըստ Լոուրենսի, ձևավորվում է մտքի արդյունքում: Այն կայուն է: Մինչդեռ ցանկությունն առաջանում է տիեզերքից, այն ինքնարուխ է, բնական /Լոուրենս, 1936: 713/:

Լոուրենսը ցանկանում է, որ ժամանակակից մարդիկ սովորեն կոտրել կարծրատիպերը, որպեսզի քոյլ տան, որ իդենց սրտից բխի ցանկությունը: Ցանկությունը, ի տարբերություն մեխանիկական իդեալների, օգնում է մարդուն ազատություն ձեռք բերել: Լոուրենսը բացատրում է. «Ցանկությունն ինքնին պարզ երևույթ է, ինչպես արևի ճառագայթը, կրակը կամ անձրևը: Ցանկությունն է, որ դրդում է ինձ լինել ազատ թշունների և կենդանիների նման, վայելել արևի ճառագայթները կամ գիշերը» /Լոուրենս, 1959: 455/:

Այսպիսով, անփոփելով վերոնշյալ՝ կարող ենք ավելացնել, որ Դ. Հ. Լոուրենսի գաղափարների ձևավորման համար իհմք է ծառայել Զիգմոնդ Ֆրոյդի անգիտակցականի տեսությունը, սակայն Լոուրենսը առաջ է քաշել իր սեփական տեսությունը՝ բացառելով անգիտակցականի առաջացումը մտքի գործընթացների արդյունքում, հստակ տարանջատելով միտքը, գիտակցությունն ու անգիտակցականը իրարից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Cowan J. C. D. H. Lawrence and the Trembling Balance. London: Pennsylvania State University Press, 1990.
2. Freud S. Three Essays on the Theory of Sexuality // The Standard Edition of the Complete Psychological Works of Sigmund Freud. London: Hogarth, 1953.
3. The Letters of D.H. Lawrence. Vol. I (September 1901 – May 1913) / Ed. J.T. Boulton. Cambridge: Cambridge University Press, 1979.
4. The Letters of D. H. Lawrence. Vol. II (June 1913 – October 1916) / Eds. G. J. Zytaruk and J. T. Boulton. Cambridge: Cambridge University Press, 1981.

5. The Letters of D. H. Lawrence. Vol. III (October 1916 – June 1921) / Eds. J. T. Boulton and A. Robertson. Cambridge: Cambridge University Press, 1984.
6. Lawrence D. H. Fantasia of the Unconscious. Cambridge: Cambridge University Press, 2004.
7. Lawrence D. H. “Democracy”. Phoenix: The Posthumous Papers of D. H. Lawrence / Ed. E. D. McDonald. London: William Heinemann, 1936.
8. Lawrence D. H. “The Reality of Peace”. Phoenix: The Posthumous Papers of D. H. Lawrence / Ed. E. D. McDonald. London: William Heinemann, 1936.
9. Lawrence D. H. “Education of the People”. Phoenix: The Posthumous Papers of D. H. Lawrence / Ed. E. D. McDonald. London: William Heinemann, 1936.
10. Лоуренс Д. Г. Психоанализ и бессознательное. Порнография и непристойность. М.: Эксмо, 2003.

В. ОГАННЕСЯН – Восприятие «сознания крови» у Д. Г. Лоуренса. –

Статья посвящена восприятию Д. Г. Лоуренса о «сознании крови», что оно есть другое сознание, которое не зависит от системы головного мозга и отвечает за функционирование инстинктивной жизни. Сознание, наоборот, дает ложную информацию о действительности и жизни.

Ключевые слова: интуиция, инстинктивная жизнь, подсознание, сознание крови, идеалы, желание

V. HOVHANNISYAN – D. H. Lawrence’s Perception on “Blood-Consciousness”. –

The paper is devoted to D. H. Lawrence’s theory on “blood-consciousness”, where he presents another type of consciousness, which is independent of the brain system and which leads to an instinctual life. Consciousness, by contrast, gives false information on reality and life.

Key words: intuition, instinctual life, unconscious mind, consciousness, blood-consciousness, ideals, desire

Ալբերտ ՍԱԿԱՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ԿԱՌԼՈ ԳՈԼԴՈՆԻ ԵՎ ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆ
**(«Երկու տիրոջ ծառան» նոյնանուն պիեսների համեմատական
վերլուծություն)**

«Ոչ մի ծառայ չէ կարող երկու տիրոջ ծառայել. որովհետեւ կամ
մինչին կ'ասէ եւ միւսին կ'սիրէ. կամ մինչին կ'պատուէ եւ միւսին
կ'արհամարիէ. կարող չէք Ասուծոյ ծառայել եւ մամոնային»
/Աւետարան ըստ Ղուկասու, ԳԼ. ԺԶ:13/:

Հողվածը նվիրված է իտալացի և հայ ճշանավոր դրամատորգների՝ Կառլո Գոլդոնիի (1707-1793) և Հակոբ Պարոնյանի (1843-1891) նոյնանուն պիեսների («Երկու տիրոջ ծառան») համեմատական վերլուծությանը: Մասնավորապես նկատված է, որ երիտասարդ հայ հեղինակը զանացել է իտալացի բատերազրի հայտնի կատակերգության նմանությամբ կատարել իր գրական նախափորձը, դիպաշարային դասական կառույցի վրա ստեղծել մտահղացած պատումը: Գրական այդ երախայրիքը թեև դեռևս հեռու էր կատարելությունից, ուրիշ խոսքով՝ պարոնյանական չափանիշներից, այնուամենայնիվ անժխտելի էր գրական ապարեն մունող գրողի դրամատորգիական ակնառու ձիրքը:

Բանալի բառեր. Կառլո Գոլդոնի, Հակոբ Պարոնյան, «Երկու տիրոջ ծառան», կատակերգություն, ֆարտկա, դիպաշար, պատում, երկխոսություն, դրույան կոմիզմ, խոսքի կոմիզմ, սրամտություն

Հակոբ Պարոնյանի բազմաժանր ստեղծագործության մեջ ինքնատիա տեղ ունի նաև դրամատորգիան, որը թեև մեծ չէ քանակով (իինք պիես), բայց բացառիկ է հայ գրականության մեջ: Բավական հետաքրքիր է նաև դրա ճակատագիրը. 1865-ի նոյեմբերին՝ ստեղծագործական կյանքի արշալույսին գրած «Երկու տերով ծառա մը» կատակերգությունը հեղինակը թողեց ճեռագիր (այն տպագրվեց գրողի մահից 20 տարի անց՝ 1911-ին), անավարտ մնացին «Ըոլորորբն» ու «Պոռլյագը»: Կյանքի վերջին տարիներին Պարոնյանը մտադրվել էր «հրատարակել քանի մը կատակերգություններ, ազգային կյանքեն քաղված իրողություններ», մինչդեռ լույս աշխարհ եկավ միայն «Պաղտասար աղքարը»: Դրանից տասնամյակներ առաջ՝ 1868-ին, ընթերցողին էր հանձնվել նաև «Աստամնարույժն արևելյանը» (դրա տպաքանակը հեղինակը հետ վերցրեց գրավաճառներից ու ոչ նշանակություն ունեցող պատճեններից), սակայն թե՛ մեկը և թե՛ մյուսը թեմ չբարձրացան: Ո՞րն է գաղտնիքը. արդյոք պարոնյանական հանձարն անզո՞ր էր նվաճելու գեղարվեստական գրականության այդ դժվարին ոլորտը, արդյոք արդարացի՞ չէր խստահայաց քննադատ Ա. Չոպանյանը, որը 1895-ին «Ծաղիկ» պարբերականում հրատարակած իր անարդար, ավելին՝ թունոտ հոդվածում գրում է, որ Պարոնյանի դրամատորգիան առհասարակ ոչ մի արժեք չի ներկայացնում. այն գրված է Մոլիերի ուժեղ ազդեցությամբ, ամբողջ

հատվածներ վերցված են նրանից ու տեղայնացված. «Մեծ երգիծաբանն ալ չուներ թատերագրի հատկություն. իր խաղերուն հյուսքը թույլ է. թատերաբեմի հասկացողություն չկա: Ավելի կարդացվելու համար գրված են, քան ներկայացվելու» /«**Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895, էջ 275/։ Կամ գուցե կա՞ն ինչ-ինչ խնդիրներ, որոնց վերահասու չեն եղել ո՞չ Ա. Չոպանյանը, ո՞չ էլ անցյալի մյուս թեսադրությունները, որոնք նույնպես թերագնահատել են թատերագրին:**

Հակոբ Պարոնյանը, սակայն, արևմտահայ ռեալիստական թատերգության սկզբնավորողն է ու նրա խոշորագույն ներկայացուցիչը: Նրա կատակերգություններն այսօր ել՝ 21-րդ դարում, շարունակում են պահպանել իրենց գրական-պատմական արժեքը և չեն իշնում հայ բեմից: Իսկ դասականության հասցված այնպիսի գործ, ինչպիսին «Պաղտասար աղբարն» է, կարող է գարդարել ցանկացած թատրոնի խաղացանկ: Այն վաղուց թարգմանվել է բազմաթիվ լեզուներով ու բեմադրվել աշխարհի շատ բեմերում: Լսենք, օրինակ, ամերիկացի Ալբերտ Լանկին, Վերջինս, 1933-ին Բոստոնում անգլերենով հրատարակված «Պաղտասար աղբարն» առաջարանում խոսելով հայ գրողի երգիծանքի մասին, լճիհանրացնում է. «Հակոբ Պարոնյանի հումորը և սատիրան բոլոր երկրներինն ու ժողովուրդներինն են» /Baronian, 1933: VIII/:

Պարոնյանի գրական ժառանգությունը, ցավոր, ունեցել է դժբախտ ճակատագիր: Երգիծաբանն իր կենդանության օրերին չի գնահատվել, համարվել է սովորական մի զավեշտագիր, օրվա հանրային-քաղաքական դեսպարի վրա մակերեսորեն ծիծառող գրագետ... Թերևս դրանով պետք է բացատրել, որ նրա անմահ երկերից մի քանիսն են միայն առանձին գրով լույս տեսել հեղինակի կենդանության օրով, իսկ մահից հետո Կ. Պոլսում հազիվ մեկ-երկուսն են արժանացել վերահրատարակության: Պարոնյանի երկերից, սակայն, ավելի շատ անտեսվել են պիտեսները: Երգիծաբանը, որ 1860-ականներից հանդես եկավ որպես գրող՝ ազդարարելով ռեալիստական դրամատուրգիայի սկիզբն արևմտահայոց կյանքում, ինչպես Գ. Սունդուկյանն արևելյան հատվածում, կենդանության օրով չտեսավ իր պիտեսներից և ոչ մեկի բեմադրությունը: Եվ դա այն պարագայում, եթե ինքը մեծ կարևորություն էր տալիս դրամատուրգիային ու նրա դաստիարակիչ ուժին: Դրա վկայությունն է այն, որ իր գրական գործն սկսեց իրու դրամատուրգ ու ավարտեց թատերգությամբ:

Կենսական ամենատարբեր հարցերով մտահոգ և թատերաբեմերից դրանց պատասխանները լսել ակնկալող պոլսահայ գաղթօջախին մատուցվում էին եվրոպական, առավելապես ֆրանսիացի ու իտալացի հեղինակների թարգմանական երկեր՝ հաճախ առանց պահանջկոտ ընտրության: Ազգային խաղացանկն էլ հեղեղված էր կրոնական ու պատմահայրենասիրական ժամանակավեպ ողբերգություններով: Ժամանակակից կյանքն ըստ էության տեղ չուներ թատրոններում: Իսկ նման վիճակը չէր կարող չհուզել «հայ կյանքին ու մտքին անաշառ դատավորին»՝ Պարոնյանին: Օրինակ՝ «Ազգային ջողեր»-ում նա թեև բարձր է գնահատում արևմտահայ թատրոնի հիմնադիրներից ու համբավավոր դեմքերից մեկին՝ Հակոբ Վարդովյանին, մասնավո-

բապես այն, որ բռնապետական միջավայրում թատերական այդ անխոնց գործիչն իրեն անկեղծաբար նվիրվել էր ժողովրդի մշակութային կյանքի զարգացմանն ու հոգևոր վերելքին («Ծշմարտությունը խոսելով՝ Վարդովյանի անխոնց և անվիատ աշխատության շնորհիվն է, որ ազգն այսօր թատրոն մը ունի» /Պարոնյան, 1964: 254/), այնուամենայնիվ չի խնայում նրան. վերջինիս խաղացանկում ազգային կյանքն արտացոլող գործերի փոխարեն տեղ էին գտնում թարգմանական թատերախաղեր. «Խումքը կազմելուն պես՝ թարգմանիչներ քոնեց և օտար խաղերով սկսավ ազգին զեղծումներն հարվածել, ճիշտ այն մարդուն պես, որ ապահով օտարին զիշուն իջեցնելով՝ տղան ծեծած ըլլալ կը կարծե» /Պարոնյան, 1964: 254/: Հեղինակի մտահոգությունը հասկանալի է, և դա որոշապես երևում է նաև նրա «Կենաց բաժակը» հոդվածի հետևյալ տողերից. «Եթե կ'ուզենք որ թատրոնն իր նպատակին հասնի, ուզելու ենք նախ որ ազգային թատրոններն ազգային մոլություններն հարվածող կամ ծաղրող խաղեր ներկայացնեն. ամեն ատեն, շարունակ օտար ազգաց խաղերն ներկայացնելն, անոնց մոլություններն տեսարան հանելը կրնա զրուցիչ ըլլալ այլ ո՛չ օգտակար» /Պարոնյան, 1975: 183/: Հենց այդ պատճառով է երգիծաբանը Վարդովյանին համարում «ուղեղով փոքր մարդ մը»:

Պարոնյանը, մի առանձին եռանդով մերժելով արևմտահայ դրամատուրգիայում տիրապետող պատմական թեմատիկան, շնայած մի կողմից հասկանում էր, որ պատմական ողբերգությունները ծնունդ էին ժամանակի սոցիալ-քաղաքական իրավիճակի, քանի որ հանդիսատեսն ապրում էր անցյալի մաքառումների հերոսական դրվագներով, սակայն մյուս կողմից քաջ գիտակցում էր, որ պատմական անցյալով միակողմանի հրապուրվելն ու ժամանակակից կենսական խնդիրներ չարձարծող պիեսները շեղում էին ժողովրդի ու շարդությունն արդիական խնդիրներից: Բացի այդ՝ հայկական ողբերգությունները հիմնականում եվրոպական պիեսների անհաջող ընդօրինակումներն էին կամ, ինչպես երգիծաբանն էր ասում, զարդարված էին «օտարի փետուրներով»: Եվ ահա «ազգին վերքերն ըիշ մ'ալ թատերաբեմներու վրա մատնանիշ ընելու փափագով» Պարոնյանն առաջինն էր, որ ձեռնարկեց արևմտահայ ժամանակակից ռեալիստական թատրերգության ստեղծումը:

Նրա պիեսները թեմատիկ-գաղափարական առումով հիմնականում արձարծում են սիրո, բարոյականության, ամուսնության ու ընտանիքի հարցեր, որոնք նորություն չեն ո՛չ անցյալում, ո՞չ էլ այսօր: Բնականաբար փոխվում են ժամանակները, նաև՝ ընտանեկան ու մարդկային հարաբերությունները, և յուրաքանչյուր դարաշրջան անխուսափելի սրբազնումներ է կատարում դրանց մեջ: Բացառություն չեր նաև 19-րդ դարը, որը մշակել էր բարոյական սեփական օրենքները. «լրասապորության» ու «քաղաքակրթության» քողի տակ պղծվում էին սրբություններ: Եվ երգիծաբանն ակնդետ հետևում էր պոլսահայ քաղքենիական ընտանիքին՝ տարբեր դիտանկյուններից պատկերելով բարոյական անկումը: Իսկ գրական ճանապարհի տեսակետից ուշարժանն էլ այն էր, որ պիեսից պիես ավելի էր զորեղանում երգիծանքի ուժը, ինկանում պուտիկան:

Պարոնյանը 1863-ի գարնանն իր ծննդավայր Աղբիանուպուսից զալիս է Կ. Պոլիս: Հենց նույն շրջանում մոտիկից շփվելով «Արևելյան քատրոնի» շուրջ համախմբված մարդկանց, հատկապես «Մեղու» երգիծահանդեսի խմբագիր Հ. Սրվաճյանի հետ՝ ուժերը փորձում է դրամատուրգիայում՝ գրելով «Երկու տերով ծառա մը» կատակերգությունը: «1863ին կը հաջողի իր նպատակին հասնիլ և կուգա Պոլիս: Իր հորեղբորորդին, Տոքոր Քյարիպյան, կը հյուրընկալե զայն իր տան մեջ, որ մասնավոր տենյակ մը կը հատկացնե իրեն: 1864են 1867 հեռագրատան պաշտոնյա կ'ըլլա: Մկրտիչ Մելիքյան այդ ատենեները կը ճանչնա զայն հեռագրատան մեջ, որ ինքն ալ պաշտոնյա էր: **Պահտասար Աղքարի** հեղինակը տեսնելով որ Մելիքյան ալ կը գրադի քատրորգություններ գրելու, խորհուրդ կուտա անոր որ կարդա Գոռնեյլ, Ռասին և Մոլիեռ. իսկ ինք երգիծական գրվածներու մասին նախասիրություն ունենալով, շարունակ կը կարդա իին ու նոր դասական կատակերգակներ. կը սկսի գրել ալ: Իր այդ ժամանակի գրական գործունեութենեն երկու աշխատասիրություն կը մնա, մեկը ձեռագիր, մյուսը տպագիր: Զեռագիրն է Երկու տերով ծառա մը, կատակերգություն երկու արարվածով, որ ավարտած է Պոլիս 1865ի Նոյեմբեր 18ին, և մյուս աշխատությունն է **Ատամնարույժն արևելյան**, «կատակերգություն երգախառն ի հինգ արարս», 1868ին տպված Պոլիս, Արամյան տպարանը» /Մակարյան, 2004: 39-40/- հիշում է Հր. Ասատուրը:

«Երկու տերով ծառա մը» կատակերգությունը, այսպիսով, Պարոնյանի՝ մեզ հայտնի առաջին ստեղծագործությունն է: Երջանիկ զուգաղիպությամբ ամբողջությամբ մեզ է հասել հենց այդ գրական երախայրիքի ինքնագիրը, որը պահպանվում է Երևանի Եղ. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, մինչդեռ նրա հասուն շրջանից որևէ երկի ձեռագիր չի մնացել՝ բացի «Ծողոքորթն» անավարտ կատակերգությունից: Ի՞նչն է բելադրել 22-ամյա երիտասարդին՝ գրելու կատակերգություն, արդյոք դա եղել է որևէ մեկի առաջադրա՞նը: Դա այն տարին էր, երբ «Արևելյան քատրոն» ապրում էր դժվար շրջան. Զմյունիայի փայլուն խաղաշրջանից հետո խումբը ցրվել էր, մամուլն անհանգստացած էր նորաստեղծ հայ քատրոնի անկման համար, կոչեր էին հնչում զորացնել քատրոնն ու դրամատուրգիան: Հունախոս միջավայրում մեծացած Պարոնյանը, որ արդեն քաջածանոք էր համաշխարհային դասական դրամատուրգիային, հրաշալի տիրապետում էր Եվրոպական մի քանի լեզուների և բնագրերով էր կարդում այն (Տ. Արփիարյանը պատմում է, որ Պարոնյանը «շատ կը կարդար ու թիշ կը գրեր: Սովորաբար Մոլիեռի կամ Պուալոյի հատոր մը ուներ ձեռքը, պատուհանին քով ուր կ'առանձնանար իրիկունները» /Մակարյան, 2004: 76/), փորձում է իր ուժն այդ բնագավառում: Սակայն սկզբնապես չի հաջողել. պարզապես թողել է մի սևագրություն, որը չի մշակել:

«Պարոնյանի առաջին հեղինակությունն եղած է **«Երկու տերով ծառա մը»** անունով կատակերգություն մը,- հավաստում է երգիծարանի քլոշորդին՝ Մ. Սանտալճյանը:- Երբ երկու տարիներ հառաջ՝ աստ մնացած յուր մանր-

մունք գրքերու մեջեն գտնելով այս ձեռագիրն իրեն հանձնեցի, որպախության և միանգամայն արհամարհանաց ժայիտ մ՝ունեցավ յուր առաջին տարիներու այս գործույն վրա, հորում, սակայն, կ'զգացվեր արդեն կատակերգական նուրբ ճաշակ մը: Եթե չուզեց այս գործը հրատարակության տալ, պատճառն այն է անշուշտ որ՝ գիտեր թե ինչ ըստի է լավն ու կատարյալը: Բնավ կամ շատ քիչ անգամ խոսած է «Ատամնաքույժն Արևելյան»-ի վրա, յուր երկրորդ գործն որ կը բավե միջակ թատերագրի մը, ի՞նչ կ'ըստեմ, տաղանդավոր հեղինակի մը փառքը կազմելու» /Մակարյան, 2004: 124-125/: Հիրավի, իրավացի է Սանտալճյանը. Պարոնյանը գրական երկերը համարել է սրբություններ, և անդարմանալի է եղել նրա վիշտը, իր իսկ խոսքով՝ «տկար», «խակ» ստեղծագործությունների համար: Նա միշտ էլ առաջ է քաշել գրական միջակությունների ու հանճարների տարբերակման խնդիրը, գտել, որ արվեստի իսկական երկերն անմասի են, իսկ հանճարը ոչ ազգություն ունի, ոչ էլ կրոն. «Հանճարի ծնունդ եղող բանաստեղծություն մը լավ ընդունելություն կը գտնէ Անգղիայեն, որչափ ալ անոր հեղինակը սլավ ըլլա»: Համոզված էր, որ ազգային գրականությունը պետք է ջանա մրցակցել համաշխարհայինի հետ, իսկ արդի գրականության զարգացման աստիճանն անհրաժեշտ է որոշել բարձր չափանիշներով, մինչդեռ՝ «մենք դժբախտաբար ուսկի կ'անվաննենք ինչ որ պղինձ է և որ սակայն ուսկի պես կը հնչե ժողովրդյան ականջներուն» /Պարոնյան, 1964: 129/:

Իսկ Պարոնյանի անդրանիկ գործը դեռևս հեռու էր կատարելությունից, որիշ խոսքով՝ պարոնյանական չափանիշներից: Անժխտելի էր, սակայն, գրական ասպարեզ մտնող գրողի դրամատորգիական ակնառու ձիրքը: Նա հենց սկզբից դրսնորում էր կյանքի խոր ճանաչողություն, սուր դիտողականություն, կենսական երևոյթների, մարդկային փոխարարելությունների և մանավանդ բնավորությունների մեջ ծիծաղելին տեսնելու, դրության, խոսքի, քյուրիմացությունների կոմիզմ ու սրամտություններ ստեղծելու կարողություն: «Երկու տերով ծառա մը» կատակերգության վերնագիրն իսկ մի կողմից վկայում է աստվածաշնչյան հայտնի մոտիվի, մյուս կողմից՝ Կառլո Գոլդոնիի ակնհայտ ազդեցությունը: Դեռևս անփորձ Պարոնյանը ջանացել է իտալացի թատերագրի «Երկու տիրոջ ծառան» կատակերգության նմանությամբ կատարել իր դրամատորգիական նախափորձը:

Կառլ Գոլդոնին այն գրողներից էր, որոնց վիճակված էր վերափոխել իտալական թատրոնը: Նրան հուզող թեմաներից են եղել դասակարգային հավասարության, ազգային ակունքների ու անհատական ազատության խնդիրները: Ժամանակին անդրադառնալով Գոլդոնիի ստեղծագործությունների շուրջ ծավալված տարակարծություններին՝ Վոլտերը նշել է, որ այդ վեճը քննություննը պիտի լուծի, և հավելել է, որ Գոլդոնին բնանկարիչ է, ինչպիսի թերություններ է ունենա: Ըստ նրա՝ իտալացի թատերագիրն արտաքին աշխարհի անկիրք տարեգիր չէ, այլ արարիչ, որը միջամտում և ձգտում է վերափոխել կյանքում տեղ գտած անձշտությունները: Նման կարծիքի է նաև Բ. Ռեխիզովը. «Գոլդոնին ճշնարտացի է, որովհետև ոչինչ չի հնարել, այլ սույ դիտել է ու առանց ճամարտակելու իր դիտարկումները փոխանցել բեմի վրա» /Ռեխզօվ,

1966: 158/: Խսկ Վոլտերի և Գոլդոնիի գաղափարական հակառակորդ Կառլը Գոցցին (1720-1806) Գոլդոնիին համարում էր բնության և սովորությների ուշադիր դիտորդ, որը տառացիորեն բեմ է փոխադրում այն ճշմարտությունները, որոնք հանդիպում են նրա ճանապարհին: Նա ևս ընդունում է, որ Գոլդոնին ընտրություն էր կատարում, բայց այլ խնդիր է, որ այդ ընտրությունը չէր զոհացնում Գոցցին: Ահա թե ինչպես է վերջինս բնութագրում Գոլդոնիի արվեստը. «Նա իր կատակերգություններում շատ հաճախ կերտում է ճշմարտ ազնվականների՝ որպես արատի տիպիկ օրինակների, և, հակառակ նրանց, ստեղծում է բազմապիսի պլերեյնների՝ որպես բարոյականության ու կայացվածության լրջմիտ օրինակների... Կարո՞ն է արդյոք գրողն այնքան իջնել, որ նկարագրի հասարակության գարշահոտ ստահակներին: Ինչպե՞ս է նա համարձակվում նրանց բատերաբեմ հանել: Եվ, ի վերջո, ինչպե՞ս է նա հանդիսում տպագրության հանձնել նման երկերը» /Գուզի, 1955: 275/:

Գրչընկերը, այսպիսով, բատերագրին մեղադրում է ժողովրդական տարերքը վեր հանելու և նրա ներկայացուցիչներին բեմ բարձրացնելու մեջ: Գոլդոնին 1750-ին գրում է «Կոմիկական բատրոն» խորագրով մի պիես, ուր ծաղրում էր ժամանակին գոյություն ունեցող իտալական այն պիեսները, որոնց ընթացքը վաղօրոր գիտի հանդիսատեար: Բացի այդ՝ դերասաններից պահանջում էր հասկանալ իրենց դերերը, ոչ թե սուկ անգիր անել: «Զվարճացրո՛ ուսուցանելով» սկզբունքով առաջնորդվող բատերագիրը փաստորեն նոր ուղիներ էր մատնանշել 18-րդ դարի եվրոպական դրամատուրգիայում, ինչպես հետագայում Պարոնյանը՝ հայ գրականության մեջ:

Ակնհայտ է թե՝ իտալացի և թե՛ հայ դրամատուրգների՝ խնդրո առարկա կատակերգությունների խորագրերի միևնույն աստվածաշնչյան ծագումը՝ «Երկու տիրոջ ծառան», այսինքն՝ անհավատարին մեկը. ըստ Դոկասի՝ ոչ ոք չի կարող միաժամանակ ծառայել երկու տիրոջ՝ Աստծուն ու Մամոնային: Արդարև, Գոլդոնիի և Պարոնյանի պիեսների ծառանների՝ Տրոֆֆալդինոյի ու Կոմիկի՝ երկու տերերին ծառայություններն ավարտվում են անհաջողությամբ. տեղի են ունենում անխուսափելի բացահայտումները: Բայց միայն այսքանը. երկու դրամատուրգները գնացել են հանգուցալուծնան տարբեր ճանապարհներով. եթե պատահարար, սուկ հանգանանքների բերունվ, հետո՝ պարզապես հետաքրքրությունից դրված Բեատրիչենին ու Ֆլորինոյին միաժամանակ սպասարկող Տրոֆֆալդինոյի համար այդ բացահայտումն ավարտվում է լիարոք ծիծանով (նրա տերերը բավարարվում են կատակախառն ու բարեկանող բացականչություններով՝ «Ա՛հ, ավազակ», «Ա՛հ, չարամիտ»), ավելին, պիեսի վերջում իր խկ կողմից արտասանվող ուրախ էքսպրոնտ-ստենտով, ապա նյութական կարիքից և մորք սովամահությունից փրկելու համար երկու տերերի՝ Անտոնի ու Թեոփիլեի մոտ միտումնավոր ծառայության անցած Կոմիկի պսակագերծումն ստանում է դրամատիկ, տխուր վերջաբան. երկու տերերը «Վայրենի՝ գազան», «Անբան անասուն» որակումներով խլում են ծառայի հագուստներն ու հենց այդպես սկլոր վոնդրում՝ վերջինիս մատնելով սովամահության...

Նկատելի է, որ երիտասարդ հայ հեղինակը որպես ազդակ ունեցել է երկու սկզբնաղբյուր՝ Աստվածաշունչն ու Գոլդոնիին՝ գնալով, սակայն, որույն ճանապարհով՝ 267 պիեսների հեղինակ խտալացի թատերագիրն էլ իր հերթին, քացի Աստվածաշնչից, խրանվել է իր ժամանակներում խիստ տարածում գտած «Կոմեդիա դել արտե» կոչված փողոցային ներկայացումներից, որոնց «դիմակներից» էլ վերցրել է իր կատակերգության հերոսների անունները:

«Կոմեդիա դել արտե» կամ, այլ կերպ ասած, «դիմակների կատակերգությունը» խտալական Վերածննդին (Ոխորջիմենտո) հասուկ հանպատրաստից ստեղծվող այն ներկայացումներն էին, որոնք կազմակերպվում էին հրապարակներում կամ զանազան փողոցներում: Դրանք ի հայտ էին եկել 16-րդ դարի կեսերին և գոյատևեցին մինչև հաջորդ դարավերջ՝ ըստ էության դառնալով պրոֆեսիոնալ թատրոնի նախաչափիներ: «Դիմակների կատակերգությունը» մարմնավորում էր ընդհանուր բնութագիր ունեցող սոցիալական որոշակի կերպարների: Դեռևս քացակայում էր «պիես» հասկացությունը. հանդիսատեսի ճաշակով պայմանավորված՝ առկա էին ներկայացման լնարացքում կենդանի դիտողություններով լրացվող սոսկ դիպաշարային ուրվագծում որոշակի փոփոխություններից: Դիմակների քանակն անցնում էր ֆարսի թատրոնի փորձը, սակայն այստեղ դիմակը, որպես կանոն, միշտ կրում էր միևնույն դերասանը, բայց դերակատարումը, հանգամանքներից ելնելով, ենթարկվում էր որոշակի փոփոխություններից: Դիմակների քանակն անցնում էր հարյուրից, բայց դրանց մեծ մասը միևնույն դիմակի տարբերակներն էին: «Կոմեդիա դել արտե» ունեցել է երկու կենտրոն՝ Վենետիկն ու Նեապոլ, և համապատասխանաբար դիմակները բաժանվել են երկու խմբի՝ հյուսիսային կամ վենետիկյան (Դոկտոր, Պանտալոնե, Բրիգելլա և Արլեկին-Տրուֆալդինո...) և հարավային կամ մետապոլյան (Կավելլո, Պուչչինելլա, Սկարամուչչա և Տարտալիա...): Վենետիկյան դիմակները հիմնականում կիրառում էին սատիրան, իսկ մետապոլյանը՝ կոպիտ, բուֆոնային կատակները: «Կոմեդիա դել արտե» հսկայական ազդեցություն է ունեցել համաշխարհային թատերական արվեստի վրա: Նրա արձագանքները կարելի է գտնել ոչ միայն Մոլիերի, Գոլդոնիի ու Գոցցիի պիեսներում, այլև անգամ 20-րդ դարի ռեժիսորներ Մեյերհոլդի, Թահրովի, Վախտանգովի և այլոց աշխատանքներում:

Գոլդոնիի նման համբավավոր դրամատորգը չէր կարող չհետաքրքրել նոր-նոր գրական ասպարեզ մտնող հայ հեղինակին: Բացի այդ՝ կար նաև հոգեբանական գործոնը. դիպաշարային հայտնի մոտիվն օգնել է սկսնակ հեղինակին՝ հաղբահարելու իր բնական անվտանգությունը և զնալու սեփական ուժերն ու հնարավորությունները փորձարկելու համեմատաբար հուսալի ճանապարհով. Պարոնյանը դասական կառույցի վրա է ստեղծել պատումը՝ արդեն ծանոթ դրությունների մեջ տեղափորելով գոլդոնյան կերպարի նմանությամբ ընտրված իր հերոսին՝ ազգային ուրույն հոգեբանությամբ ու սրամտությամբ: Ասել է թե՝ նա որոշ իմաստով հայացրել է եվրոպական հանրածանոթ պիեսը, ստեղծել նրա հայկական տարբերակը: Ի դեպ, գրեթե նույնն է խնդիրը Միք. Նալբանդյանի «Խտալացի աղջկա երգը» բանաստեղ-

ծության պարագայում. հայ գրողը, փոխադրել-քարզմանելով ազգային-ազատազրական պայքարի շրջանի խոալացի բանաստեղծ Լ. Մերկանտինիի «Սապրի հասկահավաքուիին», այն հայացրել է, ոճավորել հայոց պատմության ու անցյալի հերոսական դրվագների հիշատակումներով, և արդյունքում ստեղծվել է ոչ միայն ինքնուրույն, այլև ազդեցիկ մի երգ, որը դարձել է նաև ներկայիս հանրապետության պետական հիմնը: Հայ գրականությունից կարող ենք բերել այլ օրինակներ ևս, ասենք, Մ. Պեշիկաշլյանի «Զեյթունյան երգերի» աղերսը Վ. Հյուզոյի «Տղան» բանաստեղծության հետ...

Նկատենք, սակայն, որ Պարոնյանը, ինչպես գրական մյուս տեսակների մեջ, դրամատուրգիայում ևս ինքնուրույն է: Անտարակույս, նաև քաջածանոք էր և՛ հույս կատակերգակներին, հատկապես Արիստոֆանին, և՛ խոալացի դրամատուրգներին (Գոլդոնի, Գոցցի, Ալֆիերի...), և՛ ֆրանսիացի հեղինակներին (Ռասին, Կոռնել, Մոլիեր...): Ինչ խոսք, համաշխարհային քատերգական մտքի նշյալ հսկաներն իրենց գրական ազդեցությունը բողել են Պարոնյանի երգիծական հանճարի ձևավորման վրա: Նա սովորել է խոսքի նախորդ վարպետներից: Բայց դա ամենին էլ չի նսեմացնում նրա բողած գրական ժառանգությունը: «Համաշխարհային գրականության այնպիսի մի տիտան, ինչպիսին է Շեքսպիրը, շատ բան է վերցրել իր նախորդ և ժամանակակից ստեղծագործություններից, ել չենք խոսում այն մասին, որ Շեքսպիրի դրամատիկական երկերի մեծագույն մասի ֆարուշան վերցված է հունա-հռոմեական, իսպանական, խոալական պատմագրությունից, հաճախ միջին դարերում պատմվող այս կամ այն ավանդությունից: Հասնելով ավելի նոր ժամանակաշրջանները, սյուժետային արտաքին նմանություններ կարող ենք գտնել ամեն մի ժողովրդի դրամատուրգիայի ներկայացուցիչների մոտ: ...Եականը ոչ թե կաղապարն է, գեղարվեստական ձևի որոշ նմանությունը, այլ այն, թե տվյալ հեղինակը որքանո՞վ է կարողացել այդ արտաքին հատկանիշները օգտագործել իր նպատական պատճառաբանման համար» /Ստեփանյան, 1962: 429-430/- իրավացիորեն նկատում է թատերազետը:

Պարոնյանի դրամատուրգիայի համար բնորոշը ոչ թե այն է, որ մատնանշվում են, ասենք, Գոլդոնիի, Մոլիերի կամ այլոց պիեսներում հաճախ նկատված կատակերգական դրությունների դեպքերը, որոնք, ի դեպ, հատուկ են առհասարակ համաշխարհային շատ պիեսների (թյուրիմացությունների, անհամապատասխան զույգերի ամուսնության վրա կառուցված տեսարաններ...), այլ այն, որ հեղինակը բացառիկ վարպետությամբ է ցուցադրել Պոլսի քաղքենիական խավի բարեկը՝ կատարելով գեղարվեստական խոր ընդհանրացումներ: Եվ ամենից ինքնատիպը թերևս այն է, որ նրա պիեսներից և ոչ մեկի մեջ չկա զաղափարական այնպիսի մի հերոս, որը հանդես գա դարաշրջանի ձաղկմամբ. այդ ամենը կատարում է ինքը՝ հեղինակը՝ միջավայրի, սոցիալական աղերսների վառ ցուցադրմամբ հանգելով հնարույր հարաբերությունների ժխտմանը: Ասել է թե՝ դրամատուրգն օտար ազդեցությամբ գրած գործում դրսերեց հայկական ազգային բնավորություններ ստեղծելու,

հերոսներին բնորոշ լեզվով խոսեցնելու և կատակերգական զարգացման մեջ դնելու նախնական կարողություններ, թեպետ, կրկնենք, զոհ չէր իր կատակերգությունից:

Պարոնյանի պիեսը թեև առայժմ գրական համեստ նախափորձ էր, այնուամենայնիվ, ի տարբերություն Գոլդոնիի պիեսի, ուր հիմնական շեշտը դրված է կենցաղային երևույթների, սիրո, ամուսնության և բարոյական զանազան խնդիրների վրա, այնտեղ առաջ է մղվում *սոցիալական* խնդիրը. Կոմիկը նյութական կարիքից դրված է ծառայում երկու տիրոջ: Գուցեն փույք չէ, որ դրամատուրգը սակավ ուշադրություն է դարձնում նրա հոգեբանությանը, և բուն գործողությունը ծավալվում է Կոմիկի ամուսնության և այդ նպատակով նրա նյութած բավական անհամոզիչ, միամիտ դավերի շուրջ. Պարոնյանին պարզապես դեռևս քիչ է զբաղեցնում կերպարի *ներքին ծիծաղելիության* խնդիրը, որով հետագայում պիտի այնքան փայլեր նրա երգիծանքը: Տիրապետողն առայժմ երբեմն չպատճառաբանված արարքներն են, խոսրի կոմիզմը: Բայց լոկ ծիծաղ առաջացնելու հնարանքներն անզամ իրենց վրա կրում են ապագա հանճարի կնիքը: Կոմիկն իր 60-ամյա մորը՝ Քիրարին, փորձում է ամուսնացնել երիտասարդ Երվանդի հետ: Երբ մայրը զարմանում է որդու տարօրինակ մտադրության վրա, վերջինս ասում է. «Երվանդը արդեն հնությունը շատ կը սիրե, դուն ալ հին ես. ահա կ'երթա կը լմննա» /Պարոնյան, 1962: 55/: Կամ՝ Կոմիկի ներքին մենախոսությունը, ուր առկա են և՛ վերացական պնդումները (ալոգիզմ), և՛ ուրախ բառախաղ-հակադրությունը. «Խեղճ Երվանդ, կը ցավիմ զինքը. Եթե իմանա որ Մարզրիտը ես պիտի առնեմ, ո՞ր շափ պիտի հուսահատի արդյոք. այս ատեն ես ալ ոտք կ'ելեմ և իմ մայրս իրեն կուտամ. ինչ կ'ուզե տակավին, ինձի ալ հայր կ'ըլլա: Պատրաստ զավակ մը գտնալը ամեն մարդուն բաղդը չէ. մայրս ալ գեղեցիկ կնիկ մ' է, միայն թե, քիչ մը քիքը մեծ է և ճակատը դրւու ելած է. քին մեծությունը վնաս մը չտար իր գեղեցկությանը: Շատ խելացի է, միայն թե խելք չունի. վերջապես ճարտասան կնիկ մըն է, բայց ինչ ընեն խեղճը, որ խոսիլ չգիտեր, բայց կը սորվի, տակավին պատիկ է, դեռ երեկ լրացուց իր վաքսուներորդ տարին» /Պարոնյան, 1962: 53/:

Բացի այդ՝ «Երկու տերով ծառա մը» կատակերգությունն ունի նպատակալաց զարգացումներ: Պիեսում առատ են պարոնյանական անսպառ սրամտություններն ու աֆորիզմները, երկխոսությունները կառուցված են դիպուկ ու սրամիտ խոսքով, ժողովրդական հյութեղ ոճավորումներով: Օրինակ՝

«Անտոն – Ու՞՞ կորսվեր էիր, երկու ժամե ի վեր քեզ կանչելեն հոգիս բերանս եկավ:

Կոմիկ (մեկոսի) – Եթե քառորդ մըն ալ կանչեր, հոգին բերնեն դրւու պիտի ելմեր» /Պարոնյան, 1962: 17/:

Կամ՝ Երբ Կոմիկն իր մորը ներկայացնում է Թեոփիլեին, վերջինս ասում է.

« – Տիկին, ձեր զավա՞կն է այս:

- Այո՛, պարո՞ն:

- Բայց քեզի չնմանիր:

- Ոչ, իրեն կը նմանի» /Պարոնյան, 1962: 42/:

Սիա մի նմուշ Կոմիկի և նրա մոր խոսակցությունից: Անտոնին տեսնելով՝ Կոմիկը մորն ասում է.

« – Առ մյուսն ալ:

- Ա՞յս է մյուս տերդ:

- Այո՛:

- Երկուքն ալ մեկզմեկե ցած:

- Չե, ասիկա մյուսնեն բարձր է /Պարոնյան, 1962: 45-46/:

Հեղինակը հերոսներին տիպականացրել է նրանց բնորոշ մտածելակերպով ու լեզվով: Պոլսահայ խոսակցական լեզվով գրած կատակերգությունն ավելի հյութեղ դարձնելու նպատակով Պարոնյանը երբեմն ըստ հարկի օգտագործում է գրաբարյան ձևեր: Օրինակ՝ Կոմիկի մասին ունի այսպիսի մի ունարկ՝ «ի ծունք իշանե», կամ «հեստո» բառի փոխարեն գործածում է «զկնի» գրաբարյան ձևը («Աղեկ մը ծեծելեն զկնի վրնտեմ զինքը»): Իսկ երբ Թեոփիլեն Կոմիկին հարցնում է, թե որտեղ է իր հորեղբորորդին՝ Երվանդը, ծառան հեգմաբար պատասխանում է. «Ի գոգի Մարգրիտի»:

Բայց և այնպես, կրկնում ենք, Պարոնյանի պիեսում ծանրության կենտրոնն ընկած է սոցիալական գործունի վրա. հենց երկու տերերից մեկի՝ Անտոնի կողմից «մըջյունի պես ժրածան, ճագարի պես մաքուր և շունեն ավելի հավատարիմ» որակված ծառան թեև երբեմն սրախոսում է, որ ինքը «մարդ տեսեր է, որ տասը ծառա ունի, իսկ ես որ երկու տեր ունիմ, տարօրինա՞կ բան է», այնուամենանիվ խորապես գիտակցում է, թե որքա՞ն չնշին մարդուկներ են իր տերերը («Ես հիրավի երկու տեր ունիմ, բայց թե որ երկուքը մեկզմեկու հետ խառնեն, հազիվ թե ամբողջ տեր մը կրնամ կազմել»), թե որքա՞ն նեղ է այն ջրափոր, ուր նետել է իրեն կյանքը: Եվ ահա ծնվում են կատակերգական ժանրին արտաքուստ այնքան անհարիք բվացող բավական մոայլ խոհերը՝ պոկված սոցիալական անարդար կյանքի զոհի շորթերից. «Հիրավի անասունները ինձմեն հարյուր հազար անգամ ավելի երջանիկ են: Անոնք բոլոր օր կ'աշխատին, իսկ զիշերները կը հանգչին. այլ ես զիշեր ցերեկ շարունակ կ'աշխատիմ, միշտ արթուն. բնավ հանգիստ չունիմ. հազիվ թե մեկ տերս կը քնանա, մյուսը կ'արթննա, մեկը կ'երթա, մյուսը կը գա... բայց զարմանալին ալ այն է, որ հազիվ հազ կրնամ մայր մը հոգալ: Թե որ մեկ տեր մը միայն ունենայի, մայրս անորութենու պիտի մեռներ և այն ատեն...» /Պարոնյան, 1962: 23-24/: Ծառան այլ խոստվանություն էլ ունի. այն կարծիքին է, որ աղքատությունն իր հետ թերում է մեկ ուրիշ չարիք՝ արգելում է չքափորին կյանքում իր նախընտրածին սիրելու իրավունքից: «Գեղեցիկ օրիորդներու տեսքը աղքատները կայլայլեն միշտ», - դառնությամբ մտորում է նա: Նման խոհերից ու անհանգստություններից, ի դեպ, միանգամայն զերծ է գոլդոնյան ծառան. ավելին, նա առանց լուրջ ջանքերի հասնում է իր սիրո Էակին՝ Սմերալդինային:

Բայց և այնպես նույնանուն պիեսների գուգակշոի պարագայում Պարոնյանի երկու արարվածով կատակերգությունը (6 հերոս) էապես զիջում է Գոլդո-

նիի երեք արարվածով (13 հերոս) երկին: Նախ՝ կերպարների սակավությամբ, այնուհետև՝ սիրային զանազան հարաբերությունների, ներհակությունների բացակայությամբ, հետո՝ պարզապես զարգացման ընթացքով: Բացի այդ՝ Պարոնյանը ֆարուլային կոնֆլիկտ է բերել միայն ծառայի և տերերի փոխհարաբերությունները՝ հրաժարվելով դիպաշարային հետաքրքրաշարժ ու կոմիկական հարուստ բարդացումներից, ինչով փայլում է Գոլդոնիի պիեսը. վերջինիս մեջ հիշարժան են, օրինակ, Կլարիչեի և Սիլվիոյի, Կլարիչեի և Եղոր՝ Ֆեղերիզոյի անվան տակ հանդես եկող Բեատրիչեի նշանտուքների նախապատրաստման ու խափանման տեսարանները՝ համեմված զավեշտայի անակնկալմերով, Տրուֆֆալդինոյի միևնույն հյուրանոցում իջևանած երկու տերերին ուղղված զանազան նամակների, պատկառելի գումարի, կերակրացանկի ու միաժամանակ մատուցվող խորտիկների, սննդուկների կամ լուսանկարի շփորի հետ կապված նկարագրությունները, որոնք, հենված լինելով թյուրիմացությունների կոմիզմի վրա, մի կողմից էականորեն հարստացնում են դիպաշարը, կերպարները դարձնում կենդանի ու վառ անհատականություններ, մյուս կողմից շարունակական լարվածության մեջ են պահում ընթերցողին՝ նրան պարզելով լիարոք ծիծառի բազմաթիվ պահեր: Ասել է թե՝ բազմաճյուղ դիպաշարն իտալացի դրամատորգին հնարավորություն է ընձեռել հարստացնել սրամիտ ինտրիգը, ինչն էլ պայմանավորել է գիշավոր հերոսի կերպարի բազմակողմանի բացահայտումը: Տրուֆֆալդինոն, խրված լինելով հանգամնքների բերումով Տուրինից Վենետիկ փախած սիրահար գոյզի արկածների մեջ, իր հերթին էլ ավելի է խճճում դիպաշարը՝ հավելյալ բարդություններ ստեղծելով նրանց հարաբերություններում /տես Գոլդոնի, 1971: 35-114/:

Եվ, ի վերջո, եթե Գոլդոնիի պիեսում վարպետորեն են կերտված բոլոր կերպարները (Պանտալոնե, Կլարիչե, Սիլվիո, Բեատրիչե, Ֆլորինդո, Բրիգելլա, Սմերալինդա, Տրուֆֆալդինո...), ապա Պարոնյանի մոտ նրանք մի տեսակ աղոտ են, անկենդան՝ կարոտ անհրաժեշտ վրձնահարվածների ու զարգացումների: Այս տեսակետից բացառություն է, իհարկե, Կոմիկը, որը, սակայն, դարձյալ չի կարող համեմատվել Տրուֆֆալդինոյի հետ. նա վերջինիս պես լիովին չի կարողանում դրսերել իր հնարամտությունն ու ճկունությունը, քանի որ զորկ է դիպաշարային լարված ու հարուստ մթնոլորտից և հանգամանքներից: Պարոնյանին, այնուամենայնիվ հաջողվել է գտնել կոնֆլիկտի միանգամայն հաջող լուծում. գործազրկության տիսուր հեռանկարի առջև հայտնված Կոմիկի վիճակը դառնում է դրամատիկ, և նրա կերպարն ստանում է մռայլ երանգներ... Ի՞նչն է պատճառը: Նախ՝ Պարոնյանը քաջ գիտակցում էր, որ ճշմարիտ երգիծանքը միշտ էլ հիմքում տիսուրի հեռանկարի առջև հարուստակում, և, բացի այդ, ի սկզբանե իրապաշտ լինելով, հասկանում էր, որ Տրուֆֆալդինոն և իր Կոմիկը բոլորովին տարբեր, անհամեմատելի իրականությունների ծնունդ լինելով, չեն կարող նույն ճակատագիրն ունենալ: Եվ ընալ պատահական չէ, որ գոլդոնյան կատակերգության մեջ հնարամիտ ծառան իր խելքի և ճկունության, անսպաս եռանդի ու աշքաբացության շնորհիվ միշտ էլ հաղթահարում է կյանքի պատրաստած բոլոր դժվարությունները,

անակնկալները և դուրս է պրծնում վերջնական հաշվեհարդարից: Այլ է պարոնյանական հերոսի ճակատագիրը. նա, որքան էլ հնարամիտ ու ձկուն, ի վերջո ծուղակն է ընկնում ու չի կարողանում խուսափել հատուցումից: Երգիծաբանը հարազատորեն է վերարտադրել պոլսահայ միջավայրը, թուրքական պետության ներքին կյանքը: Ի վերջո Պոլիսը Վենետիկը չէր, և Կոմիկն ավելի վատ վիճակում է գտնվում, քան Տրուֆֆալիին: Եվ այս հանգամանքը չէր կարող իր կնիքը չքողնել պարոնյանական հերոսի վրա: Այդ ամենից զատ՝ «Երկու տերով ծառա մը» պիեսը գրական նախափորձ է, և բնականարար անփորձ հեղինակը, ինչպես հետագայում դա պատահեց Պետրոս Դուրյանի պիեսների պարագայում, դեռևս չի կարողացել ստեղծել հարուստ ֆարուխ, նրբին հոգեբանություն, խոր ու բազմակողմանի կերպարներ: Կոմիկն իր բնավորության հիմնական գծերով հիշեցնում է ոչ միայն քանից հիշատակված Տրուֆֆալիինին, այլև առհասարակ դասական դրամատորգների՝ Մոլիերի, Բոնարշեի ու Եվլոպացի մյուս նշանավոր թատերագիրների համանան հանրածանոք կերպարներին:

Այսպիսով, Կառլ Գոլլրոնիի և Հակոբ Պարոնյանի նույնանուն պիեսների գուգակշիռը ցույց է տալիս, որ հայ երգիծաբանը թեև մեծ չափով կրել է իտալացի թատերագրի ազդեցությունը ու թերևս հենց այդ պատճառով էլ իր պիեսը բոլել անտիպ, սակայն ստեղծագործական մոտեցմամբ այն տեղայնացրել է՝ հանրածանոք մոտիվի մեջ անփոփելով մի բոլորովին ուրույն աշխարհ...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ասատոր Հր. Դիմաստվերներ, Կ. Պոլիս, Կ. Քեշիշյան որդի հրատ., 1921;
- «Ծաղիկ», Կ. Պոլիս, 1895:
- Մակարյան Ալ. Հակոբ Պարոնյանը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատ., 2004:
- Պարոնյան Հ., Երկերի ժողովածու տարը հատորով, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, 1962, հ. 2, 1964, հ. 9, 1975:
- Ստեփանյան Գ. Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1962:
- Гольдони К. Комедии, Гоцци Карло, Сказки для театра, Альфьери Витторио, Трагедии. М.: Изд. «Худ. лит.», 1971.
- Гоцци К. Чистосердечное рассуждение и подлинная история происхождения моих десяти театральных сказок // «Хрестоматии по истории западноевропейского театра» (составление и редакция С. Мокульского), т. 2. М.: «Искусство», 1955.
- Реизов Б. Г. Итальянская литература XVIII века. Л.: Изд-во ЛГУ, 1966.
- Baronian H. H. Uncle Balthazar. A comedy in 3 acts. Transl. by Ervant D. Megerditchian. Boston, 1933.

А. МАКАРЯН – Карло Гольдони и Акоп Паронян (сопоставительный анализ одноименных пьес под названием «Слуга двух господ»). – Статья посвящена сопоставительному анализу одноименных пьес («Слуга двух господ») итальянского драматурга Карло Гольдони и великого армянского драматурга Акопа Пароняна. В частности, отмечается, что неопытный молодой армянский автор попытался создать свой первый драматический опыт по подобию известной комедии итальянского драматурга, построить на классической сюжетной основе задуманное им комическое повествование. Очевидно, что первый литературный опыт Пароняна, хоть и далек от совершенства, скорее, от пароняновских мерок, тем не менее, свидетельствует о неоспоримом драматургическом даровании писателя, только ступившего на литературное поприще. Поместив своих героев по подобию гольдониевских образов в известные обстоятельства, Паронян наделил их своеобразной национальной психологией и языком, то есть определенным образом «арменизировал» известную европейскую пьесу, создал ее собственный вариант.

Ключевые слова: Карло Гольдони, Акоп Паронян, «Слуга двух господ», комедия, фабула, сюжет, повествование, диалог, комизм положения, комизм речи, остроумие

A. MAKARYAN – Carlo Goldoni and Hakob Paronyan (Comparative Analysis of the Namesake Plays “The Servant of Two Masters”). – The paper is devoted to the comparative analysis of the namesake plays (“The Servant of Two Masters”) by the famous Italian and Armenian playwrights Carlo Goldoni and Hakob Paronyan. The study particularly states that the inexperienced and young Armenian playwright tried to make his first dramatic attempt based on the resemblance to the famous comedy by the Italian dramatist and built his comedy narration on that classical plot. The author arrived at the conclusion that though the first literary work by Paronyan is still far from being perfect, in other words, from paronyan standards, nonetheless, the dramatic talent of the author, who was just stepping into the literature is undeniable. Paronyan put his characters, who were chosen based on resemblance with goldonian characters, in familiar and well-known situations and endowed them with unique national psychology, that is, in a sense made the famous European play sound Armenian and in fact created his own version of the play.

Key words: Carlo Goldoni, Hakob Paronyan, “Servant of Two Masters”, comedy, story, plot, narration, dialogue, situation comedy, word comedy, witticism

Ուուզաննա ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՎԵՊԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԸՆՏԱԿԱՆ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈՅԻ**

Հոդվածում դիտարկվում են իսպանացի գրող Միգել դե Ունամունյի փիլիսոփայական վեպերի կառուցվածքային առանձնահատկությունները՝ ելմելով էրգիստենցիալիզմի շրջանակներից: Գրողն առաջարկում է տարբերակում դնել վեպ գրելու և վեպ կառուցելու հասկացությունների միջև՝ առաջ քաշելով վեպի երեք տարրերը ընկալումներ՝ վեպն իրուն գրական ժանր, վեպն իրուն նիվուա, որը ստվրական վեպ չէ, քանի որ ունի ներքին, իրական, հավերժական, հոգեվարքային իրականություն, վեպն իրուն կյանք, քանի որ վեպ գրողն առաջին հերին գրում է իր մասին, իր կյանքի պատմությունը:

Բանափի բառեր. Էրգիստենցիալիզմ, վեպ և նիվուա, վեպն իրուն ինքնաւենսագրություն, գրական ժանր, սեփական պատմության կերտում

Հաստ Ունամունյի վեպը մեզնից յուրաքանչյուրի կյանքն է՝ գրված թղթի վրա: Վեպ գրելիս գրողը հակադրվում է ինքն իրեն, բացահայտում նույնիսկ իրեն անձանոք ներքին «ես»-երը: Վեպում ժամանակը վերածվում է պահի, գիտակցվում է ապագան, և նրա հետ՝ նաև մահը: Վեպը հնարավորություն է տալիս գրողին արարելու սեփական կերպն ու տեսակը անսահմանության մեջ, վեպի գոյությունը բացարձակ է՝ ամեն ինչից և բոլորից անկախ:

Ունամունոն գրում է. «Կյանքը, որ ամեն ինչ է, լինելով ամեն ինչ, հանգում է ոչնչի, կյանքը երազ է կամ գուցե երազի ստվեր, և թերևս ճիշտ էր Կուշուն, երբ ասում էր, թե պետք չէ երազել այն երազը, որ համակարգված է, շոշափելի, քանի որ համակարգը քայլքայում է երազի էռությունը և դրա հետ՝ կյանքի էռությունը: Եվ իրականում փիլիսոփաները չեն տեսել իրենց ներսում այն մասը, որ երազ է, չեն հասկացել, որ իրենք ծնունդն են երազի: Նրանք հիմնվել են կյանքը, աշխարհը և գոյությունը համակարգելու վրա: Զկա ավելի խորը փիլիսոփայություն, քան զմայլանքով դիտելը, թե ինչպես են փիլիսոփայում: Զկա ավելի մեծ փիլիսոփայություն, քան կյանքի փիլիսոփայությունը» /García Blanco, Unamuno, 1950: 55-59/:

Կարևոր է, որ գրողը կարողանա ի ցույց դնել սեփական ողբերգությունը, և ուրեմն՝ ուրիշ ի՞նչ կերպ նա կարող է անել այդ, եթե ոչ արվեստի միջոցով, ինչու՝ ողբերգություն, որովհետև ողբերգական է յուրաքանչյուրիս կյանքը, մեզնից յուրաքանչյուրն առանձին ողբերգություն է: Եթե արվեստագետը՝ քանդակագործը, նկարիչը, գրողը, ցանկանում է ճանաչում և սեր գտնել հանրության շրջանակներում, ապա նա պետք է գտնի սեփական ողբերգությունն արտահայտելու և ինքնարտահայտվելու իր ձևը, ժանրը: Ինչ վերաբերում է Ունամունյին, ապա վերջինս նախընտրությունը տալիս է փիլիսոփայական

Էսեին և նիվոլային, որոնք առանձնացնում է վեպից, քանի որ դրանցում կարող է առաջադրել էքզիստենցիալիստական այն խնդիրները, որոնք մարդու մասին են, իր մասին են. «Իմ ստեղծագործություններում ես պարզապես չեմ կարող չգրել իմ մասին, քանի որ ինքս այն միջավայրի մի մասնիկն են, ուր ապրում են բոլորը: Այդ միջավայրը ենթադրում է նաև մի ամբողջ երկրի, հայրենիքի, քաղաքի և գյուղերի նկարագրություն: Իմ գրվածքներին քաջածնոր մարդիկ իմ սիրելի Սալամանկան շատ ավելի լավ են ճանաչում, քան մյուս քաղաքները, որոնցում անձամբ եղել են, քացարությունն առավել քան պարզ է. Սալամանկայի մասին պատմություններում ես խոսել եմ իմ մասին: Իմ լավագույն աշակերտները կարող են մոռանալ իմ կարդացած դասախությունները, սակայն ինձ՝ երբեք» /Սոնամոնո, 1909: 121/:

Ունամունոն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում գրականության լեզվին, վերջինս փորձում է լեզուն բնորոշել նաև իրեւ մշակութային գործիք՝ կիրառելի միայն տղամարդկանց համար, այլ կերպ ասած՝ գործիք՝ այրական մշակույթի արտահայտման համար, սակայն կնոջ համար այդ «սղամարդկային» գործիքն օգտագործելը նույն է, ինչ տարատ հազնելը: Իհարկե կինը խոսում է այդ լեզվով, հագնում տարատ, սակայն երկու դեպքում ել աչքի չի ընկնում. թերևս սա է պատճառը, որ լավագույն փիլիսոփաները, պոետները, առհասարակ արվեստագետները տղամարդիկ են, իսկ կանայք փայլում են անձնական նամակներ գրելու գործում, գուցե որովհետև դրանցում լեզուն ու ոճը խիստ տնային են, կանացի:

Հնարավոր չէ միևնույն քանն ասել տարբեր լեզուներով և ունենալ միևնույն զգացողությունը:

Հնարավոր չէ Սերվանտեսի «Դոն Կիխոտը» կարդալ անգլերեն և մտածել կիխոտյան, այսինքն՝ խսպանական փիլիսոփայությամբ, նույնիսկ հրաշալի թարգմանության դեպքում: Ահա թե ինչո՞ւ է Ունամունոն իր սիրելի փիլիսոփաների գործերն ընթերցելու համար նախընտրել սովորել տվյալ լեզուն, որպեսզի կարդանա կարդալ բնագիր տեքստը:

Լեզուն, ինչպես ցանկացած այլ կենդանի օրգանիզմ, պետք է փոփոխվի, պետք է հոգեվարք ապրի, ամեն պահ մեռնի և հարկ եղած դեպքում անմիջապես հարություն առնի՝ հարստանալով նոր բառերով, ոճաարտահայտչական միջոցներով, իսկ գրողը պետք է օգտագործի բացառապես այնպիսի բառեր, որոնք բխում են հոգուց, որպեսզի ընթերցողը գգա նրա անկեղծությունը, կարծ ասած՝ պետք է ամեն գնով խուսափի գրականության մեջ արհեստական լեզվի գործածությունից և գրելառնից, մի քան, որ, ըստ Ունամունոյի հասուն է մողեռնիստներին, հատկապես՝ Դարիոյին, որն առաջ է քաշում պոեզիան երաժշտական դարձնելու սկզբունքը, այն, ինչ պոեզիայում պետք է շեշտղրվի՝ միտքը, իդեան, իսկ ինչ վերաբերում է երաժշտականությանը, ապա խապաներենն արդեն իսկ երգեցիկ է:

Ունամունոյին, իհարկե, անհանգստացնում են լեզվի և գրելառնի խնդիրները, սակայն գրականության մեջ երբեք չի անդրադառնում ձևի կամ կառուցվածքի խնդիրներին՝ դրանք համարելով ավելորդություն:

Զափազանց կարևոր է լեզուն, քանի որ, ըստ Ունամունոյի, լեզուն ժողովրդի փորձառության, նրա մտածողության պատկերումն է բառերի միջոցով:

Լեզուն հետք է բողել ժողովրդի հավաքական հիշողության վրա, մինչև ավետարանական խոսքը մարդն արդեն հավատում էր աստվածային հրաշքին: Եվ, ընդհանրապես, Ունամունոյի համար փիլիսոփայությունը բանափրություն է, քանի որ ճիշտ ընտրված բառերով են պայմանավորված խոսքի նշանակությունն ու իմաստը: Բառն իր բնույթով արարչական է, քանի որ Աստված միայն մարդուն օժտեց Բանը հասկանալու, արտաքերելու շնորհով: Ստացվում է լեզուն արդեն իսկ փիլիսոփայություն է:

«Երեք խրատական նովելներ և մեկ նախարան» նիվոլաների նախանում Ունամունոն գրում է. «Եկեք հասկանանք, թե ինչ է վեպը, և ինչ՝ նիվոլան: «Մառախուղը» նիվոլայում (ես այդպես եմ անվանել այդ վեպը, որովհետև այն խկական վեպ է) ես տալիս եմ վեպի և նիվոլայի բացատրությունը՝ մի միջոց, որ գտա իմ... գուցե քննադատների⁹ համար: Լավ, բող այդպես լինի. քննադատների համար: Եվ նրանք իմացան՝ ինչպես օգտվել այդ բացատրությունից, որովհետև այն նպաստում էր նրանց մտավոր ծուլությանը: Մտավոր ծուլությունը, այսինքն՝ դատողություն անել չիմանալը, ըստ նախկին քննադատների, առավել հատուկ է նրանց, ովքեր իրենց նվիրաբերում են քննադատ լինելու գործին... Այստեղ՝ այս նախարանում, մենք պետք է անդրադառնանք վեպին կամ նիվոլային, և ևս մեկ անգամ՝ նիվոլականությանը: Եվ ես ասում եմ մենք՝ եպիսկոպոսական ձևով՝ առաջին դեմք, հոգնակի թիվ, որովհետև մենքը՝ ես և դու ենք, ընթերցո՞ղ, մենք, որ պիտի անդրադառնանք դրանց: Դե ուրեմն՝ հիմա անդրադառնանք խրատական նովելներին... Խրատակա՞ն: Ինչո՞ւ: Այսպիսով՝ ես «խրատական» եմ անվանում այս վեպերը, որովհետև դրանք իրամցնում եմ օրինակի կամ խրատի ձևով, ճիշտ այնպես, ինչպես հնչում է՝ կյանքի և իրականության օրինակ: Իրականությա՞ն, այո՛, իրականության օրինակ: Այդ վեպերի հոգեվարք ապրողները, այսինքն՝ պայքարողները կամ, եթե կուզեք, հերոսները, իրական են, չափազանց իրական, իրականությանը սերտորեն առնչվող հերոսներ՝ լինելու կամ չլինելու իրենց մաքուր Ունամունոյի համոզմամբ՝ կյանքի հանդեպ ողբերգական զգացումը գրեթե միշտ վերածվում է մտասեեռուն գաղափարի, որից ծնունդ է առնում հոգեվարքը, որն իր հերթին հակադրում է բանականությունը և հավատը, իսկ դրանց բախման հետևանքով մարդուն ոչինչ չի մնում՝ բացի ցավից և տառապանքից: Ահա կյանքի այդ ողբերգականության շորջ են հյուսվում Ունամունոյի վեպերը, որոնց գրողը երբեմն անվանում է նիվոլա:

Խրատական վեպերից կամ նովելներից յուրաքանչյուրը մարդկային էքզիստենցիայի մեկ օրինակ է. դրանց հերոսները հոգեվարքի մեջ պայքարող հոգիներ են, որոնք տառապում են լինելու և չլինելու կասկածից, նրանցից յուրաքանչյուրի ողբերգական կյանքը խրատական մեկ օրինակ է մյուսների համար: Այնուամենայնիվ, գրողը փաստում է, որ անձամբ իր համար խրա-

տական օրինակներ կարող են լինել միայն այն մարդկանց պատմությունները, ովքեր իրենք են կառուցում, կերտում իրենց երկրային գոյությունը՝ գործի դնելով կամքը և չդադարող հոգեվարքը:

Ունամունու անդրադառնում է անձի իսկության կամ իրականության և նրա ներսում գոյություն ունեցող «ես»-երին՝ զուգակցելով կամքի, ցանկանալ լինել և չլինելու, շանկանալ լինել և չլինելու գաղափարների հետ:

Խրատական նովելների նախաբանում գրում է. «Մտացածին, հորինված կերպարը կարող է այնքան իրական լինել, որքան իրեն ստեղծող հեղինակը: Ամենակարևորն այն է, որ վերջինս ծնվի հեղինակի կամքից և լինելու ցանկությունից: Այն՝ ես գիտեմ քննադատների երգած երգը, որով նրանք կառչում են նիվոլայից. աստվածաբանական, վիխսովիայական, սիմվոլիկ նովելներ, խորհրդանշական հասկացություններ, երկխոսության ձևով էսեներ... և այլն: Դեռ լավ, մարդը, իրական մարդը, որ ցանկանում է լինել, կամ որը կցանկանար լինել, սիմվոլ է, սիմվոլ, որը կարող է մարդ, մինչևսկ հասկացություն դառնալ: Հիմա դուք ինձ կասեք. «Քայց չէ» որ Ազգուստ Պերեսը հենց դու ես»: Նման բան չկա: Մի բան են վիպական իմ հերոսները, որոնք բոլորն էլ հոգեվարքային են, որոնց ստեղծել եմ իմ հոգուց՝ իմ ներքին իրականությունից, որ մի ամբողջ ժողովուրդ են, մեկ այլ բան է այն, որ դրանք հենց ես եմ, որովհետև ո՞վ եմ ես, ո՞վ է այն մարդը, որ ստորագրում է Միգել դե Ունամունու անվան տակ, պարզվում է՝ նա իմ հերոսներից մեկն է, իմ ստեղծած հերոսներից մեկը, իմ հոգեվարք ապրող հերոսներից մեկը: Իսկ այդ վերջին և ներքին, բարձրագույն «ես»-ը, այդ տրանսցենտենտալ կամ ներհատուկ «ես»-ն ո՞վ է, միայն աստված գիտի... Միգուց հենց նա է աստվածը... Եվ հիմա ասում եմ ձեզ, որ այդ հերոսները չեն ուզում ոչ լինել ոչ էլ չլինել, այլ բույլ են տախս, որ իրենց տեղաշարժեն, դրանցով լցված են իսպանական ժամանակակից նովելները և ամենեկին չեն տարբերվում միմյանցից՝ ոչ իրենց ձեռնափայտերով, ոչ դիմակծկումներով և ոչ էլ ժեստերով, նրանք հիմնականում մարդ չեն և ներքին իրականություն չունեն» /Unamuno, 1920:15/:

Գոյության համար մղվող պայքարի մեջ Ունամունու առանձնացնում է հավերժական երազն ու խաղաղ քունը. «Սիայն երազն է, որ մնայուն է, տևական, հիմնային, երազի վրա են հենվում և երազի միջով անցնում մեր բոլոր ցավերն ու հաճույքները, մեր ատելություններն ու սերերը, մեր հիշողություններն ու հույսերը, ինչպես հսկա ծովի վրա ծփացող ալիքները: Ծովին պատկանող այդ ալիքները, սակայն, հանդարտվում են, մարտմ, և մնայուն է դառնում միայն ծովը, անցնում են նաև երազի ցավն ու հաճույքը, սերն ու ատելությունը, մնայուն է լոկ երազը: Սեր ամբողջ պատմական երգիստենցիան զարգանում է ժամանակի մեջ, բայց արդյոք հավերժությունն է այդ ժամանակի հիմքը, ինչպես ծովը՝ ալիքների» /Unamuno, 1909: 871/:

Սոհասարակ իսպանական գրականության մեջ «երազի» մետաֆորին կամ սիմվոլին առաջինն անդրադառնում է Կալդերոն դե լա Բարկան իր «Կյանքը երազ է» ստեղծագործության մեջ: «Երազային» կյանքը պատկերելու համար Ունամունու առաջ է քաշում մառախուի մետաֆորը, իսկ իր

հերոսներին անվանում հորինված կամ մտացածին էակներ: Կարելի է ասել, որ վեպն ընկալելի է դառնում հենց այդպիսի՝ հորինվածքից և իրականությունից ծնունդ առած հերոսների շնորհիվ, քանի որ գործողությունները չեն, որ առաջ են տանում այն: Մտացածին հերոսն ունի բացառիկ իրականություն. նա և՛ ոչինչ է, և՛ ամեն ինչ:

Ունամունոն երազը կապում է հոգեվարքի հետ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ պայքար, որը ծնվում է կյանքի ողբերգականությունից: Նրա համար առաջնային է ոչ թե երազի ֆիզիոլոգիական կողմը, այսինքն՝ ինքնին երազը, այլ երազողի գիտակցությունը, որին հասնելու համար նախևառաջ հարկ է արքնանալ անգիտակցության երազից: Ունամունոն առաջադրում է երազի երկու կատեգորիա՝ «քնի երազ» և «մահվան երազ»: Սեփական երազի գիտակցությունը վիպական կերպարին արթնացնում է, մղում բացահայտելու ճշմարտությունը, գտնելու ինքն իրեն, միավորելու իր ներքին «ես»-երը, հետո հերոսն անցնում է մառախուղի միջով, լրում անգիտակցական երազը, որպեսզի այսուհետ իր վրա կրի մահվան երազի կնիքը, որ գոյակցում է հույսի և անորոշության հետ: Մարդկային ներաշխարհի ուսումնասիրության հիմնական նպատակը ողբերգական այս ներքին գործընթացում վերջինիս իրականության քննությունն է, որում ապրում են գրողների կերտած հերոսները, որն էլ հիմք է դառնում վեպի համար:

Ունամունոն կոչ է անում երբեք չվախենալ ծիծառելի երևալ, այլապես ինչի՝ համար է պայքարը, կատարելությունը գտնելու փնտրությը. «Դուք էլ փնտրե՛ք, կոի՞վ տվեք, ինչպես ես, քանի որ միայն մեր ցանկացած կատարելությունն ու ճշմարիտը գտնելու պայքարը կարող է խկական մարդ դարձնել մեզ: Գրողները վախենում են ծիծառելի երևալ, իսկ ես՝ ո՛չ, երբ ինձ մոտ ցանկություն է առաջանում բղավելու, ես բղավում եմ, ես երբեք չեմ բարձրվում ինքս ինձնից, և բերևս դա է պատճառը, որ իմ գրչակից ընկերներից շատերը չեն ներում ինձ դրա համար, նրանք, որ այդքան իրավացի են, այդքան ճշմարիտ և կարգապահ» /Unamuno, 1930: 27/:

Ինչ վերաբերում է կյանքի ընկալմանը, ապա մեզնից յուրաքանչյուրի կյանքը վեպ է, որին բոլորս պետք է վերաբերվենք իրեն կենսական նշանակություն ունեցող օրգանիզմի: «Դժբախտ են բոլոր նրանք, որոնց կյանքն այդպիսին չեն. «Ընթերցո՞ղ», եթե քո կյանքը նովել չեն, աստվածային հորինվածք չեն, ոչ էլ հավերժության երազ, ուրեմն մի կողմ թող այս գիրքը, այլևս մի կարդա, քանի որ միայն նա կարող է հասկանալ այս գիրքը, ով ունի իր կյանքի պատմությունը, իր լեզենդը» /Longhurst, 2003:139-153/:

Ունամունոյի համար վեպն ինքնակենսագրություն է, սակայն ոչ իրեն գրական ժանր, այլ սեփական «մսից և արյունից» ստեղծած մի բան, գրողի յուրաքանչյուր ստեղծագործություն ծնվում է նրա ներսից, ներքին էությունից: Խսկական, ճշմարիտ վեպում պետք է պատմվի, թե ինչպես է ստեղծվում, կառուցվում վեպը, սակայն ոչ մի դեպքում որևէ մեկի կյանքի պատմությունը: Միա թե ինչու է Ունամունոն տարբերություն դնում վեպ գրելու և վեպ ստեղծելու կամ կառուցելու միջև:

Գրողն առաջարկում է վեպի կամ նովելի երեք տարրեր ընկալումներ՝

1. վեպն իբրև գրական ժանր.
2. վեպն իբրև նիվոլա, որը սովորական վեպ չէ, քանի որ ունի ներքին, իրական, հավերժական, հոգեվարքային իրականություն.
3. վեպն իբրև կյանք, քանի որ վեպ գրողն առաջին հերքին գրում է իր մասին, իր կյանքի պատմությունը:

Վեպի բնորոշումներից մեկում Ունամունոն կրկնում է «հոգեվարք» բառը՝ այն վերստին գործածելով պայքարի իմաստով. սա խկապես պայքար է, հակասությունների պայքար. մարդու ներաշխարհի և արտաքին աշխարհի հակասությունը լուծելու պայքար: Վերացնել այս երկուսից մեկը՝ նշանակում է սպանել իրականությունը, սպանել կյանքը, այստեղից էլ՝ պարադրար. «Նա ինձ կյանք է տախս, քայլ և սպանում», պատմությունը կործանում, ավերում է իմ ներքին «եսը», իմ եզակի, անկրկնելի էրգիստենցիալ գոյությունը, սակայն հենց դրա շնորհիվ եմ ձևափորվում, կայանում իբրև անհատ, որն այլևս միայն «մսից և ուկորից» չէ, այլև օժտված է հոգով և մարմնով: Բացի այդ՝ իրականում հենց ես եմ իմ լեզենդը, պատմությունը, քանի որ իբրև մարդ և ոչ Աստված, ոչ հրեշտակ, ես ապրում եմ մի աշխարհում, որը հենց ժամանակն է և պատմությունը, նշանակում է՝ հենց իմ լեզենդն ավարտվի, նրա հետ կավարտվեմ նաև ես՝ դրանով հիմնավորելով վերը նշված բանաձեռ՝ «ապրել պատմության մեջ և ապրել պատմությունը», կերտել քո սեփական պատմությունը համբնդիանուր պատմության մեջ, հետևաբար խկական մարդը լեզենդի, պատմության զավակն է, բռոյ սա չինի վեպ. այլ պատմություն, հանգամանք, արտաքին աշխարհ, կարևոր չէ, այո՛, մենք հանգամանքների ծնունդն ենք» /Ferreres, 1943: 21-22/:

Վեպում Ունամունոն զարգացնում է գոյության փիլիսոփայության կարևորագույն խնդիրներից մեկը՝ սեփական պատմության կերտման պրոբլեմը, առանց որի անհմաստ է մարդու ֆիզիկական գոյությունը երկրի վրա: Չափազանց կարևոր է կարողանալ կերտել սեփական կյանքի պատմությունը: Այս գաղափարն Ունամունոն կենտրոնացնում է «Ինչպես է ստեղծվում վեպը» էսսեում: «Ապրել պատմության մեջ և ապրել պատմությունը. «Իսկ գուցե ես կանգնած եմ իմ «ես»-ը՝ իմ «ներքին եսը» կորցնելու սահմանագծի՞ն, գուցե ուր որ է կորցնելու՝ եմ իմ աստվածային «ես»-ը, որն Աստված կրում է իր ներսում, իմ այն տեսակը՝ ինչպիսին որ պետք է լինեմ, այն մյուս «ես»-ը, պատմական «ես»-ը, որը շրջում է պատմության մեջ՝ կառուցելով իր սեփական պատմությունը /Unamuno, 2008: 32-39/:

Յուրաքանչյուրը պետք է կերտի իր սեփական պատմությունը, եթե ոչ, ապա նրա գոյությունը չի կայանա, կանհետանա նրանց հետ, որոնք դուրս են մնացել պատմությունից, յուրաքանչյուրի կյանքը և նրա պատկերացրած ճշմարտությունը հենց իր դերն է, և նա պարտավոր է խաղալ իր այդ դերը, նա պարտավոր է ընդունել այդ երկու հակադիր աշխարհները, և առհասարակ, բոլոր հակաքրությունները, քանի որ դրանց միավորումից է ծնվում «մսից և ուկորից» մարդը, նա, որին վերջավորության մեջ տրված է մարմին, հոգի,

հավերժություն, պատմություն և պատմական միջարգություն կամ ներքին բռվանդակություն, անկատարելություն, բայց նաև կատարյալին հասնելու բուն ցանկություն» /Unamuno, 2008: 89/:

Մինչև այժմ Ունամունոն հաստատում է, որ իրական, ճշնարիտ է միայն ներքին էությունը, ներքին իրականությունը, իսկ արտաքինը կեղծ է ու անիրական, սակայն զալիս է մի պահ, երբ գրողը հակադրվում է ինքն իրեն՝ ասելով, թե արտաքին իրականությունը, պատմությունը, լեզենդը կամ ֆարաը նույնքան իրական է, որքան ներքինը, քանի որ նրա մեջ է ապրում և նրա հետ է մեռնելու հենց ինքը: «Այս լեզենդը, այս պատմությունը խժոռում է ինձ, սակայն երբ նա ավարտվի, կավարտվի նաև իմ գոյությունը: Իմ լեզենդի, իմ պատմության Ունամունոն իմ վեպի Ունամունոն է, որն ինձ կյանք է պարզեցում, բայց և սպանում ինձ, ստեղծում, կերտում, բայց նաև կործանում, պահպանում է և խեղրում ինձ, և հենց սա է իմ հոգեվարքը» /Unamuno, 2008: 46/:

«Ինչպես է ստեղծվում վեպը» էսեի գլխավոր հերոսը իսկական մարդ չէ, քանի որ չի ապրում իր սեփական պատմության մեջ, չի ապրում ինքն իր մեջ. նա չի կարողանում իր կյանքը վերածել վեպի, հետևաբար իր գոյությունն անհիմն է, նրա վերջը չի ամփոփվելու պատմության մեջ, այդ է պատճառը, որ նրան դուր են զալիս ուրիշների կերտած պատմությունները, որոնք կապ չունեն իր պատմության հետ: Գլխավոր հերոսն այլև անկարող է ապրել առանց այդ վեպի, քանի որ նրա կյանքը, էությունը վերջնականապես և անվերադարձ միավորվել է վեպի հերոսի պատմության հետ, և ուրեմն ի՞նչ: Հարց է ծագում՝ պատմական մարդ, թե՝ իրական, ճշնարիտ մարդ, ողբերգական կյանքի դրամատիկ հերոս, թե՝ վեպի կերպար, ահա այսպես է երկատվում մարդը, նրա էությունը, այստեղից են ծնվում «Ես»-ը և այն մյուս «Ես»-ը նաև այն երրորդը, ինչպես նշում է Էլիոթը: Ավելի ուշ Ունամունոն ակնարկում է, որ իր էսեի գլխավոր հերոսն ամեն ինչ կտար, միայն թե կարողանար իրաժարվել այդ գրքից, կնախընտրեր վերադառնալ իր ակունքներին, իր ծննդավայր, մանկություն, այն տարիքին, երբ դեռ կարդալ չգիտեր, հետևաբար խաղաղության մեջ էր, ինքն իր հետ էր, իր ներքին «Ես»-ը դեռ չէր հակադրել այն մյուս «Ես»-ին, որից, սակայն, հնարավոր չէ խուսափել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ունամուն դե Ս. Մառախուղը, բարգմ. Ռուզաննա Պետրոսյանի, Երևան, Անտառես, 2013:
2. García B. Miguel de Unamuno: De ésto y de aquello. Buenos Aires: Ediciones Minotauro, 1950.
3. Ferreres R. La teoría de géneros de M. de Unamuno. Madrid: Escorial, 1943.
4. Longhurst A.C. Teoría de la novela en Unamuno de “Niebla” a don Sandalio. Salamanca: Universidad de Salamanca, 2003.

5. Unamuno de M. Recordando a Pereda, en Paisajes del Alma. Salamanca: Universidad de Salamanca, 1909.
6. Unamuno de M. Dos artículos y dos discursos. Madrid: Espasa-Calpe, 1930.
7. Unamuno de M. Cómo se hace una novela. Madrid: Libro Del Bolsillo, 2008.

Р. ПЕТРОСЯН – *Принципы и особенности построения философского романа по Мигелю де Унамуно.* – В статье представлены основные принципы и структурные особенности построения философского романа испанского писателя Мигелья де Унамуно. Автор предлагает различать понятия как строить роман и написать роман, предлагая три типа понятия для этого жанра: роман как литературный жанр, роман как Нивола, который отличается от обычного романа, так как имеет внутреннюю реальность, роман как жизнь, потому что писатель прежде всего пишет о своей жизни.

Ключевые слова: экзистенциализм, нивола, роман, автобиография, история, литературный жанр

R. PETROSYAN – *The Principal Features of the Construction of Philosophical Novel According to Miguel de Unamuno.* – The paper presents the basic principles and structural features of the philosophical novel by Miguel de Unamuno. The author suggests a distinction between the concepts of building a novel and writing a novel thus he talks about three types of novels: novel as a literary genre, novel as a Nivola which is not an ordinary novel as it has an internal reality, novel as a life because the writer writes about his own life.

Key words: existentialism, novel and nivola, autobiography, history, literary genre

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂՄԱՎԿՆԵՐԻ ՍԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ON THE CONTRIBUTORS

1. ԱՍԻՐՅԱՆ ԱՆՆԱ – ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոս, հայցորդ
AMIRYAN ANNA – преподаватель кафедры английского языка №2 ЕГУ, соискатель
AMIRYAN ANNA – YSU Chair of the English Language № 2, lecturer, PhD student
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐԱ – բ.գ.դ., ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ, դոցենտ
ARAKELYAN ARA – д.ф.н., доцент, зав. кафедрой зарубежной литературы ЕГУ
ARAKELYAN ARA – YSU Head of the Chair of Foreign Literature, Doctor of Philology, Associate Professor
3. ԱՐՍԵՆՅԱՆ ԼԻԱՆԱ – ՀՊՈՀ ռոմանական լեզուների ամբիոնի հայցորդ
ARSENYAN LIANA – ASPU Chair of Romance Languages, PhD student
4. ԲԱԳՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, հայցորդ
BAGUMYAN LUSINE – YSU Chair of Translation Studies, lecturer, PhD student
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՐԱ – բ.գ.ք., ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ
BAGHDASARYAN MARA – к.ф.н., ассистент кафедры английского языка № 2 ЕГУ
BAGHDASARYAN MARA – YSU Chair of the English Language № 2, Assistant Professor, PhD
6. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ – բ.գ.ք., ԵՊՀ ռոմանական լեզուների ամբիոնի վարիչ, դոցենտ
BAGHDASASRYAN HASMIK – YSU Head of the Chair of Romance Languages, PhD, Associate Professor
7. ԲԱՐՍԵՂՅԱՆ ԼԻԱՆԱ – բ.գ.ք., ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի դոցենտ
BARSEGHYAN LIANA – к.ф.н., доцент кафедры английского языка № 2 ЕГУ
BARSEGHYAN LIANA – YSU Chair of the English Language № 2, PhD, Associate Professor
8. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՍԵԴԱ – բ.գ.ք., ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ
GABRIELYAN SEDA – к.ф.н., доцент кафедры теории и практики перевода ЕГУ
GABRIELYAN SEDA – YSU Chair of Translation Studies, PhD, Associate Professor
9. ԳԱԼՈՍՏՅԱՆ ՀԱՍՄԻԿ – ՀՈՀ լուսաց և լազվոնական լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
GALUSTYAN HASMIK – аспирант кафедры русского и славянского языкознания РАУ
GALUSTYAN HASMIK – RAU Chair of Russian and Slavonic Linguistics, PhD student
10. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ – ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դասախոս, հայցորդ
GRIGORYAN ARMINE – преподаватель, соискатель кафедры языков АГЭУ
GRIGORYAN ARMINE – ASEU Chair of Languages, lecturer, PhD student
11. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ – բ.գ.ք., ԵՊԼՀ անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի դոցենտ
GRIGORYAN CHRISTINE – к.ф.н., доцент кафедры лексикологии и стилистики
английского языка ЕГУЯС им. В. Брюсова
GRIGORYAN CHRISTINE – PhD, Associate Professor at the Chair of English Lexicology and Stylistics, YSULS after V. Brusov

12. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ
ГЕВОРГЯН КРИСТИНЕ – соискатель кафедры английской филологии ЕГУ
GEVORGYAN KRISTINE – YSU Chair of English Philology, PhD student
13. ԵՐԶՆԿՅԱՆ ԵԼԵՆԱ – ք.դ., պրոֆեսոր, ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ
ЕРЗИНКЯН ЕЛЕНА – д.ф.н., профессор, зав. кафедрой английского языка № 2
ЕГУ
YERZNKYAN YELENA – YSU, Head of the Chair of English Language № 2,
Doctor of Philology, Professor
14. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԼՈՒՏԻՆԵ – ԵՊԼՀ լեզվաբանության և տեղեկատվական
տեխնոլոգիաների ամբիոնի մագիստրուս
ТОВМАСЯН ЛУСИНЕ – магистр по специальности лингвистики и
информационных технологий ЕГУЯС им. В. Брюсова
TOVMASYAN LUSINE – Master of Linguistics and Information Technologies,
YSULS after V. Brusov
15. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՆՈՒՆԵ – ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի դոցենտ
ТОВМАСЯН НҮНЕ – доцент кафедры английского языка № 2 ЕГУ
TOVMASYAN NUNE – YSU Chair of the English Language № 2, Associate Professor
16. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ՎԵՐՈՆԻԿ – ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոս, ՀՀ
ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ
ХАЧАТАРУЯН ВЕРОНИК – преподаватель кафедры английского языка № 2
ЕГУ, соискатель РА НАН Института литературы имени М. Абегяна
KHACHTATURYAN VERONIK – YSU, Chair of English Language № 2, lecturer,
Institute of Literature after M. Abeghian of NAS of RA, PhD student
17. ԽԱՐԱԶՅԱՆ ՀԵՂԻՆԵ – ԵՊԼՀ անգլերենի հաղորդակցման և քարզմանության
ամբիոնի դասախոս, հայցորդ
ХАРАЗЯН ЕГИНЕ – преподаватель, соискатель кафедры перевода и коммуникации
английского языка ЕГУЯС им. В. Брюсова
KHARAZYAN HEGHINE – YSULS Chair of English Communication and
Translation, Lecturer, PhD student
18. ՀԱՅԹՅԱՆ ԼՈՒՏԻՆԵ – ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոս
АЙТЯН ЛУСИНЕ – преподаватель кафедры английского языка № 2 ЕГУ
HAYTYAN LUSINE – YSU Chair of the English Language № 2, lecturer
19. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՈՒՏԻՆԵ – ք.դ.թ., ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ
АРУТИОНЯН ЛУСИНЕ – к.ф.н., доцент кафедры языков АГЭУ
HARUTYUNYAN LUSINE – ASEU Chair of Languages, PhD, Associate Professor
20. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ԼՈՒՏԻԿ – ք.դ.թ., ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի դոցենտ
ОВАКИМЯН ЛУСИК – к.ф.н., доцент кафедры английского языка № 2 ЕГУ
HOVAKIMYAN LUSIK – YSU Chair of the English Language № 2, PhD, Associate
Professor
21. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԻՕԼԵՏԱ – ԵՊՀ արտասահմանյան գրականության
ամբիոնի հայցորդ
ОГАННИСЯН ВИОЛЕТА – соискатель кафедры зарубежной литературы ЕГУ
HOVNANNISYAN VIOLETA – YSU Chair of Foreign Literature, PhD student
22. ՂԱԶԱՐՅԱՆ ԼԵՆԱ – ք.դ.թ., ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոս
КАЗАРЯН ЛЕНА – к.ф.н., преподаватель кафедры английского языка № 2 ЕГУ
GHAZARYAN LENA – YSU Chair of the English Language № 2, PhD, lecturer
23. ՂԱԶԱՐՅԱՆ ԼԻԼԻՏ – ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դասախոս
КАЗАРЯН ЛИЛИТ – преподаватель кафедры языков АГЭУ
GHAZARYAN LILIT – ASEU Chair of Languages, lecturer

24. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈՒԶԱՆ – բ.գ.թ., ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի դոցենտ
ԿԱՅԱՐՅԱՆ ՌՈՅԱՆ – կ.ֆ.ն., доцент кафедры английского языка № 2 ЕГУ
GHAZARYAN RUZAN – YSU Chair of the English Language № 2, PhD, Associate Professor
25. ՄԱԿԱՐՅԱՆ ԱԼԻԿ – բ.գ.դ., ԵՊՀ հայ գրականության ամբիոնի պրոֆեսոր
ՄԱԿԱՐՅԱՆ ԱԼԻԿ – դ.ֆ.ն., профессор кафедры армянской литературы ЕГУ
MAKARYAN ALIK – YSU Chair of the Armenian Literature, Doctor of Philology, Professor
26. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ – ՀՌՀ լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի դասախոս
ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ – преподаватель кафедры теории языка и межкультурной коммуникации РАУ
MELIK-ADAMYAN SHUSHANIK – RAU Chair of theory of language and cross-cultural communication, lecturer
27. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՐԹՈՒՐ – ԵՊՀ անգլական բանասիրության ամբիոնի ասավիրան
ՄԵՍՐՈՊՅԱՆ ԱՐԹՈՒՐ – аспирант кафедры английской филологии ЕГУ
MESROPYAN ARTHUR – YSU Chair of English Philology, PhD student
28. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ – ԵՊՀ անգլական բանասիրության ամբիոնի ասավիրան
ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ – аспирант кафедры английской филологии ЕГУ
MOVSISYAN TATEVIK – YSU Chair of English Philology, PhD student
29. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՖՈՒՄԵ – ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոս
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ՀՈՒՓՍԻՄԵ – преподаватель кафедры английского языка № 2 ЕГУ
NIKOGOSYAN HRIPSIME – YSU Chair of the English Language № 2, lecturer
30. ՉԱԼԱԲՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ – բ.գ.թ., դոցենտ, ՀՊՀ լեզվության ամբիոնի վարիչ
ՉԱԼԱԲՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ – д.ф.н., доцент, зав. кафедрой языков АГЭУ
CHALABYAN SUSANNA – ASEU Head of the Chair of Languages, PhD, Associate Professor
31. ՍԱՐՈԽԱՆՅԱՆ ԲԵԼԼԱ – ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոս
ՍԱՐՈԽԱՆՅԱՆ ԲԵԼԼԱ – преподаватель кафедры английского языка № 2 ЕГУ
SARUKHANYAN BELLA – YSU Chair of the English Language № 2, lecturer
32. ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ – բ.գ.դ., դոցենտ, ՀՌՀ լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի վարիչ
ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ – д.ф.н., доцент, зав. кафедрой теории языка и межкультурной коммуникации РАУ
SIMONYAN ARMINE – RAU, Head of the Chair of theory of language and cross-cultural communication, Doctor of Philology, Associate Professor
33. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս, հայցորդ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ – преподаватель кафедры зарубежной литературы ЕГУ, соискатель
PETROSYAN ROUZANNA – YSU Chair of Foreign Literature, lecturer, PhD student
34. ՔՕՉԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ – ԵՊՀ ռուսաց լեզվի ամբիոնի հումանիտար ֆակուլտետի համար, դասախոս
ՔՕՉԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ – преподаватель кафедры русского языка ЕГУ
KOCHARYAN SUSANNA – YSU Chair of the Russian Language for the Humanities, lecturer

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ
CONTENTS

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ/Лингвистика/Linguistics

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Ս., ԲԱԳՈՒՄՅԱՆ Լ. Քենեթ Գրեհեմի «Քամին ուղիների մեջ» ստեղծագործության շրջադասությունները (ինվերսիա) և դրանց հայերեն թարգմանության խնդիրը	3
ГАБРИЕЛЯН С., БАГУМЯН Л. Стилистическая инверсия в произведении Кеннета Грэма «Ветер в ивах» и проблема его перевода на армянский язык	
GABRIELYAN S., BAGUMYAN L. Stylistic inversion in Kenneth Grahame's "The Wind in the Willows" and the problem of its translation	
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. Համընդհանուր դարձվածային միավորների լեզվամշակության, թարգմանական տարրերակները և դրանց հոգևոր իմաստները	11
ГРИГОРЯН А. Лингвокультурные, переводческие варианты универсальных фразеологических единиц и их духовные значения	
GRIGORYAN A. Linguocultural, translational options of universal phraseological units and their spiritual meanings	
ԳՐԻԳՈՐՅԱՆ Ք., ԹՈՎԱՍՍՅԱՆ Լ. Համակարգչային եզրերի համարժեքների ստեղծումը և համակարգչային եզրարանության զուգաձևությունների վերացման եղանակները հայերենում	18
ГРИГОРЯН К., ТОВМАСЯН Л. Методы создания компьютерных терминов на армянском языке и способы исключения терминов-эквивалентов	
GRIGORYAN Ch., TOVMASYAN L. The creation of computer terms in the Armenian language and means for eliminating term variations	
ԵՐԶՆԿՅԱՆ Ե., ՂԱԶԱՐՅԱՆ Լ. Տարու բառերը որպես հուզասատկական բառերի առաջացման արդյուր-դաշտ	30
ЕРЗИНКЯН Е., КАЗАРЯН Л. Табу как источники возникновения эмоционально-усилительных интенсификаторов	
YERZNKYAN Y., GHAZARYAN L. Taboo words as a source domain for the development of intensifiers	
ԽԱՐԱԶՅԱՆ Հ. Անցիալական գովազդը որպես հասարակական գիտակցության ձևավորման միջոց	36
ХАРАЗЯН Е. Социальная реклама как средство формирования социального сознания	
KHARAZYAN H. Public advertising as a means of developing social awareness	
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ. Ժամանակի նշույթավորումը տնտեսական իրադարձություններում	42
АРУТИОНЫАН Л. Темпоральная маркированность экономических событий	
HARUTYUNYAN L. Temporal markers of economic events	
ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ Շ. Անգլերենում զայրույթ հույզի որոշ իմաստային յուրահատկությունների մասին	53
МЕЛИК-АДАМЯН Ш. О некоторых семантических особенностях эмоции «злость» в английском языке	

MELIK-ADAMYAN SH. Some Semantic Peculiarities of the Emotion “Anger” in English	
ՄԵԼԻԿ-ԱԴԱՄՅԱՆ Շ. Համատեքստը՝ որպես նույնարանական ասույթների ապահովության միջոց	61
МЕСРОПЯН А. О контекстуальной обусловленности декодирования тавтологических высказываний	
MESROPYAN A. Context as the key to the calculation of tautologies	
ՄՈՎՍԻՍՅԱՆ Տ. Ուղղաձիգ համատեքստը որպես լեզվաբանական ուսումնասիրության առարկա	74
МОВСИСЯН Т. Вертикальный контекст как объект лингвистического анализа	
MOVSISYAN T. Vertical context as a subject of linguistic study	
ГАЛУСТЯН А. Когнитивные основы развития причинного значения в семантике первообразных предлогов	80
ԳԱԼՈՒՏՅԱՆ Հ. Պարզ կապերի պատճառական իմաստի զարգացման ճանաչողական (կողմիային) նախադրյալները	
GALUSTYAN H. Cognitive aspects of developing causative meaning in simple prepositions	
ГЕВОРГЯН К. Человеческая телесность в современной лингвистике: соматизмы в языке и культуре	88
ԳԵՎՈՐԳՅԱՆ Ք. Մարդկային մարմինը ժամանակակից լեզվաբանության մեջ. սոմատիկ հասկացույթները լեզվում և մշակույթում	
GEVORGYAN K. Human body in modern linguistics: somatisms in language and culture	
СИМОНЯН А. Искренность в политической коммуникации через призму теории речевых актов	97
ՍԻՄՈՆՅԱՆ Ա. Անկեղծությունը քաղաքական խոսություն	
SIMONYAN A. Sincerity and the speech acts used by the politicians	
ՄԵԹՈԴԻԿԱ/Методика/ Methodology	
HOVAKIMYAN L. TED Talks as a tool for enhancing listening comprehension	102
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Լ. TED լասախոսությունները որպես լսել-ընկալելու հնոությունները զարգացնելու միջոց	
ОВАКИМЯН Л. TED лекции как средство развития навыков аудирования	
TOVMASYAN N., GHAZARYAN R. A plan of a film-based lesson for EFL students of intermediate level	112
ԹՈՎՄԱՍՅԱՆ Ն., ՂԱԶԱՐՅԱՆ Ռ. Ֆիլմ-դասի ծրագիր անգլերենը որպես օպար լեզու դասընթացի համար	
ТОВМАСЯН Н., ԿԱՅԱՐՅԱՆ Բ. К вопросу об использовании кино- и видеоматериалов при обучении английского как иностранного	
ԱՄԻՐՅԱՆ Ա. Ինտերակտիվ դասերի կազմակերպումը որպես մասնագիտական նյութը օպար լեզվով առավել արդյունավետ յուրացնելու միջոց	119
АМИРЯН А. Организация интерактивных занятий как способ продуктивного усвоения профессионального материала	
AMIRYAN A. The organization of interactive lessons as a productive means of assimilation of the professional material	

ԱՐՍԵՆՅԱՆ Լ. Խսպաներեն դարձվածքային միավորների ուսուցման ազգամշակութային հայեցակերպը լեզվական բուհում ԱՐՍԵՆՅԱՆ Լ. Национально-культурный аспект обучения фразеологических единиц испанского языка в языковом вузе ARSENYAN L. National-cultural aspect of learning Spanish phraseological units in a linguistic university	126
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Հ. Հաղորդակցական մեթոդի դերը խսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման խնդրում ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Հ. Роль коммуникативного метода в преподавании испан- ского языка как иностранного BAGHDASARYAN H. The role of communicative method in teaching Spanish as a foreign language	136
ԲԱՐՍԵՂՅԱՆ Լ. Օտար լեզվի դասավանդման մեջ երաժշտությունն ինտե- գրելու որոշ առավելությունների մասին ԲԱՐՍԵՂՅԱՆ Լ. О некоторых преимуществах интегрирования музыки в преподавании иностранного языка BARSEGHYAN L. On some advantages of integrating music into foreign language teaching	144
ՀԱՅՏՅԱՆ Լ. Ընթերցման միջոցով տեքստը ըմբռնելու ռազմավարու- թյունների մասին..... ՀԱՅՏՅԱՆ Լ. О стратегиях восприятия текста при чтении HAYTYAN L. On reading comprehension strategies	151
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Հ., ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Բ. Մշակութային իրազեկության դե- րը օտար լեզվի ուսուցման գործընթացում ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Հ., ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Բ. Роль культурной грамотности в процессе преподавания иностранного языка NIKOGHOSYAN H., SARUKHANYAN B. The role of cultural awareness in foreign language teaching	158
ՉԱԼԱԲՅԱՆ Ս., ՂԱԶԱՐՅԱՆ Լ. Ուսանողակենտրոն ուսուցման կարևորու- թյունն օտար լեզուի հասուն նպատակների համար դասընթացում ՉԱԼԱԲՅԱՆ Ս., ՂԱԶԱՐՅԱՆ Լ. О важности личностно-ориентированного обучения иностранному языку для специальных целей CHALABYAN S., GHAZARYAN L. The importance of learner-centered approach to teaching foreign languages for specific purposes	165
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Մ., ԿՈՉԱՐՅԱՆ Ս. Կ վօրոս օ պրէօձան ինօտրանի յազիկ օ վուզով սիստեմ Արմենիա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Մ., ԳՈՉԱՐՅԱՆ Ս. Հայաստանի բուհական համակար- գում օտար լեզուների դասավանդման հարցի շուրջ BAGHDASARYAN M., KOCHARYAN S. On the issue of teaching foreign languages in higher education establishments of Armenia	170

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/Литературоведение/ Literary Criticism

ԱՌԱՔԵԼՅԱՆ Ա. Ֆրանց Կաֆկայի «Օրագրերի» կառուցվածքը	178
ԱՐԱԿԵԼՅԱՆ Ա. Структура «Дневников» Фр. Кафки	
ARAKELYAN A. The structure of Franz Kafka's "Dairies"	
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Վ. Ամերիկյան «քիթնիկական» շարժման» ազդեցությունը	183
Q. Բուկովսկու գեղարվեստական արձակի վրա	
ԽԱЧԱՏՈՒՐՅԱՆ Վ. Формирование художественного мира Чарльза Буковского и	
американское «битническое движение»	
ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ Վ. Development of Charles Bukowski's literary outlook and	
the American "beat movement"	
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վ. Դ.Հ. Լուրենսի՝ «արյան գիտակցության» լմբոնումը....	189
ՕՂԱՆНЕՍՅԱՆ Վ. Восприятие «сознания крови» у Д. Г. Лоуренса	
HOVHANNISYAN V. D.H. Lawrence's perception on "blood-consciousness"	
ՍԱԿԱՐՅԱՆ Ա. Կառլո Գոլդոնի և Հակոբ Պարոնյան («Երկու տիրոջ ծառան»)	196
MAKARYAN A. Carlo Goldoni and Hakob Paronyan (comparative analysis of the	
одноименных пьес под названием «Слуга двух господ»)	
MAKARYAN A. Carlo Goldoni and Hakob Paronyan (comparative analysis of the	
namesake plays "The Servant of Two Masters")	
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ. Փիլիսոփայական վեպի կառուցման սկզբունքներն ու	209
առանձնահատկություններն ըստ Միգել դե Ունամունոյի	
ՊԵՏՐՈՍՅԱՆ Ռ. Принципы и особенности построения философского романа	
по Мигелю де Унамуно	
PETROSYAN R. The principles and features of the construction of philosophical	
novel according to Miguel de Unamuno	
Տեղեկություններ հեղինակների մասին	217
Сведения об авторах	
Information on the contributors	

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին երկու անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով, մեկ տպագիր օրինակով համակարգչային շարվածքով (**Microsoft Word 97-2003 ծրագրով, Times Armenian, Times New Roman** տառատեսակներով): Հոդվածի հետ անհրաժեշտ է ներկայացնել հոդվածի էլեկտրոնային տարրերակը մազնիսական կրիչով:

Հոդվածը պետք է ունենա հայերեն, ոուսերեն և անգլերեն ամփոփագրեր՝ 50-60 բառի սահմաններում, բանալի-բառեր, հեղինակի մասին համառոտ տեղեկություն:

Հոդվածի առաջին էջի վերին տողի աջ անկյունում 12 pt տառաշափով, թավ (Bold) գրվում է հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը (ազգանունը՝ գլխատառերով, օրինակ՝ **Արմինե ՍԱՐՏԻՔՈՒՅՑԱՆ**), շեղատառ (Italic) բուհի կամ գիտահետազոտական կենտրոնի անվանումը, գլխատառերով, թավ (Bold) հոդվածի վերնագիրը:

Հոդվածում օգտագործված գրականության հերումները տրվում են փակագծերում. նշվում են հեղինակի ազգանունը, տպագրման տարեթիվը և համապատասխան էջերը, օրինակ՝ /Payne, 2000: 168-170/: Գրականության ցանկը տրվում է հոդվածի վերջում՝ այրենական կարգով:

Հեղինակը պատասխանատվություն է կրում իր ներկայացրած տեղեկությունների համար: Հրապարակվող նյութերը պետք է գրախոսվեն և երաշխավորված լինեն տպագրության համապատասխան ամրիոնների կողմից. բոլոր կարծիքները, երաշխավորագրերը պահպանվում են խմբագրությունում: Հրապարակվող նյութերի բնագրերը չեն վերադարձվում:

«Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղում:

Գրականության ցանկում ընդգրկված աղյուրների նմուշ

1. Արքահայրան Ս. Գ. Հայերենի կետադրություն, Երևան, 1999:
2. Austin J. L. How to do things with words. Oxford: Oxford University Press, 1962.
3. Langacker R.W. Foundations of cognitive grammar // *Theoretical prerequisites*, v. 1. Stanford: Stanford University Press, 1987.
4. Гинзбург Р. С. О взаимосвязи лингвистического и экстралингвистического в лексике // *Иностр. языки в школе*, 1972, № 5.
5. Иванов В. И. Язык, текст, речь // Электронный ресурс: <http://www.textum.ru/article/ivan/html>

Խմբագրության հասցեն. Երևան 0025, Ալ. Մանուկյան 1

Адрес редакции: Ереван, ул. Ал. Манукияна 1

Էլ. փոստ՝ englishdep2@ysu.am

Հանձնվել է տպագրության 20.11.2015թ.

Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 84x100¹/₁₆

Տպագրական 21.5 մամուլ:

Տպաքանակը՝ 100: